Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

KNARIK PETROSYAN

ARMENIA - DIASPORA RELATIONS IN 1988 - 2001

YEREVAN
NAS RA "GITUTIUN" PUBLISHING HOUSE
2011

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՔՆԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ - ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1988 -2001 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 941 (479.25): 329: (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)+66.6
Պ505

Հրատարակվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ**

Գրախոս՝ պատմ. գիտ. թեկն.,
դոցենտ **Յու. Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

Պ505 ՊԵՏՐՈՍՅԱՆ Քնարիկ Ռ.
Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ. Քնարիկ Պետրոսյան Պատ. խմբ.՝ Է. Գ. Մինասյան; ՀՀ ԳԱԱ.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011. – 240 էջ:

Աշխատությունը նվիրված է հայոց նորագույն պատմության գրեթե չուսումնասիրված կարևոր հիմնահարցերից մեկին՝ Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև 1988-2001 թթ. հաստատված գործուն հարաբերություններին: Ներկայացվել է Հայաստանի անկախացումից հետո հայ ազգային կուսակցությունների (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ) վերադարձը հայրենիք, մասնակցությունը հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին և Արցախյան ազատագրական շարժմանը: Լուսաբանվել է սփյուռքահայ կազմակերպությունների գործունեությունը, նրանց աշխատանքը Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ: Ցույց է տրված սփյուռքահայ միությունների և կազմակերպությունների, նշանավոր գործիչների, հայ եկեղեցու դերը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, Հայաստան-Սփյուռք մշակութային կապերի ամրապնդման ու զարգացման գործում:

Նախատեսված է պատմաբանների, սփյուռքագետների, նաև ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 941 (479.25): 329: (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)+66.6

ISBN 978-5-8080-0895-3 © Պետրոսյան Ք. Ռ., 2011

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց նորագույն շրջանի պատմության մեջ էական նշանակություն ունի Հայկական Սփյուռքի գործոնը: Պատմագիտական տեսանկյունից Սփյուռք ասելով նախ և առաջ հասկացվում է 1915-1923 թթ. հայերի ցեղասպանության հետևանքով պատմական Հայաստանից բռնագաղթված և աշխարհով մեկ սփռված հայությունը, որն իր գոյության ողջ ընթացքում գերլարված պայքար է մղում իր ազգային դիմագիծը պահպանելու համար:

Արտերկրում հայությունը հիմնում է դպրոցներ, եկեղեցիներ, հասարակական և այլ կազմակերպություններ, որոնց միջոցով փորձում է պահպանել իր ինքնությունը: Սակայն սփյուռքահայության գոյատևման հիմնական երաշխիքը հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության առկայությունն է: Հայրենիքում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական տեղաշարժերը, անկախ Հայաստանի Հանրապետության և ազգային պետականության հաստատումը վերացրին գաղափարական այն խոչընդոտները, որոնք առկա էին Խորհրդային Միության գոյության տարիներին Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ոլորտում:

Սփյուռքի և հայրենիքի միջև սահմանափակումներից զերծ, ազատ հարաբերություններ գործնականում հաստատվեցին 1988 թ. վերջերին՝ Սպիտակի երկրաշարժից անմիջապես հետո: 1989 թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի և սփյուռքահայության քաղաքական հոսանքների ազդեցության ներքո գտնվող մշակութային միությունների միջև ստորագրվեց փաստաթուղթ, որն ազդարարում էր «համազգային արժեքների գերակայությունը ճանաչելու հիման վրա համահավասարության սկզբունքը հարաբերություններում»[1]: Սակայն ժամանակի ընթացքում պարզվեց, որ Սփյուռքը ՀՀ պետական իշխանությունների կողմից հիմնականում ընկալվում էր որպես հայրենիքին ֆինանսական օգնություն հատկացնող աղբյուր: Նման իրավիճակի շտկմանն էին ուղղված 1999 թ. առաջին և հետագայում հրավիրված երկրորդ ու երրորդ Հայաստան-Սփյուռք համահայկական

[1] Տես **Դալլաքյան Կ.,** Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Ե., 2004, էջ 50:

խորհրդաժողովները, որտեղ երկրի իշխանությունները փորձում էին քննարկել Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում առաջացած բացերն ու թերությունները:

Եթե Խորհրդային Միության գոյության տարիներին սփյուռքահայություն ասելով ընկալվում էր Ամերիկայի, Եվրոպայի, Մերձավոր և Հեռավոր Արևելքի, Աֆրիկայի և Ավստրալիայի սահմաններում բնակություն հաստատած հայությունը, ապա ԽՍՀՄ-ի փլուզումից հետո «Սփյուռք» հասկացությունը ընդգրկում է նաև Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հայությունը: Քանի որ Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հայկական համայնքներին վերաբերող ուսումնասիրությունները սահմանափակ են[2], գրքում որոշակի անդրադարձ ենք կատարել նաև այդ երկրների հայկական համայնքների կյանքին և հայրենիքի հետ նրանց ունեցած փոխհարաբերություններին:

Աշխատության մեջ քննության են առնվել 1980-ական թվականների վերջին սկիզբ առած և ծավալված Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, նաև հնարավորության սահմաններում այդ կապերն արտացոլվել են Սփյուռքի առանձին կազմակերպությունների ու միությունների ձևաչափով, բացահայտվել այդ առնչություններում Սփյուռքի տարատեսակ ու բազմաբնույթ գործոնի առանձնահատկությունները, վերհանվել նրա գործունեության հիմնական ուղղություններն ու նշանակությունը: Փորձ է արվել ներկայացնել Սփյուռքի քաղաքական կուսակցությունների, Հայ դատի հանձնախմբերի տարած աշխատանքները Հայոց ցեղասպանության դատապարտման և ճանաչման, ինչպես նաև Արցախյան պայքարի պաշտպանության ուղղությամբ: Ցույց է տրվել նաև հայ ավանդական քաղաքական կուսակցությունների հայրենիք վերադարձի նախադրյալները, նրանց, մասնավորապես ՀՅԴ կուսակցության ունեցած տարածայնությունները ՀՀ իշխանությունների հետ: Լուսաբանվել է Սփյուռքում հայապահպանության ուղղությամբ Հայրենիք-Սփյուռք առնչությունների հետագա ծավալման ու զարգացման անհրաժեշտությունը:

Աշխատության մեջ անդրադարձ է կատարվել նաև Հայ Առաքելական, Ավետարանական և Կաթոլիկ եկեղեցիներին, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հայրենիքում նրանց հաստատվելու և բոլոր ասպարեզներում ազգանպաստ գործունեությանը, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների՝ հայապահպանության գործում ունեցած վիթխարի դերին, Հայաստանի Հանրապետության մտահոգությանը միաբանությունների հետագա ճակատագրի նկատմամբ:

Խորհրդային Հայաստանում առանձին գիտնականների կողմից փորձեր են արվել Սփյուռքի պատմության տարբեր հարցերի մասին հիմնարար աշխատություններ ստեղծելու ուղղությամբ: Այդ գործընթացն առավել արդյունավետ դարձավ Հայաստանի անկախացումից անմիջապես հետո: Մի շարք գիտնականներ Սփյուռքի առանձին համայնքների հիմնահարցերի ուղղությամբ հանդես եկան կարևորագույն հետազոտություններով: Հիշարժան են հատկապես Կ. Դալլաքյանի, Ք. Ավագյանի, Հ. Փահլևանյանի, Վ. Համազասպյանի, Է. Մելքոնյանի և այլոց աշխատությունները[3], որոնցում անդրադարձ է կատարվում նաև հայրենիքի և Սփյուռքի միջև հաստատված հարաբերություններին, և ինչ-որ չափով լրացվում է այդ ոլորտում տեղ գտած բացը:

Հետազոտվող թեմայի վերաբերյալ արժեքավոր փաստագրական նյութ են պարունակում Հայաստանի Հանրապե-

---

[2] Տե՛ս **Ананян Ж.А., Хачатурян В.А.**, Армянские общины России, Е., 1993. **Григорьянц В. Е.**, Армяне Средней Азии. История, современное положение, перспективы, Е., 1994. **Григорьянц В.**, Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Симферополь, 2004. **Ованесов Б.**, Армянская община города Ставрополя, Ставрополь, 2005.

[3] Տե՛ս **Համազասպյան Վ.**, Ալեք Մանուկյան, Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոն, Ե., 1994: Փրկենք ՀԲԸ Միութիւնը, Նիւ Եորք, 1994: **Խմբ.՝ փրոֆ. Վ.Բ. Բարխուդարեանի եւ դոկտ. Զաւեն Եկաւեանի,** էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, Ե., 1996: **Բրուտեան Ց.**, Հայ երաժշտական մշակոյթի աշխարհասփիւռ ընձիւղները, Ե., 1996: Գալուստ Սարգիս Կիւլպէնկեան, Մարդը եւ իր գործը (ծննդեան 130-ամեայ տարեդարձին առթիւ 1869-1999), Լիզպոն, 1999: **Բայբուրդյան Վ.**, Իրանն այսօր (տեղեկատու), Ե., 1999: **Մելքոնյան Էդ.**, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Ե., 1999: **Ավագյան Ք.**, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը, Ե., 2000: **Համազասպյան Վ.**, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Ե., 2001: **Հարությունյան Ն.**, Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Ե., 2002: **Բալագյան Լ.**, Գալուստ Գյուլբենկյան, Ե., 2004:

տությունում և Սփյուռքում լույս տեսած այդ շրջանի հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով պարբերականները:

ՀՀ ազգային արխիվի նյութերը հատկապես կարևոր են Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի և սփյուռքահայ միությունների ու կազմակերպությունների միջև հաստատված հարաբերությունները նորովի լուսաբանելու, ինչպես նաև սփյուռքահայ կազմակերպությունների կողմից մարդասիրական լայնածավալ օգնության տրամադրման, զարգացման ծրագրերի և արմատական այլ հարցերի ուսումնասիրության տեսանկյունից[4]:

Ժամանակակից հայ Սփյուռքի պատմությանը (սկզբնավորումից մինչև 1990-ական թթ. վերջը) անդրադարձել է Կ. Դալլաքյանն իր աշխատության մեջ[5]: Հեղինակը քննարկում է Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, եկեղեցու դերը, քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեությունը, ազգային միասնության խնդիրը, վերլուծում Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, Հայ դատին, մի շարք երկրների հայկական համայնքներին վերաբերող հիմնահարցեր:

Աշխարհի բոլոր հայկական համայնքները համառոտ ներկայացված են «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարանում[6]:

Եզակի հրատարակություն է «Հայ Սփյուռք» հանրագիտարանը[7], որում առաջին անգամ ներկայացվել են 70 երկրների հայկական համայնքները՝ համայնքի ձևավորման ժամանակներից մինչև 2003 թ.:

---

[4] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 164, գ. 143, գ. 179, գ. 777, ֆ. 113, ց. 165, գ. 528, ֆ. 113, ց. 167, գ. 416, գ. 417, ֆ. 113, ց. 168, գ. 112, ֆ. 326, ց. 7, գ. 217, գ. 224, գ. 304, ֆ. 362, ց. 15, գ. 14, գ. 15, գ. 32, գ. 339ա, ֆ. 823, ց. 8, գ. 99, գ. 102, գ. 189, ֆ. 875, ց. 15, գ. 32, ֆ. 875, ց. 16, գ. 28, գ. 29, գ. 41, գ. 46, գ. 48, գ. 53, գ. 58, գ. 62, գ. 76, գ. 94, գ. 119, գ. 123, գ. 137, գ. 151, գ. 154, գ. 217, ֆ. 1172, ց. 1, գ. 87, ֆ. 1173, ց. 2, գ. 6, գ. 32, գ. 202:

[5] Տե՛ս **Դալլաքյան Կ.,** Հայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Ե., 2004:

[6] Տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, Ե., «Հայագիտակ» հրատ., 1995:

[7] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Ե., Հայկական հանրագիտարանի հրատարակչություն, 2003:

Հայադարան համահայկական նախագծի «Համահայկական գործարար անվանացանկ և գիդ-ուղեցույց» եռալեզու երկհատորյակը ներկայացնում է Սփյուռքի հայկական կազմակերպությունների կոնտակտ-տվյալներն ու գործունեությունը, ճանաչողական տեղեկություններ Հայոց աշխարհի, Հայ Առաքելական եկեղեցու, Սփյուռքի, համահայկական կազմակերպությունների մասին և այլն[8]:

ՀՀ սփյուռքի նախարարության «Հայկական Սփյուռք» հայերեն-անգլերեն երկլեզու տարեգրքում[9] ներկայացված են համահայկական կազմակերպությունների, հոգևոր կառույցների, հայ համայնքների, ՀՀ պետական կառավարման մարմինների, այդ թվում՝ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից և Հայաստանում և Սփյուռքում 2008-2009 թթ. ընթացքում իրականացված ծրագրերը, միջոցառումները, հիշատակման արժանի իրադարձությունները: Տարեգիրքը տեղեկություններ է պարունակում ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի և այլ պետական այրերի հայ համայնքներ կատարած այցելությունների մասին: Առանձին բաժիններ են հատկացված համահայկական կազմակերպությունների ծրագրերին, հոգևոր կառույցների գործերին, հայ համայնքներում տեղի ունեցած հայապահպան ձեռնարկներին:

«Սփյուռքահայ կազմակերպություններ» գրքում[10] ներկայացված են Սփյուռքում գործող խոշորագույն հասարակական-քաղաքական, մշակութային, բարեգործական, հայրենակցական և եկեղեցական կազմակերպությունները, որոնցից շատերը Հայաստանի անկախացմանը հաջորդած տարիներին Հայաստանի Հանրապետությունում և Արցախում հիմնելով իրենց մասնաճյուղերը և ծավալելով աշխույժ գործունեություն՝ ձեռք են բերել համահայկական նշանակություն:

---

[8] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, հ. 1, Համահայկական գործարար անվանացանկ-2009, Ե., «Գործարար տիեզերք» ՍՊԸ, 2009, նույնի՝ հ. 2, Համահայկական գիդ-ուղեցույց-2009, Ե., «Գործարար տիեզերք» ՍՊԸ, 2009:

[9] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Ե., «Պոլիգրաֆ բիզնես» հրատ., 2009:

[10] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, Ե., Հայկական հանրագիտարանի գլխ. խմբ., 2002:

Հայաստանում սփյուռքահայ համայնքների և անհատների մեծագումար նվիրատվություններին ու երկրի տնտեսության վերականգնման մեջ այդ միջոցներով իրագործվող ներդրումային ծրագրերին է պարբերաբար անդրադառնում «Հայաստան» համահայկական հիմնադրամն իր ծրագրային ամենամյա հաշվետվություններում[11]:

Հայկական բարեգործական ընդհանուր միության և մասնավորապես Ալեք Մանուկյանի հայրենանվեր գործունեությանն են նվիրված Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի երկարամյա նախագահ Վ. Համազասպյանի աշխատությունները[12], որոնցում հեղինակն անդրադառնում է ՀԲԸՄ-ի՝ Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում իրագործած ծրագրերին:

ՀԲԸՄ-ի ամբողջական պատմությունը ներկայացված է Էդ. Մելքոնյանի աշխատությունում[13], որտեղ տրված է ՀԲԸՄ հարյուրամյա պատմության համապարփակ ուսումնասիրությունը Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի, Խորհրդային Հայաստանի, ինչպես նաև Սփյուռքի առանձին համայնքների պատմության համատեքստում: Ցույց է տրված կազմակերպության գործելակերպի առանձնահատկություններն ազգային այլ հիմնարկությունների համեմատ, վեր են հանվել նրա բազմապիսի գործունեության առավել կարևոր շրջաններն ու ոլորտները:

ՀԲԸՄ-ի 100-ամյա գործունեությանն է անդրադառնում ՀԲԸՄ Կենտրոնական վարչության կողմից հրատարակված երկհատորյակը[14]: Արխիվային հարուստ նյութերի հիման վրա երկհատորյակում հիմնականում ամբողջական ձևով ներկայացված է Միության զարգացումը՝ սկզբնավորումից մինչև 2006 թ.:

«Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության ստեղծմանն ու անցած ավելի քան 50 տարվա հայանպաստ, բարեսիրական գործունեությանն է նվիրված Վ. Ղարախանյանի մենագրությունը[15]: Աշխատության մեջ մանրամասնորեն լուսաբանվել և արժևորվել են Սփյուռքում և Հայաստանում կազմակերպության իրականացրած կրթամշակութային օջախների շինարարության, կրթաթոշակների և դրամաշնորհների, հայկական հոգևոր, առողջապահական հաստատությունների աջակցության, մշակութային ձեռնարկումների և գիտության զարգացման ծրագրերը:

Գ. Կյուլպենկյանի կյանքին ու նրա հիմնադրած բարեգործական կազմակերպությանն է անդրադառնում նաև Լ. Բալագյանը[16]:

Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու բարեգործական ու մշակութային գործունեությունն են ներկայացնում Ա. Ղազարյանը և Ռ. Լևոնյանը[17]:

ՀՀ արտաքին գործերի նախարարության և Հայաստանում Իտալիայի դեսպանության համատեղ լույս ընծայած հայ-իտալական բարեկամության օրերին նվիրված «Տեսի զերկիրն Իտալիոյ» խորագիրը կրող հայերեն-իտալերեն կատալոգում ընդգրկված հոդվածները լուսաբանում են հայ-իտալական բազմադարյան կապերը, մասնավորապես Վենետիկի Մխիթարյան միաբանության ազգանպաստ գործունեությունը այդ կապերի ամրապնդման և հայապահպանության գործում ընդհանրապես[18]:

Ռուսաստանի հարավի հայ Սփյուռքի ժողովրդագրական բնութագիրը տրված է Ա. Տեր-Սարգսյանցի և Վ. Խուդավերդյանի աշխա-

---

[11] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1992-1995 գործունեություն և ֆինանսական հաշվետվություն, Ե., 1995, նույնի՝ 1995-1996 ֆինանսական հաշվետվություն. 1992-1996 ծրագրային գործունեություն, Ե., 1996, նույնի՝ ֆինանսական և ծրագրային հաշվետվություն 1996-1997, Ե., 1997, նույնի՝ ֆինանսական և ծրագրային հաշվետվություն 1997-1998, Ե., 1999, նույնի՝ ֆինանսական և ծրագրային հաշվետվություն 2000, Ե., Տիգրան Մեծ, 2001:

[12] **Համազասպյան Վ.,** Ալեք Մանուկյան, Ե., 1994, նույն հեղինակի՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Ե., 2001:

[13] **Մելքոնյան Էդ.,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, «Մուղնի» հրատ., Ե., 2005:

[14] Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, հ. 1 (1906-1940), Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006, նույնի՝ հ. 2 (1941-2006), Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006:

[15] **Ղարախանյան Վ.,** «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956-2006 թթ., Ե., ԵՊՀ հրատ., 2008:

[16] Տե՛ս **Բալագյան Լ.,** Գալուստ Գյուլբենկյան, Ե., Զանգակ-97, 2004:

[17] Տե՛ս **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.Ն.,** Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), «Հայկական հանրագիտարան» հրատ., Ե., 1999:

[18] Տե՛ս Տեսի զերկիրն Իտալիոյ, Հայ-իտալական բարեկամության օրեր (2005 թ. հոկտեմբեր-նոյեմբեր), Ե., 2005:

տությունում[19], որտեղ հատկապես քննարկվում է տարածաշրջանի էթնոքաղաքական իրավիճակում հայերի արդի դրությունը:

Ռուսաստանի հայկական համայնքներին են անդրադարձել Ժ. Անանյանն ու Վ. Խաչատրյանը[20]: Տալով հատկապես 1914 թ. նախօրեին Ռուսաստանի հայկական համայնքների համապատկերը՝ հեղինակներն այնուհետև անդրադառնում են եղեռնի հետևանքով Ռուսաստանում հաստատված հայությանը:

Ղրիմի հայկական համայնքի վերածննդի հարցերին է նվիրված Վ. Գրիգորյանցի աշխատությունը[21], որում անդրադարձ է կատարվում երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Ղրիմից բռնագաղթված հայերի վերադարձի, համայնքի վերածննդի ու նրա առջև ծառացած հիմնախնդիրներին: Վ. Գրիգորյանցը մեկ այլ աշխատությամբ անդրադարձել է Միջին Ասիայի հայերին[22]:

Կինոյի, թատրոնի սփյուռքահայ դերասանների և կինոռեժիսորների գործունեության հանգամանալից քննությանն է նվիրված Ա. Բախչինյանի աշխատությունը[23]:

Առանձնակի կարևորություն ունի Է. Մինասյանի և Ա. Վարդանյանի աշխատությունը[24]: Հոդվածների այս ժողովածուում քննարկվել են Հայրենիք-Սփյուռք կապերի հիմնական ուղղությունները, մշակութային, հասարակական-քաղաքական առնչությունները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել Սփյուռքի տարբեր կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը և ԼՂՀ-ին ցույց տրվող բազմաբնույթ օգնությանը:

---

[19] Տե՛ս **Тер-Саркисянц А.Е., Худавердян В.Ц.**, Армянская диаспора Юга России, Москва, 1993.

[20] Տե՛ս **Ананян Ж.А., Хачатурян В.А.**, Армянские общины России, Е., 1993.

[21] Տե՛ս **Григорьянц В.**, Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Симферополь, 2004.

[22] Տե՛ս **Григорьянц В.Е.**, Армяне Средней Азии. История, современное положение, перспективы, Е., 1994.

[23] Տե՛ս **Բախչինյան Ա.**, Հայերը համաշխարհային կինոյում, Ե., Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 2004:

[24] Տե՛ս **Մինասյան Է., Վարդանյան Ա.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ» ՓԲԸ, 2010:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արցախյան պայքարը և Հայաստանի անկախացումը հզոր ազդակ հանդիսացան Հայրենիք-Սփյուռք հասարակական-քաղաքական հարաբերությունների նորովի ձևավորման համար: Խորհրդային Հայաստանի գոյության տարիներին նման կապերի մասին խոսք անգամ լինել չէր կարող: Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը սկզբունքորեն նոր մոտեցում ցուցաբերեց այս ոլորտում: Սփյուռքը միահամուռ պաշտպանեց Արցախյան շարժումը (չնայած պայքարի վարման ձևերի նկատմամբ տեսակետների աննշան տարբերությանը): Սկզբնական շրջանում Սփյուռքը միասնական էր նաև Հայաստանում ընթացող ժողովրդավարական գործընթացների հարցում:

Հայրենիք-Սփյուռք համագործակցության կարևորագույն ուղղություններից է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Խորհրդային Միության գոյության պայմաններում հայ ազգային ավանդական կուսակցությունները՝ Ռամկավար ազատական (ՌԱԿ), Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ) և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան (ՍԴՀԿ), գործում էին արտասահմանում և միայն ԽՍՀՄ-ի փլուզումից ու Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո հնարավոր դարձավ նրանց վերադարձը Մայր հայրենիք և մասնակցությունը երկրի քաղաքական անցուդարձերին: Ժամանակը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ համագործակցությունը այնքան էլ կայուն չէր՝ կապված նախ և առաջ ՀՅ Դաշնակցության գործունեությունը հայրենիքում կասեցնելու հարցի հետ: Այս հողի վրա Սփյուռքի քաղաքական պառակտումն ավելի խորացավ՝ երբեմն հասնելով մեծ լարվածության:

Տասնամյակներ շարունակ ամբողջատիրական, միակուսակցական համակարգով ապրելուց հետո անկախությունը Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն ընձեռեց անցնել բազմակուսակցական համակարգի: Այդ մասին փաստեց 1990 թ. օգոստոսի 23-ի անկախության հռչակագրի դրույթներին համապատասխան 1991 թ. փետրվարի 26-ին ընդունված օրենքը «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին», որում ամրագրված սկզբունքների հիման վրա հանրապետությունում կարող էին ձևավորվել և գործել հասարակական-քաղաքական տարբեր կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ: Միայն 1991 թ. հանրապետությունում գրանցվեցին և իրենց գործունեությունը ծավալեցին 22 կուսակցություններ, այդ թվում նաև խորհրդային իշխանության կողմից Հայաստանից վտարված հայ ավանդական ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ կուսակցությունները, որոնք մոտ 70 տարի գործելով Սփյուռքի տարբեր երկրներում՝ դարձել էին բավական կայուն, բազմամարդ[25]: Վերադառնալով հայրենիք՝ նրանք գործուն մասնակցություն ունեցան նորանկախ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին և Արցախյան ազատագրական շարժմանը:

1990 թ. հայրենիք վերադարձավ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցությունը (ՀՌԱԿ, գրանցվել է 1991 թ. հուլիսի 4-ին): Նրա կանոնադրությունը և քաղաքական պլատֆորմի հիմնադրույթները ընդունվեցին ՀՌԱԿ-ի առաջին հանրապետական պատգամավորական ժողովում (1991 թ. նոյեմբեր-1992 թ. փետրվար)[26]: ՀՌԱԿ-ը 1997 թվականից հանդիսանում էր ինքնուրույն կուսակցություն և հավատարիմ էր ՌԱԿ-ի գաղափարական սկզբունքներին: Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ՀՌԱԿ-ն ուներ երիտասարդական ակումբներ, Երևանում գործում էին «Արմենական», «Երիտասարդ ռամկավար», «Ազատական» ակումբները:

[25] Տե՛ս **Աբրահամյան Հ.**, ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները,-«Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, N 3 (617), սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 11-12:

[26] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն: Կուսակցություններ, Ե., 2002, էջ 21:

ՌԱԿ-ը վարչություններ ուներ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Եվրոպայում, Ավստրալիայում, Միջին Արևելքում և Հայաստանում: Նրա ազդեցության ոլորտում է գտնվում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը՝ իր կրթական, մարզական, մշակութային հաստատություններով: Կուսակցության հիմնական նպատակն էր օժանդակել հայրենիքին, հանդես գալ Հայ Առաքելական եկեղեցու միասնականության օգտին և շարունակել հայապահպանական գործունեությունը Սփյուռքում:

Հայկական հարցում հավատարիմ մնալով իր ավանդական դիրքորոշմանը՝ ՌԱԿ-ը գտնում էր, որ Հայաստանի նոր Հանրապետությունն է հանդիսանալու տարագիր հայ ժողովրդի բեկորների վերամիավորման ու մեր ազգային բոլոր արդար պահանջների և իղձերի՝ հայկական ցեղասպանության միջազգային ճանաչման, մեր պատմական հայրենիքի հողային ամբողջականության վերականգնման հիմնական կռվանը: Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ հարաբերությունների հարցին, քանի դեռ Թուրքիան չի ընդունել ցեղասպանությունը, ՌԱԿ-ը շարունակելու է մնալ պահանջատիրոջ դիրքերում՝ այդ առումով չընդունելով ոչ մի զիջում:

Կուսակցությունը Ղարաբաղյան հիմնահարցի կապակցությամբ կողմնակից էր քաղաքական բանակցությունների միջոցով խնդրի լուծմանը, ինչի հիմքում պետք է դրվեր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի սկզբունքը:

Արտերկրի հանրությանը և կառավարական շրջաններին Հայաստանի իրավիճակն ու շահերը ճիշտ ներկայացնելու ուղղությամբ զգալի աշխատանք էր կատարում ՌԱԿ-ի հասարակական հարաբերությունների բաժնի մաս հանդիսացող և Վաշինգտոնում գործող «Ամերիկայի մարդու իրավունքների հայկական խորհուրդը», որը հետապնդում էր երկու հիմնական նպատակ՝ արդար լուծում գտնել ցեղասպանության հարցին և հայանպաստ որոշումներ կայացնելու նպատակով ապահովել ԱՄՆ-ի քաղաքականության մեջ հայերի առավելագույն մասնակցությունը: ՌԱԿ-ի «Հայ իրավանց խորհուրդը» հիմնականում հանգանակությունների և միջոցառումների կազմակերպման շնորհիվ կապեր էր հաստատում ամերիկյան քաղաքական գործիչների հետ,

միևնույն ժամանակ նախընտրական քարոզչության ընթացքում կազմակերպում էր կոնգրեսականներին օգնելու միջոցառումներ:

Հայաստանում ընթացող զարգացումների անմիջական ազդեցության ներքո ՌԱԿ-ը Սփյուռքում պառակտվեց, ինչը խորանալով տարածվեց նաև կուսակցության հովանու ներքո գործող Թեքեյան մշակութային միության վրա: Երբ 1995 թ. Կիպրոսում կայացած ՌԱԿ-ի 19-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը կազմավորեց կենտրոնական վարչություն՝ Հակոբ Գասարճյանի ատենապետությամբ, կուսակցության նորընտիր վարչության և նախկին ղեկավար կազմի անդամների միջև ի հայտ եկան կազմակերպական բնույթի լուրջ հակասություններ, որոնց հետևանքով կուսակցությունից հեռացված նախորդ ղեկավար կազմի անդամները 1996 թ. Բոստոնում հրավիրելով ժողով՝ կազմավորեցին ևս մեկ կենտրոնական վարչություն՝ Հայկաշեն Ուզունյանի ատենապետությամբ[27]: Փաստորեն տեղի ունեցավ կուսակցության պառակտում, որի հետևանքով Սփյուռքում սկսեցին գործել նույն անվան տակ միմյանց նկատմամբ անհաշտ երկու կուսակցություններ: Կուսակցության անդամների մեծամասնությունը համախմբվելով հին սերնդի ներկայացուցիչ Հ. Ուզունյանի շուրջ՝ շարունակեց Հայաստանին ու նրա կառույցներին պաշտպանելու ՌԱԿ-ի ավանդական քաղաքականությունը:

2000 թ. փետրվարի 11-13-ին Փարիզում կուսակցության երկու թևերի միջև կայացած հանդիպման ընթացքում Հ. Գասարճյանն ու Հ. Ուզունյանը կնքեցին ներքին համաձայնագիր ՌԱԿ-ի միասնության վերահաստատման մասին, որում, գերագույն նպատակ ունենալով կուսակցության միասնության գաղափարը, չեղյալ հայտարարեցին «վերջին տագնապին ընթացքին երկուստեք կատարուած պատժական տնօրինումները» և վերահաստատեցին «բոլոր ընկերներուն կուսակցական իրաւավիճակը»[28]: Համաձայնագրով կուսակցությունը վերահաստատեց իր համոզմունքը, որ այսուհետ բոլոր տեսակի խանգարիչ հանգամանքներից ձերբազատվելով՝ ՌԱԿ-ը իր բոլոր շրջանակներով, մամուլով, ուղեկից կազմակերպություններով, ձեռք-ձեռքի տված Հայաստանի ՌԱԿ-ի հետ, միասնական ուժերով վերստին պետք է ստանձնի իր պատմական առաքելությունը:

[27] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, Ե., 2002, էջ 141:
[28] Տե՛ս «Ազգ», 18 փետրվարի, 2000:

Կուսակցության վերամիավորումը վերջնականապես տեղի ունեցավ 2000 թ. ապրիլի 8-ին Աթենքում հրավիրված ՌԱԿ-ի 22-րդ ընդհանուր պատգամավորական ժողովում[29]: Կուսակցության պատվո նախագահ ընտրվեց Հ. Ուզունյանը (Փարիզ), վարչության ատենապետ՝ Հ. Գասարճյանը (Բեյրութ):

Ինչ վերաբերում է Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությանը, ապա նրա գործունեության գլխավոր առանցքը եղել է հայապահպանությունը: ՍԴՀԿ հովանավորությամբ էին Սփյուռքում գործում կուսակցության երիտասարդական թևը՝ Նոր սերունդ մշակութային միությունը, Հայ մարմնամարզական միությունը, որոնք մասնաճյուղեր ունեին գրեթե բոլոր խոշոր հայ համայնքներում: Հանդես գալով ազգային համերաշխության և միջկուսակցական համագործակցության դիրքերից՝ ՍԴՀԿ-ն կողմնակից էր Հայ Առաքելական եկեղեցու միավորմանը՝ գտնելով, որ եկեղեցու ներսում ծնունդ առած տագնապը մեծ խոչընդոտ է եղել Սփյուռք-Հայրենիք միասնությանը և հայությանը ընդհանուր նպատակների շուրջ համախմբելու նպատակի իրականացմանը: Կուսակցությունը հայության առջև ծառացած համազգային լուծման կարոտ խնդիրներ էր համարում Արցախը, Հայկական դատը, երկրաշարժի հետևանքների վերացումը, Հայաստանի հետագա վերելքն ու զորացումը: Հայաստանը համարելով համայն հայության Մայր հայրենիքը՝ ՍԴՀԿ-ն գտնում էր, որ «այն մեկնակետ է վաղվա ամբողջական Հայաստանի»[30]:

Անկախության հռչակումից հետո հնչակյան կուսակցությունը վերահաստատվեց Մայր հայրենիքում (գրանցվել է 1991 թ. հոկտեմբերին): Կուսակցությունը գտնում էր, որ Հայաստանում պետք է հաստատվի ժողովրդավարություն և արագացվեն արմատական բարեփոխումները հօգուտ հայ ժողովրդի բարօրության,

[29] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, Համահայկական գիդ-ուղեցույց-2009, Ե., 2009, էջ 629:
[30] Տե՛ս Սոցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութիւն, Պաշտօնական յայտարարութիւն ՍԴ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան,-«Երիտասարդ Հայաստան», 1990, թիւ 11, մարտ, 87-րդ տարի, էջ 9:

հայրենադարձության ու ազգային վերամիավորման: Կարևորելով երկրում քաղաքական կայունության ապահովումը՝ ՍԴՀԿ-ն անհրաժեշտ է համարում «Արցախն ու Արևմտահայաստանը սևեռակետ ունենալով՝ ուժավորել Հայաստանից անհրավաբար բռնախլված հողերին վերատիրացման արդար պայքարը, վարել Հայաստանի աշխարհաքաղաքական ու քաղաքական դիրքից մեկնող և հայկական պետականության ազգային դիմագիծն ու գոյատևումը ամրապնդող քաղաքականություն»[31]:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարին հնչակյան կուսակցությունը մասնակցեց «Մեծն Մուրադ», «Փարամազ» ջոկատներով: ՍԴՀԿ-ն Ղարաբաղյան հարցի լուծում է համարում Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի միացումը կամ նրա անկախ կարգավիճակի ընդունումը:

2001 թ. ապրիլին Լառնակայում (Կիպրոս) գումարված ՍԴՀԿ 17-րդ համագումարը Հայաստանի ներկա վիճակը համարեց մտահոգիչ, երկրում տիրող քաղաքական, տնտեսական ու սոցիալական ծանր վիճակը արտագաղթի ուղղակի հետևանք[32]: Կարևորելով հայերի ցեղասպանության ճանաչումը տարբեր երկրների խորհրդարանների կողմից՝ համագումարը կրկին հավաստեց, որ «Հայ դատը համայն հայության գերագույն դատն է»[33]: Համագումարը պաշտոնական հայտարարության մեջ իր զորակցությունը հայտնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և դեմ արտահայտվեց Կիլիկիո Կաթողիկոսության և նրա ենթակա թեմերի ղեկավարման հատվածական մենատիրությանը: Որդեգրելով ազգապահպանման նոր քաղաքականություն՝ համագումարը Հայկական Սփյուռքն իր ազգային դիմագծով պահելու և պահանջատիրական պայքարին նոր թափ տալու նպատակով ընդգծեց Սփյուռքի կրթական, բարեսիրական, մարզական, երիտասարդական և մշակութային կառույցներն ամրացնելու անհրաժեշտությունը:

1990 թ. հայրենիք վերադարձավ նաև Հայ Յեղափոխական Դաշնակցությունը: ՀՅԴ-ն իր էությամբ, աշխարհայացքով և

[31] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 12 սեպտեմբերի, 1990:
[32] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 629:
[33] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 148:

ավանդույթներով ազգային, սոցիալիստական, ժողովրդավարական և հեղափոխական կուսակցություն է, որը պայքարում է հայության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի պաշտպանության համար: Իր գոյության ավելի քան 100 տարիների ընթացում կուսակցության դավանած հիմնական արժեքներն ու ծրագրերը զարգացում են ապրել, սակայն էական փոփոխության չեն ենթարկվել: Դեռևս Հայաստանի առաջին հանրապետության շրջանում՝ 1919 թ. ՀՅԴ-ի որդեգրած ազատ, անկախ, միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարը պահպանվում է մինչ օրս: Ըստ ՀՅԴ-ի՝ ազատ, անկախ և միացյալ Հայաստանի սահմանները պետք է համապատասխանեն Սևրի հաշտության պայմանագրի (1920 թ.) պայմաններին, ընդգրկեն նաև Ղարաբաղն ու Նախիջևանը: Թուրքիան պետք է ընդունի ցեղասպանության փաստը և հատուցի հայերին հասցված վնասը: Միջազգային հասարակական կարծիքի վրա ազդելու, հայերի ցեղասպանության համընդհանուր դատապարտմանը և պատմական արդարության վերականգնմանը հասնելու նպատակով ՀՅԴ-ն իր հանձնախմբերի միջոցով կազմակերպել է ժողովներ, ցույցեր և այլն:

1923 թվականից Վաշինգտոնում գործում էր ՀՅԴ հասարակական հարաբերությունների մասնաճյուղը հանդիսացող «Ամերիկայի հայկական ազգային կոմիտե» կազմակերպությունը, որի ծրագրային հիմնահարցերն էին 1990-ականների սկզբներին Հայոց ցեղասպանության ճանաչումը, Սպիտակի երկրաշարժի կապակցությամբ օգնության ստացումը և Ղարաբաղյան ինքնորոշման պաշտպանությունը[34]:

1988 թ. հոկտեմբերին ՀՅԴ-ն Հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունների հետ համատեղ արված հայտարարությամբ միանգամայն արդարացի ճանաչեց Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորվելու Արցախի հայ բնակչության պահանջը[35]:

ՀՅԴ-ն գործուն մասնակցություն ունեցավ Ղարաբաղյան հիմնահարցի զարգացման բոլոր փուլերում: Միաժամանակ

[34] Տե՛ս «Ազգ», 6 հուլիսի, 1991:
[35] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 50:

ծգտելով իր հնարավորությունները դրսևորել նաև Հայաստանի Հանրապետությունում անկախ պետականության հաստատման ու ամրապնդման գործընթացում՝ ՀՅԴ-ն մի շարք սկզբունքային հարցերում ընդդիմադիր դիրք ընդունեց իշխանությունների նկատմամբ: Իշխանությունների հետ ՀՅԴ-ի տարաձայնությունները ի վերջո հանգեցրին կուսակցության դեմ սկսված հալածանքներին, որի արտահայտություններից մեկն էլ ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի 1992 թ. հունիսի 29-ի ելույթն էր, որով ՀՀ Նախագահը կուսակցությանը մեղադրեց աղետի գոտու և Արցախի համար հանգանակված գումարների յուրացման, Հայաստանի ժողովրդին պատերազմի մեջ ներքաշելու քաղաքականության, իշխանությունների հետ գործակցելու մերժման, իր շարքերից գործակցող անդամներին հեռացնելու, ՊԱԿ-ի գործակալ լինելու մեջ և այլն: Հալածանքների եզրափակիչ քայլը եղավ 1995 թ. խորհրդարանական ընտրությունների նախօրյակին երկրի նախագահի 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրով, ապա և ՀՀ Գերագույն դատարանի 1995 թ. հունվարի 13-ի որոշմամբ ՀՅԴ-ի և նրա ուղեկից կազմակերպությունների գործունեության կասեցումը Հայաստանում՝ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի խախտման մեղադրանքով[36]: Փակվեցին կուսակցության գրասենյակներն ու լրատվամիջոցները, բռնագրավվեցին ու թալանվեցին կուսակցական միջոցներն ու գույքը, ՀՅԴ մի շարք հայտնի գործիչներ ազատազրկվեցին:

ՀՅԴ Բյուրոն կենտրոնական և առանձին կոմիտեների ներկայացուցիչների մասնակցությամբ 1995 թ. հունվարի 5-6-ը ժողով գումարելով և քննելով Դաշնակցությունը ապօրինի հռչակելու և ՀՅԴ հայաստանյան գործունեությունը արգելելու ՀՀ Նախագահի 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագիրը ու դրա հետևանքով հայ իրականության մեջ ստեղծված ազգային-քաղաքական ծանր կացությունը՝ հաստատեց ՀՅԴ Բյուրոյի հունվարի 6-ի հայտարարությունը, որով դեկտեմբերի 28-ի հրամանագիրը համարեց ապօրինի ու հակաժողովրդավարական և պահանջեց ՀՀ Նախագահից չեղյալ համարել այն՝ որպես երաշխիք Հայաստանի Հանրապետության իրավական ու ժողովրդավարական

[36] Տե՛ս նույն տեղում:

կարգերը հարգելու ու պաշտպանելու իր պարտավորության[37]: Այնուհետև ՀՅԴ-ն ՀՀ իշխանություններից պահանջեց անմիջապես դադարեցնել Դաշնակցությանը վարկաբեկելու պետական քարոզչությունը, իսկ ՀՀ Նախագահից՝ հարգել Հայաստանի անկախության հռչակագրով, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով իր ստանձնած պարտավորությունները, մարդու իրավունքներն ու ժողովրդավարական ազատությունները, միաժամանակ երաշխավորել դաշնակցական ձերբակալված ընկերների անհապաղ և արդար դատաքննության արժանանալու իրավունքը և վերջ տալ նրանց դեմ կիրառվող վարկաբեկման ապօրինի քարոզչությանը: Կուսակցությունը նաև վերահաստատեց հայրենի հողի վրա հայ ժողովրդին ծառայելու իր առաքելությունը շարունակելու վճռականությունը:

Հայաստանում ժողովրդավարական սկզբունքների և մարդու իրավունքների ոտնահարման, ՀՅԴ, Հայ օգնության միության, Համազգայինի, Հայ մարմնակրթական ընդհանուր միության, ՀՅԴ երիտասարդական միության և մամուլի գործունեության «խափանման» որոշման դեմ հանդես եկավ սփյուռքահայությունը, տեղի ունեցան ժողովրդական հավաքներ: ՀՅԴ գործունեության կասեցման հրամանագրի դեմ բողոքելու համար ՀՅԴ Կենտրոնական կոմիտեն 1995 թ. հունվարի 8-ին Փասադենայում (ԱՄՆ) կազմակերպեց բողոքի համաժողովրդական հավաք, որին մասնակցեց շուրջ 4000 մարդ[38]: Նույն օրը ՀՅԴ Բյուրոն ընդունեց հայտարարություն, որում դատապարտվում էր ՀՀ Նախագահի հակաօրինական հրամանագիրը՝ որպես «Հայաստանի ու արտերկրի հայութիւնը տարբերելու և ընդհանրապէս հայութիւնը երկփեղկելու վարքագիծին իբրեւ նոր արտայայտութիւն»[39]: Նույն հայտարարությամբ ՀՅԴ-ն որոշեց կասեցնել Հայաստանի իշխանությունների սփյուռքյան նախաձեռնություններին առնչվող գործունեությունը, բոլոր մակարդակների վրա մասնակցությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանք-

[37] Տե՛ս «Հայրենիք», 12 հունվարի, 1995: Տե՛ս նաև «Հորիզոն», 16 հունվարի, 1995:

[38] Տե՛ս «Փարոս», 15 հունվարի, 1995:

[39] Տե՛ս ՀՅԴ Բիւրօ, Յայտարարութիւն,-«Արմենիա», 1995, բացառիկ թիւ, յունուար:

ներին, նյութական և բարոյական օժանդակությունները Հայաստանի դեսպանատներին և ներկայացուցչություններին, մինչև Հայաստանում ՀՅԴ-ի գործունեության դեմ իրականացված արգելքի վերացումը: «Հայաստանի իշխանութիւններու հետ գործակցութեան այս առկախումները արգելք պիտի չըլլան, որ Հ.Յ. Դաշնակցութիւնը և իր գործակից ու համակիր զանգուածները շարունակեն Հայաստանի և Արցախի ժողովրդին հասցնել իրենց բարեսիրական ու մարդասիրական օժանդակութիւնները և զօրավիգ կանգնիլ Արցախի ազատագրական արդար պայքարին»,- նշվում է ՀՅԴ Բյուրոյի հայտարարության մեջ[40]:

Իշխանությունների կողմից կուսակցության գործունեության հետագա արգելումը դարձավ անիմաստ: Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո (1998 թ. փետրվարի 3) և Ռ. Քոչարյանի՝ ՀՀ Նախագահի պաշտոնակատար դառնալուց մի քանի օր անց ՀՀ արդարադատության նախարարության կոլեգիայի 1998 թ. փետրվարի 9-ի որոշմամբ պաշտոնապես վերականգնվեց ՀՅԴ-ի գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, կարճվեցին քրեական գործերը ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամների նկատմամբ, վերսկսվեց կուսակցության թերթերի հրատարակումը[41]: 1998 թ. ձմռան-գարնան ամիսներին վերականգնվեցին Դաշնակցության բոլոր իրավունքները՝ կուսակցությունը կրկին ակտիվորեն ներգրավվեց Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում՝ մասնակցելով նախագահական և Ազգային ժողովի ընտրություններին:

ՀՅԴ-ն բազմաթիվ երկրներում գործող իր կառույցներով Սփյուռքում հասարակական-քաղաքական որոշիչ ուժ է, ինչպես նաև իր ներկայացուցիչներն ունի միջազգային տարբեր կազմակերպություններում: Նրա հովանավորությամբ են գործում Հայ օգնության միությունը, Համազգային մշակութային միությունը, Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև

[40] Տե՛ս նույն տեղում:

[41] Տե՛ս Мелконян Э., Политические партии диаспоры и процессы демократизации в Армении,-"Диаспора, нефть и розы", Чем живут страны Южного Кавказа (под редакцией Ивлиана Хаиндравы и Александра Искандаряна), Фонд Генриха Белля и Кавказский институт СМИ, Е., 2005, с. 112.

բազմաթիվ դպրոցներ, մարզական ու մշակութային ակումբներ և այլն:

Արցախյան հիմնահարցը դիտարկելով որպես ազգային-ազատագրական պայքարի արտահայտություն՝ ՀՅԴ-ն հակամարտության սկզբից ևեթ իր բոլոր միջոցներն ուղղեց հայկական պատմական տարածքի ազատագրությանը ու արցախահայության պաշտպանությանը: Կուսակցությունն Արցախի վերջնական կարգավիճակը համարում է վերամիավորումը Հայաստանի Հանրապետության հետ:

Դաշնակցության ծրագրի համաձայն «Հայկական հարցի» խնդիրներից մեկն էլ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դրա հետևանքների վերացման և հայ ժողովրդին պատճառած վնասի փոխհատուցման հարցերն էին, որոնք, որպես միջազգային իրավունքի բաղկացուցիչներ, պետք է բարձրացներ այժմյան Հայաստանը:

Հայաստան-Սփյուռք հարաբերություններում կուսակցության նպատակը Սփյուռքի տարագիր հայության համախմբումն էր իր պատմական հայրենիքում և ծրագրավորված ու փոխլրացնող գործընթացով ՀՀ և Սփյուռքի հզորացումը: Որպես համայն հայության հայրենիք՝ Հայաստանը պետք է կրեր նաև պատասխանատվություն սփյուռքահայության հանդեպ:

Այսպիսով, հայկական ներուժի զորաշարժին նպատակաուղղված՝ Դաշնակցության առաջնահերթ ծրագրերը 1990-ական թվականներին ունեին հիմնականում չորս ուղղություն:

Առաջինը քաղաքական ուղղությունն էր՝ հայ ժողովրդի սփյուռքյան լոբբիի կազմակերպումը և համախմբված գործունեության ծավալումը: Այդ նպատակով Դաշնակցության կողմից Հայ դատի հանձնախմբեր էին ձևավորվել գրեթե բոլոր հայկական համայնքներում: Հայ դատի կենտրոնական գրասենյակներ էին գործում ԱՄՆ-ում (Վաշինգտոն), Եվրոպայում (Բրյուսել), Լիբանանում (Բեյրութ) և Հայաստանում (Երևան): Համագործակցելով ՀՀ ԱԳՆ հետ՝ Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակները, հայ և օտար շրջանակների, կազմակերպությունների և ազդեցիկ անհատների օժանդակությամբ, ընդգրկված էին Հայոց ցեղասպանության ճանաչման, Արցախյան հարցի խաղաղ կարգավորման բանակցությունների վրա հայանպաստ ճնշում իրականաց-

նելու և ընդհանրապես ԼՂՀ-ին քաղաքական, տնտեսական ու ռազմավարական օժանդակություն ապահովելու, Հայաստանի Հանրապետության միջազգային վարկանիշի բարձրացման, հայրենի պետականության հզորացման և հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական հիմնահարցերի կարգավորումն ապահովելու գործում:

ՀՅԴ ձեռնարկած աշխատանքների երկրորդ ուղղությունը հայրենիքի և Սփյուռքի մերձեցման հարցն էր, ինչն իրականացվում էր մամուլի և զանգվածային լրատվամիջոցների արդիական հնարավորությունների առավելագույն օգտագործմամբ՝ հայկական «հավաքականությունների» միջև ինքնաճանաչման և փոխճանաչման նպատակով:

ՀՅԴ նախաձեռնությունների շարքում առաջնահերթ էր երրորդ ուղղությունը, ինչի նպատակն էր Հայաստանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցելով՝ Հայրենիք-Սփյուռք փոխօգնության կազմակերպումն ու ընդլայնումը: Հայրենիքի կրթական, գիտական և մշակութային հնարավորությունները նաև Սփյուռքի հայապահպանման ընդհանուր գործին ծառայեցնելու նպատակով Դաշնակցության համահայկական կառույցն ու նրա կազմակերպությունները հովանավորում էին հայրենի կրթօջախների և մշակութային հաստատությունների ուսումնական ծրագրերի և դասագրքերի հրատարակումը, գիտական-մշակութային սեմինարների կազմակերպումը, մշակույթի գործիչների և գեղարվեստական խմբերի շրջագայությունները և այլն:

Դաշնակցությունը հայրենական արտադրության համար արտասահմանյան շուկաներ գտնելու և արտաքին ներդրումներ (ֆինանսական թե տեխնոլոգիական) ապահովելու նպատակով հետամուտ էր հայրենի և սփյուռքյան գործարար շրջանակների միջև համագործակցության ու միացյալ նախաձեռնությունների ընդլայնմանը, նաև հայրենիքի և Սփյուռքի միջև գործընկերային կապեր ստեղծելուն:

Չորրորդ ուղղությունը նոր սերնդի աշխուժացմանը և համահայկական երիտասարդական շարժման ծավալմանը նպաստող նախաձեռնություններն էին: ՀՅԴ-ն և նրա կազմակերպությունները աշխատանք էին կատարում հայրենի և սփյուռքահայ երիտասարդության շփումները մեծացնելու, համագործակցության և մերձեցման հնարավորություններն ընդարձակելու ուղղությամբ: Այս դեպքում, նրա ծրագրային հենքն էր հանդիսանում աշխարհացրիվ հայության համախմբումը:

Հետխորհրդային ժամանակաշրջանը ԱՊՀ երկրների հայ համայնքների համար նշանավորվեց հասարակական և մշակութային վերածնունդով, որը պայմանավորված էր, մի կողմից՝ այս երկրների ժողովրդավարացման գործընթացներով և մյուս կողմից՝ Արցախյան շարժման ազգային վերելքով և Հայաստանի անկախության հռչակումով: Թեև ԱՊՀ երկրներում հիմնադրվել էին հայկական կազմակերպություններ, կրոնական համայնքներ ու դպրոցներ, սակայն, դրանք դեռ գտնվում էին կազմավորման, զարգացման և ազգային ավանդույթների վերականգնման փուլում: Հայկական համայնքները ինքնակազմակերպման ցանկալի աստիճանի հասցնելու, նրանց միջև արդյունավետ համագործակցություն հաստատելու հնարավորությունները իրագործելու համար ՀՅԴ-ն նախաձեռնեց համայնքների կազմակերպման մնայուն հիմքերի ստեղծման ու ամրապնդման ծրագրեր: Իր կառույցների՝ ՀՅԴ Բյուրոյի Մոսկվայի Հայ դատի գրասենյակի, ՀՅԴ Մոսկվայի կազմակերպության և ՀՅԴ «Միտք» երիտասարդական միության կողմից իրականացվում էին համայնքային, հասարակական, մշակութային կազմակերպությունների ձևավորման, դրանցում առկա ներուժի համախմբման, գործող կրթական հաստատությունների գործունեության բարելավման, նորերի հիմնադրման գործնական աշխատանքներ[42]: Կարևորելով պետության դերը հայկական ներուժի համախմբման գործում՝ ՀՅԴ-ն նպաստում էր Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված պետական ծրագրերում ԱՊՀ համայնքների ներգրավմանն ու գործուն մասնակցությանը:

2000 թ. փետրվարին կայացած ՀՅԴ 28-րդ ընդհանուր ժողովը հաստատեց, որ կուսակցությունը շարունակում է հավատարիմ մնալ իր որդեգրած քաղաքականությանը՝ ռազմավարական առաջնահերթ նպատակ համարելով ՀՀ և ԼՂՀ պետականությունը-

[42] Տես Հայ Յեղափոխական Դաշնակցություն: Հարցեր ՀՅ Դաշնակցությանը 2 (առանց տեղի և տարեթվի), էջ 58:

ների ամրապնդումը, հայերի ցեղասպանության և հողային պահանջատիրության խնդիրները, նաև նոր ստեղծվող համայնքների (ԱՊՀ երկրներում) կազմակերպմանն աջակցելը: Ընդհանուր ժողովը որոշեց բյուրոյի կենտրոնական գրասենյակը Լիբանանից տեղափոխել Հայաստան:

Այսպիսով, հայ ավանդական ազգային-քաղաքական կուսակցությունները 1990-ական թվականներին ավելի ընդլայնեցին իրենց համահայկական գործունեությունը՝ հետևողական պայքար ծավալելով հայ ազգային ինքնության պահպանման, հայոց պետականության ամրապնդման, Լեռնային Ղարաբաղի հայության ինքնորոշման, Հայ դատի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Չնայած գաղափարական և գործունեության ձևերի որոշ տարբերություններին՝ սկզբունքային և համազգային նշանակություն ունեցող հարցերում կուսակցությունները դրսևորում էին միասնական մոտեցում և անգամ հանդես էին գալիս համատեղ հայտարարություններով:

1.2. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սփյուռքի բոլոր կազմակերպությունների գործունեության հիմնական ուղղություններից է Հայկական հարցի լուծումը: Այդ կազմակերպությունների երկարամյա և հետևողական գործունեությունը մեծապես նպաստել է մի շարք երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը:

1941 թ. Նյու Յորքում ՀՅԴ կողմից հիմնված Հայ դատի հանձնախումբը (ՀԴՀ, Armenian National Committee) պաշտպանում էր հայ ժողովրդի պահանջներն ու ազգային ձգտումները, ներկայացնում հայության տեսակետները բոլոր մակարդակներով՝ իր գլխավոր խնդիրը համարելով հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնումը[43]: Ըստ հանձնախմբի կանոնադրության՝ «Հայ դատը» կամ ավելի լայն առումով «Հայկական հարցը» ուներ քաղաքական, տարածքային, բարոյական, սոցիալ-տնտեսական և իրավական հայեցակետեր: ՀԴՀ գտնում էր,

[43] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 667:

որ Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանը պետք է միավորվեն մեկ միացյալ հայկական պետության մեջ, որը ընդգրկելու էր նաև հայկական այն տարածքները, որոնք խորհրդային իշխանության օրոք արհեստականորեն անջատվել էին այսօրվա Հայաստանից: Հայկական հարցի լուծումը դիտվում էր ոչ միայն որպես հատուցում ցեղասպանության կամ հայերի կորուստների դիմաց, այլ նաև ենթադրում էր ազատ և ժողովրդավարական պետության ստեղծում:

ՀԴՀ տեղական կազմակերպությունները գործում էին նաև Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, իսկ 1991 թվականից՝ Երևանում և Մոսկվայում: Եվրոպայում, հատկապես Ֆրանսիայում և Գերմանիայում գործող հանձնախմբերի գործունեության շնորհիվ Եվրախորհրդարանը 1987 թ. հունիսի 18-ին ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձև:

ՀԴՀ-ի քաղաքական գործողությունների և կառավարական կապերի բաժինը օժանդակում էր ցեղասպանությունը դատապարտող օրենսդրական ակտերի ստեղծմանը, ինչպես նաև տեղական, դաշնային և միջազգային մակարդակներով ուշադրություն էր հրավիրում հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի խախտումների վրա: ՀԴՀ-ի շնորհիվ ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը 1984 թ. ընդունեց բանաձև հայերի ցեղասպանության վերաբերյալ, իսկ 1989 թ.՝ Սենատը ընդունեց հանձնարարական Լեռնային Ղարաբաղի մասին: Կալիֆոռնիայում նահանգային իշխանությունների որոշմամբ 1990 թվականից ապրիլի 24-ը համարվեց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, բացի այդ նահանգի հանրային դպրոցներում ընդգրկվեցին դասընթացներ հայերի ցեղասպանության մասին, իսկ դպրոցների համար կազմվեց «Հայ դատ» դասագիրքը և այլն[44]: Հանձնախումբը Հայաստանի Հանրապետության ու Արցախի շրջափակումը, հայերի ցեղասպանությունն ու ջարդերը դատապարտող ցույցեր և այլ միջոցառումներ էր կազմակերպում Թուրքիայի ու Ադրբեջանի դեմ, ֆինանսավորում էր ցեղասպանության մասին կինոֆիլմերի արտադրությունը և այլն: Հանձնախմբին կից գործող հետազո-

[44] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 31:

տական կենտրոնը ուսումնասիրում և վերլուծում էր իրադրությունը Հայաստանում, ԱՊՀ երկրներում և Թուրքիայում, լույս էր ընծայում Հայոց ցեղասպանությանը, Արցախի և Ադրբեջանի իրադրությանը վերաբերող աշխատություններ:

ՀԴՀ-ի լոբբիստական գործունեության կարևոր ուղղություններից էին ԱՄՆ-ի բյուջեում Հայաստանի Հանրապետության և Արցախի համար տնտեսական և ռազմական օժանդակության, նաև ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ Հայաստանի Հանրապետության նկատմամբ դրական դիրքորոշման ապահովումը և Թուրքիայի հակահայկական քարոզչության չեզոքացումը:

Հայ դատի կենտրոնական հանձնախմբի հետևողական աշխատանքի շնորհիվ 1991 թ. մարտի 14-ին Եվրոպական խորհրդարանը որոշում ընդունեց Արցախի և Հայաստանի շրջափակման մասին[45]: Ընդունված բանաձևը նկատի ունենալով, որ «Ադրբեջանից 300 հազար հայ փախստականները (Բաքվի և Սումգայիթի սպանդներ) Հայաստանում ապրում էին ծայրահեղ աղքատության մեջ, էներգիայի և մանավանդ գազի տագնապը, որից տառապում էր Հայաստանի Հանրապետությունը շրջափակման պատճառով, սույն հանրապետությունում հարուցում էր մեծ անպատեհություններ (գործարանների փակում, գործազրկություն), ինչպես նաև երկրաշարժն ու հայերի սպանդը Ադրբեջանում, որոնք ի հայտ էին բերել թվով 500 հազար և շատ ծանր պայմաններում ապրող մի բնակչություն»,[46] կոչ էր անում Խորհրդային Միության նախագահ Մ. Գորբաչովին՝ շատ արագ գործնական քայլեր ձեռնարկել Հայաստանի Հանրապետության և Ղարաբաղի շրջափակումը վերացնելու, Ղարաբաղի ու մերձակա շրջանների հայ բնակչության հանդեպ հալածանքները դադարեցնելու, նաև Լեռնային Ղարաբաղի օրինական, սահմանադրական իշխանությունները վերականգնելու ուղղությամբ:

Արևմտյան Ամերիկայի ՀՅԴ Հայ դատի հանձնախմբի շնորհիվ Ադրբեջանին ԱՄՆ-ի օժանդակությունը արգելող բանաձևը վերացնելուն ուղղված նախագահ Քլինթոնի վարչակազմի փորձին ամերիկահայերը 1994 թ. հակազդեցին հազարավոր հեռագրեր ուղղելով Վաշինգտոն, որոնք հիշեցնում էին, որ այդ բանաձևի վերացումը մեծապես կվնասի Կալիֆոռնիայի հայերի շրջանում ԱՄՆ նախագահի վայելած ժողովրդականությանը[47]:

1998 թ. ապրիլի 18-ին Փարիզի Սորբոնի համալսարանում ավարտվեց Հայ դատի Ֆրանսիայի հանձնախմբի կազմակերպած հայկական ցեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողովը, որտեղ բացահայտվեցին արխիվային նոր փաստաթղթեր Հայոց ցեղասպանության մասին[48]: ՀԴՀ-ն Հայոց ցեղասպանությանը նվիրված միջազգային գիտաժողով Ֆրանսիայում կազմակերպեց նաև 2000 թ.:

2001 թ. հիմնադրվեց Եվրոպայի տարբեր երկրներում գործող Հայ դատի հանձնախմբերի ներկայացուցչական մարմինը՝ Եվրամիության Հայ դատի հանձնախումբը, որը հայության շահերի և Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ աշխատանքներ էր տանում հատկապես Եվրախորհրդարանում և Եվրոպական միության շրջանակում[49]:

Ամերիկայի հայկական համագումար (ԱՀՀ, Armenian Assembly of America) համաամերիկյան հայկական կազմակերպությունը հիմնադրվել է 1972 թ.: Կենտրոնը գտնվում էր Վաշինգտոնում, գրասենյակներ ուներ Լոս Անջելեսում, Երևանում և Ստեփանակերտում: ԱՀՀ-ի նպատակն էր համախմբել ամերիկահայերին, սատարել ԱՄՆ-ում հայկական մշակույթի և ազգային ինքնագիտակցության զարգացմանը, հայկական հուշարձանների ու մշակութային արժեքների պահպանմանը, հավաստի տեղեկություններ տարածել հայ ժողովրդի պատմական, կրթական, կրոնական ու մշակութային կյանքի և ամերիկահայության մասին, պաշտպանել ամերիկահայերի շահերն ու իրավունքները: Այդ նպատակները իրագործելու համար ԱՀՀ-ի կողմից մշակվել էին կառավարական, իրավագիտական, հասարակական, համալսարանական, ուսանողական, գաղթականական և մի շարք այլ ծրագրեր: Հակազդելով հայերի ցեղասպանությունը հերքելու

[45] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 20 մարտի, 1991:
[46] Տե՛ս նույն տեղում:

[47] Տե՛ս Արեւմտեան Ամերիկա. Աւելի քան 3000 հեռագիրներ յղուեցան Սպիտակ Տան եւ դեմոկրատ ղեկավարներուն,-«Արմենիա», 1994, N 6, հունիս, էջ 13:
[48] Տե՛ս «Ազգ», 24 ապրիլի, 1998:
[49] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 668:

թուրքական կողմի բոլոր փորձերին՝ ԱՀՀ-ն պայքարում էր, որպեսզի ԱՄՆ-ի կառավարությունը ճանաչի հայերի ցեղասպանությունը: Այդ նպատակով ԱՀՀ-ն կազմակերպում էր Հայոց ցեղասպանության վերաբերյալ միջազգային գիտաժողովներ, հրապարակում և տարածում այդ թեմայով գիտական գրականություն: Այն ամերիկյան իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով փորձում էր ազդել ԱՄՆ-ում հասարակական կարծիքի ձևավորման, ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա, ինչպես նաև ԱՄՆ-ի քաղաքական կյանքում բարձրացնում էր հայերի դերը՝ ամերիկահայերին ներգրավելով երկրի քաղաքական կյանքում:

Ելնելով իր հիմնական ծրագրից, որի նպատակը ԱՄՆ-ի կառավարման գործընթացներին ամերիկահայության մասնակցության ապահովումն ու իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններում ամերիկահայերի շահերի պաշտպանությունն էր, ԱՀՀ-ն հետևում էր Կոնգրեսի և Սպիտակ տան գործունեությանը, ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակների դիրքորոշման վրա ներգործելու համար հավաքում ու տարածում էր անհրաժեշտ տեղեկություններ: ԱՀՀ-ն հենվում էր նաև ամերիկահայերի քաղաքական զանգվածային ակտիվության վրա՝ կոորդինացնելով այդ ուղղությամբ տարվող հայկական մյուս կազմակերպությունների աշխատանքները: Զանգվածային ակտիվության դրսևորման ձևերից էր Կոնգրեսի հասցեով նամակների հոսքի ու հեռախոսազանգերի, բարձրաստիճան պաշտոնյաների հետ անմիջական հանդիպումների կազմակերպումը:

Սփյուռքահայ կազմակերպություններից ԱՀՀ-ն առաջիններից էր, որին հաջողվեց երկրաշարժից անմիջապես հետո մեծագույն դժվարություններ հաղթահարելով՝ մուտք գործել Խորհրդային Հայաստան և 1989 թ. փետրվարին Երևանում բացել գրասենյակ[50]: Մինչև 1988 թ. ԱՀՀ-ն հաղորդակցության օղակ էր հանդիսանում ամերիկահայ համայնքների միջև, սատարում էր ամե-

[50] Տե՛ս Armenian Assembly of America, Annual report, 1999, p. 36. Տե՛ս նաև նույնի՝ Annual report, 2000, p. 25:

ռիկահայերի մասնակցությունը ԱՄՆ-ի քաղաքական կյանքին, ԱՄՆ-ում իրազեկում էր, թե ովքեր են և որտեղից են գալիս հայերը, ինչ պատմական ու մշակութային հիմք ունեն: 1990-ական թթ. քաղաքական նոր իրադարձությունները բազմաթիվ լուրջ խնդիրներ դրեցին ամերիկահայության առջև: Ցեղասպանության հարցի միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերից բացի, վերջիններս ստիպված եղան ամերիկյան կառավարական շրջանակներում հետամուտ լինելու նոր հարցադրումների պարզաբանմանը (երկրաշարժ, Ղարաբաղյան շարժում, Հայաստանի անկախության գործընթաց): ԱՀՀ-ն ԱՄՆ-ի կառավարության օժանդակությունն ապահովելու համար բազմաթիվ դիմումներ հղեց ԱՄՆ-ի կառավարությանը՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ծանր վիճակի, Ադրբեջանի կողմից Հայաստանի պարտադրված շրջափակման հարցերի վերաբերյալ:

Հայաստանի անկախացումը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը հող ստեղծեցին զբաղվելու նաև Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի բնակչության բարօրության, անվտանգության և զարգացման խնդիրներով: Դրանք իրագործելու համար ԱՀՀ-ն որդեգրեց Հայոց ցեղասպանության ճանաչման, ԱՄՆ-ի Կոնգրեսում հայանպաստ ծրագրերի ու բանաձևերի ընդունման, ԼՂՀ-ին և Հայաստանի Հանրապետությանը տնտեսական ու մարդասիրական օգնություն տրամադրելու, Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ հայանպաստ դիրքորոշում ապահովելու գործելակերպ: Բացի ԱՀՀ-ից ԱՄՆ-ում այդ խնդիրներով զբաղվում էին նաև հայկական մյուս հաստատությունները՝ Հայկական ազգային կոմիտեն, Մարդու իրավունքների հայկական խորհուրդը, նաև ԱՄՆ-ի քաղաքական շրջանակների վրա մեծ ազդեցություն ունեցող առանձին հայտնի ազգային գործիչներ, որոնց համակարգված գործողությունների շնորհիվ Հայ դատին մեծապես օժանդակում էին բազմաթիվ ազդեցիկ օրենսդիրներ, որոնք անձնական սերտ կապեր ունեին հայերի հետ:

ԱՀՀ-ն ակտիվ աշխատանք էր տանում հատկապես հայկական ցեղասպանության բանաձևը ամերիկյան կոնգրեսի կողմից ընդունելու ուղղությամբ: «Հայկական Համագումարը պիտի շարունակէ յանձնառու մնալ Գոնկրէսի կողմէ Բանաձեւի վաւերացման, որ պիտի վերահաստատէ Հայկական Ցեղասպանութեան

վերաբերեալ Միացեալ Նահանգներու վաւերագրութիւնը: Այդ եղած է եւ պիտի շարունակէ մնալ այս կազմակերպութեան առաջնահերթութիւններէն մէկը»,- նշում է ԱՀՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Հրայր Հովնանյանը[51]:

ԱՀՀ-ն հատուկ կարևորություն էր տալիս ԱՄՆ-ի կոնգրեսականների և պետական այլ գործիչների հետ անձնական շփումներին: Երբ 1995 թ. Կոնգրեսում ստեղծվեց Հայկական հարցերի կոնգրեսական խումբը (60-ից ավելի կոնգրեսական), ԱՀՀ-ն սերտորեն համագործակցեց խմբի հետ՝ կազմակերպելով կոնգրեսականների այցեր Հայաստանի Հանրապետություն ու Արցախ, ինչպես նաև օգնեց նրանց ավելի եռանդուն ջանքեր գործադրել հայանպաստ օրինագծերի անցկացման հարցում[52]: Կոնգրեսականների այցերի նպատակն էր իրենց երկրի ներկայացուցիչներին Հայաստանը ծանոթացնելը և հայանպաստ կողմնորոշում ձևավորելը:

Առաջնային խնդիր համարելով թուրքական ու ադրբեջանական վարչակազմին, նաև հայության համար աննպաստ քաղաքականությանը դիմակայելը և ԼՂՀ ինքնորոշման պայքարը սատարելը՝ ԱՀՀ-ի և ամերիկահայ մյուս լոբբիստական կազմակերպությունների (Հայ դատի հանձնախումբ և այլն) կարևոր ձեռքբերումներից էր ԱՄՆ-ի Կոնգրեսի «Ազատության աջակցության ակտ» կոչվող օրենքի 907 բաժնի ընդունումն ու կիրառումը, որն արգելում էր ԱՄՆ-ի կառավարության ուղղակի օգնությունը Ադրբեջանին (Հայաստանն ու Ղարաբաղը շրջափակման ենթարկելու համար (կասեցվեց 2001 թ. վերջին))[53]:

Ժողովրդավարական գործընթացներին երիտասարդ ամերիկահայերի մասնակցությունը խրախուսելու նպատակով 1977 թվականից ԱՀՀ-ն հայազգի ուսանողների ամառային պրակտիկան կազմակերպում էր Վաշինգտոնի կարևոր քաղաքական կենտրոններում, այդ թվում՝ Կոնգրեսում: ԱՀՀ-ի ուսանողական

[51] Տես ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 32, թ. 5:
[52] Տես «Ազգ», 3 հուլիսի, 1998:
[53] Տես Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Հայաստան 2020. զարգացման և անվտանգության ռազմավարություն, Երևան, Տիգրան Մեծ, 2003, էջ 388-390: Տես նաև «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 39-40:

հարցերի մասնաբաժնի կողմից ամառվա ամիսներին Վաշինգտոն հրավիրվող համալսարանական ուսանողներն աշխատում էին դաշնային կառավարության զանազան գործակալություններում ու հաստատություններում (յուրաքանչյուր տարի ծրագրին մասնակցում էր ԱՄՆ-ի տարբեր ծայրերից եկած շուրջ 40 հայ ուսանող)[54]: 1977-1998 թթ. ընթացքում ծրագրի շրջանակներում շուրջ 600 ուսանողներ հնարավորություն են ունեցել երկու ամիս շարունակ անմիջականորեն աշխատել մի միջավայրում, ուր ձևավորվում էր ԱՄՆ-ի քաղաքականությունը[55]: ԱՀՀ-ի ուսանողական հարցերի մասնաբաժինը նյութեր էր տրամադրում նաև ԱՄՆ-ի համալսարաններում գործող ավելի քան 60 հայկական ուսանողական միություններին[56]: Այս ծրագրի նպատակը ապագայում հայանպաստ գործունեություն ծավալելու համար կարող ուժերի պատրաստումն էր: Հենվելով 1978 թվականից ի վեր գործող սկզբնական ծրագրի վրա (ինչը հնարավորություն էր տալիս սփյուռքահայ ուսանողներին ամառվա ամիսներին աշխատել Վաշինգտոնում), ԱՀՀ-ի ուսանողական ծրագիրն 1999 թվականից առավել ընդլայնեց իր ոլորտները՝ ընդգրկելով նաև աշխատանքը Հայաստանի պետական կառավարական կառույցներում[57]: Ծրագիրը նպատակ ուներ նպաստել Հայաստանի բարգավաճմանը, քանի որ կամավորական հիմունքներով ՀՀ կառավարական կառույցներում ներգրավված ամերիկահայ երիտասարդներն իրենց աշխատանքային փորձն ու գիտելիքները փոխանցում էին հայրենիք, միաժամանակ ձեռք բերում հարուստ գիտելիքներ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի պատմության և մշակույթի վերաբերյալ:

Համագումարի հայաստանյան խոշոր ձեռնարկներից էր ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (ՄԶԳ) ֆինանսավորմամբ գործող Հասարակական կազմակերպությունների կենտրոնը, որի ստեղծման գաղափարը ծագել էր դեռևս 1992 թ., սակայն ԱՄՆ ՄԶԳ-ն Հայաստանի ժողովրդավարական զարգացմանն աջակցող այդ ծրագիրը ֆինանսավորել սկսեց միայն 1994

[54] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 11:
[55] Տե՛ս «Ազգ», 3 հուլիսի, 1998:
[56] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 63:
[57] Տե՛ս «Ազգ», 17 օգոստոսի, 2000:

թվականից[58]: Հասարակական կազմակերպությունները (ՀԿ) գործում էին հասարակությանը հուզող տարբեր հիմնահարցերի լուծման, հասարակության իրավական իրազեկության բարձրացման, հաշմանդամներին օգնելու, բնապահպանության ոլորտում միջոցառումների անցկացման, նաև միայնակ ծերերի մասին հոգալու, բազմազավակ մայրերին տնայնագործության հնարավորություն ընձեռելու ուղղությամբ: 1994 թ. մշակվեց ՀԿ-ի համապարփակ ծրագիր, իսկ 1996 թ. կենտրոնը իր մասնաճյուղը հիմնադրեց Գյումրիում[59]:

Հասարակական կազմակերպություններին զուգընթաց ԱՀՀ-ի «Հասարակական կազմակերպությունների ուսուցման և տեղեկատվության կենտրոնը» (ՀԿՈՒՏԿ) օգնում էր հայաստանյան ոչ կառավարական կազմակեպություններին ավելի մեծ դեր ստանձնել երկրի զարգացման գործում: Երևանում և Գյումրիում գործող իր գրասենյակներով ՀԿՈՒՏԿ-ն համագործակցեց ավելի քան 800 ոչ կառավարական կազմակեպությունների հետ, որոնք սովորում էին կազմակերպել բյուջեն, ներկայացնել ծրագրեր, իրականացնել քարոզչություն, կազմակերպվում էին «Կլոր սեղանի» շուրջ հանդիպումներ կառավարության անդամների և լրատվամիջոցների հետ, որտեղ շոշափվում էին մարդու իրավունքների, մեծահասակների, երեխաների, շրջապատի մաքրության վերաբերյալ թեմաներ[60]: Կենտրոնը նաև հանդիպումներ էր կազմակերպում միջազգային այնպիսի հաստատությունների հետ, ինչպիսիք էին Եվրախորհրդարանը, ՄԱԿ-ի փախստականների հարցերով հատուկ գրասենյակը, «Կաթոլիկական օգնության» ծառայությունը, կանադական «Կերակրե՛ք երեխաներին» կազմակերպությունը և այլն:

1990-ական թթ. ԱՀՀ-ն զգալիորեն ընդլայնեց իր գործունեության ոլորտը՝ նորաստեղծ «ԱՐԱՄԱԿ» (Armenian American Actions Committee – Ամերիկահայերի գործողությունների կոմիտե) կոմիտեի միջոցով, որն իր քարոզչական աշխատանքներում ընդգրկելով ավելի շատ ամերիկահայերի՝ Վաշինգտոնում համագումարի ձայնն ավելի ազդեցիկ էր դարձնում: «ԱՐԱՄԱԿ»-ը մի

[58] Տե՛ս նույն տեղում, 3 հուլիսի, 1998:
[59] Տե՛ս նույն տեղում:
[60] Տե՛ս նույն տեղում, 27 մայիսի, 2000:

կառույց էր, որ «զորաշարժում էր» ամերիկահայությանը «զգոնության արշավներով» այս կամ այն հայանպաստ որոշումը պաշտոնական մարմիններում անցկացնելու համար[61]: Նրա ջանքերով ամերիկահայությունը միահամուռ բողոքեց Կալիֆոռնիայի համալսարանում օսմանյան ուսումնասիրությունների ամբիոն բացելու դեմ. բողոքի հետևանքով այն չբացվեց[62]: Համայնքներում անցկացվող ֆորումների, շրջանային հանդիպումների, կոնֆերանսների շնորհիվ «ԱՐԱՄԱԿ»-ը զգալիորեն ընդարձակեց իր գործունեության ոլորտը՝ խիստ սեղմ ժամկետում հավաքագրելով ԱՄՆ-ի բոլոր նահանգներում ավելի քան 6000 կամավորներ, որոնք իրենց աշխատանքներում օգտագործում էին նորագույն տեխնիկայի բոլոր հնարավորությունները[63]:

ԱՀՀ-ն 1996 թ. Վաշինգտոնում հիմնեց «ANI» (Armenian National Institute - Հայկական ազգային ինստիտուտ) կազմակերպությունը, որը բացառապես զբաղվում էր հայկական ցեղասպանության փաստաթղթերի հավաքման (ինստիտուտը միայն Անգլիայից ձեռք բերեց մոտ 12 հազար փաստաթուղթ), ուսումնասիրության և օտարներին ներկայացնելու աշխատանքով[64]: Նրա իրավաբանական բաժինը զբաղվում էր ցեղասպանությանը զոհ դարձած մեր հայրենակիցների ունեցվածքի համար օսմանյան բանկերից փոխհատուցում ստանալու խնդրով:

Ձեռնամուխ լինելով Սփյուռքում հայապահպանությանը, հայրենիքին աջակցելուն, այլ երկրներում հայերի և Հայաստանի շահերի պաշտպանությանը՝ ԱՀՀ-ն անգնահատելի աշխատանք կատարեց հատկապես Հայաստանի անկախացման, Արցախի ազատագրական պայքարի ժամանակաշրջանում: ԱՀՀ-ն 2000 թ. շնորհիվ իր անդամներ Անուշ Մաթևոսյանի և Ջերարդ Գաֆէսճեանի առատաձեռն նվիրատվության (յուրաքանչյուրը 3,5 մլն ԱՄՆ դոլար) Վաշինգտոնի կենտրոնում ձեռք բերեց 7 մլն դոլար արժողությամբ պատմական մի շենք, որի առաջին հարկում ստեղծվելու էր Հայոց ցեղասպանության թանգարան՝ ի հիշատակ

[61] Տե՛ս Armenian Assembly of America, Annual report, 1998, p. 10-11.
[62] Տե՛ս «Ազգ», 3 հուլիսի, 1998:
[63] Տե՛ս նույն տեղում, 27 մայիսի, 2000:
[64] Տե՛ս նույն տեղում:

հայ նահատակների[65]: Այդ շենքում իր գրասենյակը հաստատեց նաև ԱՀՀ-ն: 2000 թ. ԱՀՀ-ին շնորհվեց «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան, որը ԼՂՀ Նախագահ Արկադի Ղուկասյանը հանձնեց Հ. Հովնանյանին՝ վերջին տարիներին համագումարի ցուցաբերած արցախանպաստ գործունեության համար[66]:

1994 թ. Ֆրանսիայում ստեղծվեց Ֆրանսահայ կազմակերպությունները միավորող «Ապրիլ 24» կոմիտեն ("April 24" Committee), որն իր հիմնադրման օրվանից ի վեր աշխատել է Սենատում Հայոց ցեղասպանությանն առնչվող օրինագիծը քննարկելու, 1996 թ. ապրիլին ՅՈՒՆԵՍԿՕ-ում «Պետությունները և ցեղասպանությունը» մեծ գիտաժողովն անցկացնելու, 1997 թ. Փարիզում կազմակերպված միջոցառումների, եղեռնի զոհերի հուշարձանը Փարիզում կառուցելու և այլ ուղղություններով: Ֆրանսիայի Ազգային ժողովի որոշումը «Հայոց ցեղասպանության ընդունման մասին» կոմիտեի գործողությունների արդյունք է: Ցեղասպանության ճանաչման համար պայքարում կոմիտեն համագործակցում էր Հայ դատի հանձնախմբի հետ:

«Ապրիլ 24» կոմիտեն միավորում էր 28 կազմակերպություն, որոնցից էին ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը, «Ֆրանսահայ առաջադիմական շարժումը», ՀԲԸՄ-ն, «Կապույտ խաչը» և այլն («Հայկական հիմնադրամ» և «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունները անդամներ չէին, սակայն օժանդակում էին հանձնախմբի գործունեությանը)[67]: 2001 թ. Փարիզում «Ապրիլ 24» կոմիտեն վերակազմավորվեց «Ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի» (ՖԿՀԽ, Conseil de Coordination des Organisations Armeniennes de France - CCAF), որը ձգտում էր առավել արդյունավետ դարձնել համայնքային տարբեր կառույցների գործունեությունը՝ համատեղելով նրանց ջանքերն ու լոբբինգային աշխատանքը հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման և Հայ դատի պաշտպանության: Հանդիսանալով ներկայացուցչական մարմին՝ ՖԿՀԽ-ն միավորում էր ավելի քան 20

[65] Տե՛ս նույն տեղում, 15 ապրիլի, 2000:
[66] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 սեպտեմբերի, 2000:
[67] Տե՛ս «Ազգ», 23 ապրիլի, 1999:

հայկական կազմակերպություն և համակարգում նրանց աշխատանքները[68]:

1906 թ. Եգիպտոսում հիմնված Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ, Armenian General Benevolent Union), բարեգործական կազմակերպություն լինելով հանդերձ՝ 1990-ական թթ. ծավալեց նաև քաղաքական գործունեություն: 1989 թվականից ՀԲԸՄ-ի ծրագրերին ավելացավ նաև Հայ դատի գծով քարոզչական լայն աշխատանք, ինչի հետևանքով Միությունը ստացավ Միավորված ազգերի կազմակերպության մոտ ոչ կառավարական գրասենյակ բացելու արտոնություն[69]:

1996 թ. նոյեմբերին ՀԲԸՄ 79-րդ Ընդհանուր ժողովը, լիովին գիտակցելով հայրենիքի և Սփյուռքի առջև ծառացած մարտահրավերները, որդեգրեց բանաձև, որում ողջունելով միության 90-ամյա ծառայությունը ի նպաստ հայապահպանության, հայ ժողովրդի բարօրության և ազգային արժեքների պահպանման՝ իր զորակցությունն էր հայտնում նորանկախ հայրենի պետականությանը և Արցախի ազատագրական արդար պայքարին՝ «մաղթելով միեւնոյն ժամանակ արդար լուծում մը Արցախի ապագայի երաշխաւորման, որպէսզի ան կարենայ պատերազմի վէրքերը բուժելով վերընձիւղուած ապրիլ հարեւան ժողովուրդներու հետ բարի դրացիութեան կապերով»[70]:

Սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ՝ «Հայկական ժողովրդային շարժումը», «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը», «Հայաստանի ցեղասպանության արդարության մարտիկները» Հայ դատի լուծումը տեսնում էին առաջին հերթին զինված պայքարի մեջ:

Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը (ՀԱՀԳԲ, Armenian Secret Army for the Liberation of Armenia - ASALA) ռազմաքաղաքական ընդհատակյա կազմակերպություն է, ստեղծվել է 1975 թ. Լիբանանում: ՀԱՀԳԲ-ի նպատակն էր զին-

[68] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 582: Տե՛ս նաև «Հայկական Սփյուռք» տարեգիրք, ՀՀ սփյուռքի նախարարություն, Ե., 2009, էջ 214:
[69] Տե՛ս **Դալլաքյան Կ.**, նշվ. աշխ., էջ 143:
[70] Տե՛ս Բանաձեւ ներկայացուած ՀԲԸՄ-ի 79-րդ Ընդհանուր ժողովին,- «Տեղեկատու», 1997, թիւ 2, յունուար, էջ 4-5:

ված գործողությունների միջոցով համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա, Թուրքիային ստիպել ճանաչել 1915-1923 թթ. հայերի ցեղասպանությունը և բռնազավթված Արևմտյան Հայաստանը վերադարձնել նրա իսկական տիրոջը՝ հայ ժողովրդին: Նրա զինված գործողություններ-ը հիմնականում ուղղված էին թուրք դիվանագետների, պետական պաշտոնատար անձանց, դեսպանատների, հյուպատոսարանների, ինչպես նաև օտարերկրյա այն բոլոր հաստատությունների դեմ, որոնք դրամական կամ ռազմական օժանդակություն էին ցույց տալիս Թուրքիային: ՀԱՀԳԲ-ը թշնամի էր համարում հայկական հողերը բռնազավթած Թուրքիային, նաև ԱՄՆ-ին, ՆԱՏՕ-ին և բոլոր այն պետություններին, որոնք աջակցում էին նրան, բարեկամ էր համարում բոլոր «հակաթուրքական շարժումները», սերտորեն գործակցում էր քրդական և արաբական ժողովրդավարական ու հեղափոխական շարժումներին:

1991 թ. ՀԱՀԳԲ-ն հրապարակեց իր վերամշակված ծրագիրը, որտեղ առանց փոփոխության ենթարկելու ռազմավարական նպատակները՝ իր զորակցությունն էր հայտնում անկախ Հայաստանի Հանրապետությանը: ՀԱՀԳԲ-ն գտնում էր, որ հասարակական և քաղաքական նոր պայմաններում հայրենիքի և Սփյուռքի հայությունն ապրում է իր պատմության ամենավճռական ժամանակներից մեկը, քանի որ հայրենաբնակ հայությունը թևակոխել է ազգային զարթոնքի նոր փուլ: Ըստ ՀԱՀԳԲ-ի արցախահայությունը իր ֆիզիկական գոյությանը սպառնացող պանթուրքիզմի վտանգը կարող է դիմագրավել ինքնապաշտպանությամբ և դրանից խուսափել միայն Հայաստանին Արցախի միացման դեպքում:

ՀԱՀԳԲ վերամշակված ծրագիրը կրկին վերահաստատեց կազմակերպության միակ նպատակը՝ Արևմտյան Հայաստանի ու բռնագրավյալ մյուս հայկական տարածքների ազատագրումը, որի իրագործման համար էլ այն ընտրել է զինյալ պայքարի ուղին: Հիմնվելով այն համոզմունքի վրա, որ Հայկական դատը ազգային-ազատագրական է իր էությամբ՝ ՀԱՀԳԲ-ն մերժում էր մասնակից դառնալ միջազգային քաղաքական հակամարտություններին: «...5. Ազատագրական պայքարը պիտի շարունակուի առանց ընդմիջումի կամ ընկրկումի՝ մինչեւ որ Հայութիւնը վերատիրանայ իր հողային եւ մարդկային իրաւունքներուն ու վերահաստատուի իր հայրենի հողին վրայ: Թուրք ցեղասպան պետութիւնը ու անոր մեղսակից մեծ պետութիւնները պէտք է գիտնան եւ համոզուին, թէ չեն կրնար հանգիստ ու խաղաղ մնալ այնքան ատեն, որ չեն սրբագրեր Հայոց դէմ գործուած անարդարութիւնը եւ այնքան ատեն, որ Հայութեան կը զլացուի մարդկային համահաւասար իրաւունքներ վայելել բուն իսկ իր երկրին մէջ:

6. Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակը Արեւմտեան Հայաստանի եւ բռնագրաւուած հայկական բոլոր հողամասերու ազատագրումէն ետք աւարտած կը նկատէ իր առաքելութիւնը»,- նշվում էր ՀԱՀԳԲ-ի ծրագրում[71]:

1990-ական թթ. ընթացքում ՀԱՀԳԲ-ն զինված գործողության դիմեց միայն 1991 թ., երբ ստանձնեց նույն թվականի դեկտեմբերի 19-ին Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում թուրքական դեսպանատան զինվորական կցորդի դեմ կատարված մահափորձի պատասխանատվությունը[72]: «Հայ ժողովուրդի ոտնահարուած իրաւունքներուն՝ հայկական բռնագրաւեալ հողերու վերատիրացման եւ Հայոց ցեղասպանութեան նահատակներուն արեան հատուցման արդար հարցը չի կրնար անտեսուիլ, ոչ ալ սակարկուիլ: Ազատագրական պայքարի ծեռնարկումը պարտադրուած է Հայութեան, որովհետեւ իրողութիւն է թէ բոլոր այլեւայլ միջոցները բազմիցս փորձուած՝ սակայն մնացած են ապարդիւն:

Պիտի շարունակենք պայքարը՝ մինչեւ վերահաստատումը Հայութեան անժամանցելի բոլոր իրաւունքներուն: Թրքական պետութիւնը ընդմիշտ պիտի մնայ մեր թիրախը՝ մինչեւ այն ատեն, որ կը մերժէ ընդունիլ եւ հատուցել հայ ժողովուրդին իրաւունքները»,- նշվում էր այդ կապակցությամբ 1991 թ. դեկտեմբերի 20-ին ՀԱՀԳԲ-ի հրապարակած հաղորդագրության մեջ[73]:

---

[71] Տե՛ս Ծրագիր Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակի,-«Հայաստան», 1991, թիւ 141, Թ տարի, էջ 13-14:

[72] Տե՛ս Հայկական բազուկը կը հարուածէ Պուտափեշթի մէջ,-«Սփիւռք», 1992, թիւ 1, արաց 4484 (յունուար), էջ 13:

[73] Տե՛ս Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակ, ՀԱՀԳ բանակը կը գրոհէ. Հաղորդագրութիւն,-«Ժողովրդային պայքար», 1991, թիւ 100, 18 դեկտեմբեր-28 յունուար 1992, էջ 2: Տե՛ս նաև Հաղորդագրութիւն,-«Հայաստան», 1992, թիւ 144, Ժ տարի, էջ 13:

1992 թ. ապրիլի 24-ին հայկական ցեղասպանության 77-ամյակի առթիվ ընդունված հայտարարության մեջ ՀԱՀԳԲ-ն կրկին անգամ հանդես գալով Արցախում պայքարի շարունակման վճռականությամբ՝ մեկ անգամ ևս հավաստեց, որ զինյալ պայքարն է միակ ուղին, որը պետք է կարողանա իրենց առաջնորդել դեպի վերջնական հաղթանակ, Հայաստանի բռնագրավյալ բոլոր տարածքների ազատագրում և հայության միլիոնավոր նահատակների արյան արդար հատուցում[74]:

Հայկական ժողովրդային շարժում (ՀԺՇ) կազմակերպությունը ստեղծվել է 1980 թ. ԱՍՍԼՀ-ի ազգային-ազատագրական զինված պայքարին համակիր առանձին խմբակների ու անհատների կողմից: Սկզբնական շրջանում ՀԺՇ-ն հանդես էր գալիս որպես ՀԱՀԳԲ-ի քաղաքական ուղուն համակիր շարժում: ՀԺՇ-ի նպատակը ազատ, անկախ, միացյալ Հայաստանի ստեղծումն էր, ազգահավաքը պատմական հայրենիքում: Պահանջելով հրաժարվել ներքին հակամարտություններից՝ շարժումը կոչ էր անում ամբողջովին լծվել Հայ դատի հետապնդման գործին: Հիմնական նպատակը Սփյուռքում (մասնավորապես Մերձավոր և Միջին Արևելքում) հայությանը զինված պայքարի նախապատրաստելն էր Թուրքիայի բռնագրավված հայկական հողերի ազատագրման համար, հասնել նաև Հայոց Մեծ եղեռնի միջազգային ճանաչմանը, աջակցել հայկական պետականության ամրապնդմանը, նպաստել առանձին հայկական համայնքների միջև կապերի ամրապնդմանը:

ՀԺՇ-ի առաջին կենտրոնը հիմնվել է 1981 թ. Բեյրութում: 1982 թ. իսրայելյան ներխուժման հետևանքով շարժման կենտրոնը տեղափոխվել է Աթենք, որտեղ ՀԺՇ-ն կազմակերպել է միջազգային գիտաժողովներ՝ նվիրված Հայ դատին (1985) և արդի հրատապ խնդիրներին (1992, 1995, 1997): ՀԺՇ-ի մասնաճյուղեր էին գործում ԱՄՆ-ում, Կանադայում, Քուվեյթում, Հնդկաստանում և այլուր, որոնք ենթարկվում էին տվյալ երկրի օրենսդրական պահանջներին: Շարժումը շատ համակիրներ ուներ Իրանում, ուր որպես լեգալ կազմակերպություն գործում էր միության մյուս թևը՝

[74] Տե՛ս Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակ, Յայտարարութիւն հայկական ցեղասպանութեան եօթանասունեօթերորդ ամեակին առիթով,-«Հայաստան», 1992, թիւ 145, Ժ տարի, էջ 9:

«Հայկական ժողովրդային միությունը» (ՀԺՄ): Շարժումը պաշտոնապես ճանաչված էր նաև Հունաստանում, ներկայացուցչություններ ուներ Հայաստանում, Սերբիայում: 1993 թ. հունիսի 27-ին ՀԺՇ-ի և Սերբ-հայկական ընկերության նախաձեռնության շնորհիվ Սերբիայի խորհրդարանը դատապարտեց հայերի ցեղասպանությունը[75]:

Իր գաղափարները հայությանը մատչելի դարձնելու և Հայկական հարցը օտարներին ծանոթացնելու նպատակով Հայկական ժողովրդային շարժումը բացի իր պարբերաթերթերից («Ժողովրդային պայքար», «Սփյուռք», «Արաքս») տարբեր լեզուներով հրատարակում էր պատմական ու քաղաքական բնույթի հեղինակային, թարգմանական գրքեր, գրքույկներ և այլն, դրանք անվճար տարածում հայ և օտար միջավայրերում: ՀԺՇ-ն Միջին Արևելքում և Եվրոպայում կազմակերպել է մի շարք ցուցահանդեսներ, գիտաժողովներ՝ նվիրված Հայկական հարցին, հայ ազգային-ազատագրական պայքարին, հայերի ցեղասպանությանը, ղարաբաղյան պայքարի հիմնախնդիրներին, Թուրքիայի ծավալապաշտական ծրագրերին: Շարժումն ակտիվորեն համագործակցում էր ինչպես Հայաստանի, այնպես էլ Եվրոպայի և ԱՊՀ երկրների կազմակերպությունների հետ:

ՀԺՇ-ն իր ներկայությունը Հայաստանում բացահայտեց 1988 թ. փետրվարին՝ Ղարաբաղյան շարժման ժամանակ, երբ ակտիվորեն մասնակցեց և կազմակերպեց Երևանի բուհերի սփյուռքահայ ուսանողության մասնակցությունը այդ շարժմանը: Այդ ժամանակից Հայաստանում գործում էր ՀԺՇ-ի Հայաստանի ներկայացուցչությունը, որի նախաձեռնությամբ հիմնվել է «Նեմեսիս» բարեգործական միությունը[76]:

2000 թ. ապրիլի 22-ին Երևանի «Եռաբլուր» պանթեոնում ՀԺՇ-ի հայաստանյան ներկայացուցչության կողմից բացվեց ՀԱՀԳԲ և ՀԺՇ նահատակների պանթեոն-հուշահամալիրը, որտեղ նախատեսվեց հետագայում տեղափոխել ԱՍՍԼՀ-ի նահատակների աճյուններն աշխարհի տարբեր երկրներից[77]:

[75] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 111:
[76] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 709:
[77] Տե՛ս «Ազգ», 26 ապրիլի, 2000:

Թեև սփյուռքահայ կազմակերպությունների գործունեության մեջ առկա էին Հայ դատի լուծման համար պայքարի վարման ձևերի էական տարբերություններ, սակայն նրանց բոլորի հիմնական նպատակն էր Հայոց ցեղասպանության ճանաչումը, պատմական հայրենիքի վերածնությունը, հայոց պետականության ամրապնդումն ու Արցախյան խնդրի արդարացի լուծումը:

***

Սփյուռքահայ համայնքներում ամեն տարի նշվում էր Հայոց ցեղասպանության օրը, որը մեծ մասամբ ուղեկցվում էր բողոքի ցույցերով ու միտինգներով, ցեղասպանության փաստը իրենց երկրների կողմից դատապարտելու և ընդունելու պահանջներով: Զանգվածային այդ միջոցառումները կազմակերպված բնույթ էին ձեռք բերում սփյուռքահայ ավանդական քաղաքական կուսակցությունների և միությունների, նաև եկեղեցու շնորհիվ: Սփյուռքում և հայրենիքում հատկապես լայն թափով նշվեցին Հայոց ցեղասպանության 75 (1990), 80 (1995) և 85 (2000)-ամյակները: Ազգային վերազարթոնքի արդյունքում Սփյուռքի մի շարք համայնքներում հիմնվեցին Մեծ եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնող հուշակոթողներ:

1988-2001 թթ. ևս սփյուռքահայությունը շարունակեց միահամուռ պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ: Այդ առումով աչքի ընկավ հատկապես ֆրանսահայությունը: Հայ դատին աջակցելու, Հայաստանի Հանրապետությանը և Արցախին օգնություն կազմակերպելու, հայկական համայնքների մերձեցմանը նպաստելու համար 1993 թ. Փարիզում կազմակերպվեց շուրջ 60 հայկական կազմակերպություններ համախմբող Ֆրանսահայ ընկերակցությունների ֆորումը[78]:

Սփյուռքահայ կազմակերպությունների համախմբված գործունեության շնորհիվ 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի խորհրդարանը ճանաչեց 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստը, իսկ 2001 թ.՝ հայության շարունակական պայքարի հետևանքով Ֆրանսիան ճանաչեց Հայոց ցեղասպանության փաստը՝ երկրի Սենատի ընդունած օրենքի տեսքով[79]:

Լեռնային Ղարաբաղի խնդիրը և դրանից բխող բարդությունները հեռանկարային կարևորության հարցեր էին ողջ Սփյուռքի համար, որն անկախ քաղաքական կողմնորոշումից ու տարաձայնություններից՝ մեծ ուշադրությամբ հետևում էր տեղի ունեցող իրադարձություններին: Հայ Սփյուռքի բոլոր շրջանակները գտնում էին, որ այդ պայմաններում ելքը հակամարտության գոտում իրադրության կարգավորման, շրջափակման վերացման, բնակչության անվտանգության ապահովման և խնդրի լուծման քաղաքական ուղիների որոնման մեջ էր:

1.3. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Նոր պայմաններում սփյուռքահայ համայնքները ոչ միայն ակտիվ համագործակցություն ծավալեցին Մայր հայրենիքի հետ բոլոր բնագավառներում, այլև սկսեցին ուղիներ փնտրել համահայկական կառույցի ստեղծման ուղղությամբ՝ քաջ գիտակցելով, որ դա բարդ ու տևական գործընթաց է: Եվրոպայի միավորման պայմաններում հայերը նույնպես ձգտեցին ամրապնդել եվրոպական Սփյուռքի տարբեր հատվածներին իրար միավորող կապերը՝ համաեվրոպական կառույցի ստեղծման միջոցով: Եվրոպայի հայկական միությունների ֆորում (ԵՀՄՖ) համաեվրոպական հայկական կազմակերպությունը ստեղծվեց 1998 թ. հուլիսի 18-19-ին Ժնևում՝ Եվրոպայի յոթ երկրների (Շվեյցարիա, Գերմանիա, Բելգիա, Իտալիա, Անգլիա, Հունգարիա, Ռուսաստան) հայ համայնքների տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների նախաձեռնությամբ[80]: ԵՀՄՖ-ի կանոնադրության համաձայն ֆորումը բաց էր Եվրոպայի բոլոր համայնքային կառույցների (հոգևոր և աշխարհիկ), ինչպես նաև անհատների համար: Ֆորումի նպատակն էր պայմաններ ստեղծել Եվրոպայի հայկական կազմակերպությունների միջև մշտական հաղորդակցություն

[78] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 643:

[79] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 626-627: Տե՛ս նաև Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 583, «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 214:

[80] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 21:

ապահովելու, համագործակցություն հաստատելու և ամրապնդելու, համատեղ խնդիրներ ու ծրագրեր քննարկելու և դրանք միասնաբար լուծելու համար:

1999 թ. մայիսի 1-2-ին Եվրոպայի 15 երկրների հայ համայնքների շուրջ 200 ներկայացուցիչների մասնակցությամբ Բրյուսելում (Բելգիա) կայացավ ԵՀՄՖ-ի առաջին ընդհանուր համաժողովը, որը հաստատեց ԵՀՄՖ-ի կանոնադրությունը, սահմանեց գործունեության հիմնական ուղղությունները[81]: Որոշվեց ֆորումի գրասենյակը հիմնել Ժնևում: Ֆորումի ընթացքում կազմվեցին մի շարք աշխատանքային խմբեր, որոնց նպատակն էր հայությանը հուզող հիմնախնդիրների հեռահաղորդակցական մեկնաբանումը, եվրոպական առևտրական տան կազմավորումը և այլն:

ԵՀՄՖ-ի երկրորդ ընդհանուր ժողովը տեղի ունեցավ 2000 թ. հունիսի 9-12-ը Բուդապեշտում (Հունգարիա)՝ եվրոպական 13 երկրների հայկական կազմակերպությունների ավելի քան 110 անդամների մասնակցությամբ[82]: Ֆորումի հիմնական նպատակը Արևելյան և Արևմտյան Եվրոպայի հայկական համայնքների միջև համագործակցության դաշտի ստեղծումն էր: Չնայած Արցախի ներկայացուցիչները չէին մասնակցում, սակայն արցախահայության առջև ծառացած խնդիրները դուրս չմնացին ֆորումի ուշադրությունից: Ֆորումի անդամ դարձան Կիպրոսի և Մոսկվայի երկու համայնքային կազմակերպություններ՝ այդպիսով անդամների թիվը հասցնելով 22-ի[83]: Խորհրդաժողովն ընդունեց աշխատանքային նոր ծրագիր և որոշում՝ ֆինանսական գործունեության ապահովության մասին: Մասնավորապես հավանություն տրվեց ԵՀՄՖ-ի ընդհանուր քարտուղարության նախաձեռնությանը՝ տարբեր բնագավառների մասնագիտական խորհրդաժողովներ անցկացնելու և Բրյուսելում քաղաքական-տեղեկատվական գրասենյակ հիմնելու մասին: Ֆորումն անդրադարձավ նաև Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

[81] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 613:

[82] Տե՛ս **Ասատրյան Հ.,** Եվրոպահայությունը՝ «Եվրամիություն» ունենալու ակնկալիքով.-«Օրեր», 2000, N 5-6, մայիս-հունիս, էջ 14:

[83] Տե՛ս «Ազգ», 13 հունիսի, 2000:

2001 թ. հունիսի 1-4-ը Բոննում (Գերմանիա) կայացած ԵՀՄՖ-ի երրորդ ընդհանուր ժողովում քննարկվեցին հայ համայնքների կառուցվածքային խնդիրները, նաև ազգային կյանքի կազմակերպման, հայոց լեզվի ուսուցման ու հայապահպանության, հայերի ցեղասպանության ճանաչման հետ կապված հարցեր: Ֆորումի գլխավոր նվաճումներից էր Եվրամիության գծով շփումների և տեղեկատվության աշխատանքային խմբի ստեղծումը և այդ խմբի գրասենյակի բացումը Բրյուսելում: Երրորդ ընդհանուր ժողովը որոշում ընդունեց մայիսի 9-ը՝ Շուշիի ազատագրման օրը, Եվրոպայում հայտարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օր՝ կոչ անելով իր անդամ միություններին, համայնքներին, ինչպես նաև Եվրոպայի բոլոր համայնքներին այդ օրը կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ և դրանցից գոյացած հասույթն ամբողջովին տրամադրել ԼՂՀ-ին: ԵՀՄՖ-ի կոչը մեծ արձագանք ունեցավ Եվրոպայի հայության շրջանում և կազմակերպական ձև ստացավ ԵՀՄՖ-ի, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ու ԼՂՀ կառավարության կողմից 2001 թ. սեպտեմբերի 17-ին կնքված եռակողմ համաձայնագրում, ըստ որի ԼՂՀ կառավարությունը ներկայացնում էր ֆինանսավորման կարիք ունեցող մարդասիրական ծրագրեր, ԵՀՄՖ-ն կազմակերպում էր դրամահավաք միջոցառումներ (հեռախոսամարաթոններ և այլն), իսկ «Հայաստան» համահայկական հիմնադրամը իրականացնում էր նպատակային ծրագրերը[84]:

Հետագայում ֆորումի գործադիր մարմնի և քաղաքական խորհրդի միջև ի հայտ եկած հակասությունների հետևանքով ԵՀՄՖ-ն պառակտվեց. ԵՀՄՖ-ից անջատված թևը հիմնադրեց նոր կազմակերպություն՝ Եվրոպայի հայկական համագումար (ԵՀՀ) անվանումով: Նորաստեղծ կազմակերպության նպատակն էր համագործակցության մթնոլորտ ստեղծել եվրոպահայ կազմակերպությունների միջև, նպաստել եվրոպահայության խնդիրների լուծմանն ու ազգային հարցերի, այդ թվում Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Կազմակերպության ծրագրերում լուրջ տեղ էին հատկացվելու նաև Հայաստանի Հանրապետության ու ԼՂՀ պետականություններին աջակցելու միջոցառումներին: ԵՀՀ

[84] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 22:

հիմնադիր ժողովն ընդունեց նաև հռչակագիր նոր կազմակերպության ստեղծման ու նպատակների վերաբերյալ:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որակական նոր մակարդակով կառուցելու ուղղությամբ շրջադարձային էր 1999 թ. սեպտեմբերի 22-23-ին Երևանում աշխարհի 50 երկրներից, Հայաստանի Հանրապետության և Արցախի շուրջ 1200 հոգևոր և աշխարհիկ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովը, որը համահայկական կառույց ստեղծելու Հայաստանի Հանրապետության առաջին փորձն էր[85]: Առաջին անգամ անկախ Հայաստանի մայրաքաղաքում միասին հավաքվել էին աշխարհասփյուռ հայության ներկայացուցիչները՝ համազգային խնդիրներ քննարկելու և լուծման ուղիներ նախանշելու համար:

Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովում հնչեցին մոտ 70 ելույթներ, որոնք անդրադարձան արտագաղթին, Սփյուռքի անմիջական մասնակցությամբ Հայաստանի անկախ պետականության կայացմանը և երկրի տնտեսության վերելքին, Հայ դատին, Հայոց ցեղասպանությանը, Սփյուռքում ազգապահպանության խնդիրներին, Արցախյան հիմնահարցին և հայ եկեղեցուն: Խորհրդաժողովն ընդունեց երկու փաստաթղթեր՝ «Հռչակագիր» և «Արցախի մասին» հայտարարություն: Հռչակագրում ամրագրվեցին համազգային խնդիրներ, հստակեցվեցին այն սկզբունքները, որոնցով առաջնորդվելու էր հայությունը:

«Սա, հիրավի, աննախադեպ պատմական իրադարձություն է, որն արժևորելով Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները, սկիզբ է դնում այնպիսի գործընթացի, որն այսուհետ նոր որակով կապահովի հայության բոլոր հատվածների ներդաշնակ գործակցությունը՝ համազգային խնդիրների համատեղ քննարկման և միասնական ջանքերով լուծման համար...: Մենք ունենք ընդհանուր պատմություն, ընդհանուր ճակատագիր և ընդհանուր նպատակներ և պետք է առավել միավորենք մեր կարողությունները, գործենք առավել միասնաբար, հաշվի առնենք յուրաքանչյուր հայ հանրության առանձնահատկությունները և կարողանանք համադրել մեր գործունեությունն ու ապագային միտված նախաձեռնումները»,-ասվում էր Հռչակագրում[86]: Հռչակագիրն ազդարարում էր, որ Հայաստանի Հանրապետությունը այսուհետև սատարելու է Արցախի ազատ և անվտանգ ապրելու գործընթացին ու այս հանձնառությանը լծակից է նաև Սփյուռքը, որը շարունակելու է ամեն ջանք գործադրել Արցախի ազատությունն ու տնտեսական զորացումը ապահովելու համար: Այնուհետև նշվում էր, որ բոլոր պատվիրակները հանձն են առնում համատեղ ջանքերով հասնել միջազգային հանրության կողմից 1915 թ. հայերի ցեղասպանության անվերապահ ճանաչմանը:

Արցախին վերաբերող հայտարարությունը մեկ անգամ ևս հաստատագրեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղղվածությունը՝ ԼՂՀ-ն ճանաչել որպես միջազգային իրավունքի սուբյեկտ: ԼՂՀ-ի սոցիալ-տնտեսական դժվարությունների հաղթահարումը համարվեց քաղաքական գերխնդիր: Խորհրդաժողովն արձանագրեց, որ Արցախի ժողովրդի օրինական իրավունքի իրագործումը վճռորոշ նշանակություն ունի ողջ հայության ապագայի համար:

Խորհրդաժողովն առանձնահատուկ և ամբողջական էր քաղաքական, աշխարհագրական, ներկայացուցչական և հոգևոր առումներով, քանի որ այն առաջինն էր, որին մասնակցում էին մեր ժողովրդի բոլոր հատվածների ներկայացուցիչները՝ Հայաստանն ու ԼՂՀ-ն իրենց պետական կառույցներով, Սփյուռքի բոլոր համայնքները՝ իրենց համայնքային կառույցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները՝ իրենց հոգևոր առաջնորդներով:

Ցավոք, համահայկական մերձեցման գործընթացը որոշ ժամանակով կասեցվեց խորհրդաժողովին հաջորդած հոկտեմբերի 27-ի ողբերգության հետևանքով: Խորհրդաժողովի նախանշած դրական ազդակները, որ սփյուռքահայության մեծ մասի մոտ ապագա համագործակցության ուղիներ նախանշեցին, հոկտեմբերի 27-ի պատճառով Սփյուռքում տարակուսանքի և հայրենիքի հետ մերձեցման անվստահության մթնոլորտ ձևավորեցին: Այդ

[85] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 23 սեպտեմբերի, 1999: Տե՛ս նաև Հայաստանը համայն հայության հայրենիքն է,-«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 1999, N 4 (12), հոկտեմբեր, էջ 6:

[86] Տե՛ս «Հայոց աշխարհ», 24 սեպտեմբերի, 1999:

իրավիճակը շտկելուն էր ուղղված կառավարության կողմից զբոսաշրջության գործակալության ստեղծման մասին որոշման ընդունումը: Այդ գործակալության խորհրդի նախագահ նշանակվեց ամերիկահայ գործարար Վահագն Հովնանյանը, ով հնարավորություն էր ստանում ոչ միայն իրականացնել իր ծրագրերը, այլև հայրենի զբոսաշրջության ոլորտ ներգրավել հայրենիքի բարգավաճմամբ, սեփական բիզնեսով շահագրգիռ այլ սփյուռքահայերի: Անմիջականորեն Սփյուռքին առնչվող կառավարության մյուս որոշումը ԱԳՆ-ի հովանու ներքո Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն ստեղծելու մասին էր:

Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովի շնորհիվ Հայրենիք-Սփյուռք համագործակցության հետագա գործընթացը դարձավ շարունակական: Արդեն 2000-2001 թթ. նախապատրաստական աշխատանքներ տարվեցին Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովի կազմակերպման ուղղությամբ:

***

Խորհրդային Միության տարբեր հանրապետություններում ապրող հայությունը, ինչպես և երկրի այլ ազգային փոքրամասնությունները, շուրջ 70 տարի զրկված էին համայնքային կազմակերպված գործունեություն ծավալելու հնարավորությունից: Խորհրդային Միության փլուզումից հետո միայն նորանկախ պետություններում ձևավորվեցին հայկական համայնքներ, հիմնվեցին բազմաբնույթ ազգային կազմակերպություններ:

1988 թ. Սպիտակի երկրաշարժի և Հայաստանի շրջափակման հետևանքով արտագաղթած հայերի հիմնական մասը հանգրվանեց Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի մարզում, Մոսկվայում, ինչպես նաև Ուրալի և Սիբիրի արդյունաբերական կենտրոններում: Զգալի թվով հայեր Ռուսաստան արտագաղթեցին Ադրբեջանից և Աբխազիայից: Եթե 1989 թ. մարդահամարի տվյալներով հայերի ընդհանուր թիվը Ռուսաստանում 532,4 հազար էր, ապա 1994 թ.՝ 1,8 մլն (որոշ տվյալներով 2 մլն)[87]: Ռուսաստանի Հայկական Սփյուռքի հիմնական մասը բնակվում էր երկրի հարավում: 1989 թ. տվյալներով Ռուսաստանի 532,4 հազար հայերից 317,3 հազարը տեղաբաշխված էր նշված տարածաշրջանում (Կրասնոդարի երկրամասում՝ 182,2 հազար, Ստավրոպոլի երկրամասում՝ 72,5 հազար, Ռոստովի մարզում՝ 62,6 հազար)[88]: Մեր հայրենակիցների նոր արտագաղթի հետևանքով 1990-ական թթ. վերջին ԱՊՀ երկրներում արդեն ապրում էր մոտ 2 միլիոն 800 հազար հայ, որից 2 միլիոն 200 հազարը՝ Ռուսաստանում[89]:

1988 թվականից հետո հայերի հոսքը Կրասնոդարի երկրամաս կտրուկ աճեց՝ պայմանավորված 1988-1990 թթ. Ադրբեջանում կազմակերպված ջարդերով և Հայաստանի երկրաշարժով: Երկրամասում Հայաստանից և Ադրբեջանից արտագաղթած հայերի թիվը 1992 թ. կեսին կազմեց շուրջ 14,7 հազար մարդ, իսկ նույն թվականի օգոստոս-սեպտեմբերին Աբխազիայից այստեղ արտագաղթեց ավելի քան 30 հազար հայ[90]: Քանի որ տարածաշրջանում հաստատվեցին նաև Ուզբեկստանից եկած թուրք-մեսխեթներ, երկրամասը ենթարկվեց ժողովրդագրական փոփոխությունների: Փոփոխության ենթարկվեց երկրամասի սոցիալական և ազգային միջավայրը, ինչի հետևանքով տեղի բնակչության շրջանում աճող լարվածությունը տարերայնորեն, երբեմն էլ կազմակերպված ձևով ուղղվելով այլազգիների դեմ՝ վերածվում էր ազգամիջյան հակամարտության: Տեղի կոզակները հակասություններ ունեին թուրք-մեսխեթների և ակտիվորեն երկրամաս թափանցող հայ ներգաղթողների հետ, ինչը հիմնականում կապված էր վերջիններիս գործարարության հետ: Այսպես, 1992 թ. օգոստոսին կոզակները փախստական հայերի 40 ընտանիք վտարեցին Ստավրոպոլի երկրամասի Լիսոգորյան ստանիցայից[91]: Որոշ փախստականներ հարկադրված եղան բնակության վայր որոնել: Բազմազգ էր նաև Ստավրոպոլի երկրամասը, որտեղ հայությունը 1989 թ. կազմում էր 2,6 տոկոս: Գրեթե նույնն էր վիճակը նաև Ռոստովի մարզում:

---

[87] Տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 86:

[88] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 217, թ. 3: Տե՛ս նաև **Тер-Саркисянц А.Е., Худавердян В.Ц.**, Армянская диаспора Юга России, Москва, 1993 г., с. 3.

[89] Տե՛ս Հայ Յեղափոխական Դաշնակցություն: Հարցեր ՀՅ Դաշնակցությանը 2, էջ 58:

[90] Տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 86:

[91] Տե՛ս **Тер-Саркисянц А.Е., Худавердян В.Ц.**, նշվ. աշխ., էջ 16:

Այսպիսով, Ադրբեջանից, Հայաստանից, Վրաստանից և այլ շրջաններից դեպի Կրասնոդարի երկրամաս հայերի արտագաղթի համապատկերի վրա Կուբանում հակահայկական ակցիաներն ավելի հաճախակի դարձան: Անապայում, Կրասնոդարում և այլ շրջաններում հայերի վրա հարձակումներ տեղի ունեցան 1992 և 1993 թվականներին, իսկ 1997 թ. Կորենովսկում զանգվածային ցույցի ժամանակ հնչեցին հայերին վտարելու պահանջներ[92]: Զուգահեռաբար մամուլում ավելի հաճախակի դարձան հակահայկական բնույթի հրատարակությունները և առավել հաճախ հակահայկական արտահայտությունները՝ Կրասնոդարի երկրամասի ղեկավարության կողմից: Հայերի համար ծանր էին հատկապես Կրասնոդարի երկրամասի 1992 թ. աշնան միջադեպերը, երբ նրանք հետապնդումների ենթարկվեցին կոզակների կողմից[93]: Այդ դեպքերի հետ կապված՝ սեպտեմբերի 20-ին տեղի ունեցավ Կրասնոդար քաղաքի հայ համայնքի բազմամարդ ցույցը, որից հետո ժողովում որոշվեց հասարակական կարգի պահպանության համար ստեղծել և պաշտոնապես գրանցել կամավոր դրուժինաներ, նաև դիմել ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին՝ Կուբանում հյուպատոսություն կամ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչություն բացելու խնդրանքով, որպեսզի կոնֆլիկտային իրավիճակների ծագման դեպքում նման հարցերը լուծվեն պետական մակարդակով[94]: Հայ համայնքի ներկայացուցիչները դիմեցին նաև Կրասնոդարի մարզային խորհուրդ և դատախազություն՝ մեղավորներին պատժելու պահանջով:

1992 թ. հոկտեմբերի 18-ին Ռուսաստանի հայկական համայնքների մոտ 100 պատվիրակների մասնակցությամբ Կրասնոդարում տեղի ունեցած ՌԴ Հայկական համայնքների համաժողովում ստեղծվեց Ռուսաստանի հայերի միություն, որի կազմում

[92] Տե՛ս Тавадьян Т., Армянские национальные "очаги" в Краснодарском крае (степень организованности и перспективы),-Бюллетень научно-образовательного фонда "Нораванк", N 20, 2007, с. 46.

[93] Տե՛ս «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու (12-14 դեկտեմբերի, 2008 թ., Ծաղկաձոր), ՀՀ սփյուռքի նախարարություն, Ե., Լիմուշ հրատ., 2009, էջ 317:

[94] Տե՛ս Тер-Саркисянц А.Е., Худавердян В.Ц., նշվ. աշխ., էջ 33:

ընդգրկվեց 33 համայնք[95]: Միության կազմում էին Կրասնոդարի, Ստավրոպոլի, Աստրախանի, Ռյազանի, Կրասնոյարսկի, Մոսկվայի, Չիտայի, Իրկուտսկի և այլ մարզերի ու քաղաքների հայկական կազմավորումները: Ներկայացնելով Ռուսաստանում ապրող հայերին՝ միությունը հանդես էր գալիս քաղաքական հայտարարություններով, Հայ դատի պաշտպանության միջոցառումներով: Այն ընդգրկվեց Ռուսաստանի ազգային միավորումների համագումարում, միաժամանակ հասարակական-քաղաքական աշխատանք էր ծավալում Մոսկվայի ազգային համայնքների ընկերակցությունում:

1990-ական թթ. առաջին կեսին Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում ձևավորվեցին հայ համայնքների խորհուրդներ, մշակութալուսավորչական, մարզական կազմավորումներ: Ժամանակի ընթացքում առաջնային դարձավ այդ կազմավորումների համախմբման և միասնական մարտավարության ապահովումը: Մոսկվայում հայերի համախմբման համար ստեղծվեցին մի շարք կազմավորումներ («Հայկական համայնքի խորհուրդ», «Մոսկվայի հայ համայնք», «Մոսկվայի հայկական համագումար», «Հայկական ազգային-մշակութային ինքնավարություն», «Համամոսկովյան հայ համայնք» և այլն), որոնցից շատերը, սակայն, շատ կարճ կյանք ունեցան: Ստեղծված համայնքներից ոչ մեկին այդպես էլ չհաջողվեց դառնալ համառուսաստանյան, նույնիսկ՝ համամոսկովյան:

1999 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Հայաստան-Սփյուռք համահայկական առաջին խորհրդաժողովից հետո Մոսկվայում արագացվեց հայկական կազմակերպությունների միավորման գործընթացը: Մոսկվայի հայությունը նպատակ ուներ միավորել ոչ միայն Մոսկվայի, այլև Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերի, Ռոստովի մարզի հայկական համայնքները: Դա բավականին դժվար գործ էր, քանի որ միայն Մոսկվայում կային հայկական չորս տասնյակ կազմակերպություններ, Կրասնոդարում համայնքային կառույցների թիվն անցնում էր երեք տասնյակից, Ստավրոպոլում գործում էին քաղաքային և գյուղական 28 հա-

[95] Տե՛ս «Լրագիր», 27 հուլիսի, 1995:

մայնք[96]: Հայեր էին ապրում նաև Ռուսաստանի 37 մարզկենտրոններում և 52 քաղաքներում ու գյուղերում, որոնց մեծ մասում ևս ձևավորված էին համայնքային մարմիններ[97]:

2000 թ. հունիսի 16-ին Մոսկվայում բացվեց «Ռուսաստանի հայերի միություն» (ՌՀՄ, Union of Armenians of Russia) համառուսական հասարակական կազմակերպության հիմնադիր համագումարը, որին ներկա էին ՌԴ-ի 44 սուբյեկտների հայ համայնքները ներկայացնող 172 պատվիրակներ[98]: Համագումարի հիմնական նպատակը մեկ միասնական կազմակերպություն ունենալն էր: ՌՀՄ-ի խորհրդում ընդգրկվեցին միությանն անդամակցող բոլոր համայնքներն ու տեղական այլ կառույցների ղեկավարները, ինչպես նաև որևէ կազմակերպություն չներկայացնող շուրջ 20 անհատներ[99]: Խորհուրդը ՌՀՄ-ի նախագահ ընտրեց երիտասարդ ձեռնարկատեր, «Համաձայնություն» ՓԲԸ նախագահ Արա Աբրահամյանին: ՌՀՄ-ի հիմնական խնդիրներն էին ռուսահայ համայնքների միջև լրատվական կայուն կապի հաստատումն ու պահպանումը, ընդհանուր քաղաքականության մշակումն ու անցկացումը սեփական տպագիր օրգանի, սեփական ռադիոկայանի ու հեռուստատեսության միջոցով, միջհամայնքային կապերի զարգացումն ու հանրակրթական և կիրակնօրյա դպրոցների ստեղծումը, մշակութային արժեքների և ազգային ավանդույթների պահպանումը: ՌՀՄ-ն կարևոր տեղ հատկացրեց Հայաստանի հետ մշակութային և գործարար կապերի զարգացմանը: ՌՀՄ-ի նպատակն էր միավորել Ռուսաստանի հայերին և նպաստել հայ և ռուս ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերությունների ամրապնդմանը: ՌՀՄ-ն իր պատրաստակամությունը հայտնեց՝ համագործակցել Մոսկվայում գործող մյուս հայկական կազմակերպությունների հետ: Այսպիսով, 10-ամյա համառ փորձերից հետո հայությունը Ռուսաստանում համախմբվեց: Ռուսաստանի տարբեր քաղաքներում, Ուկրաինայում, Մոլդովայում, Միջին Ասիայի և Մերձբալթյան հանրապետություններում հաստատված իր 200-ից ավելի մասնաճյուղերի միջոցով ՌՀՄ-ն ծավալեց բավականին արդյունավետ գործունեություն՝ սերտ կապեր հաստատելով Հայաստանի, Արցախի և սփյուռքահայ մի շարք համայնքների հետ[100], գործնական քայլեր ձեռնարկեց հայության համախմբման ուղղությամբ: Ի վերջո ՌՀՄ-ի նախաձեռնությամբ Մոսկվայում հիմնվեց «Համաշխարհային հայկական կոնգրես» (ՀՀԿ, World Armenian Congress) միջազգային կազմակերպությունը՝ Արա Աբրահամյանի նախագահությամբ[101]:

ԽՍՀՄ-ի փլուզման գործընթացը ամենաուժգին ձևով հարվածեց ազգային փոքրամասնություններին, հատկապես ամենածանր կացության մեջ հայտնվեց մահմեդական երկրներում ապրող հայությունը: Հակահայկական քարոզչությունը, կենտրոնական մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության կողմից Լեռնային Ղարաբաղի խնդրի կողմնակալ լուսաբանումները, հայության զանգվածային բռնագաղթը Ադրբեջանից և ադրբեջանցիների հեռանալը Հայաստանից անմիջապես օգտագործվեցին տեղի ազգայնականների կողմից: Խորհրդային Միության փլուզումից հետո Հյուսիսային Կովկասի տարածաշրջանում, նաև միջինասիական նորանկախ պետություններում (Տաջիկստան, Ղրղզստան և այլն) տիրող անկայուն ներքաղաքական իրավիճակի պատճա-

[96] Տե՛ս «Հայաստան», 16 մարտի, 2000:
[97] Տե՛ս նույն տեղում:
[98] Տե՛ս «Ազգ», 17 հունիսի, 2000:
[99] Տե՛ս նույն տեղում:

[100] Տե՛ս **Դալլաքյան Կ.**, նշվ. աշխ., էջ 176:
[101] Համաշխարհային հայկական կոնգրես միջազգային կազմակերպությունը ստեղծվել է 2002 թ. Մոսկվայում: ՀՀԿ-ի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի և Արցախի տնտեսական վերածննդին, անվտանգ և առաջընթաց զարգացման ապահովմանը, օժանդակել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ցեղասպանության հետևանքների վերացմանը միջազգային իրավունքի հիման վրա և Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, աջակցել համահայկական բազմածրագիր հարաբերությունների զարգացմանը, օժանդակել հայկական կապիտալի և բիզնեսի դիրքերի ամրապնդմանը ազգային և համաշխարհային տնտեսության համակարգում, նպաստել ազգային ինքնության և մշակույթի պահպանությանը, աճող սերնդի պատշաճ դաստիարակությանը, Սփյուռքի պայմաններում ուծացման գործընթացների նվազեցմանը, աջակցել տեղեկատվական համագործակցության և արդյունավետ բազմակողմանի կապերի հաստատմանը հայրենիքի և Սփյուռքի միջև, նպաստել Սփյուռքի ներուժի ակտիվ ներգրավմանը պատմական հայրենիքի զարգացման գործում և աշխարհի հայկական համայնքների շահերի պաշտպանության հարցում Հայաստանի մասնակցությանը (տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 122):

ռով տեղի հայերի մի մասը ևս տեղափոխվեց Ռուսաստանի տարբեր շրջաններ:

Միջին Ասիայի հայ բնակչության վրա ծայրահեղ բացասական ազդեցություն գործեց հատկապես նրանց խնդիրների հանդեպ Հայաստանի Հանրապետության անտարբերությունը, որն անգամ Թուրքմենստանում և Տաջիկստանում հայերի նկատմամբ կիրառված բռնություններից հետո ոչ մի քայլ չձեռնարկեց նրանց շահերի պաշտպանության համար: Ըստ էության, բաց թողնվեց միջինասիական հանրապետություններում հայ բնակչության անվտանգության իրավական երաշխիքների ռեալ հնարավորությունը, թեկուզ և ազգային-մշակութային ասպեկտով:

Միջին Ասիայի հայության վրա մշտական ազդող գործոններից էր նաև Լեռնային Ղարաբաղում ընթացող պատերազմը: Պանթուրքիստական և պանիսլամիստական քարոզչության ազդեցության տակ տեղի բնակչությունը այն ընկալում էր որպես պատերազմ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի միջև՝ վիճելի տարածքի համար, որով էլ պայմանավորված էին տեղի ազգայնականների գործողությունները հայերի նկատմամբ: Չնայած այս ամենին՝ միջինասիական պետությունները փորձում էին կանխել հայերի արտագաղթը և նրանց հալածանքները ազգայնականների կողմից: Ղազախստանի, Թուրքմենստանի և Ղրղզստանի ղեկավարությունների միջնորդության փորձերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ, Ուզբեկստանում բացահայտ պանթուրքիստական «Ղարաբաղ» կազմակերպության գործունեության արգելումը, Սամարղանդի հայ համայնքին հայկական եկեղեցու շենքի վերադարձը, Ղրղզստանի նախագահի բազմաթիվ հավաստիացումները հանրապետությունում ռուսալեզու բնակչության անվտանգության երաշխիքների մասին, ազգամիջյան հարաբերությունների որոշակի կայունացումը և Թուրքմենստանում հակահայկական խժդժությունների դադարեցումը վկայում էին այն մասին, որ տեղի իշխանությունները արդեն բավարար խորությամբ էին գիտակցում միջէթնիկական հակամարտությունների կործանարարությունը և ողբերգական հետևանքները նախ և առաջ տարածաշրջանի արմատական ժողովուրդների համար:

Այսպիսով, միայն ազգային փոքրամասնությունների պաշտոնական հաստատությունների առկայության դեպքում հնարավոր կլիներ գործնականում ապահովել նրանց իրավական և ազգային-մշակութային կարգավիճակը, ազատ և հավասար երկխոսությունը տարբեր էթնիկական խմբավորումների միջև, այդ թվում՝ եկվորների և բնիկների, մահմեդականների և քրիստոնյաների միջև, կայուն հիմք կդառնար ազգամիջյան հարաբերությունների կարգավորման համար ընդհանրապես:

Պաշտոնական տվյալներով 1980-ական թթ. վերջին Միջին Ասիայում (Ուզբեկստան, Թուրքմենստան, Ղազախստան, Տաջիկստան, Ղրղզստան) ապրում էր ավելի քան 100 հազար հայ: Նրանց թիվը 1994 թ. կազմեց մոտ 150-160 հազար, որոնք հիմնականում ռուսալեզու էին և մեծ մասամբ բնակվում էին քաղաքներում[102]: Չնայած փոքրաքանակությանը՝ հայ բնակչությունը նկատելի դեր էր խաղում երկրամասի տնտեսական և մշակութային կյանքի զարգացման մեջ:

Միջին Ասիայի հայերի վիճակը, ինչպես տեսանք, նախ և առաջ կրոնական գործոնի հետ պայմանավորված, էականորեն տարբերվում էր նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հայության կյանքից: Հայ բնակչության առավել գիտակից մասը հասկանում էր, որ նոր պայմաններում եթե չապահովվի ռուսալեզու և հատկապես քրիստոնյա ազգային փոքրամասնությունների իրավական պաշտպանությունը և ազգային-մշակութային ինքնավարությունը, իրենք ստիպված կլինեն վաղ թե ուշ լքել երկրամասը: Նոր պայմաններում աստիճանաբար աշխուժացավ տեղի հայերի ազգային-մշակութային կյանքը: Սամարղանդում գործել սկսեց «Լույս» հայկական մշակութային միությունը, Տաշքենդում, Ալմա-Աթայում, Աշխաբադում և այլ տեղերում փորձեր արվեցին ստեղծելու հայկական մշակութային կազմակերպություններ: Իր հերթին, տեղի հայությանը մեծ օգուտ բերեց Միջին Ասիայում հայկական կրոնական համայնքների և եկեղեցիների վերականգնման՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությունը: Սամարղանդում ստեղծվեց հայկական եկեղեցական համայնք (ըն-

[102] Տե՛ս Григорьянц В.Е., Армяне Средней Азии. История, современное положение, перспективы, Е., 1994, с. 49.

կերություն), վերականգնվեց դեռևս 1903 թ. կառուցված տեղի Ս. Աստվածածին հայկական եկեղեցին: Ծրագրվեց Ալմա-Աթայում կազմավորել հայկական եկեղեցական կազմակերպություն. տեղի իշխանությունները հողատարածք հատկացրեցին հայկական մշակութային կենտրոնի և եկեղեցու կառուցման համար: Աշխատանքներ տարվեցին Աշխաբադում և Տաշքենդում ևս կրոնական հայկական համայնքներ ստեղծելու ուղղությամբ: Այդ ասպարեզում նույնպես Միջին Ասիայի հայությունը զգում էր հայրենիքի և Սփյուռքի աջակցության կարիքը: Ազգային համայնքների շրջանակներում հայ բնակչության համախմբումը սկսվելու էր տեղական իշխանությունների կողմից նրանց պաշտոնական կարգավիճակի ճանաչումից հետո:

Հայրենիք-Սփյուռք առնչություններում 1988-2001 թթ. որոշակի դեր էր վերապահված նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ձևավորված հայկական համայնքներին: Ծանր վիճակում հայտնվեց հատկապես Ադրբեջանի շուրջ կես մլն բնակչություն ունեցող հայկական համայնքը: 1988-1992 թվականներին Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած զանգվածային սպանությունների ու հալածանքների հետևանքով տեղի հայ բնակչության հիմնական մասը՝ շուրջ 350-400 հազար հարկադրաբար գաղթեց Հայաստան, Ռուսաստան և այլուր[103]: Ադրբեջանի հայկական համայնքը դադարեց գոյություն ունենալուց:

Այլ էր Վրաստանի հայկական համայնքի ճակատագիրը: ԽՍՀՄ 1989 թ. մարդահամարի տվյալներով Վրաստանում հայերի թիվը 437 հազար էր, իսկ 1994 թ.՝ 430 հազար[104]: 1989 թ. միայն Սամցխե-Ջավախքում հայերի թիվը 124 327 հազար էր, որը կազմում էր երկրամասի ազգաբնակչության 63,3 տոկոսը[105]: 1990-ական թթ. վերջին Վրաստանում բնակվում էր 249 հազար (առանց Աբխազիայի), իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ շուրջ 350 հազար հայ, որոնք կենտրոնացած էին Թբիլիսիում, Ախալցխայի, Ախալքալաքի, Ասպինձայի, Նինոծմինդայի, Ծալկայի, նաև Վրաստանի հարավարևելյան շրջաններում, Աջարիայում, Աբխազիայում[106]:

Է. Շևարդնաձեի նախագահության օրոք Վրաստանի վարչատարածքային նոր բաժանման հետևանքով հանրապետության 6 շրջաններ (որոնցից երկուսում Ախալքալաքում և Նինոծմինդայում հայերը կազմում էին ազգաբնակչության 80 տոկոսից ավելին) միավորվեցին Սամցխե-Ջավախքի մարզի մեջ, ինչի հետևանքով կտրուկ փոխվեց մարզի ժողովրդագրական իրավիճակը[107]: Սամցխե-Ջավախքի մարզը կազմեցին Ախալքալաքի, Ասպինձայի, Ադիգենի, Ախալցխայի, Բորժոմիի և Նինոծմինդայի շրջանները:

Վրաստանի հայկական համայնքներից ամենակայունը ջավախահայությունն է, որը սերտորեն համագործակցելով Հայաստանի հետ՝ ապահովում է հայեցի ապրելակերպը[108]: Բուն Ջավախքը (Ախալքալաքի, Նինոծմինդայի և Ասպինձայի շրջաններ) զրկվելով գործադիր իշխանությունից՝ առանձնանում էր ծանր ու բարդ սոցիալական պայմաններով և այս առումով նմանվում էր Վրաստանի բարձր լեռնային շրջաններում գտնվող այլ շրջաններին:

Ջավախքում 1988-2001 թթ. գործում էին «Փարվանա» (գործել է 1988-1995 թթ., Նինոծմինդայում) և Վրաստանի հայերի միություն (հիմնադրվել է 1992 թ., Թբիլիսիում, մինչև 1998 թ. գործել որպես Վրաստանի հայկական մշակութային բարեգործական ընկերություն) հասարակական կազմակերպությունները, «Շառլ Ազնավուր» բարեգործական մշակութային միությունը (ստեղծվել է 1988 թ., Ախալցխայում), «Վիրք» քաղաքական կազ-

[103] Տես «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 12:
[104] Տես նույն տեղում, էջ 544-545:
[105] Տես Джавахетия, Международно-правовые аспекты защиты прав армянского национального меньшинства Грузии, политическая и социально-экономическая ситуация в регионе на современном этапе (ա.տ. և ա.թ.), էջ 46: Տես նաև **Սարգսյան Վ.**, Ջավախքը 1988-2008 թթ. (հոդվածների ժողովածու), Ե., «Միտք» վերլուծական կենտրոն, 2009, էջ 289:

[106] Տես «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 545:
[107] Տես «Երկիր», 15 սեպտեմբերի, 1999:
[108] Իրականում Ջավախքի հայերին չպետք է վերաբերվել որպես Սփյուռք: Նրանց մեջ արմատացած է այն համոզմունքը, որ իրենք առավել սերտ են կապված Հայաստանի հետ, քան սփյուռքահայ մյուս համայնքները: Պատմական տեսանկյունից ևս Ջավախքի հայերին հնարավոր չէ համեմատել հայկական մյուս համայնքների հետ և դասել դասական Սփյուռքի շարքը, քանի որ ջավախահայերը անհիշելի ժամանակներից (մ.թ.ա. 8-րդ դարից) բնակվել են այդ տարածքում, ուստի այն համարում են իրենց բնօրրանը:

մակերպությունը (հիմնվել է 1998 թ., Ախալքալաքում), որոնք համագործակցելով Ջավախքի ամենահեղինակավոր և ամենամեծ «Ջավախք. ժողովրդական շարժում» հասարակական կազմակերպության (ստեղծվել է 1988 թ.) հետ՝ համակարգում էին տարածաշրջանի քաղաքական ակտիվ ուժերի գործունեությունը, հանդես գալիս տարածաշրջանային զարգացումների մասին հայտարարություններով՝ կապված Ախալքալաքից ռուսական ռազմակայանի դուրսբերման, թուրք-մեսխեթցիներին այնտեղ վերաբնակեցնելու, սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային իրավիճակի հետ:

1988-2001 թթ. Ջավախքը ևս գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ. խիստ անմխիթար վիճակում էին երկրամասի ճանապարհները, այն կտրված էր արտաքին աշխարհից, չէր գործում լրատվական ոչ մի միջոց, էլեկտրականություն ունենում էր հազվադեպ (օրական 3-4 ժամ), այն էլ երեկոյան ժամերին: Բնակչությունը, ինչպես նախկինում, հիմնականում զբաղվում էր գյուղատնտեսությամբ, առավել սակավ՝ առևտրով, քանի որ Ախալքալաքում խոշոր գործարաններ չկային նույնիսկ խորհրդային շրջանում: Այս ամենի հետևանքով ծայր առավ զանգվածային արտագաղթ, որն ընդունեց մտահոգիչ ծավալ: Ջավախքի հայությունը նախկինում էլ միշտ մեկնել է արտագնա աշխատանքի, հիմնականում՝ Ռուսաստան, սակայն վերջին տարիների սոցիալական ծայրահեղ լարվածության և տարրական պայմանների բացակայության հետևանքով նրանք սկսեցին հեռանալ ընտանիքներով: 1990-ականների սկզբներին Ջավախքից տարեկան 15 հազար մարդ էր մեկնում արտագնա աշխատանքի, որոնցից շատերն այլևս չվերադարձան հայրենի երկրամաս[109]: Արտագաղթի հիմնական ուղղություններն էին Հայաստանի Հանրապետությունը, Ռուսաստանը (հատկապես Կրասնոդարի երկրամաս): 1995 թ. դրությամբ Ախալքալաքում մնացել էր 70 հազար, իսկ հարևան Բոգդանովկայում՝ 38 հազար հայ[110]:

Ջավախքի Աշոցք-Նինոծմինդա ճանապարհի անմխիթար վիճակը հարկադրեց երկու երկրների նախագահներին՝ է. Շևարդնաձեին և Լ. Տեր-Պետրոսյանին, 1996 թ. համաձայնության գալ ասֆալտապատելու միջպետական մայրուղու Աշոցք-Ախալքալաք հատվածը (70 կմ)[111]: Վրացական կողմն հանձն առավ Ախալքալաք-Նինոծմինդա հատվածը (20 կմ), իսկ հայկական կողմը՝ Նինոծմինդայից դեպի Աշոցք ճանապարհի կառուցումը: Հայաստանի կողմից Բավրայից Նինոծմինդա ճանապարհի կառուցումից կարճ ժամանակ անց պարզվեց, որ կատարվել է խիստ անորակ ասֆալտապատում, ինչը գործեց ընդամենը կես տարի՝ մինչև առաջին ձյունը[112]: Հայաստանը կրկին խոստացավ այդ ճանապարհը ասֆալտապատել, սակայն աշխատանքները 1999 թ. դրությամբ դեռ չէին սկսվել:

Ջավախահայության վիճակը շարունակում էր մնալ ծանր, քանի որ 10 տարիների ընթացքում Վրաստանը Ջավախքում գրեթե ոչ մի ներդրում չկատարեց: Դեռևս 1997 թ. Վրաստանի կառավարությունը հաստատել էր ««Սամցխե-Ջավախք» տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման» նոր ծրագիրը, որը ևս նախորդ նախագծերի նման մնաց թղթի վրա[113]: Վրաստանի անտարբերությունը հիմքեր էր ստեղծում ջավախահայության շրջանում մտածելու, որ Վրաստանը չի ցանկանում Ջավախքի զարգացումը և ամեն ինչ անում է երկրամասի հայաթափման համար, քանի որ վարում էր Ջավախքը թուրք-մեսխեթցիներով[114] բնակեցնելու քաղաքականություն (խոսքը առաջիկա 10 տարում մոտ 200 հազար թուրք-մեսխեթցի վերաբնակիչների մասին է)[115]: Վրաստանն իր այս քաղաքականությամբ ցանկանում էր փոխել Ջավախքի ժողովրդագրական պատկերը, բացի այդ, Եվրախորհրդի առջև արտաքսվածներին նախկին բնակավայրերը վերադարձնելու պարտավորություն էր ստանձնել[116]: Ջավախքի

[109] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 մայիսի, 2000:
[110] Տե՛ս «Ազգ», 2 սեպտեմբերի, 1995:

[111] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 մայիսի, 2000:
[112] Տե՛ս «Հայոց աշխարհ», 9 հուլիսի, 1999:
[113] Տե՛ս Джавахетия, նշվ. աշխ., էջ 53:
[114] Թուրք-մեսխեթցիների նախկին բնակության վայրը եղել է Ասպինձայի շրջանը, որտեղից 1944 թ. Ստալինի հրամանով նրանք աքսորվել էին:
[115] Տե՛ս «Ժամանակ», 16 նոյեմբերի, 2000:
[116] Տե՛ս Ջավախքը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ (խորհրդաժողովի նյութերի ժողովածու), ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության «Ուսանողական» մատենաշար, թիվ 1, Երևան, 2006, էջ 9-10: Տե՛ս նաև **Սարգսյան Վ.,** նշվ. աշխ., էջ 253:

հայությունը խիստ բացասաբար էր տրամադրված այդ վերաբնակեցմանը:

Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ Աբխազիան իրեն հռչակեց անկախ պետություն, սրվեցին ազգամիջյան հարաբերությունները, սկսվեց վրաց-աբխազական պատերազմը, որից մեծապես տուժեց նաև չեզոքություն պահպանող տեղի հայկական համայնքը. ավերվեցին բազմաթիվ հայաբնակ բնակավայրեր, զոհվեցին հարյուրավոր հայեր, փակվեցին ազգային շատ հաստատություններ, դպրոցներ, կողոպտվեցին հայերի տները, ունեցվածքը: Աբխազիայում ստեղծված ծանր կացության հետևանքով հազարավոր աբխազահայեր արտագաղթեցին Ռուսաստան, հատկապես նրա հարավային շրջանները՝ Կրասնոդարի երկրամաս, մասամբ նաև Հայաստանի Հանրապետություն: 1993 թ. Հայաստան թափանցեցին 6000 փախստականներ Աբխազիայից, որոնց վիճակը հայրենիքում շարունակում էր մնալ ծանր, քանի որ սկզբնական շրջանում նրանք ոչ մի օգնություն չէին ստանում[117]:

Այսպիսով, ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում հիմնված հայկական համայնքները թեև 1990-ական թթ. սկզբներին նոր էին ձևավորում համայնքային կառույցներ, ժամանակի ընթացքում կարողացան հաղթահարել իրենց առջև ծառացած բազմաթիվ ներհամայնքային խնդիրները և դառնալ կայուն ու հիմնավոր կառույցներ: Ապրելով տարբեր երկրների քաղաքական ազդեցությունների ներքո՝ հայկական համայնքային կառույցները ոչ միայն զգալի դեր էին խաղում տվյալ երկրների ներքաղաքական կյանքում, այլև համախմբում էին տեղի հայությանը և նպաստում օտար ափերում հայեցիության պահպանմանը, երիտասարդ սերնդին ազգային ոգով դաստիարակելուն:

[117] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1172, ց. 1, գ. 87, թ. 26:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հայրենիք-Սփյուռք սոցիալ-տնտեսական հարաբերությունները նորովի զարգացում ապրեցին հատկապես 1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո: Ավերված Հայաստանին ամբողջ աշխարհի ցուցաբերած օգնությունից անմասն չմնաց նաև Սփյուռքը, որը երկրաշարժի մասին լուրն առնելուն պես միահամուռ ոտքի կանգնեց: Օտարերկրյա փրկարարների առաջին շարքերում Հայաստան ժամանեցին նաև մեր հայրենակիցները Ֆրանսիայից, Ավստրիայից, Կանադայից և այլ երկրներից և առանց հապաղելու իրենց մասնակցությունը բերեցին մարդկանց փրկության գործին: Միայն 1989 թ. տարբեր երկրներից Հայաստան ժամանեցին և աղետյալներին օգնություն ցուցաբերեցին ավելի քան 400 հայ բժիշկներ, 200 գործարարներ, հասարակական գործիչներ, բարեգործական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ[118]: Աղետից անմիջապես հետո Սփյուռքը Հայաստան առաքեց հազարավոր տոննա առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ դեղորայք, հագուստ, տնակներ, բժշկական սարքավորումներ և այլն: Արդեն 1988 թ. դեկտեմբերի 10-ից նյութական օգնություն ստացվեց Սփյուռքի հայկական կազմակերպություններից, որն այնուհետև պարբերաբար շարունակվեց՝ կազմելով հարյուր հազարավոր տոննաներ: Միայն ամերիկյան երկրների հայկական գաղթօջախների կողմից երկրաշարժի հետևանքները վերացնելու համար 1989 թ. հավաքվեց 24 մլն դոլար, ձեռք բերվեցին և Հայաստան ուղարկվեցին առաջին անհրաժեշտության ապրանքներ[119]: Ընդհանուր առմամբ,

[118] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 29, թ. 1: Տե՛ս նաև նույնի՝ գ. 41, թ. 1:
[119] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 29, թ. 2: Տե՛ս նաև նույնի՝ գ. 41, թ. 2:

Մայր հայրենիքին օգնելու նպատակով երկրաշարժից տաս ամիս անց Սփյուռքում հանգանակվեց ավելի քան 50 մլն դոլար[120]:

Երկրաշարժից հետո սկսեց իրականացվել նաև աղետի գոտում ապրող ծնողազուրկ երեխաներին ստրեսային վիճակից դուրս բերելու ծրագիրը: Այդ նպատակով Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի կողմից հրավիրվեցին հոգեբաններ ու հոգեբույժներ, իրենց գիտելիքները խորացնելու նպատակով ԱՄՆ գործուղվեցին հայ բժիշկներ: Կոմիտեի նախաձեռնությամբ և օգնությամբ Շվեյցարիայի հայ համայնքը 1989 թ. ստեղծեց մանկական հոգեբանական կենտրոն, որն այն ժամանակ միակն էր ԽՍՀՄ-ում:

1990-1991 թթ. մեծ կարևորություն էր տրվում աղետից տուժած բնակչության առողջության վերականգնմանը՝ Սփյուռքի կարող ուժերի մասնակցությամբ: Պարբերաբար հայրենիք էին այցելում սփյուռքահայ նշանավոր բժիշկներ, առողջապահության մասնագետներ, հոգեբաններ: Երկրաշարժից հետո և Արցախյան պատերազմի ընթացքում Հայաստանում իրենց գործունեությունն ընդլայնեցին Լոս Անջելեսի «Բժշկական օգնություն հայերին» (հիմնվել է 1986 թ.) առողջապահական հիմնարկությունը, «Ամերիկայի հայ բժիշկների միությունը», կանադահայ «Բժշկական ընկերակցություն» բարեսիրական կազմակերպությունը (հիմնվել է 1988 թ.), «Գերմանահայ բժիշկների միությունը» (հիմնվել է 1989 թ.), Մարսելի «Ֆրանսահայ բժիշկների միությունը», որոնք մասնագետներ, դեղորայք, բժշկական սարքավորումներ էին ուղարկում Հայաստանի Հանրապետություն և Արցախ, օգնում բարձրացնել բժշկական սպասարկման որակը, միջոցներ հայթայթում Արցախյան պատերազմի ծանր վիրավորների բուժումը ԱՄՆ-ում կազմակերպելու համար, աջակցում Հայաստանի բժիշկների կատարելագործմանը ԱՄՆ-ում և այլն:

Երկրաշարժից հետո սփյուռքահայ կանայք ևս ձեռնամուխ եղան հայրենիքին օգնելու գործընթացին: Տարբեր երկրներում հիմնվեցին կանանց նոր կազմակերպություններ. Ավստրալիայում հիմնադրվեց ավստրալիահայ կանանց «Կռունկ» միությունը, Գերմանիայում՝ գերմանահայ կանանց «Սիլվա Կապուտիկյան»

[120] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 28, թ. 2: Տե՛ս նաև նույնի՝ գ. 41, թ. 1:

ակումբը (1988 թ.), Սիրիայում՝ «Հայ կանանց համասիրական հանձնախումբը» (1990 թ.), ԱՄՆ-ում՝ «Հայ կանանց միջազգային միությունը» (ՀԿՄ, 1990 թ.), որոնց պատվիրակությունները պարբերաբար լինում էին աղետի գոտում, ուսումնասիրում երկրաշարժի հետևանքները և համայնքի հանգանակած գումարները տրամադրում ըստ նպատակի:

Սփյուռքի և Հայաստանի կանանց ջանքերի միավորման լավագույն օրինակը Երևանում Հայ-ամերիկյան մամոգրաֆիայի գերժամանակակից սարքավորումներով հագեցած համալսարանական կենտրոնի ստեղծումն էր 1997 թ.[121]: Նախկին խորհրդային հանրապետություններից Հայաստանն առաջինն էր, որտեղ ստեղծվեց նման կենտրոն: Կենտրոնի նպատակն էր պահպանել, երկարացնել և բարելավել կանանց կյանքը Հայաստանում՝ կրծքագեղձի քաղցկեղի վաղ ախտորոշման միջոցով: Իր հիմնադրման օրվանից մինչև 2000 թ. 18 հազար կին անցել են մամոգրաֆիկ հետազոտություններ[122]:

***

1990-ական թթ. նորանկախ Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց ճգնաժամի մեջ: Լեռնային Ղարաբաղի պատերազմի հետևանքով տուժեց երկրի տնտեսությունը: Հարևան երկրները շրջափակեցին կարևոր միջազգային ավտոճանապարհների և երկաթուղային գծերի մեծ մասը, որոնցից կախված էր վառելիքի և պարենի մատակարարումը Հայաստան: Երկրի վիճակն ավելի վատթարացավ Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից և Աբխազիայից ավելի քան 300 հազար փախստականների և անօթևան մարդկանց հոսքի պատճառով[123]: Վրաստանի շրջաններում քաղաքացիական կարգուկանոնի քայքայումն էլ իր հերթին խոչընդոտեց Հայաստանի կենսական ելքը դեպի Սև ծով, որի հետևան-

[121] 2002 թ. Հայ-ամերիկյան մամոգրաֆիայի համալսարանական կենտրոնը վերափոխվել է «Հայ-ամերիկյան առողջության կենտրոն» հիմնադրամի (ՀԱԱԿ), որի նպատակն է պահպանել, բարելավել մարդկանց առողջությունը, իրականացնել ՀԱԱԿ-ի հիմնական նպատակն հանդիսացող կանխարգելիչ բժշկություն (տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 138-139):

[122] Տե՛ս «Ազգ», 4 հոկտեմբերի, 2000:

[123] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1172, ց. 1, գ. 87, թ. 5:

քով արտաքին փոխադրումների ընդհատումները Հայաստանում բազմաթիվ անգամներ առաջացրին պարենի հետ կապված խոշորամասշտաբ արտակարգ իրավիճակներ:

1991 թ. շրջափակումը, էլեկտրակայանների աշխատանքի համար անհրաժեշտ մազութի, բնական գազի մատակարարման և էլեկտրականության տարածքային ընդհատումներն ամբողջ երկրում առաջացրին վառելիքի և հոսանքի խիստ կարիք: Ծանր ձմեռների ընթացքում, վառելիքի բացակայության և մատակարարման համակարգերում հաճախակի պատահող վթարների հետևանքով հարյուր հազարավոր մարդիկ ձմռանը իրենց բնակարաններում չունեին հոսանք: Սաստիկ տուժեց նաև շրջակա միջավայրը, քանի որ ջեռուցում ստանալու համար մոտավորապես երեք միլիոն ծառ կտրվեց, ավելին, էներգիայի պակասը նվազեցնելու նպատակով Սևանա լճից բաց թողնվեց լրացուցիչ քանակությամբ ջուր՝ հիդրոէլեկտրակայանների գործարկման համար՝ իջեցնելով լճի մակարդակն այնքան, որ դրանից այն կողմ անխուսափելիորեն կառաջանային շրջակա միջավայրի լուրջ փոփոխություններ[124]: Հոսանքի արտադրության համար անհրաժեշտ վառելիքի պաշարների խիստ սղության պատճառով Հայաստանի կառավարությունը երբեմն ստիպված էր լինում ամբողջովին դադարեցնել հոսանքի մատակարարումը քաղաքային և գյուղական բնակավայրերին: Այս անելանելի կացությունից դուրս գալու համար ՀՀ կառավարությունը որոշեց վերաբացել 1988 թ. երկրաշարժից հետո փակված հայկական ատոմակայանը: Ժողովրդավարության զարգացման ֆոնդի կողմից Հայաստան բերված նավթը զգալիորեն օգնեց ձմռան պայմաններում: Սահմանափակ էին և անկայուն նաև բնական գազի մատակարարումները: Պատերազմի պատճառով Ադրբեջանով անցնող գազամուղը փակվել էր, իսկ Վրաստանով անցնող խողովակաշարը համաչափ չէր գործում, քանի որ գազամուղը շարունակաբար ենթարկվում էր հարձակումների և լրջորեն վնասվում պայթեցումներից:

Երկրի տնտեսական վիճակը բարդացավ նաև հսկայական թվով փախստականների առկայությամբ: Տարածաշրջանային

[124] Տե՛ս նույն տեղում, թ. 12:

հակամարտության արդյունքում Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից ու Աբխազիայից 1988-1993 թթ. Հայաստան մուտք գործեցին շուրջ 340 900 փախստականներ, որոնցից 35 հազարը 1994-1995 թթ. վերադարձան Լեռնային Ղարաբաղ, իսկ 25 հազարը մեկնեց ԱՊՀ և այլ արտասահմանյան երկրներ[125]: Սահմանամերձ շրջաններում 1992-1993 թթ. շարունակվող պատերազմական գործողությունների հետևանքով մոտ 72 հազար մարդ դարձան անօթևան, որոնք ապրում էին իրենց ազգականների մոտ կամ հանրակացարաններում[126]:

Հայաստանում ստեղծված նման ծանրագույն իրավիճակում վճռորոշ դեր էր վերապահված հիմնադրամներին, սփյուռքահայ կազմակերպություններին, Սփյուռքի ազգային բարերարներին ու գործարարներին, որոնք հսկայածավալ բարեգործական գործունեություն ծավալեցին Հայաստանում: Ժամանակի ընթացքում մարդասիրական օգնություններին փոխարինեցին զարգացման երկարաժամկետ ծրագրերը, որոնց նպատակամետ իրագործմամբ Հայաստանն աստիճանաբար ուղիներ հարթեց ճգնաժամից դուրս գալու համար:

2.2. ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1992 թ. մարտի 3-ին ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հրամանագիր ստորագրեց ««Հայաստան» համահայկական հիմնադրամ հիմնելու մասին», որում ասվում էր, որ Հիմնադրամը հիմնվում է հայկական պետականության կայացման ու զորացման գործին համայն հայության ուժերի ու կարողությունների համախումբ գործադրման նպատակով[127]: Հիմնադրամն ուներ ապաքաղաքական, համազգային բնույթ: Նրա հիմնումը պայմանավորված էր համազգային կառույցի ստեղծման անհրաժեշտությամբ, կառույցի, որը խարսխված կլիներ ազգային միաբանության և հայոց անկախ պետականության գաղափարի վրա, և

[125] Տե՛ս նույն տեղում, թ. 26:
[126] Տե՛ս նույն տեղում:
[127] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 112, թ. 6: Տե՛ս նաև նույնի՝ ց. 167, գ. 416, թ. 7:

որի խնդիրը համայն հայության նյութական ու հոգևոր կարողության կենտրոնացումն էր:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի (Hayastan All Armenian Fund) կանոնադրությունը հաստատվեց Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 1992 թ. մարտի 16-ի նիստում: «Հիմնադրամի կազմավորումը նպատակ ունի համայն հայության ուժերի և կարողությունների համախումբ գործադրմամբ օգնել Հայաստանի զորացմանն ու բարգավաճմանը և կայուն հիմքեր ստեղծել ազգային պետականության ամրապնդման համար»,- նշվում էր Հիմնադրամի կանոնադրության մեջ[128]: Այդ նպատակն իրականացնելիս Հիմնադրամը կարևոր էր համարում օժանդակել Հայաստանի Հանրապետության ու ԼՂՀ տնտեսությունների կայունացմանն ու զարգացմանը և բարեփոխումների իրականացմանը, նպաստել ազգային, գիտական, կրթական, մշակութային և առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը, զորավիգ լինել 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժի հետևանքների հաղթահարմանը, արցախահայության կարիքներին, բռնագաղթվածների խնդիրների լուծմանը, աջակցել նաև մեծ նշանակություն ունեցող համազգային ծրագրերի իրականացմանը:

Հիմնադրամի միջոցները գոյանում էին Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի բնակչության, աշխարհասփյուռ հայության Ազգային տուրքից՝ ընդհանուր մուտքերից և կազմակերպությունների ու անհատների նպատակային հատկացումներից:

1992 թ. մայիսի 15-ին Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջին նիստում հաստատվեցին համապետական նշանակության տնտեսական, գիտամշակութային և սոցիալական հետևյալ ծրագրերը՝ «Զանգեզուր», «Աղետի գոտի», «Արցախ», «Բռնագաղթվածներ», «Գիտամշակութային և սոցիալական ծրագրեր»:

Հայաստանի հարավային տարածաշրջանի՝ Զանգեզուր-Սյունիքի դերը նշանակալից է Հայաստանի Հանրապետության

[128] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 416, թ. 2: Տե՛ս նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրություն,-«Հիմնադրամ», 1992, էջ 14:

համար. դրանով էլ պայմանավորված էր ծրագրի ընտրությունը: Ծրագրի միտումը հաղորդակցության ապահովումն էր, որը ռազմավարական արժեք էր ձեռք բերում Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական դիրքի հետևանքով, քանի որ Հայաստանի Հանրապետությունը Զանգեզուր տարածաշրջանով էր սահմանակցում Իրանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը: Լինելով Հայաստանի Հանրապետությունը ԼՂՀ-ին կապող միակ օղակը՝ Զանգեզուրը նաև յուրօրինակ մարդասիրական միջանցք էր:

1992-1995 թթ. «Զանգեզուր» ծրագրով կատարվեցին ավտոճանապարհների շինարարության, վերականգնման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ: Սփյուռքահայ գաղթօջախների, հատկապես Լատինական Ամերիկայի հայկական համայնքների ֆինանսավորման շնորհիվ Հիմնադրամը կառուցեց «Երևան-Մեղրի» ավտոմայրուղին: Նոր ճանապարհը զգալիորեն հեռացավ Ադրբեջանի նախկին սահմանից՝ դառնալով ավելի ապահով ու անվտանգ:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջին նիստում առաջնահերթ ծրագրային ուղղությունների շարքում հաստատված «Աղետի գոտի» ծրագրի նպատակն էր Սփյուռքում հավաքված միջոցներն ուղղել աղետյալ բնակավայրերի, մասնավորապես քաղաքների վերականգնմանը, քանի որ տարիներ շարունակ աղետի գոտու հազարավոր մարդիկ ապրում էին ժամանակավոր տնակներում՝ զրկված աշխատատեղերից, կենցաղային ամենատարրական պայմաններից (դրան նպաստում էր նաև Հայաստանի տևական շրջափակումն ու վառելիքաէներգետիկ ճգնաժամը):

1993 թ. Հիմնադրամն արդեն սկսել էր ծրագրեր իրականացնել Գյումրի, Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան քաղաքներում՝ առաջին հերթին իրականացնելով անավարտ բնակելի շենքերի կառուցման աշխատանքներ: Շինարարական աշխատանքները կատարվում էին հիմնականում Գյումրիի «Անի» («Անին» Գյումրիի ամենամեծ թաղամասերից էր, ուր բնակեցվել և բնակեցվում էին 1988 թ. երկրաշարժից տուժած գյումրեցի ընտանիքներ), Վանաձորի «Տարոն 3», Սպիտակի «Իտալական» թաղամասերում և Ստեփանավան քաղաքում: 1993-2000 թթ. ընթացքում ծրագրի

շրջանակներում կատարվեց մոտ 8 000 000 ԱՄՆ դոլարի շինարարություն[129]:

Գյումրիի «Անի» և «Մուշ» թաղամասերում անօթևան ընտանիքների համար մի շարք բնակելի շենքերի կառուցմանը նյութապես աջակցեցին Սիրիայի Բերիո հայ համայնքը, Լիբանանի հայության «Աղետյալների օգնության ֆոնդը», «Զինիշյան հիշատակի հիմնադրամը» (ԱՄՆ), Մարսելի ու Նիսի Սոս Արմենի (Ֆրանսիա) կազմակերպությունները և ֆրանսահայ բարերար Գլակ Ղազարյանը, Լինսի հիմնադրամը, Անթիլիասի Հայ Առաքելական եկեղեցին, ֆրանսահայ բարերարուհի Տիրուհի Բոյաջյանը (ով անգամ վաճառեց իր առանձնատունը և ստացված գումարը փոխանցեց Հիմնադրամին):

Սփյուռքահայ համայնքներն ու կազմակերպությունները Հիմնադրամի շրջանակներում ակտիվորեն մասնակցում էին կրթական և առողջապահական հաստատությունների կառուցման, վերակառուցման, կիսակառույց շենքերի ավարտման և ամրացման մի շարք ծրագրերի: Գյումրիում վերակառուցվեց արվեստի ակադեմիան (ՀԲԸՄ-ի ֆինանսավորմամբ), վերականգնվեց պատմական արժեք ունեցող թիվ 1 միջնակարգ դպրոցի շենքը (Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության ֆինանսավորմամբ), «Մուշ» թաղամասի դպրոցը (ֆրանսահայ համայնքի ֆինանսավորմամբ), մանկավարժական ինստիտուտի մասնաշենքը, «Անի» թաղամասում կառուցվեցին Գյումրիի մանկական արվեստի կենտրոնի շենքը («Fondation Alliance Armenienne» շվեյցարահայ կազմակերպության ֆինանսավորմամբ), հիմնականում ծնողազուրկ երեխաների համար նախատեսված Պողոսյան կրթահամալիրը, կրթահամալիրին կից՝ «Պողոսյան» պուրակը (Շվեյցարիայի «Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի միջոցներով): Հայ Ավետարանականների միությունը (ԱՄՆ) ֆինանսավորեց նաև Գյումրիի մանկական հիվանդանոցի նախագծումը: Աչքի ընկան նաև ֆրանսահայ «Հույս Հայաստանի համար» կազմակերպությունը, ԱՄՆ Արևելյան ափի տեղական մարմինը, Ավստրալիայի «Հայ աղետյալների օժանդակության» մարմինը և այլն: Ամեն մի նոր բնակարան, նոր

[129] Տե՛ս «Հիմնադրամ», ապրիլ, 2000:

կրթական ու առողջապահական հաստատություն, որ կառուցվում էր աղետի գոտում ոչ միայն սոցիալական խնդիրներ էր լուծում, այլև նախանշում էր ելքը շարունակվող աղետից:

1992-1993 թթ. ձմեռն ամենածանրն էր հանրապետությունում: Այդ ժամանակ էր, որ մարդիկ հարկադրված կտրում էին ծառերը՝ իրենց բնակարանները գոնե մի փոքր տաքացնելու համար: Շրջափակումը, գազամուղի և երկաթուղու վթարները Հայաստանի տնտեսությունը մտցրել էին փակուղի: Հանրապետությունում չէր գործում ջեռուցման համակարգը, բնակչությունը մնացել էր մոմերի, նավթավառների հույսին: Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակման հետևանքով ժողովուրդը հայտնվեց ծանր իրավիճակում՝ օրական ստանալով մի քանի ժամ էլեկտրականություն, ինչի պատճառով փակվեցին դպրոցների ու հիվանդանոցների մեծ մասը: Ահա այս ժամանակ էր, որ առաջին անգամ «Ձմեռ» ծրագրին մասնակցեց «Հայաստան» հիմնադրամը: 1992-1993 թթ. ձմռան դառը փորձը պարտադրեց ավելի լրջորեն նախապատրաստվել հաջորդ ձմռանը: Այս ամենը հաշվի առնելով՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը և Հայկական միացյալ ֆոնդը 1993 թ. ձեռնարկեցին համաշխարհային դրամահավաք՝ Հայաստանի ժողովրդին ցրտից պաշտպանելու համար վառելանյութ գնելու նպատակով: Մեկ շաբաթում համայնհայության կողմից հավաքվեց 7 մլն դոլար, որը եռապատկեց ամերիկահայ ազգային բարերար, Հիմնադրամի պատվո անդամ Քըրք Քըրքորյանը՝ այն հասցնելով 21 մլն դոլարի[130]:

«Ձմեռ 1993-1994» ծրագիրը մեծ նշանակություն ունեցավ ՀՀ համար: Միևնույն ժամանակ այն ցույց տվեց, որ հայությունը հնարավորություն ունի ամենասեղմ ժամկետներում անել անկարելին: Ծրագրով նախատեսված էր կենտրոնացված համակարգով ջեռուցվող բնակելի շենքերի ջեռուցում, կենսագործունեութ-

[130] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, 1992-1995 գործունեություն եւ ֆինանսական հաշվետվություն, Ե., 1995, էջ 24: Տե՛ս նաև նույնի՝ 1995-1996 ֆինանսական հաշվետվություն. 1992-1996 ծրագրային գործունեություն, Ե., 1996, էջ 74, Համահայկական հիմնադրամի եւ Հայկական միացեալ ֆոնտի համագործակցութեամբ այս ձմեռ Հայաստանի վառելանիւթ ապահովելու համար 21 միլիոն տոլար պիտի հանգանակուի,-«Երիտասարդ Հայաստան», 1993, թիւ 7, նոյեմբեր, էջ 8, «Հայրենիք», 21 հոկտեմբերի, 1993:

յան համար անհրաժեշտ օբյեկտների ապահովում վառելիքով: Այս նպատակով ձեռք բերվեց մազութ, դիզելային վառելիք, բնական գազ, բենզին, որի շնորհիվ Երևանում և հանրապետության 19 քաղաքներում ջեռուցվեցին 2915 բնակելի շենքեր, առողջապահական և կրթական հաստատություններ, անխափան աշխատեցին հացի գործարանները, ջրամատակարարման պոմպակայանները, հեռախոսային կայանները[131]:

Հիմնադրամի շնորհիվ նորովի իմաստավորվեց Հայրենիք-Սփյուռք կապը:

«Հայաստան» հիմնադրամն իր ծրագրային հիմնական ուղղություններից դուրս իրականացրեց նպատակային ծրագրեր Երևանում և Հայաստանի Հանրապետության այլ շրջաններում՝ Բաղրամյանում ու Թալինում: Բաղրամյանի շրջանում ջրատար կառուցելու ծրագիրը 1995 թ. ստանձնեց «Fondation Alliance Armenienne» շվեյցարահայ կազմակերպությունը, որն այդ նպատակով Հիմնադրամին հատկացրեց 165 հազար դոլար[132]: Բաղրամյանը ՀՀ համեմատաբար նորաստեղծ շրջաններից էր, որտեղ հիմնադրման օրվանից սուր կերպով առկա էր խմելու ջրի խնդիրը, ուստի շվեյցարահայ այս կազմակերպության շնորհիվ սկսվեց և ավարտվեց շրջանի 5 գյուղերի ջրամատակարարման ծրագիրը[133]:

Հիմնադրամի կենսական կարևորություն ունեցող ծրագրերից էր նաև Արագածոտնի մարզի Թալինի շրջանի 22 ջրազուրկ գյուղերի ջրատարի շինարարությունը, որը նպատակային ձևով ֆինանսավորեց շվեյցարահայ «Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամը[134]: Ռոբերտ Բողոսյանը իր որդիներ Ալբերտ և Ժան Բողոսյանների հետ 1995-2001 թթ. Հիմնադրամի միջոցով հայրենիքում իրականացրել է շուրջ 2 մլն ԱՄՆ դոլարի ծրագրեր[135]: Նրանց ֆինանսավորմամբ Բաղրամյանի և Թալինի շրջաններում կառուցվեցին ջրամատակարարման համակարգեր, իսկ Գյումրիում, Սպիտակում, Երևանում՝ դպրոցներ ու մշակութային հաստատություններ: «Ռոբերտ Բողոսյան ու որդիներ» հիմնադրամը ֆինանսավորեց նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Երևանում իրականացված կրթության և առողջապահական ոլորտների հաստատությունների վերակառուցման և ստեղծման մի շարք ծրագրեր, որոնցից էր 1996-1997 թթ. ԵՊՀ-ին առընթեր ակադեմիկոս Շահինյանի անվան Երևանի ֆիզիկամաթեմատիկական գիշերօթիկ դպրոցի ուսումնական մասնաշենքի և հանրակացարանի վերակառուցման, բարեկարգման, կահավորման ու տեխնիկապես հագեցնելու ծրագիրը: Բողոսյանների նախաձեռնություններից էր 2000 թ. «Հանրապետության Նախագահի մրցանակի» հիմնումը, որը մշակույթի և գիտության հովանավորման նոր ու արդյունավետ ձև էր[136]:

Ֆրանսիայի հայ համայնքը, Շվեյցարիայի «Ռ. Բողոսյան և որդիներ» ու «Իզմիրլյան» հիմնադրամները, ԱՄՆ-ի «Բժշկական օգնություն հայերին» կազմակերպությունը, արգենտինահայեր Արմեն Էքսերճյանը և Սամվել Մարկոսյանը նպատակային ձևով ֆինանսավորեցին Երևանի թիվ 1 մանկական կլինիկական հիվանդանոցի վերակենդանացման և վիրաբուժության բաժանմունքների վերակառուցման, կահավորման ու ժամանակակից բուժտեխնիկայով հագեցման ծրագրերը[137]: Հիվանդանոցի լաբորատոր բաժանմունքի վերանորոգումը ֆինանսավորեց արգենտինահայ էդի Սարյանը:

Հիմնադրամի ծրագրերի հիմնական բաժինը ուղղվում էր Լեռնային Ղարաբաղ: 1993 թ., երբ ԼՂՀ-ի տարբեր շրջաններում դեռ շարունակվում էին ռազմական գործողությունները, Հիմնադրամը սկսեց իրականացնել «Արցախ» ծրագիրը: Տնտեսության ենթակառուցվածքներից առաջինն ուշադրության արժանացավ

---

[131] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1995, էջ 24:

[132] Տե՛ս «Լրագիր», 24 հոկտեմբերի, 1995: Տե՛ս նաև Fondation Alliance Armenienne-ը 165.000 տոլար տրամադրեց Հայաստանի հինգ գիւղերու ջրմատակարարման,-«Աւետիք», 1995, թիւ 9-12, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 469:

[133] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1996, էջ 9, 22: Տե՛ս նաև նույնի՝ ֆինանսական և ծրագրային հաշվետվություն 1996-1997, Ե., 1997, էջ 26, նույնի՝ ֆինանսական և ծրագրային հաշվետվություն 1997-1998, Ե., 1999, էջ 14:

[134] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1997, էջ 26: Տե՛ս նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1999, էջ 14:

[135] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆինանսական և ծրագրային հաշվետվություն, Ե., 2001, էջ 21:

[136] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 150:

[137] Տե՛ս «Հիմնադրամ», ապրիլ, 2000:

Լեռնային Ղարաբաղի տրանսպորտային ներքին հաղորդակցության ցանցը, այնուհետև՝ ջրատարներն ու ավտոճանապարհները:

ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև տրանսպորտային կապն ապահովելու համար կարևորվում էր ամենակարճ ժամկետում հաղորդակցության ողջ ծավալին համապատասխանող ավտոճանապարհի կառուցումը: Ուստի 1995 թ. Հիմնադրամը նախաձեռնեց Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող «Գորիս-Ստեփանակերտ» 64 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհի շինարարությունը, որն իրագործվեց չորս տարվա ընթացքում: 1999 թ. նոյեմբերին ավտոճանապարհն ամբողջությամբ պատրաստ էր և հանդիսավոր պայմաններում հանձնվեց շահագործման: Ավտոմայրուղու կառուցումից հետո Հայաստանը ԼՂՀ-ին կապող ճանապարհը կրճատվեց մոտավորապես երկուսուկես ժամով: Ավտոճանապարհի շինարարությունը հնարավոր եղավ համայն հայության միասնական ու համախումբ ջանքերով: Ծրագրին մասնակցեցին հայության բոլոր հատվածները՝ մոտ երկու հարյուր հազար հայ, որոնցից աչքի ընկան հատկապես Վաչե Մանուկյանը, Հովնանյան եղբայրները, Քըրք Քըրքորյանը, Լուիզ Մանուկյան Սիմոնը, Վարուժան Պուրմայանը և այլք[138]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի և ԱՄՆ-ի «Արևմտյան ափի հանձնախմբի» նախաձեռնությամբ 1996 թ. մարտ-մայիս ամիսներին անցկացվեց «Ստեփանակերտ-Երևան-Լոս Անջելես» Ազգային տուրքի մարաթոնը, որը կազմակերպված ձևով անցավ Լեռնային Ղարաբաղում, Հայաստանի Հանրապետությունում և մի շարք հայաշատ երկրներում: Ազգային տուրքի մարաթոնը տևեց 63 օր և ավարտվեց 1996 թ. մայիսի 27-ին Լոս Անջելեսում 12 ժամանոց հեռուստամարաթոնով, որի ընթացքում ամփոփվեցին մարաթոնի արդյունքները[139]: Մարաթոնի ընթացքում հանգանակվեց ավելի քան 6 մլն ամերիկյան դոլար[140]: Լինսի հիմնադրամը իր խոստման համաձայն կրկնապատկեց մայիսի 27-ի հեռուստամարաթոնի արդյունքում գանձված գումարը: Հեռուստամարաթոնի նպատակային մուտքերն ամբողջությամբ

[138] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-2001, էջ 3:
[139] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 փետրվարի, 1996:
[140] Տե՛ս «Ազգ», 30 մայիսի, 1996:

ուղղվեցին «Գորիս-Ստեփանակերտ» ավտոճանապարհի շինարարությանը:

Հիմնադրամի համահայկական ու համընդհանուր մասնակցություն պահանջող ծրագրերից էր նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության ծրագիրը, որի ֆինանսավորումը նույնպես ստանձնեց Սփյուռքը: Նոր ծրագիրը մեկնարկեց 2000 թ. հունիսին: Այս ծրագրի համար Լոս Անջելեսում 1999 թ. նոյեմբերի 25-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնությամբ մեկնարկած հեռուստամարաթոնին մասնակցեցին յոթ հազարից ավելի ամերիկահայեր, որոնց շնորհիվ հավաքվեց ավելի քան հինգ մլն ԱՄՆ դոլար, ինչն ապահովեց ճանապարհի մոտ 30-35 կմ կառուցելու հնարավորություն[141]: Մնացած գումարը (ամբողջ ճանապարհը 25 մլն դոլար արժեր) հավաքվելու էր նույն կերպ:

«Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության ծրագրին Ք. Քըրքորյանը հատկացրեց 1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀԲԸՄ նախագահ Լուիզ Մանուկյան Սիմոնը՝ 700 հազար դոլար[142]: 1999 թ. հեռուստամարաթոնի նվիրատուներից էին նաև Հրայր ու Վահագն Հովնանյանները, Ալբերտ Բոյաջյանը, Հրաչ Գաբրիելյանը, Քերոլայն Մուգարը և այլք:

Լոս Անջելեսում «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախաձեռնությամբ հեռուստամարաթոն տեղի ունեցավ նաև 2000 թ. նոյեմբերի 23-ին, որից ստացված հասույթը նախատեսվեց տրամադրել գլխավորապես «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհի կառուցմանը (թեպետ դրամական մուտքերի 30 տոկոսն առանձնացվելու էր աղետի գոտու համար): Հեռուստամարաթոնին մասնակցեց ավելի քան 10 հազար ամերիկահայ, հավաքվեց 2,5 մլն ԱՄՆ դոլար[143]: Ի տարբերություն նախորդ տարիներին տեղի ունեցած հեռուստամարաթոնների, այս անգամ Հիմնադրամը նախատեսեց հանգանակված գումարից տրամադրել նաև Գյումրիում 4 դպրոցների շինարարությանն ու կահավորմանը (շուրջ 1 մլն 200 հազար դոլար)[144]: Հեռուստամարաթոնին ընդա-

[141] Տե՛ս «Հիմնադրամ», ապրիլ, 2000:
[142] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-2001, էջ 17:
[143] Տե՛ս նույն տեղում, էջ 16:
[144] Տե՛ս «Ազգ», 18 հոկտեմբերի, 2000:

ռաջ՝ ՀԲԸ Միության նախագահ Լուիզ Մանուկյան Սիմոնը 350 հազար դոլար էր նվիրել «Հայաստան» հիմնադրամին[145]:

Այսպիսով, 1995-1999 թվականներին Հիմնադրամի գլխավոր ծրագիրը Հայաստանն ու Ղարաբաղը միմյանց միացնող «Գորիս-Ստեփանակերտ» ավտոմայրուղու (64 կմ), և 2000 թվականից՝ ԼՂՀ ներքին շրջաններն իրար կապող «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու (170 կմ) շինարարությունն էր:

Երկրորդ կարևորագույն ոլորտը ջրամատակարարումն էր: Հիմնադրամը ջրամատակարարման ցանցեր, ջրահավաք ավազաններ, մաքրման և մղիչ կայաններ կառուցեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրեթե բոլոր շրջաններում: Այդ ոլորտում կարևոր նշանակություն ունեցող ծրագրեր իրականացվեցին հատկապես Ստեփանակերտ քաղաքում, որտեղ Տորոնտոյի և Հոլանդիայի հայ համայնքների ֆինանսավորմամբ 1998 թ. շահագործման հանձնվեց քաղաքի ջրամատակարարման օղակաձև ցանցը, իսկ քաղաքի «Վարարակն» աղբյուրն ու ջրագիծը կառուցվեցին Գերմանիայի հայ համայնքի միջոցներով[146]:

Կանադայի Տորոնտոյի Հիմնադրամի տեղական մարմինը իր բոլոր ծրագրերն իրականացնում էր Արցախում: Նրա միջոցներով 2000 թ. կառուցվեցին ԼՂՀ-ի մի շարք գյուղերի ջրագծերը և վերականգնվեց «Տրակետ-1» ջրընդունիչը:

1992-1995 թթ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգահամակարգը, հիմնականում պատերազմի հասցրած վնասի հետևանքով, կարիք ուներ արմատական վերափոխման: Հիմնադրամը իրականացրեց մի շարք ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավոր եղավ ունենալ ինքնուրույն և նորացված էներգահամակարգ: Այդ գործում էական էր ֆրանսահայ «Հույս Հայաստանին» կազմակերպության դերը, որը «Հայաստան» հիմնադրամի միջոցներով 450 հազար ֆրանկով ֆինանսավորեց ԼՂՀ կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների ինքնավար էներգասնուցման համակարգի ստեղծման ծրագիրը[147]: Համալիր վերանորոգման ենթարկվեց Ստեփանակերտի գլխավոր ենթակայանը, որի շահագործմամբ փաստորեն ամբողջացավ Լեռնային Ղարաբաղի էներգահամակարգը:

1995-1996 թթ. Հիմնադրամը սկսեց Ստեփանակերտի ֆիզիկամաթեմատիկական թեքումով գիշերօթիկ դպրոցի նոր ուսումնական մասնաշենքի շինարարությունը, որը շահագործման հանձնվեց 1999 թ. ապրիլին: Դպրոցի համալիրի շինարարության ծրագիրը սկզբից ևեթ մեծ արձագանք ունեցավ սփյուռքահայ համայնքներում: Աջակիցներից էին Հայաստանի և Արգենտինայի երեխաներին աջակցող հանձնախումբը, Գևորգ Վարդպարոնյանը, Կատալինա Մորիս դե Սեֆերյանը (Արգենտինա), Ալեն Մանուկյանը (Ֆրանսիա), կանադահայ համայնքը, ամերիկահայ Անդրանիկ Բերբերյանը և այլն:

Հիմնադրամը պարբերաբար հումանիտար օգնություն էր տրամադրում ԼՂՀ կառավարությանը՝ գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու, ավերված բնակավայրերը վերականգնելու, սոցիալական խնդիրները լուծելու և այլ նպատակների համար: 1997 թ. սկզբից մի խումբ արգենտինահայերի ֆինանսավորմամբ Հիմնադրամը համընդհանուր շինարարություն ծավալեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի պատերազմական գործողությունների հետևանքով հիմնովին ավերված Վաղուհաս գյուղում՝ նախածեռնելով ավերված 67 տների հիմնովին վերակառուցումը[148]: Ծրագրի իրագործումից հետո զգալիորեն ավելացավ գյուղ վերադարձող ընտանիքների թիվը: Տների վերակառուցումից հետո արգենտինահայ բարերար Հովսեփ Թախթայի ֆինանսավորմամբ սկսվեց գյուղի դպրոցի կառուցումը, որն ավարտվեց 1999 թ.[149]: Արգենտինահայ համայնքը ֆինանսավորեց նաև Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի 21 տների վերականգնումը՝ զոհված ազատամարտիկների ընտանիքների համար[150]:

ԼՂՀ կառավարության առաջարկով 1995 թ. հունվարից Հիմնադրամը սկսեց իրականացնել «Նպաստներ ՀՀ և ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագիրը, ըստ որի ամենամսյա նպաստներ էին հատկաց-

[145] Տե՛ս նույն տեղում:
[146] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1999, էջ 12:
[147] Տե՛ս «Ազգ», 10 փետրվարի, 1996:

[148] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1997, էջ 39:
[149] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1999, էջ 27:
[150] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-2001, էջ 10, 19:

վում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին: Ծրագիրը գործեց մինչև 1999 թ. օգոստոսը, որից հետո միջոցների բացակայության պատճառով ժամանակավորապես դադարեցվեց: Ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ, որ «Նպաստներ» ծրագրի համար անհրաժեշտ է ստեղծել անձեռնմխելի ֆոնդեր, քանի որ այն շարունակական է, անընդհատ: Անհրաժեշտ գումարների մի մասն ապահովելու նպատակով «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և Ամերիկայի հայկական համագումարի անդամ Հրայր Հովնանյանը և նրա տիկինը՝ Աննա Հովնանյանը, ի հիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի, 1999 թ. Հիմնադրամի շրջանակներում 200 հազար դոլարով ստեղծեցին առաջին մնայուն ֆոնդը, որը «Նպաստներ» ծրագրի համար կայուն միջոց ապահովելու առաջին ու ծանրակշիռ քայլն էր[151]: Այդ գումարից գոյացող բանկային տոկոսներով վճարվեցին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաների նպաստները: Հիմնադրամի գործադիր վարչության հետ պայմանավորվելով՝ Հովնանյանները երկու տարվա ընթացքում ֆոնդի մայր գումարին նախատեսեցին ավելացնել ևս 300 հազար դոլար՝ այն հասցնելով 500 հազար ԱՄՆ դոլարի[152]: «Նպաստներ ՀՀ և ԼՂՀ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագրին մասնակցող ավստրալիահայ Հ. Հովնաթանյանը ևս հատկացնելով 93000 դոլար՝ ստեղծեց անձեռնմխելի ֆոնդ Արագածոտնի և Լոռու մարզերի զոհված ու առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաների համար[153]: Այնուհետև ձևավորվեցին «Գրիգոր և Դանիել Շահինյաններ», «Պոլ Ջեքյան», «Լիլիան Թռչունյան» ֆոնդերը, որոնցից գոյացած միջոցներով հնարավոր եղավ ապահովել ծրագրի անխափան ընթացքը:

Երևանի պետական համալսարանի և ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ինստիտուտի համար առատաձեռն նվիրատվություններով հայտնի շվեյցարահայ բարերար Տիգրան

[151] Տե՛ս «Փարոս», 15 մարտի, 2000:
[152] Տե՛ս նույն տեղում:
[153] Տե՛ս «Հիմնադրամ», ապրիլ, 2000:

Իզմիրլյանը «Նպաստներ ազատամարտիկների երեխաներին» ծրագրին մասնակցեց յուրօրինակ ձևով: «Իզմիրլյան» հիմնադրամը ստանձնեց առաջիկա 13 տարիներին երեխաների երկու ամսվա նպաստներն ամբողջությամբ վճարելու պարտականություն՝ ընդհանուր առմամբ խոստանալով տրամադրել 650 հազար ԱՄՆ դոլար[154]:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, բրիտանահայ ազգային բարերար Վաչե Մանուկյանը մասնակցեց «Ջմեռ 93-94», «Նպաստներ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին», «Գորիս-Ստեփանակերտ» ավտոճանապարհի և մյուս առաջնահերթ կարևորության ծրագրերին: Բարերարը հայտնի է նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնին կատարած իր 1 մլն դոլար նվիրատվությամբ[155]: 1997 թ. մշակութային ու կրթական հաստատություններին հովանավորելու համար Հիմնադրամի կողմից ստեղծվեց «Վաչե Մանուկյան» ֆոնդը, որի միջոցներով Հիմնադրամն իրականացնում էր «Մշակույթի հովանավորում» ծրագիրը: Վ. Մանուկյանի նվիրատվության հաշվին հովանավորվում էին Հայաստանի և Արցախի մշակութային խոշորագույն պետական երաժշտական ու թատերական կոլեկտիվներ, անվանի, վաստակաշատ մտավորականներ՝ ավելի քան յոթ հարյուր գործիչներ[156]: 2000 թ. ծրագիրն ավարտվեց: Հիմնադրամի գործադիր վարչությունը մտադրվեց մոտ ապագայում կրկին վերականգնել այն՝ այս անգամ արդեն մնայուն ֆոնդեր ստեղծելով:

«Նպաստներ զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին» ծրագրի օգտին հատկացումներով աչքի ընկավ իրանահայ բարերար Գարեգին Փիրզադյանը, որը 1995 թ. սեպտեմբերին Հայաստան այցելելով՝ անմիջապես հյուրանոցում կտակ գրեց՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամին կտակելով իր ունեցվածքի մի մասը: Նրա անունը սերտորեն կապված է «Հայաստան» հիմնադրամի հետ: Առաջին մասնակցությունը Հիմնադրամին օժանդակությունն էր ԵՊՀ-ի կարիքավոր առաջադեմ ուսանողներին, որոնց հովանավորելու

[154] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-2001, էջ 30:
[155] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 14 ապրիլի, 1995:
[156] Տե՛ս «Ազգ», 23 ապրիլի, 1999:

նպատակով Գ. Փիրզադյանը 1995 թ. ստեղծեց «Հռիփսիմե Փիրզադյան» անձեռնմխելի ֆոնդը՝ ի հիշատակ իր տիկնոջ[157]: Առաջին վճարումները կատարվեցին 1995 թ.: Բացի այդ, գոյացած միջոցներից ֆինանսավորվեց առաջնահերթություն ունեցող բուհական մի շարք դասագրքերի հրատարակումը: Ֆոնդը օգնում էր նաև ծնողազուրկ երեխաներին, աջակցում զոհված և առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին:

Հիմնադրամի մնայուն ֆոնդերից էր Երևանի բժշկական համալսարանի առաջատար կարիքավոր ուսանողներին հովանավորելու նպատակով իրանահայ բարերարուհի Շաքե Գրալյանի՝ ի հիշատակ իր ամուսնու ստեղծված «Երվանդ Գրալյան» անձեռնմխելի ֆոնդը, որի վճարումները կատարվեցին 1994 թվականից[158]:

Հիմնադրամի բոլոր ծրագրերն ուղղված էին Լեռնային Ղարաբաղի և ՀՀ տնտեսական, կրթական, մշակութային և առողջապահական ենթակառույցների շինարարությանը, վերականգնմանն ու համալիր նորոգմանը: 1995-1996 թթ. ՀՀ Թալինի շրջանում Հիմնադրամը ամերիկահայ բարերար Հարություն Սիմոնյանի ֆինանսավորմամբ իրականացրեց Ոսկեթաս գյուղի միջնակարգ դպրոցի շենքի վերականգնման-վերանորոգման ծրագիրը[159]: Գիտական կենտրոնների ինտերնետ ներքին ցանցի ստեղծումը ֆինանսավորեց ֆրանսահայ Վ. Գիտափչյանը: Հիմնադրամի կյանքի կոչած ծրագրերից մեկն էլ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստումն էր:

Որպես կայացած համահայկական կառույց, «Հայաստան» հիմնադրամը 1999 թ. դրությամբ շուրջ 67 մլն դոլարի ծրագրեր էր իրականացրել Հայաստանի Հանրապետության մարզերում և Լեռնային Ղարաբաղի շրջաններում[160]: Հիմնադրամի խողովակով ամերիկահայ համայնքը վերջին տասնամյակի ընթացքում քսան միլիոն դոլարի ներդրում էր կատարել հայրենակերտ ծրագրերի

[157] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 օգոստոսի, 1996:
[158] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-2001, էջ 31:
[159] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1996, էջ 66: Տե՛ս նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1997, էջ 26:
[160] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-1999, էջ 5:

համար[161]: Ութ տարիների (1992-2000 թթ.) ընթացքում Հիմնադրամն իրականացրել է երեք տասնյակից ավելի նպատակային ծրագրեր[162]: Կառուցվել են հարյուրավոր բնակելի շենքեր և առանձնատներ, տասնյակ դպրոցներ, կրթական հաստատություններ, առողջապահական հիմնարկություններ, ավտոճանապարհներ, ջրատար խողովակաշարեր, էլեկտրահաղորդման գծեր:

Հայրենիքին շոշափելի աջակցություն ցույց տվեցին նաև մի շարք այլ հիմնադրամներ:

Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնի մշակութային կյանքի կենտրոնը հանդիսացող «Գալուստ Կյուլպենկյան» բարեսիրական և գիտամշակութային հիմնարկությունը (ԳԿՀ, Calouste Gulbenkian Foundation) հիմնվել է բրիտանահպատակ հայ մեծահարուստ Գալուստ Կյուլպենկյանի կտակի համաձայն 1956 թվականին: Հիմնարկությունը միջազգային կապեր ուներ 75 երկրների հետ, իր կարևորությամբ և գործունեության ընդգրկումով այդ կարգի ամենախոշոր հաստատությունն էր Եվրոպայում և մտնում էր աշխարհի նույնանման կենտրոնների տասնյակի մեջ: Հիմնարկության նպատակն էր իրականացնել բարեսիրական գործունեություն գիտության, կրթության, առողջապահության և արվեստի զարգացման բնագավառում: Դրամական միջոցների հիմնական բաժինը մնում էր Պորտուգալիայում (բաշխվելիք եկամուտի 81 տոկոսը), իսկ արտասահմանի հայ համայնքներին որպես օգնություն հատկացվում էր 4,5 տոկոսը բաշխվելիք եկամտից՝ 1,89 մլն դոլար[163]: Հիմնարկության կողմից տարբեր երկրների հայ համայնքներին հատկացվող օգնության հիմնական ուղղություններն էին կրթությունը (ծախսերի մոտ 75 տոկոսը), գիտությունը (մոտ 23 տոկոսը) և արվեստը (մոտ 1,4 տոկոսը): Օգնություն էր ուղարկվում Սփյուռքի հայկական դպրոցներին, հայ ուսանողներին հատկացվում էին կրթաթոշակներ, ֆինանսավորվում էր գրահրատարակչության գործը[164]: Հիմնարկության կազմում գոր-

[161] Տե՛ս «Հայաստան» համահայկական հիմնադրամ-2001, էջ 16:
[162] Տե՛ս «Հիմնադրամ», ապրիլ, 2000:
[163] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 7, գ. 217, թ. 4:
[164] Գ. Կյուլպենկյանի կտակի համաձայն չի նախատեսվել նյութական աջակցություն ցուցաբերել հայությանը (բացառությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Երուսաղեմի «Գալուստ Կյուլպենկյան» գրադարանի և

ծող Հայկական համայնքների բաժանմունքը 1964 թվականից սկսել է օժանդակել Հայաստանի գիտահետազոտական, մշակութային հաստատություններին, նաև արդիական բժշկական սարքավորումներ մատակարարել հանրապետության հիվանդանոցներին: Հաստատության կողմից Հայաստանի Հանրապետությանը հատկացվող ամենամյա 500 հազար դոլարը հիմնականում ծախսվում էր Հայաստանի ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների, առողջապահական հիմնարկների, բուհերի, գրադարանների, մշակույթի կենտրոնների համար արտասահմանյան տեխնիկա և սարքավորումներ ձեռք բերելու համար: Միջոցների մոտ 80 տոկոսը տրամադրվում էր առողջապահական, 15 տոկոսը գիտական, 5 տոկոսը մշակութային հիմնարկներին:

ԳԿՀ-ի Հայկական համայնքների բաժանմունքը կապեր ուներ աշխարհի 27 պետությունների հետ, որտեղ հայեր էին ապրում[165]: Բաժանմունքի բյուջեի հիմնական մասը բաշխվում էր այդ 27 երկրների հայ համայնքների միջև՝ առաջնահերթ կարևորություն տալով Սփյուռքի դպրոցների պահպանման խնդրին: Բաժանմունքի տարեկան բյուջեն կազմում էր շուրջ 4 մլն դոլար, որը կանոնավորապես բաշխվում էր Սփյուռքի և Հայաստանի գիտական, առողջապահական, կրթական և մշակութային կազմակերպություններին[166]: Բաժանմունքի գլխավոր նպատակն էր բոլոր հնարավոր միջոցներով տարածել հայ կրթությունն ու մշակույթը: Ծառայությունը քաջալերում էր հայ դպրոցական հաստատությունների, մշակութային կենտրոնների գործունեությունը, օժանդակում հայ եկեղեցիներին, աշխարհում գործող հայագիտական ամբիոններին, համալսարանական ուսանողներին: Ծառայությունն աջակցել է նաև հայագիտության բնագավառում մեծ

Կ. Պոլսի Ս. Փրկիչ հայկական հիվանդանոցի), սակայն 1956 թ. հիմնարկության Տնօրենների ժողովի որոշմամբ ստեղծվել է ԳԿՀ-ի Հայկական բաժանմունքը, որն էլ սկսել է նյութական աջակցություն ցուցաբերել Հայաստանին:

[165] Տե՛ս **Ղարախանյան Վ.,** «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական համայնքների ծառայության բաժանմունքի գործունեությունը 1995-1998 թթ.,-«Բանբեր Հայաստանի արխիվների», 2005, N 2 (106), էջ 162:

[166] Տե՛ս նույն տեղում:

հեղինակություն վայելող «Հայկական հետազոտությունների միջազգային ընկերակցությանը»:

Հաստատության կանոնադրության համաձայն տրամադրված գումարները կարող էին օգտագործվել միայն առողջապահական, գիտական, մշակութային և կրթական ձեռնարկների համար: Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող օժանդակությունը 1988 թ. Սպիտակի երկրաշարժից ի վեր հատկացվում էր առավելապես բժշկական արդիական սարքավորումների և դեղորայքի ձեռքբերման համար: Զգալի գումարներ տրամադրվեցին Մատենադարանին, ՀՀ ԳԱԱ հիմնակազմ գրադարանին, Ազգային գրադարանին և ԵՊՀ-ին: 1990 թ. ԳԿՀ Վարչական ժողովը որոշում ընդունեց, որ Հայաստանը բացի ամենամյա 450 հազար դոլարից լրացուցիչ ստանալու է ևս կես միլիոն դոլար, որպես արտակարգ օգնություն աղետի գոտուն[167]: 1990 թ. հատկացված 950 հազար ԱՄՆ դոլարը օգտագործելու համար բանակցություններ սկսվեցին օտարերկրյա ընկերությունների հետ, ստորագրվեցին պայմանագրեր:

Ծառայության օժանդակության շնորհիվ ՀՀ ԳԱԱ գեղարվեստի ինստիտուտը հրատարակեց Կոմիտասի բազմահատորյակի 12-րդ հատորը, ԵՊՀ-ն՝ Հայաստանի տեղագրական բառարանի 3-րդ հատորը, ԳԱԱ-ի կենսաբանական հետազոտությունների ինստիտուտը համագործակցեց Փարիզի Մոնդոր հիվանդանոցի հետ, Մատենադարանը դասական հայերենով հրատարակեց քննական Աստվածաշունչը և ուսումնասիրեց միջնադարյան Հայաստանի՝ Վասպուրականի մանրանկարչությունը; 1997 թ. ծառայությունը ԳԱԱ-ին և ԵՊՀ-ին հատկացրեց տեղեկատվական տեխնիկական նորագույն սարքավորումներ, որոնք հնարավորություն էին տալիս այս կենտրոններին ինտեգրվել համաշխարհային գիտական ցանցերին[168]: Ծառայությունը նախապատրաստական աշխատանքներ նախաձեռնեց նաև հայագիտական «Ինտերնետ ցանցի» ստեղծման ուղղությամբ, որը հնարավորություն

[167] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 164, գ. 143, թ. 12: Տե՛ս նաև նույնի՝ ֆ. 326, ց. 7, գ. 217, թ. 6, «Հայրենիքի ձայն», 16 մայիսի, 1990:

[168] Տե՛ս **Ղարախանյան Վ.**, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայանպաստ գործունեությունը. 1956-2006 թթ., Ե., 2008, էջ 193:

էր ընձեռում միմյանց կապել Հայաստանի, Վենետիկի, Վիեննայի և Երուսաղեմի հայագիտական կենտրոնների գրադարանները:

«Գիտական օժանդակության ծրագրերի» շրջանակներում ծառայությունը նախապատվությունը տալիս էր Հայաստանին: ՀՀ-ի գիտական տարբեր հաստատություններում աշխատող գիտնականներին արտագաղթից հետ պահելու, հայրենիքում նրանց գիտական հետազոտությունները խրախուսելու նպատակով 1998 թ. ԳԿՀ-ն 113, 250 դոլարով հատուկ կրթաթոշակներ հատկացրեց ԵՊՀ-ի 158 և Հայաստանի ԳԱԱ-ի 27 գիտնականի[169]:

Հայաստանի գիտական հաստատությունները հզորացնելու նպատակով 1998 թ. ծառայությունը Հայաստանի ԳԱԱ-ին նվիրեց տպագրական՝ ամբողջապես թվայնացված ու բարձրորակ սարքավորումներ, որոնց շնորհիվ ՀՀ գիտական կենտրոնները՝ ԳԱԱ-ն, Մատենադարանը, ԵՊՀ-ն և Ազգային գրադարանը հնարավորություն ստացան շարունակել ՀՀ անկախությունից հետո ընդհատված իրենց տպագրական գործունեությունը:

Միացյալ հայկական ֆոնդ (ՄՀՖ, United Armenian Fund) բարեգործական կազմակերպությունը հիմնադրվել է 1989 թ. նոյեմբերի 7-ին Լոս Անջելեսում ամերիկահայ հայտնի ազգային ու հասարակական գործիչ Հարութ Սասունյանի նախաձեռնությամբ և ԱՄՆ-ում գործող ամենահայտնի յոթ խոշոր հայկական կազմակերպությունների՝ Ամերիկայի հայկական համագումարի, ՀԲԸ Միության, ՀՕՄ-ի, Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի էջմիածնական և անթիլիասական թեմերի առաջնորդարանների, Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության ու Լինսի հիմնադրամի միացյալ ջանքերով[170]:

1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո անհետաձգելի անհրաժեշտություն առաջացավ ստեղծել մի հիմնադրամ, որը ամենանպատակահարմար ձևով կարող էր կոորդինացնել Հայաստանին օգնություն կազմակերպելու աշխատանքները, համակարգել և

[169] Տե՛ս **Ղարախանյան Վ.,** «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության հայկական համայնքների ծառայության բաժանմունքի գործունեությունը 1995-1998 թթ.,-«Բանբեր Հայաստանի արխիվների», 2005, N 2 (106), էջ 169:

[170] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 164, գ. 179, թ. 5: Տե՛ս նաև «Փարոս», 15 դեկտեմբերի, 1996:

ավելի արդյունավետ դարձնել Սփյուռքի օգնությունը աղետից տուժած Հայաստանին, հաղթահարել շրջափակման արգելքները՝ օդանավային կանոնավոր առաքումներ կազմակերպելու միջոցով: Խիստ կարևոր էր հիմնադրամի աշխատանքներում ընդգրկել Սփյուռքի վստահությունը վայելող կազմակերպություններ: Առաջինը հիմնադրամի անդամ դարձավ Լինսի հաստատությունը, որը հանձն առավ ՄՀՖ-ի օդանավերի ամբողջական ծախսերը: Ֆոնդի առաջին բեռնատար օդանավը Հայաստան ուղարկվեց 1989 թ., որն աղետի գոտու բնակչությանը հասցրեց շուրջ 30 տ մարդասիրական օգնություն[171]: Իր գործունեության առաջին տարվա ընթացքում ֆոնդը Հայաստան առաքեց 15 օդանավ՝ 12 մլն դոլար արժողությամբ 500 տ բեռ (ծմեռային հագուստ, սնունդ, սարքավորումներ և այլն)[172]: Իր օգնությունը սկսելով Հայաստանի համար ամենադժվարին տարիներին (լիակատար շրջափակում, ցուրտ ձմեռներ)՝ Միացյալ հայկական հիմնադրամի ծրագրերի ետևում կանգնեց գրեթե ողջ Սփյուռքը՝ իր բոլոր կառույցներով: ՀՀ կառավարության առաջարկությամբ ֆոնդը 1992-1993 թթ. ձմռանը 400 հազար դոլարի մեծաքանակ օգնություն (12 հազար նավթավառ, կաթի փոշի) առաքեց Հայաստան[173]: ՄՀՖ-ն այդ նույն ժամանակահատվածում օդանավերով Եվրոպայից և ԱՄՆ-ից Հայաստան հասցրեց նաև ամիսը միջին հաշվով 40 տ օգնություն[174]: Սկզբնական շրջանում կազմակերպությունն առանձնակի կարևորություն էր տալիս դեղորայքի և բժշկական սարքավորումների մատակարարմանը, սակայն ժամանակի ընթացքում, ելնելով Հայաստանի Հանրապետության և Արցախի տնտեսական հետագա կացությունից, ընդլայնեց գործունեության ասպարեզը:

1993 թ., երբ Հայաստանը էներգետիկ ճգնաժամ էր ապրում, ՀՀ կառավարության «Ձմեռ-94» ծրագրի շրջանակներում ՄՀՖ-ի կազմակերպած համազգային հանգանակության շնորհիվ Հայաստանին հատկացվեց 21 մլն դոլարի վառելանյութ[175]: Հետա-

[171] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 133:
[172] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 720:
[173] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 627:
[174] Տե՛ս նույն տեղում:
[175] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 դեկտեմբերի, 1994:

գա տարիներին ֆոնդը Հայաստան էր առաքում գլխավորապես դեղորայք և բժշկական սարքավորումներ, համակարգիչներ, կապի միջոցներ, գյուղատնտեսական և կրթական պիտույքներ: Հայաստանում ֆոնդը ֆինանսավորեց մի շարք առողջապահական ծրագրեր, որոնց մեջ էր մտնում նաև Հայաստանի մանկական սրտաբանական կենտրոնը, որտեղ մինչև 1997 թ. կատարվել են 700-ից ավելի անվճար վիրահատություններ[176]:

Բացի յոթ կազմակերպություններից, ՄՀՖ-ի մարդասիրական օգնությանը անմիջականորեն մասնակցում էին նաև Սփյուռքի հայկական համայնքները և ամերիկահայ մյուս կազմակերպությունները: 1989-2000 թթ. ՄՀՖ-ն 110 թռիչքներով և 617 ծովային առաքումներով 290 մլն դոլար արժողությամբ մարդասիրական օգնություն է ուղարկել Հայաստան[177]:

Բարեգործական-մարդասիրական հիմնադրամ էր նաև ամերիկահայ նշանավոր ազգային բարերար Քըրք Քըրքորյանի կողմից 1989 թ. հիմնված Լինսի հիմնադրամը (Lincy Foundation), որի միջոցով Ք. Քըրքորյանը մեծագումար հատկացումներ էր կատարում հօգուտ Հայաստանի Հանրապետության, Արցախի և Սփյուռքի, օգնում էր սփյուռքահայ դպրոցներին ու վարժարաններին, Կիլիկիայի թեմի Ազգային առաջնորդարանին, հայոց եկեղեցու Արևմտյան թեմին (ԱՄՆ) և այլն: Հայաստանի Հանրապետությունում առևտրական ծրագրերի մշակման և հաստատման համար Լինսի հիմնադրամը գումարներ էր տրամադրում նաև «Եվրասիա» հիմնադրամին:

Ք. Քըրքորյանը աչքի ընկավ հատկապես ի նպաստ հայրենիքի մեծագումար իր նվիրատվություններով. միայն աղետի գոտու վերականգնման համար նա հատկացրեց 15 մլն դոլար[178], իսկ 1992 թ. Արցախի հիմնադրամին փոխանցեց 3 միլիոն դոլար[179]: Միացյալ հայկական ֆոնդի մարդասիրական բոլոր առաքումները դեպի Հայաստան նույնպես կատարվում էին Ք. Քըրքորյանի տրամադրած փոխադրական ծառայության միջոցներով:

[176] Տե՛ս «Փարոս», 15 մարտի, 1997:
[177] Տե՛ս նույն տեղում, 1 հոկտեմբերի, 2000:
[178] Տե՛ս «Ազգ», 24 հունիսի, 1998: Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետություն», 24 հունիսի, 1998:
[179] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 ապրիլի, 1997:

երկրաշարժից հետո նա բավական մեծ գումարներ ներդրեց «Հայաստան» համահայկական հիմնադրամում: «Ձմեռ-93-94» ծրագրին նա հատկացրեց 14 մլն դոլար, իսկ «Գորիս-Ստեփանակերտ» ճանապարհի կառուցման համար՝ 4,7 մլն դոլար[180]:

Ք. Քըրքորյանը 1997 թ. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և ձեռներեցության հիմնադրամին տրամադրեց 100 միլիոն դոլարի վարկ՝ Հայաստանի ձեռներեցներին վարկավորելու համար[181]: Այդ նվիրատվությունը կատարվեց Հայաստանի տնտեսությունը ոտքի կանգնեցնելու, հայ ձեռնարկատերերի մտահղացումները փորձարկելու հնարավորություն տալու և բազմազան շուկայի ստեղծմանը նպաստելու համար: Դա անկախ Հայաստանի տնտեսության մասնավոր հատվածում կատարվող ամենախոշոր ներդրումն էր: Լինսի փոխատվության նպատակն էր ստեղծել աշխատատեղեր, մեղմացնել աղքատությունը, զարկ տալ Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Ք. Քըրքորյանը մասնակցեց նաև մյուս ծրագրին՝ ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհի՝ Մեծ մայրուղու շինարարությանը, ինչի շնորհիվ Հայաստանը հնարավորություն էր ստանում հասնել մինչև Սևծովյան նավահանգիստներ՝ Փոթի և Բաթում, միաժամանակ հնարավորություն էր ստեղծվում հանրապետության տարածքով տրանզիտային փոխադրումներ իրականացնել մինչև Պարսից ծոց:

1998 թ. դրությամբ Հայաստանի համար Քըրք Քըրքորյանի պայմանավորվածությունների արժեքը գրեթե 250 մլն դոլար էր, որոնց բնույթը փոփոխվում էր՝ գոյատևման ծրագրերից դեպի զարգացման ծրագրեր[182]:

Լինսի հիմնադրամը նաև մեծագումար նվիրատվություններ էր կատարում կրթության և առողջապահության ասպարեզում: Դրանցից մեկն էլ մասնակցությունն էր ամերիկյան Կարմիր խաչի կողմից Հայաստանում իրականացվող երկրաշարժի հետևանքների վերացման ծրագրին: Հիմնադրամը 1990-ական թթ. Հայաս-

[180] Տե՛ս նույն տեղում, 23 հունիսի, 1998:
[181] Տե՛ս **Բախչինյան Ա.**, Հայերը համաշխարհային կինոյում, Ե., 2004, էջ 250: Տե՛ս նաև «Նոր օր», 1 հուլիսի, 1998:
[182] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 հունիսի, 1998:

տան հասցրեց մոտ 300 մլն դոլարի մարդասիրական և բժշկական օգնություն[183]:

«Հովարդ Կարագյոզյան» հաստատությունը (ՀԿՀ, Howard Karagyozyan Medical Benevolent Foundation, կոչվում է նաև «Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցություն») հիմնվել է 1921 թ. Նյու Յորքում Միհրան և Զապել Կարագյոզյանների կողմից՝ ի հիշատակ իրենց վաղամեռիկ որդու: Հաստատության նպատակը ողջ աշխարհի հայ մանուկների առողջության խնամքի և կրթության կազմակերպումն էր, նրանց մտավոր, ֆիզիկական և մշակութային զարգացումը: ՀԿՀ-ի կենտրոնական վարչության ղեկավարի պարտականությունները երկար տարիներ վարում էր Մ. Կարագյոզյանի դուստրը՝ օրիորդ Լեյլա Կարագյոզյանը (1933-1999), ով իր հայրենանվեր գործունեության համար արժանացել է ՀՀ պատվավոր քաղաքացու կոչման:

«Հովարդ Կարագյոզյան» մանկական հիմնադրամը Հայաստանում գործելու հնարավորություն ստացավ միայն 1988 թ. երկրաշարժից հետո: Հին Նորքի «Նարինե» առողջարանի մասնաշենքերից մեկում 1991 թվականից տեղավորվեց ՀԿՀ-ի Երևանի կենտրոնը: 1992 թ. հոկտեմբերին հիմնադրվեց և պաշտոնական գրանցում ստացավ Հայաստանի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպությունը: 1993 թ. ապրիլին Երևանի Նորք թաղամասում բացվեց հաստատության առաջին մանկական ատամնաբուժարանը, որը ժամանակի ընթացքում դարձավ ՀԿՀ կազմակերպության հայաստանյան կենտրոնը և հետագայում գլխավորեց մասնաճյուղ ատամնաբուժարանների աշխատանքը: Կենտրոնի մանկական ատամնաբուժական ծառայությունը 1993 թ. մայիսից սկսած՝ անվճար սպասարկում էր մինչև 16 տարեկան երեխաներին:

1993-1998 թթ. հիմնարկությունը Հայաստանի Հանրապետությունում բացել է ամենաարդիական սարքավորումներով հագեցած մանկական հինգ կլինիկա[184]: Հաստատությունը 1991-1999 թթ. Հայաստանում կատարել է 2,5 մլն դոլարի ներդրում, որից մեկ միլիոնը ՀԲԸ Միության հետ համատեղ Երեբունի հի-

[183] Տե՛ս **Բախչինյան Ա.**, նշվ. աշխ., էջ 249:
[184] Տե՛ս «Սեբաստիա» մանկական կլինիկայի բացումը,-«Բնօրրան», 1998, N 1-2 (8-9), էջ 59:

վանդանոցում վերականգնողական վիրաբուժության բաժանմունքի հիմնադրմանը (բաժանմունքը գործեց պրոկտոլոգիայի ինստիտուտի մասնաճյուղում), մյուս 1,5 մլն դոլարը հաստատությունը հատկացրել է իր 5 կլինիկաներին[185]: Հաստատության ատամնաբուժարաններում տարեկան բուժվում էր 20 հազար, իսկ ակնաբուժարաններում՝ 3 հազար երեխա[186]: Իր բարեսիրական գործունեության շրջանակներն ընդլայնելով՝ ընկերակցությունը ներառեց նաև սոցիալական ոլորտը՝ զգալի օգնություն ցուցաբերելով Խարբերդի, Գյումրիի, Երևանի «Նորք», Վանաձորի, Գավառի մանկատներին, Գորիսի և Սիսիանի գիշերօթիկ դպրոցներին, Գյումրիի «Ընտանիք» հասարակական կազմակերպությանը, Արաբկիր և «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոններին, «Կարմիր խաչ» հիվանդանոցին:

1992-2001 թթ. ընկերակցությունը հայաստանյան իր կազմակերպության ծրագրերի իրականացման համար ներդրել է ավելի քան 3 մլն դոլար[187]:

Լոս Անջելեսում 1992 թ. փետրվարից գործում էր «Հայաստանի մանկատների հիմնադրամ» (ՀՄՀ) կազմակերպությունը, որի պատասխանատու տնօրենն էր Ժենյա Ռեզայե-Այդինյանը: Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում ուներ իր բաժանմունքը: Գործելով ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության ենթակայությամբ՝ ՀՄՀ-ն տարին երկու անգամ՝ աշնանը և գարնանը, կազմակերպում էր դրամաբաշխում մանկատներին և ծերանոցներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների երեխաներին, աղետի գոտու կարիքավոր ընտանիքներին:

1992 թ. դեկտեմբերից ՀՄՀ-ն իրագործում էր «Մեկ հայրենիք, մեկ ընտանիք» ծրագիրը զոհված ազատամարտիկների ընտանիքների, նաև երկրաշարժից տուժած երկկողմանի, միակողմանի ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների համար, որի շրջանակներում հիմնադրամը հովանավորեց 1500 ընտանիք և Հայաստանի գրեթե բոլոր մանկատներն ու ծերանոցները[188]:

[185] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 2 դեկտեմբերի, 1999:
[186] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 719:
[187] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 131:
[188] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 22 մայիսի, 1996:

Ծրագրի շնորհիվ գրեթե 400 անհատ հովանավորներ՝ ԱՄՆ-ից, Կիպրոսից, Եգիպտոսից և այլ վայրերից աջակցում էին 580 ազատամարտիկների երեխաների[189]: 1992-1998 թթ. ՀՄՀ-ի ֆինանսական ֆոնդից օգտվել է 30 հազար մարդ[190]:

1966 թ. մայիսին ԱՄՆ-ում Վարդան Ջինիշյանը ի հիշատակ իր ծնողների հիմնել է «Ջինիշյան հիշատակի ծրագիր» (ՋՀԾ, Jinishian Memorial Foundation) բարեգործական կազմակերպությունը: Ստեղծման օրվանից այն իր ծառայություններն ուղղել է Լիբանանի, Սիրիայի, Իրանի, Իրաքի, Երուսաղեմի, Թուրքիայի և հակամարտությունների ու անկայունության շրջաններում գտնվող այլ երկրների կարիքավոր հայերին՝ օգնություն ցուցաբերելով բնակարանի, սննդի, հագուստի և բժշկական խնամքի հարցերում: ՋՀԾ-ն իր գործունեությունը Հայաստանում ծավալեց 1993 թ. սեպտեմբերից՝ «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ» (ՋՀՀ) անվանումով: Հայաստանում ՋՀՀ-ի գործող խորհրդատվական մարմնի անդամներն էին Հայ Առաքելական, Հայ Ավետարանական, Հայ Կաթողիկե եկեղեցիների ներկայացուցիչները: Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն էին՝ համայնքների, գործարարության զարգացումը, բնակարանաշինությունը, մարդասիրական օգնությունը, առողջապահության ոլորտը և հոգևոր վերելքը: Գյումրիում ՋՀՀ-ն կառուցեց և վերանորոգեց բնակելի շենքեր, վերականգնեց ջրագծեր: Այն հոգատարություն ցուցաբերեց նաև անօթևան երեխաների, սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքների նկատմամբ:

1990-ական թթ. երկրորդ կեսին Հայաստանում բարեսիրական ու մշակութային լայն գործունեություն ծավալեց «Գաֆէսճեան ընտանիք» հիմնադրամը (ԳԸՀ, Cafesjian Family Foundation), որը հիմնվել էր 1996 թ. հունիսին Նյու Յորքում ամերիկահայ հայտնի գործարար Ջերարդ Գաֆէսճեանի կողմից և ուներ 30 մլն ԱՄՆ դոլար նախնական դրամագլուխ[191]: Հիմնադրամը սեփական բարեգործական ծրագրերի հետ մեկտեղ

[189] Տե՛ս «Փարոս», 15 հուլիսի, 1998:
[190] Տե՛ս նույն տեղում:
[191] Տե՛ս «Ազգ», 5 նոյեմբերի, 1998:

ֆինանսական միջոցներ էր տրամադրում հայկական բարեգործական կազմակերպություններին[192]:

Վիթխարի է հիմնադրամների դերը նորանկախ Հայաստանի և Արցախի սոցիալ-տնտեսական կյանքում: Իրագործելով լայնածավալ մարդասիրական ծրագրեր՝ հիմնադրամներն աջակցեցին հասարակության գրեթե բոլոր շերտերին, առավել ընդլայնեցին ու կատարելագործեցին իրենց գործունեության ձևերն ու մեթոդները, հետագա տարիների համար մշակեցին նորերը: Հայաստանի Հանրապետության ծանրագույն սոցիալ-տնտեսական ժամանակահատվածում հիմնադրամները բացառիկ դեր ունեցան թե՛ պետությանը և թե՛ բնակչությանը բազմաբնույթ և լայնածավալ օգնություն ցուցաբերելու հարցում: Նրանց գործունեությունը զգալիորեն մեղմեց տնտեսական ճգնաժամը և դյուրացրեց դրա հաղթահարումը: Ուսումնասիրելով նշված ժամանակահատվածը՝ գտնում ենք, որ հիմնադրամների գործունեության բացակայության դեպքում սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքները միանշանակալիորեն շատ ավելի ծանր և անկանխատեսելի կլինեին: Հարկ է նշել նաև, որ աջակցությունը բարոյա-հոգեբանական նշանակալի դեր է խաղացել, քանի որ սոցիալ-տնտեսական դժվար վիճակում հայտնված քաղաքացիների մեջ ըստ էության բարձր էր պահում հավատն ապագայի հանդեպ:

2.3. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Երկրաշարժից ավերված հայրենիքի և պատերազմից տուժած Արցախի վերականգնմանը իրենց աջակցությունը բերեցին գրեթե ամբողջ աշխարհի սփյուռքահայ համայնքները: Նրանք օգնում էին նաև զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին:

[192] ԳԸՀ-ի հիմնական նպատակն է աջակցել ցեղասպանություն վերապրած հայ ժողովրդին, բարելավել նրա կենսապայմանները: 2002 թ. Երևանում հիմնադրվել է «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամը: Ջերարդ Գաֆէսճեանի շնորհիվ 2002-2009 թթ. ընթացքում վերանորոգվել է «Կասկադ» համալիրը, որտեղ սկսել է գործել «Գաֆէսճեան արվեստի կենտրոնը» (տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 133):

Երկրաշարժից հետո արտերկրի մեր հայրենակիցները մեծ նվիրումով սատար կանգնեցին հայրենիքին՝ աղետի առաջին իսկ օրերին գրեթե բոլոր սփյուռքահայ համայնքներում ստեղծելով օգնության ֆոնդեր, միություններ, որոնց շնորհիվ կազմակերպվեց համազգային հանգանակություն, ձեռք բերվեցին մեծ քանակությամբ դեղորայք, բժշկական սարքավորումներ, հագուստ, սննդամթերք, վրաններ, տնակներ, առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ և կազմակերպվեց դրանց շտապ առաքումը Հայաստան: Երկրաշարժից հետո առաջին իսկ օրերից Հայաստան ժամանած արտասահմանյան մասնագետների, փրկարարների, բժիշկների, սեյսմոլոգների, դեղագործների թվում կային բազմաթիվ սփյուռքահայեր, որոնք իրենց մասնագիտական ողջ հմտությունը ի սպաս դրեցին աղետյալների փրկության գործին:

Մերձավոր Արևելքի որոշ հայկական համայնքներ, հատկապես լիբանանահայ համայնքը երկարատև քաղաքացիական պատերազմի հետևանքով չնայած գտնվում էր բարդ քաղաքական և տնտեսական պայմաններում, սակայն հայաստանյան երկրաշարժից հետո ստեղծեց երեք հայ քաղաքական կուսակցությունների (ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ) ներկայացուցիչներից կազմված հանձնախումբ, որի միջոցով 1988 թ. դեկտեմբերին Հայաստանի համար ծանր օրերին հանգանակեց ավելի քան մեկ միլիոն ամերիկյան դոլար, ինչի շնորհիվ Հայաստան ուղարկվեց 42 տոննա բեռ (հիմնականում բուժսարքավորումներ և դեղամիջոցներ)[193]: Համայնքի հանգանակություններով հիմնովին արդիականացվեց Ավանի արհեստական մարմնանդամների (պրոթեզների) գործարանը, ինչպես նաև գումար հատկացվեց Գյումրիի «Անի» թաղամասում 81 բնակարանների կառուցմանը[194]:

1988 թ. դեկտեմբերի 7-ին երկրաշարժից տուժած հայրենակիցներին օգնելու համար Փարիզի և շրջակայքի Կրոնական ընկերակցության նախաձեռնությամբ հիմնվեց «SOS Արմենի» ("SOS Armenie") բարեգործական կազմակերպությունը, որը Հայաստան ուղարկեց մեծ քանակությամբ դեղորայք, սննդամթերք, հագուստ, Սպիտակում կառուցեց մանկապարտեզ, 4 բնակելի

[193] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 7, գ. 224, թ. 2:
[194] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 294:

շենք, նորոգեց բժշկական բաժանմունքներ[195]: «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի մասնաճյուղի ստեղծումից հետո «SOS Արմենին» 1994 թ. մարտի 31-ից դադարեց գործելուց: Իր հնգամյա գործունեության ընթացքում «SOS Արմենին» ունեցել է 43 հազար նվիրատուներ, որոնց շնորհիվ գոյացած շուրջ 40 մլն ֆրանկը մեծ մասամբ ծախսվել է աղետի գոտու վրա[196]:

Հոգուտ հայրենիքի բարեգործական բուռն գործունեություն ծավալեց նաև ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ ու հասարակական գործիչ Շառլ Ազնավուրը, որի նախաձեռնությամբ Փարիզում 1988 թ. դեկտեմբերին ստեղծվեց «Ազնավուրը Հայաստանին» ("Aznavour for Armenia") բարեգործական կազմակերպությունը: 1993 թ. այն իր գրասենյակը բացեց Երևանում. մասնաճյուղեր ուներ Գորիսում և Վանաձորում: Եվրահամայնքի հետ գործակցող այս մարդասիրական կառույցի նպատակն էր կազմակերպել բազմակողմանի օգնություն աղետյալ Հայաստանին:

«Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը Երևանի Էրեբունի բժշկական կենտրոնում նորոգեց բաժանմունքներ, Արմավիրում հիմնեց մանկական սննդի գործարան, Լուսակերտում, Գեղասարում, Գոգարանում կառուցեց մշակութային կենտրոններ, իրականացրեց աղետի գոտու դպրոցների օգնության ծրագիր, բացեց բարեգործական դեղատներ:

Ազնավուրը Ֆրանսիայում Հայաստանի պատվավոր ներկայացուցիչն էր, որով էլ պայմանավորված էին նրա հաճախակի այցերը Հայաստան: 1993 թ. նա նաև նշանակվեց Հայաստանի Հանրապետության դեսպան հատուկ հանձնարարությունների գծով, որի մեջ մտնում էին նաև մարդասիրական օգնության հարցերը[197]: Լինելով Եվրոպայում Հայաստանի Հանրապետության շրջիկ դեսպանը՝ Ազնավուրը համակարգում էր Եվրահամայնքի կողմից ցուցաբերվող օգնությունը:

«Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը մարդասիրական օգնություն ցույց տալուց բացի Եվրոպական տնտեսական համագործակցության հումանիտար բաժնի (ECHO) ֆինան-

[195] Տե՛ս նույն տեղում, էջ 642:
[196] Տե՛ս «Յառաջ», 8 սեպտեմբերի, 1994:
[197] Տե՛ս «Ազգ», 16 մարտի, 1993:

սավորմամբ Հայաստանում իրականացրեց ՀՀ տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանն ուղղված մի շարք ծրագրեր, որոնցից էր էներգետիկ ռեսուրսների զարգացման նպատակով Հայաստանի փոքր հիդրոէլեկտրակայանների վերականգնման «Էներգիա Հայաստանի համար» կազմակերպության ծրագիրը: Բացի դրամական օժանդակությունից ECHO-ն 1995 թ. օգնեց հոսանքի բացակայությունից տառապող երևանցիներին: Շնորհիվ Ազնավուրի դիմումի ECHO-ն այդ ծրագիրն իրականացնելու պայմանագիր կնքեց «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպության հետ, որը նախատեսում էր 3 մլն հարյուր հազար դրամ արժողությամբ մազութ և գազ գնել երևանցիներին 75 օր շարունակ օրական 2 ժամ հոսանքով ապահովելու համար[198]: Արդյունքում 1995 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 1996 թ. փետրվարի 18-ը երևանցիները երկժամյա գրաֆիկով հոսանք ստացան:

1990-ականների վերջերին «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունը ներթափանցեց նաև կրթության ոլորտ: Նրա օգնությամբ մասհանումներով Հայաստանում նորոգվեցին ու կառուցվեցին 40 դպրոցներ[199]: Ֆինանսական միջոցների զգալի մասը նվիրաբերեց մեծ երգահանը:

1989 թ. Ֆրանսիայի Հայ Ավետարանական եկեղեցիների միության խորհրդի նախաձեռնությամբ երկրաշարժից հետո Հայաստանին նյութական և հոգևոր օգնություն ցույց տալու նպատակով Ֆրանսիայում հիմնվեց «Հույս Հայաստանին» ("Hope for Armenia") կազմակերպությունը[200]: Մարդասիրական օգնությունից բացի «Հույս Հայաստանին» Հայկական միացյալ ֆոնդի և «Ազնավուրը Հայաստանին» կազմակերպությունների հետ մասնակցեց Երևանի Էրեբունի առողջապահական կենտրոնում ատամնաբուժարանի բացմանը, 450 երեխաների համար ապահովեց խնամակալ ընտանիքներ Ֆրանսիայից, 112 երեխաների համար կազմակերպեց ամառային կայան Սպիտակում[201]: Միության ձեռնարկներից էր նաև հայ-ֆրանսիական Դանիել Սահակյան դպրոցի բացումը Սպիտակում:

[198] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 դեկտեմբերի, 1995:
[199] Տե՛ս նույն տեղում, 22 հունիսի, 2000:
[200] Տե՛ս «Յառաջ», 9 նոյեմբերի, 1994:
[201] Տե՛ս նույն տեղում:

Կազմակերպությունը 2000 թ. դրությամբ գործում էր Հայաստանի հինգ մեծ քաղաքներում՝ Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Ստեփանավանում և Սպիտակում: Միությունը ապահովել էր 483 երեխաների խնամակալությունը, բացօթյա կենտրոններ էր կազմակերպել Սպիտակում, Ստեփանավանում և Իջևանում, բարեգործական ճաշարան էր բացել Ստեփանավանում, ատամնաբուժարան՝ Վանաձորում, հիմնել մանկատուն՝ Երևանում, հրատարակել էր քրիստոնեական դասագրքեր, Սպիտակում կազմակերպել էր ֆրանսերենի ուսուցում, ջեռուցում՝ ձմռանը, գորգագործության աշխատավայրեր Գյումրիում և այլն[202]:

Երկրաշարժից տուժած հայրենակիցներին օգնելու նպատակով 1988 թ. լոնդոնահայերի կողմից հիմնվեց «Օգնություն Հայաստանին» ("Aid Armenia") կազմակերպությունը, որի միջոցով լոնդոնահայ համայնքը հանգանակեց սննդամթերք, դեղորայք ու այլ ապրանքներ և ուղարկեց աղետի գոտի: Կազմակերպության հանգանակած շուրջ 4 մլն ստեռլինգով 1992 թ. Վանաձորում կառուցվեց «Ս. Նարեկ» հիվանդանոցը[203]: Կազմակերպությունը հիվանդանոց էր առաքում դեղորայք, սարքավորումներ, վերապատրաստման համար Անգլիա էր հրավիրում բժիշկներ:

Հայրենիքին աջակցում էին նաև հայրենակցական միությունները՝ հայրենիքից ու բնօրրանից (նույն գյուղից, քաղաքից, գավառից) արտագաղթած համերկրացի հայերին միավորող կազմակերպությունները, որոնց գլխավոր նպատակն էր առավել սերտացնել իրենց համերկրացիների հետ կապերը, խթանել նրանց գոյապահպանությունն արտերկրում և մասնակից դարձնել Հայաստանի մշակութային կյանքին ու տնտեսության զարգացման գործին: Հայաստանում իրենց բարեգործությամբ աչքի ընկան Այնթափի, Համասեբաստահայ վերաշինաց, Զեյթունի, Մարաշի, խարբերդցիների, կյուրինցիների, Պեյլանի հայրենակցական միությունները:

Հայաստանում 1988 թ. սկսված քաղաքական իրադարձությունները և դեկտեմբերյան երկրաշարժը դարձան Ամերիկայի

[202] Տե՛ս «Հույս Հայաստանի» քրիստոնեական ավետարանչութեան պայծառ արտայայտութիւն մը»,-«Ջանասէր», 2000, թիւ 5-6, մարտ, էջ 77:
[203] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 399:

հայկական համագումարի հիմնական ծրագրերի սևեռակետը: Համագումարը սկզբում մի նպատակ ուներ՝ օգնել երկրաշարժից տուժածներին, միջազգային մարդասիրական օգնությունը ժամանակին և տեղին հասցնել հասցեատերերին: Այնուհետև, երբ Հայաստանը բացվեց օտարերկրյա կազմակերպությունների առաջ, ԱՀՀ-ն ՀՀ իշխանությունների առաջարկով ստանձնեց այդ կազմակերպությունների գործունեությունը համադասելու պարտականությունը՝ աջակցելով միջազգային և մասնավորապես ամերիկյան մարդասիրական օգնությունը հասցնել Հայաստան:

Երկրաշարժից հետո ԱՀՀ-ի մեծագույն մտահոգությունը դարձավ Հայաստանի վերաշինությունն ու բարգավաճումը: Աղետից տուժած Հայաստանին սատար կանգնելու նպատակով ԱՀՀ-ն հիմնեց «Երկրաշարժի օգնության հիմնադրամ», որը մինչև 1989 թ. դեկտեմբերի 31-ը հանգանակեց 4 մլն դոլար[204]: ԱՀՀ-ի ջանքերով Գյումրիում ավելի քան 3 մլն դոլարով կառուցվեց տնաշինական գործարան, որը հնարավորություն ուներ տարեկան 10 հազար հարմարավետ և երկրաշարժադիմացկուն առանձնատներ կառուցել՝ մասամբ լուծելով երկրաշարժից անօթևան մնացած մարդկանց բնակարանային խնդիրը[205]:

Հայաստանի համար ծանրագույն օրերին Համագումարն առաջինն էր, որ շրջափակման պայմաններում «Տաք ծմեռ» ծրագրով մեծաքանակ նավթ ներկրեց Հայաստան: Կապիտոլիումում ԱՀՀ-ի և այլ կազմակերպությունների վարած քաղաքականության շնորհիվ Հայաստանը դարձավ ԱՄՆ-ից ամենամեծ մարդասիրական օգնություն ստացողներից մեկն աշխարհում: Միայն 1997 թ., շնորհիվ Կոնգրեսի աջակցության, ԱՀՀ-ին հաջողվեց 12,5 մլն դոլարի ԱՄՆ մարդասիրական օգնություն ստանալ Լեռնային Ղարաբաղի կարիքները հոգալու համար, ի հավելումն Հայաստանին հատկացված 87,5 միլիոնի[206]:

[204] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 12:
[205] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 32, թ. 3: Տե՛ս նաև «Հայրենիքի ձայն», 14 փետրվարի, 1990:
[206] Տե՛ս «Ազգ», 3 հուլիսի, 1998:

ԱՀՀ-ն 1994 թվականից Հայաստանում սկսեց նաև ծառատնկման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում 1994-2000 թթ. տնկվեց 300 000 ծառ[207]:

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) հիմնվել է 1906 թ. ապրիլի 15-ին Կահիրեում, ազգային հայտնի գործիչ Պողոս Նուբարի և եգիպտահայ համայնքի մի շարք ակնավոր ներկայացուցիչների կողմից՝ հայ ժողովրդի հոգևոր, մշակութային ու տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով: ՀԲԸ Միությունը հայկական ամենահին և ամենամեծ բարեգործական կազմակերպությունն է՝ իր 22 հազար անդամներով և 20-ից ավելի երկրների 62 քաղաքներում գործող մասնաճյուղերով, կենտրոններով ու գրասենյակներով[208]:

ՀԲԸ Միության հայրենաշեն ծրագրերին անգնահատելի նպաստ է բերել հատկապես Միության պատվակալ նախագահ Ալեք Մանուկյանը, որը հայտնի է իր ազգանպաստ գործունեությամբ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Ալեք Մանուկյանի նախագահության 36 տարիների ընթացքում (1953-1989) Միությունը դարձավ Սփյուռքի ամենահեղինակավոր կազմակերպությունը՝ ձեռք բերելով տարբեր երկրների իշխանությունների հարգանքն ու աջակցությունը և դասվելով աշխարհի խոշոր բարեգործական հաստատությունների շարքը: Իր կյանքի ընթացքում Ա. Մանուկյանը անձնական միջոցներից ավելի քան 90 մլն դոլար է նվիրել բարեգործական ձեռնարկների համար[209]: Նրա նվիրատվությամբ աշխարհի 12 երկրների 18 քաղաքներում հիմնվել և գործում էին շուրջ 20 զանազան հաստատություններ՝ մշակութային և երիտասարդական կենտրոններ, դպրոցներ, ճեմարաններ, գանձատուն, հանգստյան տներ, որոնք կրում էին Մանուկյան գերդաստանի անունները[210]: Իր համազգային և համամարդկային նշանակության բարեգործությունների համար Ա. Մանուկյանը բազմիցս արժանացել է պարգևների:

[207] Տե՛ս նույն տեղում, 27 մայիսի, 2000:
[208] Տե՛ս **Մելքոնյան Է.,** Անհատը և համազգային շահը (Հայ բարեգործական ընդհանուր միության հիմնադիրները),-«Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, N 1-3, էջ 26:
[209] Տե՛ս Ալեք Մանուկեան,-«Բնօրրան», 1996, թիվ 3-4 (4-5), էջ 138:
[210] Տե՛ս «Ազգ», 3 հուլիսի, 1991:

«Սփյուռքի հայությունը կապրի Հայաստանի սիրով ու կապրի անոր ապագայի համար, այլապես ինչ իմաստ պիտի ունենար մեր ազգապահպանումի ամբողջ պայքարը, եթե մենք չունենայինք վախճանական նպատակ մը: Մենք համոզված ենք, թե առանց հայրենիքի չի կարող գոյատևել Սփյուռքը»,- ասել է Ա. Մանուկյանը[211]:

1989 թ. օգոստոսի 26-ին ՀԲԸՄ-ի ցկյանս նախագահ Ա. Մանուկյանի հրաժարականից հետո Կենտրոնական վարչական ժողովը միաձայն իր ատենապետ և ՀԲԸՄ-ի 6-րդ նախագահ ընտրեց նրա դուստր Լուիզ Մանուկյան Սիմոնին[212]:

Սփյուռքահայ կազմակերպություններից ՀԲԸ Միությունը միակն էր, որ 1923-1937 թթ. ընթացքում գործեց Խորհրդային Հայաստանում: Մի շարք արտասահմանյան կազմակերպությունների նման Միությունը Հայաստանում իր գործունեությունը վերսկսեց դեռ խորհրդային կարգերի օրոք՝ 1988 թ. դեկտեմբերի երկրաշարժից անմիջապես հետո՝ աղետից տուժած տասնյակ հազարավոր մարդկանց օժանդակելու համար կազմակերպելով պարենի, հագուստեղենի, դեղորայքի և կենսական այլ անհրաժեշտ ապրանքների տեղափոխումը աղետյալ շրջաններ:

1937 թվականից ավելի քան 50 տարի անց՝ 1990 թ. փետրվարի 1-ին, ՀԲԸՄ-ն Երևանում բացեց իր գրասենյակը: Վերսկսելով իր գործունեությունը հայրենիքում՝ ՀԲԸ Միությունը գիտակցում էր, որ աղետից տուժած և տնտեսապես թույլ Հայաստանի վերականգնումը երկար տարիներ կտևի և անհրաժեշտ է զուտ մարդասիրական օգնության փոխարեն երկրի զարգացմանը նպաստող ծրագրեր մշակել, ծրագրեր նախ և առաջ մշակույթի, առողջապահության, կրթության ոլորտներում:

[211] Տե՛ս **Համազասպյան Վ.**, Ալեք Մանուկյան, Ե., 1994, էջ 46, 53: Տե՛ս նաև **Մինասյան Է.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները գիտության բնագավառում 1990-ական թթ.,-«Գիտական աշխատություններ» (ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն), 2005, N 8, էջ 156-157, **Մինասյան Է., Վարդանյան Ա.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 67-68:

[212] Տե՛ս ՀԲԸՄ-ի նախագահուհիին բեղմնաւոր տասնամեակը,- «Տեղեկատու», 2000, թիւ 17, հոկտեմբեր, էջ 5:

Հայաստանում Միության իրականացրած առաջին ծրագիրը Հայաստանի կառավարության խնդրանքով 10.000 տոննա տարողությամբ կերակրասառնարանի հիմնումն էր Գյումրիում, որը 1990-1991 թթ. ՀԲԸ Միության «հայրենաշինական» գլխավոր ձեռնարկն էր[213]: Երկրաշարժից խիստ վնասված նախկին կերակրասառնարանի կողքին տեղադրված նոր կառույցը ապահովելու էր մատակարարվող սննդամթերքների հուսալի պահպանումը, օժտված էր լինելու մսի և թռչնեղենի սառեցման, մշակման և հատման սարքերով, ինչպես նաև կարագի պահպանման նորագույն տեխնոլոգիայով և նախատեսված էր Գյումրի քաղաքի ու նրա շրջանների թվով 449,2 հազար բնակչության համար[214]: Սառնարանի կառուցման ծրագրի արժեքը 5,000,000 դոլար էր[215]: Սառնարանի կառուցման պայմանագիրը ՀԲԸ Միությունը ստորագրեց դանիական «Ինտերկուլ» ընկերության հետ 1990 թ. ապրիլին: Սառնարանի կառուցումն ավարտվեց 1992 թ. ապրիլին: Այն կառուցվեց 16 ամսում, իր տեսակի մեջ առաջինն էր Հայաստանում և հանդիսանում էր սննդի մթերման միակ կառույցը երկրաշարժի գոտում[216]:

ՀԲԸ Միությունը ձեռնարկեց հայրենի աղետյալների ԱՄՆ փոխադրությունը բժշկական օգնության համար: 1989 թ. մայիսից մինչև 1990 թ. ապրիլ ամիսը Նյու Յորք տեղափոխվեցին երկրաշարժից 62 տուժածներ, որոնք տեղավորվեցին 10 նահանգների 29 հիվանդանոցներում և որոնց հոգ տարան ավելի քան 250 բժիշկներ[217]: Նմանօրինակ աղետյալների բժշկական կարիքնե-

[213] Տե՛ս ՀԲԸ Միութեան շինարարական ձեռնարկները Հայաստանի մէջ,-«Յուշարար-միութիւն», 1991, թիւ 1, 15 յունուարի, Նոր շրջան, 10-րդ տարի (78), էջ 4: Տե՛ս նաև «Նոր օր», 14 մարտի, 1990, «Ապագայ», 30 նոյեմբերի, 1992:

[214] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 164, գ. 777, թ. 21:

[215] Տե՛ս Նախագահ Լուիզ Մանուկեան Սիմոնի ճառը ՀԲԸ Միութեան 76-րդ Ընդհանուր ժողովին (17 նոյեմբեր 1990, Լոս Անճելոս),-«Յուշարար-միութիւն», 1990, թիւ 10, Նոր շրջան, 9-րդ տարի (88), 15 դեկտեմբերի, էջ 9:

[216] Տե՛ս ՀԲԸ Միութեան 77-րդ Ընդհանուր ժողովին նախագահ Լուիզ Սիմոնի ճառը,-«Յուշարար-միութիւն», 1992, թիւ 9, Նոր շրջան, 11-րդ տարի (79), 15 նոյեմբերի, էջ 7:

[217] Տե՛ս ՀԲԸ Միութեան շինարարական ձեռնարկները Հայաստանի մէջ,-«Յուշարար-միութիւն», 1991, թիւ 1, 15 յունուարի, Նոր շրջան, 10-րդ տարի (78), էջ 4:

ին հետամուտ լինելու համար ՀԲԸ Միությունը Երևանում հաստատեց Վերականգնողական վիրաբուժության բաժանմունք:

1990-1991 թթ. ՀԲԸՄ-ի հաջորդ կարևոր ձեռնարկը Վերականգնողական վիրաբուժության կենտրոնն էր, որն ուղղակի բժշկական խնամք էր ապահովելու մանրավիրաբուժության, վերականգնողական վիրաբուժության, ինչպես նաև դիմային կոտրվածքների, այրվածքների, բաց վերքերի, բնածին արատների և քաղցկեղի բուժման ասպարեզում: Սա կենսական ծրագիր էր երկրաշարժից վնասվածների, մասնավորապես աղետյալ երեխաների համար: Ծրագիրն իրականացվեց ԱՄՆ-ի Եյլ համալսարանի հիվանդանոցի հետ համատեղ: Այն ղեկավարեց Եյլ համալսարանի հիվանդանոցի դասախոս և գլխավոր գեղավիրաբույժ Ստեփան Արեյանը, որի հսկողության ներքո Հայաստանից մեկնած բժիշկները (1991 թվականից) մասնակցեցին վերապատրաստման մեկամյա դասընթացներին և վերադառնալով՝ հետագայում դարձան Միքայելյան հիվանդանոցում բացված Վերականգնողական կենտրոնի կադրեր[218]:

Երկրաշարժից առնվազն 10 հազար տուժածներ կարիք ունեին բուժման, և Վերականգնողական վիրաբուժության այս կենտրոնն առաջինը օգնելու էր նրանց: Միությունը ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունից և «Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցությունից» ստացված մեծագումար օժանդակությունների շնորհիվ 1992 թ. Երևանում հիմնեց Վերականգնողական (պլաստիկ) վիրաբուժության կենտրոն, որտեղ բուժում ստացան մոտ 6000 մարդ[219]: Կենտրոնի համար Միությունը տրամադրել էր 4 մլն ամերիկյան դոլար[220]: Երևանի

[218] Տե՛ս ՀԲԸ Միութեան շինարարական ձեռնարկները Հայաստանի մէջ,-«Յուշարար-միութիւն», 1991, թիւ 1, 15 յունուարի, Նոր շրջան, 10-րդ տարի (78), էջ 5: Տե՛ս նաև Նախագահ Լուիզ Մանուկեան Սիմոնի ճառը ՀԲԸ Միութեան 76-րդ Ընդհանուր ժողովին (17 նոյեմբեր 1990, Լոս Անճելոս),-«Յուշարար-միութիւն», 1990, թիւ 10, Նոր շրջան, 9-րդ տարի (88), 15 դեկտեմբերի, էջ 9:

[219] Տե՛ս **Մելքոնյան Էդ.,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Ե., 2005, էջ 527:

[220] Տե՛ս Նախագահ Լուիզ Մանուկեան Սիմոնի ճառը ՀԲԸ Միութեան 76-րդ Ընդհանուր ժողովին (17 նոյեմբեր 1990, Լոս Անճելոս),-«Յուշարար-միութիւն», 1990, թիւ 10, Նոր շրջան, 9-րդ տարի (88), 15 դեկտեմբերի, էջ 9:

նորաբաց բաժանմունքը գործեց պրոֆ. Միքայելյանի անվան վիրաբուժության կենտրոնին կից և հագեցած էր նորագույն սարքավորումներով ու գիտության վերջին նվաճումներով: 1994 թ. հոկտեմբերին Երեբունի հիվանդանոցում ՀԲԸՄ-ի կողմից բացվեց Վերականգնողական վիրաբուժության կենտրոնի նոր ճյուղը, որի ստեղծումով ՀԲԸՄ-ն պլաստիկ վիրահատության գործն ավելի ամուր հիմքերի վրա դրեց[221]:

Փենսիլվանիայի Թոմաս Ջեֆերսոնի բժշկական համալսարանի օժանդակությամբ իրագործվեց Միության ևս մեկ առողջապահական ծրագիր՝ Գերձայնային ախտորոշման բաժնի հիմնումը (1996 թ.) Երեբունի հիվանդանոցում, ապա՝ Գերձայնային ուսուցողական կենտրոնի ստեղծումը Երևանի բժշկական համալսարանում:

1991-1992 թթ. ՀԲԸ Միության երրորդ գլխավոր ձեռնարկը Հայաստանում Կալիֆոռնիայի համալսարանի համագործակցությամբ Ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) հիմնումն էր: Համալսարանը պատրաստելու էր ինժեներներ, մենեջերներ, սեյսմոլոգներ և համակարգիչների մասնագետներ:

Շնորհիվ Բարեգործականի նվիրատվության՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը Երևանի Ալեք Մանուկյան փողոցի վրա նախաձեռնեց նոր բիզնես կենտրոնի կառուցումը, որն օժտված էր լինելու դասարաններով, գրասենյակներով և ժողովասրահներով: ՀԱՀ-ի բիզնես կենտրոնի շենքի կառուցումն ավարտվեց 1999 թ.:

Մշակույթի ասպարեզում Միության առաջին և ամենակարևոր ձեռնարկը 1992 թվականից սկսած Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հովանավորությունն էր, որի շնորհիվ կազմալուծման շեմին հասած նվագախումբը հնարավորություն ստացավ համերգներով հանդես գալ ոչ միայն Երևանում, այլև հյուրախաղերի մեկնել Եվրոպայի, Ամերիկայի և Միջին Արևելքի երկրներ:

1991-1992 թթ. ՀԲԸՄ-ի Հայաստանում իրականացրած չորրորդ ծրագիրը, դարձյալ Կալիֆոռնիայի համալսարանի հետ համատեղ, վերաբերում էր Հայաստանի գյուղատնտեսությանը:

[221] Տե՛ս «Ազգ», 12 հոկտեմբերի, 1994:

Նպատակ ունենալով զարգացնել երկրի սննդամթերքի, կաթնեղենի և անասունների կերի արտադրությունը՝ Կալիֆոռնիայի երկրագործության հաջողության գլխավոր ազդակ հանդիսացող Կալիֆոռնիայի համալսարանի Դեյվիս բաժանմունքը 1989 թ. հետազոտական աշխատանքներ կատարեց Հայաստանում և հայտնաբերեց, որ սննդամթերքի արտադրության 30 տոկոսը փչանում է անորակ ոռոգման, վարուցանքի և անասնաբուժական միջոցների բացակայության պատճառով: ՀԲԸ Միությունը և Հայ մշակութային հիմնարկությունը երաշխավորեցին 1,250,000 դոլար առաջիկա հինգ տարիների համար, որպեսզի իրագործվի 4,000,000 դոլարի արժողությամբ ուղեցույց հանդիսացող ծրագիրը[222]: Մնացած գումարը հայթայթելու համար Միությունը դարձյալ պետք է դիմեր հիմնարկություններին և նվիրատուներին:

Հաշվի առնելով ՀԲԸՄ Կենտրոնական վարչության խնդրանքը և հանրապետությունում Միության գործունեության համար պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը 1992 թ. հուլիսի 30-ին որոշում ընդունեց գրանցել Երևանում հիմնված ՀԲԸՄ ՀՀ-ի ներկայացուցչությունը[223]:

Հայաստանյան ծանր ձմեռները մեղմացնելու համար իր նպաստը բերեց նաև ՀԲԸ Միությունը: Արձագանքելով Միության կենտրոնական վարչության կոչին՝ նրա մասնաճյուղերը լայնամասշտաբ օգնություն ծավալեցին ի նպաստ հայրենիքի: 1993 թ. մարտ և ապրիլ ամիսներին ՀԲԸ Միությունը Հայաստան ուղարկեց 1000 բեռնարկղ ուտեստեղեն, հագուստեղեն, դեղորայք[224]: Կարիքավոր ընտանիքներին ուղարկված օգնության բաշխումը կատարվեց 1993 թ. հունիսին և հուլիսին՝ Արարատյան թեմի առաջնորդարանի հովանավորության և հսկողության ներքո: Այս ծրագրի համար ՀԲԸՄ-ն նվիրատվություններ ստացավ ԱՄՆ-ի, Կանադայի, Լիբանանի և այլ վայրերի 3600 նվիրատուներից,

[222] Տե՛ս Նախագահ Լուիզ Մանուկեան Սիմոնի ճառը ՀԲԸ Միութեան 76-րդ Ընդհանուր ժողովին (17 նոյեմբեր 1990, Լոս Անճելոս),-«Յուշարար-միութիւն», 1990, թիւ 10, Նոր շրջան, 15 դեկտեմբերի, 9-րդ տարի (88), էջ 9:

[223] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 167, գ. 417, թ. 1:

[224] Տե՛ս ՀԲԸ Միութեան կեանքն ու գործը. ՀԲԸՄ-ի անդամներն ու բարեկամները 900,000 տոլարով մասնակցեցան «Ձմեռնային փրկարար գործողութեան»,-«Յուշարար-Միութիւն», 1993, թիւ 7, 15 սեպտեմբերի, Նոր շրջան, 12-րդ տարի (80), էջ 3:

որոնք հանգանակել էին 900,000 դոլարի պատկառելի գումար[225]: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ համագործակցելով՝ Միությունը Երևանում, Սևանում, Հրազդանում և Էջմիածնում ծերերի և ծնողազուրկ երեխաների համար բացեց բարեգործական 6 ճաշարան:

«Ձմեռ» ծրագրին Ալեք Մանուկյանն ու իր ընտանիքը՝ Լուիզ Մանուկյան Սիմոնը և Ռիչարդ Մանուկյանը, նվիրեցին մեկ մլն դոլար[226]: Այսպիսով, ՀԲԸ Միությունը գործուն մասնակցություն ունեցավ ՀՀ կառավարության օգնության կոչին: Ձմեռային օժանդակության այս առաջին արշավը փոքրիշատե բարելավելու էր ժողովրդի վիճակը, որը խստաշունչ ձմռան, շրջափակման պայմաններում զրկվել էր էլեկտրականությունից, գազից և ապրում էր ծանր օրեր:

Հատուկ կարևորություն տալով իր գործունեությանը Հայաստանում՝ ՀԲԸ Միությունը իր պատմության մեջ առաջին անգամ Միության 78-րդ համագումարը 1994 թ. հոկտեմբերին գումարեց հայրենիքում, որին մասնակցելու համար Երևան ժամանեցին մոտ 300 պատգամավորներ 18 երկրներից[227]: Համագումարի ընթացքում ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայ ազգի բարգավաճման գործին բերած մեծ ավանդի, բազմամյա ազգանվեր ու հայրենանվեր գործունեության համար Ալեք Մանուկյանին շնորհեց ՀՀ քաղաքացիություն, «Հայաստանի ազգային հերոսի» կոչում և հանձնեց «Հայրենիքի շքանշան»: Ամփոփելով Բարեգործականի կատարած երկամյա աշխատանքները՝ ՀԲԸՄ նախագահ Լուիզ Մանուկյան Սիմոնը հայտարարեց, որ հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունը ամենատարբեր ծառայություններ է մատուցել Սփյուռքում և Հայաստանում ապրող 800 հազար հայերի[228]: «1989-1993 թթ. ՀԲԸՄ-ն 17 մլն դոլար է հատկացրել Հայաստանում ծրագրերի իրագործման համար»[229],-

[225] Տե՛ս նույն տեղում:

[226] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 15-19 հունվարի, 1994:

[227] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 հոկտեմբերի, 1994:

[228] Տե՛ս «Ազգ», 18 հոկտեմբերի, 1994:

[229] Տե՛ս Դար մը պատմութիւն Հայ բարեգործական ընդհանուր միութեան, հ. 2 (1941-2006), Գահիրէ-Փարիզ-Նիւ Եորք, 2006, էջ 390:

ասաց տիկին Մանուկյանը՝ նշելով, որ այդ գումարը գոյացել է 40 հազար անհատների նվիրատվություններից:

Համագումարը հանգամանորեն անդրադարձավ Միության կողմից Հայաստանում իրագործվող ծրագրերին (Հայաստանի ամերիկյան համալսարան՝ 320 ուսանողներով, Վերականգնողական վիրաբուժության կենտրոն, Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ՝ 220 երաժիշտներով) և արձանագրեց այն փաստը, որ երկու տարվա ընթացքում Հայաստանում իրականացվող ծրագրերի վրա ՀԲԸՄ-ի կողմից ծախսվել էր 8,5 մլն դոլար (1992-ին՝ 3 մլն 800 հազար, իսկ 1993-ին՝ 4 մլն 600 հազար)[230]:

ՀԲԸՄ-ի շնորհիվ միայն 1993 թ. ընթացքում նյութական օգնություն էին ստացել Հայաստանի և Արցախի հիվանդանոցներն ու մանկատները, նաև 65 հազար ընտանիք[231]: Համագումարն արձանագրեց, որ առաջին անգամ ՀԲԸՄ պատմության մեջ մոտ 13 մլն դոլար է ծախսվել ՀԲԸՄ կրթական համակարգի բարգավաճման համար[232]: Ժողովականները իրենց զորակցությունը հայտնեցին Արցախի ժողովրդի մղած արդար պայքարին՝ մաղթելով հարցի խաղաղ լուծում:

ՀԲԸՄ-ն նվիրատվություններ էր կատարել նաև Ս. Էջմիածնի Մայր Աթոռին, ՀՀ ԳԱԱ-ին, ԵՊՀ-ին, Պետական ճարտարագիտական համալսարանին և Արցախի սոցիալական նախարարությանը, ֆինանսավորել էր Արարատյան թեմի հետ 1991 թ. ստեղծված Սևանի աստվածաբանական ճեմարանը:

1996 թ. նոյեմբերի 16-ին 12 երկրներից ժամանած 110 պատգամավորների մասնակցությամբ Միության Փասադենայի «Ալեք Մանուկյան» կենտրոնում կայացավ ՀԲԸՄ 79-րդ ընդհանուր ժողովը[233], որն իր ավարտին ընդունեց բանաձև, որում իր զորակցությունն էր հայտնում նորանկախ հայրենի պետականությանը և Արցախի ազատագրական արդար պայքարին: Համագումարում ցուցադրված «Բարեգործության մարդը» հատուկ

[230] Տե՛ս «Ազգ», 18 հոկտեմբերի, 1994:
[231] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 հոկտեմբերի, 1994:
[232] Տե՛ս «Ազգ», 18 հոկտեմբերի, 1994:
[233] Տե՛ս ՀԲԸ Միութեան 79-րդ Ընդհանուր ժողովը Լոս Անճելըսի մէջ,- «Յուշարար-միութիւն», 84-րդ տարի, թիւ 4, 85-րդ տարի, թիւ 1, դեկտեմբեր 1996-մարտ 1997, էջ 7:

տեսաֆիլմը նվիրված էր Ալեք Մանուկյանի կյանքին ու գործունեությանը: Ժողովի կողմից Միության ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանը ընդունվեց որպես Միության հետմահու պատվակալ անդամ:

Անդրադառնալով Միության իրականացրած բազմաբնույթ ծրագրերին՝ համագումարն ընդգծեց, որ ՀԲԸՄ-ն գործունեություն է ծավալել աշխարհի 21 երկրներում[234]: Փոխատենապետ և գանձապահ Նազար Նազարյանի ու Մայքլ Անսուրի ներկայացրած 1994 և 1995 տարեշրջանների ֆինանսական տեղեկագրում ընդգծվում էր, որ Միության միջոցները 1993 թ. 152 մլն դոլարից 1995 թ. հասել էին 168 մլն-ի[235]: Երկու տարում Միությունը ծախսել էր 40 մլն դոլար, որից 6 մլն-ը՝ հայաստանյան ծրագրերի համար[236]:

Հայաստանում իրագործվող ծրագրերին ՀԲԸՄ-ն 1988-1995 թթ. տրամադրել է ավելի քան 30,5 մլն դոլար[237]:

Գյումրիում ՀԲԸ Միությունը ֆինանսավորեց երկրաշարժից ավերված Արվեստի ակադեմիայի շենքի նորոգումը, որի բացումը 1996 թ. օգոստոսին համընկավ Գյումրիի արևելյան ու արևմտյան թաղամասերը միմյանց կապող կենտրոնական մայրուղիներից մեկը Ալեք Մանուկյանի անունով կոչելու հանդիսավոր արարողությանը[238]:

ՀԲԸ Միությունը Հայաստանում իրագործում էր նաև դպրոցաշինական ծրագրեր:

ՀԲԸՄ-ն Երևանում կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարի (օծվել է 2001 թ. սեպտեմբերին) հիմնական հովանավորն էր, որի շինարարության համար ազգային բարերարներ Լուիզ Սիմոն և Ռիչարդ Մանուկյանները իրականացնելով ծնողների՝ երջանկահիշատակ Ալեք և Մարի Մանուկյանների խոստումը՝ նվիրաբերեցին 5 մլն դոլար[239]: Բացի այդ, ՀԲԸ Միության

[234] Տե՛ս ՀԲԸՄ նախագահ Լուիզ Մանուկեան Սիմոնի խօսքը ուղղուած Միութեան 79-րդ համաժողովին,-«Տեղեկատու», 1997, թիւ 2, յունուար, էջ 2:
[235] Տե՛ս «Ազգ», 20 նոյեմբերի, 1996:
[236] Տե՛ս նույն տեղում:
[237] Տե՛ս **Մելքոնյան Է.**, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Ե., 1999, էջ 187:
[238] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20 օգոստոսի, 1996:
[239] Տե՛ս «Ազգ», 1 հուլիսի, 2000:

օժանդակությամբ կառուցվեցին Երևանի Ս. Երրորդություն, Գյումրիի Ս. Հակոբ, Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցիները, Ս. Էջմիածնի բացօթյա խորանը, նաև Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցը՝ իր 100-տեղանոց հանրակացարանով, գրադարանով և մատուռով:

ՀԲԸ Միությունը 2001 թ. գնեց նախկին պրոկտոլոգիայի շենքը, որը վերանորոգելուց հետո վերանվանվեց «Ս. Ներսես հիվանդանոց» և փոխանցվեց Ս. Էջմիածնին[240]: Միությունը 1993 թվականից Երևանի Մալաթիա, Արաբկիր և Նորք շրջաններում հիմնել և ֆինանսավորում էր Հայորդաց տներ, որոնց շուրջ 3,5 հազար սաների համար կազմակերպվել են արհեստի, երաժշտության, մարզական և այլ խմբակներ[241]:

ՀԲԸ Միությունը մի շարք ծրագրեր է իրականացրել նաև Արցախում: Նորաշեն գյուղում վերակառուցել է 29 տուն և մեկ դպրոց՝ Ստեփանակերտում, պատերազմի վետերանների և այրիների համար կառուցել է բնակելի շենք, հովանավորել Ղարաբաղի նորաստեղծ կամերային նվագախումբը և այլն[242]: ՀԲԸՄ-ն Արցախում ֆինանսավորել է նաև Ստեփանակերտի Ալեք Մանուկյան փողոցի բարեկարգման աշխատանքները:

Անցած տարիների ընթացքում ՀԲԸ Միությունը Հայաստանում և Ղարաբաղում իրականացված ծրագրերին տրամադրել է շուրջ 60 միլիոն դոլար, ավելի, քան որևէ այլ սփյուռքահայ կազմակերպություն[243]:

1910 թ. Բոստոնում (ԱՄՆ) հիմնված Հայ օգնության միություն (ՀՕՄ, Armenian Relief Society) կանանց բարեգործական կազմակերպությունը Սփյուռքում գործող կանանց միակ համահայկական կազմակերպությունն է և հանդիսանում է ՀՅԴ-ի բարեգործական թևը: ՀՕՄ-ը աշխարհի 28 երկրներում ունի 200 մասնաճյուղ, ավելի քան 18 հզ. անդամներով[244]: Հիմնադրումից ի վեր այն Սփյուռքի հայկական համայնքներում մարդասիրական բազմաթիվ ծրագրեր է իրականացրել: Կազմակերպությունը տարեկան դրամական նպաստներ էր հատկացնում հայկական ամենօրյա ու միօրյա վարժարաններին, մեծահասակների համար կազմակերպվող հայերենի, հայ մշակույթի պատմության դասընթացներին, ուսուցիչների վերապատրաստմանը, նպաստում էր մշակութային կենտրոնների շինարարությանը, նախաձեռնում մշակութային տարբեր ձեռնարկներ, միջոցներ հատկացնում գեղարվեստական ինքնագործունեության խմբերին և այլն: Կրթական ու մշակութային գործունեությունից զատ, ՀՕՄ-ը բարեգործական լայն աշխատանք էր ծավալում, նպաստներով օգնում էր կարիքավոր հայ ընտանիքներին, հիվանդներին, ծերերին ու միայնակներին:

1998 թ. մայիսին ՀՕՄ-ը դարձավ ՄԱԿ-ի անդամ[245]: Այն իբրև անկախ, ոչ կուսակցական կանացի բարեսիրական միջազգային կազմակերպություն, ՄԱԿ-ի ոչ կառավարական անդամներից է և սերտորեն գործակցում է միջազգային բազմաթիվ կազմակերպությունների հետ, ինչպես ՅՈՒՆԻՍԵՖ-ը, ՅՈՒՍԱՅԴ-ը, եկեղեցիների համաշխարհային խորհուրդը և այլն: ՀՕՄ-ը մասնակցել է Կոպենհագենում (1994) և Պեկինում (1995) կայացած կանանց համաշխարհային համաժողովներին:

1991 թ. հունվարին Հայաստանում հիմնվեց ՀՕՄ-ի հայաստանյան մասնաճյուղը՝ Հայաստանի օգնության խաչը (ՀՕԽ), որը բարեգործական, հասարակական, ոչ դավանաբանական կազմակերպություն էր և ուներ 28 մասնաճյուղ[246]: ՀՕԽ-ի կրթամշակութային, մարդասիրական ծրագրերը լայն ընդգրկում և ուղղվածություն ունեին: ՀՕԽ-ը 2000 թ. ՀՀ արդարադատության նախարարությունում վերագրանցվեց որպես ՀՕՄ: Վերջինիս

---

[240] Տե՛ս **Մելքոնյան Էդ.,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, էջ 527-528:

[241] Տե՛ս **Մինասյան Է., Վարդանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 49:

[242] Տե՛ս **Մելքոնյան Էդ.,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, էջ 529:

[243] Տե՛ս նույն տեղում:

[244] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 685: Տե՛ս նաև Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 619, «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 100:

[245] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 60:

[246] Տե՛ս «Ազգ», 13 հոկտեմբերի, 1992:

մասնաճյուղերը գործում էին Հայաստանի ավելի քան 60 բնակավայրերում, իսկ անդամուհիների թիվը շուրջ 1500 էր[247]:

ՀՕՄ-ի գործունեությունը Հայաստանում բուռն թափ ստացավ 1988 թ. դեկտեմբերյան կործանարար երկրաշարժից հետո՝ ներառելով վերականգնողական աշխատանքները, ինչպես նաև դեղորայքի, սննդամթերքի, հագուստի, բժշկական սարքավորումների առաքումը: Երկրաշարժից հետո ՀՕՄ-ն առաջիններից մեկն էր, որ ամենատարբեր միջոցներով օգնության շտապեց աղետյալ Հայաստանին: Աղետից ընդամենը մի քանի ամիս անց Վաշինգտոնում բացված ՀՕՄ-ի գրասենյակը զբաղվում էր հատկապես Հայաստանի վերաշինությանը նպաստող աշխատանքներով:

Երկրաշարժի աղետյալներին օգնության ձեռք մեկնող առաջին մարդասիրական կազմակերպությունը ֆրանսիական Կապույտ խաչն էր (Ֆրանսիայի ՀՕՄ-ի մասնաճյուղը կոչվում է Հայ կապույտ խաչ), որն ընդհանուր առմամբ հանգանակեց 20 մլն ֆրանկ, ևս 5 միլիոնի առաքեց հագուստեղեն, դեղորայք, վրաններ և այլն, իսկ Ծննդյան տոների և Ամանորի կապակցությամբ նվերներ էր բաժանում աղետյալ շրջաններին և Արցախի երեխաներին[248]: ՀՕՄ-ի միջոցով Արցախում գործեց դեղատուն, դեղանյութերի 75 տոկոսի մատակարարումը ստանձնեց Կապույտ խաչը[249]:

Հայ օգնության միությունը 1988 թ. Կալիֆոռնիայում կազմակերպեց Հայաստանի աղետից տուժած բնակիչների հոգեբանական վերականգնման օգնություն: 1988 թ. դեկտեմբերից Միությունը Հայաստան էր գործուղում իր վերականգնող հոգեբան մասնագետներին, որոնք աշխատում էին երկրաշարժից տուժած վայրերում: 1988-1990 թթ. աղետի գոտում աշխատեցին 60-ից ավելի հոգեբաններ, որոնք բուժեցին 5500-ից ավելի երեխաների ու մեծահասակների[250]:

Միությունը նպատակ ուներ հայրենիքում իրականացնել ավելի երկարատև ծրագրեր, ուստի երբ երկրաշարժից հետո

[247] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 618:
[248] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 17 հունվարի, 1990:
[249] Տե՛ս **Փալանդուզյան Հ.,** ՀՕՄ,-«Հայաստանի աշխատավորուհի», 1991, N 7, էջ 13:
[250] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 22 օգոստոսի, 1990:

ստեղծված իրավիճակը մի փոքր մեղմացավ, այն նախատեսեց աղետի գոտում կառուցել բնակելի թաղամասեր կամ գյուղեր: ՀՕՄ-ի միջոցներով երկրաշարժից հետո 4 գյուղ և մեկ ավան կառուցվեց Ամասիայում, Նոյեմբերյանում, Վանաձորում, Ախուրյանի շրջանում[251]:

ՀՕՄ-ի մշտական ծրագրերից էր որբախնամ գործունեությունը: Այն զգալի նյութական օժանդակություն էր հատկացնում նաև գիշերօթիկ դպրոցներին, անապահով երեխաներին: «ՀՕՄ-ի օրը Հայաստանի հատուկ գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում» ծրագիրը ներառեց Վանաձորի, Երևանի, Հրազդանի մի շարք գիշերօթիկ և երկարօրյա դպրոցներ, որտեղ սահմանվեց այդ դպրոցների երեխաներին ճաշ մատուցելու հատուկ օր[252]: Դեռևս 1992 թվականից ՀՕՄ-ը սկսեց իրականացնել «Զոհված ազատամարտիկների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների խնամակալության» ծրագիրը և այդ թվականից յուրաքանչյուր տարի ծրագրի շրջանակներում դրամական օգնություն հատկացրեց 4000 երեխաների, որոնցից ավելի քան 800-ը երկկողմանի ծնողազուրկ, իսկ մյուսները զոհված ազատամարտիկների երեխաներ էին[253]:

ՀՕՄ-ի երևանյան գրասենյակի՝ ՀՕԽ-ի դռները բաց էին նաև անօգնական ծերերի, լուրջ բուժման կարիք ունեցող մարդկանց համար: Սակայն ՀՕԽ-ը հատկապես զբաղվում էր հայ ռազմիկների բուժման, նրանց մարմնական ու հոգևոր վերքերն ամոքելու գործով: 1993 թ. իր ազգանպաստ գործունեությանը ՀՕՄ-ն ավելացրեց ևս մի նմանօրինակը չունեցող ծառայություն: ՀՕՄ-ի հայրենական մասնաճյուղը օրեցօր սաստկացող պատերազմական իրավիճակից ելնելով՝ իր համար որոշակի նպատակ դարձրեց ամեն գնով սատարել հայոց բանակի հզորացմանն ու կայացմանը: ՀՀ մարդասիրական օգնությունների կառավարական հանձնաժողովի և ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցելով՝ ՀՕՄ-ը որոշեց ամանորյա ծրարներ պատրաստել և Նոր տարվա կապակցությամբ հանձնել Հայաստանի ու Արցախի հայոց բանակի ռազմիկներին: Այս ծրագիր-մտահղացումը

[251] Տե՛ս «Լրագիր», 31 օգոստոսի, 1995:
[252] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 6 օգոստոսի, 1997:
[253] Տե՛ս «Հայոց աշխարհ», 1 դեկտեմբերի, 1999:

առաջին անգամ էր կազմակերպվում և բարոյական լուրջ աջակցություն էր հայ զինվորներին:

Հայրենիքում իր եռամյա (1991-1994 թթ.) գործունեության ընթացքում ՀՕՄ-ը հասցրեց այնպիսի համազգային գործեր կատարել, ինչպիսիք էին վարժարանի ու նախակրթարանի կառուցումը Ախուրյանում, ակնագիտական կենտրոնի ստեղծումը Թալինում, փախստականների համար ավանի շինարարությունը Նոյեմբերյանի շրջանում, «Ձմեռ-93» ծրագրի հսկայածավալ աշխատանքների իրագործումը հանրապետության ողջ տարածքում ու Արցախում և այլն: Եթե սկզբնապես ՀՕԽ-ը իր խնդիրն էր համարում մարդասիրական օգնությունների ու դեղորայքի բաշխումը հայաստանյան կարիքավորներին, ապա 1995 թվականից գործունեության բոլորովին նոր փուլ սկսեց՝ իրագործելով ծրագրեր հիմնականում կրթության ու առողջապահության ոլորտում:

1997 թ. հուլիսի 21-ից օգոստոսի 2-ը Ծաղկաձորում 41 պատգամավորների մասնակցությամբ կայացավ ՀՕՄ-ի հայաստանյան շրջանային կազմակերպության՝ ՀՕԽ-ի 7-րդ պատգամավորական ժողովը[254]: Ներկայացնելով համահայկական կառույցի մեկամյա գործունեությունը (1996 թ. հուլիսի 11-1997 թ. հուլիսի 31)՝ ժողովն այնուհետև անդրադարձավ ՀՕՄ-ի հայաստանյան շրջանային վարչության 39 մասնաճյուղերի գործուն կապին, որը կրելով համակարգված բնույթ՝ մեծապես նպաստում էր կազմակերպության ներդաշնակ աշխատանքներին:

Առողջապահական ծրագրի շրջանակներում ՀՕՄ-ը 1996 թ. բուժսարքավորումներ և դեղամիջոցներ տրամադրեց Հայաստանի մոտ 20 բուժհիմնարկների և կազմակերպությունների[255]: Այս ծրագրի շրջանակներում կարևորագույնը 1996 թվականից Ախուրյանում գործող մոր և մանկան հիվանդությունները կանխարգելող կենտրոնի կառուցումն ու տեխնիկական վերազինումն էր: Կենտրոնը ՀՕՄ-ի հերթական նախաձեռնությունն էր աղետի գոտում և սպասարկելու էր տարածքի 6 գյուղերի մոտ 20 հազար բնակչությանը (կանանց և մինչև 15 տարեկան երեխաների)[256]:

[254] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 6 օգոստոսի, 1997:
[255] Տե՛ս նույն տեղում:
[256] Տե՛ս «Մոլորակ», 21 մայիսի, 1997:

ՀՕՄ-ի՝ ԱՄՆ Արևմտյան շրջանի մասնաճյուղի ջանքերով ակնոցների պատրաստման կենտրոններ ստեղծվեցին Թալինում (1992 թ.), Երևանում (1995 թ.), Վանաձորում (1996 թ.), Ստեփանակերտում (1999 թ.)[257]:

ՀՕՄ-ի ծրագրերի մեջ առանձնակի կարևորություն էր ներկայացնում 1994 թ. սկսված աղետի գոտու ջերմամեկուսացման ծրագիրը, որը նախապես ընդգրկում էր միայն Գյումրի և Վանաձոր քաղաքները, այնուհետև ներառեց Ախուրյանը, Սպիտակը, Ամասիան: Ծրագրի շրջանակներում ջերմամեկուսացվեցին բազմաթիվ դպրոցներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ և մանկապարտեզներ:

1998 թ. մայիսի 29-ին Երևանում ՀՕՄ-ի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հայաստան-Սփյուռք. 21-րդ դարի շեմին» թեմայով համահայկական գիտաժողով, որում քննարկվեցին Հայաստանի ազգային-հասարակական կյանքում հայ կնոջ մասնակցության, Հայաստան-Սփյուռք կապերի սերտացման հիմնահարցերը[258]: Գիտաժողովն իր աշխատանքներն ավարտեց մայիսի 30-ին:

1996 թվականից Արցախում սկսեց գործել ՀՕՄ-ի Հայ կին կազմակերպությունը, որը Արցախի մի շարք բնակավայրերում հիմնեց «Սոսե» մանկապարտեզների ցանցը: Որպես առաջին քայլ, ՀՕՄ-ի «Սոսե» մասնաճյուղը Ստեփանակերտում 1998 թ. հիմնեց «Սոսե» մանկապարտեզը, ուր հաճախեցին հիմնականում ազատամարտիկների 90 երեխաներ, այնուհետև մանկապարտեզներ հիմնվեցին Ասկերանի շրջանի Այգեստան (80 երեխա) և Մարտունու շրջանի Ավդուռ (30 երեխա) գյուղերում, չորրորդ մանկապարտեզի շենքը Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում վերանորոգվեց և գործելու էր Կանադայի մասնաճյուղի

[257] Տե՛ս «Հայոց աշխարհ», 14 սեպտեմբերի, 2000: Տե՛ս նաև «Ասպարեզ», 26 սեպտեմբերի, 2000:
[258] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 30 մայիսի, 1998: Տե՛ս նաև «Հայոց աշխարհ», 30 մայիսի, 1998, Հայաստանը և Սփյուռքը 21-րդ դարի շեմին, գիտաժողովի նյութեր (Երևան, 29-30 մայիս, 1998 թ.), Երևան, 1998:

հովանավորությամբ[259]: Ընթացքի մեջ էր Շուշիի մանկապարտեզի կազմակերպման ծրագիրը:

Այսպիսով, ՀՕՄ-ը միջազգային ու արտասահմանյան որոշ կազմակերպությունների հետ համագործակցելով՝ Հայաստանում և Արցախում իրականացրեց մի շարք ծրագրեր, որոնցից էին մեծաքանակ օգնության (սննդամթերք, դեղորայք, բժշկական սարքավորումներ, հագուստեղեն, վառելանյութ, վառարաններ և այլն) առաքումը, Ախուրյանում Մոր և մանկան կենտրոնի և Ն. Աղբալյան վարժարանի կառուցումը, Գյումրիում հոգեբանական վերականգնողական կենտրոնի հիմնումը, շուրջ 170 բժիշկների և բուժքույրերի մասնագիտական վերապատրաստումը արտերկրում, 1992 թվականից ի վեր՝ շուրջ 6000 որբերի և զոհված ազատամարտիկների երեխաների խնամատարությունը, հինգ գյուղում (Սարիար, Կրաշեն, Արշավիր Շիրակյան, Նոյեմբերյան ավան, Ամասիա) մոտ 200 բնակելի տների կառուցումը, Արջուտ գյուղի (Լոռու մարզ) 5 կմ երկարությամբ ջրատարի շինարարությունը, օպտիկական ծառայությունների կենտրոնների բացումը Հայաստանի որոշ քաղաքներում, երկրաշարժից տուժած շրջաններում առողջապահական և կրթական ավելի քան 50 հիմնարկների շենքերի ջերմամեկուսացումը և այլն[260]:

1994 թվականից ՀՕԽ-ը կազմակերպում էր ամառային ճամբարներ երեխաների համար, տարվա «Լավագույն ուսուցիչ» և «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությունները, 1997 թվականից՝ «ՀՕՄ-ի օր» Վանաձորի, Հրազդանի և Երևանի գիշերօթիկ դպրոցներում, 2001 թվականից՝ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության հետ միասին «Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագիրը 4 և 5 դպրոցահասակ երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքների համար[261]:

1998 թվականից ՀՕՄ-ը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է: Հայաստանում իրականացվող ծրագրերի վրա ՀՕՄ-ը ծախսել է շուրջ 25 մլն դոլար[262]:

Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի սոցիալական կառույց հանդիսացող Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ, Fund for Armenian Relief) ստեղծվեց 1988 թ. երկրաշարժի անմիջական թելադրանքով և նրա հետևանքները վերացնելու անհրաժեշտությամբ: Այն սկզբնական շրջանում կոչվում էր Հայաստանի վերականգնման առաջնորդարանի ֆոնդ (ՀՎԱՖ) և միայն 1992 թ. վերանվանվեց Հայ օգնության ֆոնդ: 1993 թ. փետրվարին գրանցվելով որպես անկախ կառույց՝ ՀՕՖ-ը հնարավորություն ստացավ գործել ինքնուրույն:

Հայ ժողովրդի համար ծանր տարիներին կազմակերպության ջանքերի շնորհիվ պահպանվեց Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական համակարգը՝ մանկամսուրները, մանկապարտեզների ցանցը, ապահովվեց հանրապետության բոլոր գիշերօթիկ դպրոցների, մանկատների և ծերանոցների բնականոն գործունեությունը: ՀՕՖ-ի սննդի ծրագրերն ընդգրկեցին բնակչության գրեթե բոլոր շերտերը՝ նորածիններից մինչև միայնակ ծերեր, պատերազմի ու աշխատանքի վետերաններ, կարիքավոր ուսանողներ և ազատամարտիկների ընտանիքներ: Նրա նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ տասնյակ բարեգործական ճաշարաններ բացվեցին Երևանում և ՀՀ մարզերում: Ուշադրության կենտրոնում սակայն, աղետի գոտին էր:

ՀՕՖ-ի նախնական նպատակն էր օգնել Ստեփանավանի վերականգնմանը: Այնուհետև մեծացնելով իր գործունեության շրջանակները՝ այն կազմակերպեց սննդամթերքի մեծաքանակ առաքումը Հայաստան, ինչպես նաև կոորդինացրեց ԱՄՆ կառավարության կողմից տրվող օգնությունը: Տեսնելով Հայաստանում ՀՕՖ-ի ծավալած գործունեության արդյունքները՝ ԱՄՆ կառավարությունը նրան վստահեց սննդի ողջ օգնության բաշխումը երկրում: Ավելի քան իր տասնամյա գործունեության ընթացքում

[259] Տե՛ս «Հայոց աշխարհ», 2 սեպտեմբերի, 2000: Տե՛ս նաև «Ասպարեզ», 26 սեպտեմբերի, 2000:

[260] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 618-619:

[261] Տե՛ս նույն տեղում, էջ 619:

[262] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 685:

ՀՕՖ-ը Հայաստանին տրամադրել է ավելի քան 200 մլն դոլարի օգնություն[263]:

ՀՕՖ-ի գրասենյակը Երևանում հաստատվեց 1991 թ.: Նրա առաքելությունը Հայաստանում և Արցախում ապրող հայության սոցիալական պայմանների բարելավումն էր: Այդ առումով մեծ կարևորություն ուներ հատկապես 1994 թվականից գործող «Փարոս» համակարգը: Երկրի հետագա զարգացման ընթացքում մարդասիրական ծրագրերն իրենց տեղը զիջեցին զարգացման ծրագրերին, որոնք ընդգրկեցին կյանքի ամենատարբեր բնագավառներ՝ գյուղատնտեսությունը, շինարարությունը, առողջապահությունը, կրթությունը, մշակույթը: Հետագա 10 տարիների ընթացքում իր արդյունավետ գործունեությամբ այս կառույցը դարձավ առաջատար մարդասիրական կազմակերպություն Հայաստանի Հանրապետությունում:

Հայրենիքում ՀՕՖ-ը իր բարեգործական առաքելությունը իրականացնում էր Հայաստանի մասնաճյուղի միջոցով, որը ՀՀ ներմուծվող ապրանքների և հատկացվող ծառայությունների համակարգման, հաշվառման և բաշխման հարցերում համագործակցում էր ՀՀ կառավարության մարդասիրական օգնության հանձնախմբի հետ:

Հայաստանի Հանրապետությունում ՀՕՖ-ի հայրենաշեն առաջին ծրագիրը Ստեփանավանում հարմարավետությամբ և ապրելու համար պահանջվող բոլոր պայմաններով աչքի ընկնող «Սբ. Վարդան» բնակելի թաղամասի կառուցումն էր:

1994 թվականից ՀՕՖ-ի բարեգործական ծրագրերում ընդգրկվեց երկրաշարժից ավերված Ստեփանավանի թիվ 21 առողջարանային գիշերօթիկ դպրոցը: Օգնության ձեռք մեկնելով փակման շեմին կանգնած դպրոցին՝ ՀՕՖ-ն առաջարկեց վերջինիս կից ստեղծել օժանդակ տնտեսություն, որի շնորհիվ դպրոցը կապահովվեր թարմ սննդամթերքով, իսկ երեխաները հնարավորություն կունենային մասնագիտանալ գյուղատնտեսության և անասնաբուծության մեջ: Այդ նպատակով շենքը վերակառուցվեց և ցանկապատվեց, իսկ հաջորդ ծրագրերի ժամանակ արդեն դպրոցը գնեց ընտանի կենդանիներ, ստեղծեց լճակային տնտեսություն, գնեց 3 հա հողատարածություն՝ կարտոֆիլ և բանջարեղեն աճեցնելու համար[264]: Հաջորդ տարիներին դպրոցն ընդլայնեց իր ցանքատարածությունները: Շուտով մանկավարժական կոլեկտիվի ու աշակերտների ջանքերով գյուղատնտեսական մթերքների այնպիսի արտադրություն ստեղծվեց, որը լիովին ապահովում էր ոչ միայն իրենց սնունդը, այլև հնարավորություն էր ընձեռում կազմակերպել որոշ տեսականու վաճառք: Հաջորդ ծրագրով կառուցվեց ու նորոգվեց դպրոցական նոր շենքը, որի բացումը տեղի ունեցավ 1996 թ.: Շարունակվեցին դպրոցի ջեռուցման աշխատանքները: 1997 թ. շահագործման հանձնվեց ջրագիծը, որը դպրոցն ապահովեց շուրջօրյա խմելու ջրով[265]: Երկրաշարժի փլատակներից հառնած Ստեփանավանի թիվ 21 գիշերօթիկ դպրոցին, որը 1998 թ. մարտին անվանակոչվեց Պոլսո Պատրիարք Շնորհք արք. Գալուստյանի անունով[266], ՀՕՖ-ը շարունակեց աջակցել նաև հետագայում:

Ակնհայտ է ՀՕՖ-ի ներդրումը Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում: ԱՄՆ-ի Արևելյան թեմի երիտասարդական բաժնի հետ համատեղ ՀՕՖ-ը 1996 թվականից իրականացնում էր «Ճանապարհորդություն դեպի Հայաստան» ծրագիրը, որի շրջանակներում ամեն տարի ամերիկահայ երիտասարդ մասնագետների խումբ էր այցելում Հայաստան, ծանոթանում նախնյաց երկրին[267]: Այցերը գործնական լիցք էին հաղորդում Հայաստանը հեռվից միայն ճանաչող հայորդիներին:

ՀՕՖ-ը գործուն մասնակցություն էր ցուցաբերում նաև ամառային ճամբարների կառավարական ծրագրին: Համագործակցելով Հայ Առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդարանի հետ՝ ՀՕՖ-ը հովանավորեց Եղեգնաձորի շրջանի «Անահիտ» ճամբարի վերակառուցման, վերանորոգման և նոր շինությունների կառուցման ծրագրերը: Նրա նախաձեռնությամբ և ամերիկահայ բարերարուհի Անուշ Մաթևոսյանի հովանավորությամբ Վայոց ձորի Հերմոն գյուղի մոտակայքում կառուցվեց քառահարկ

[263] Տե՛ս նույն տեղում, էջ 687:

[264] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 29 հոկտեմբերի, 1996:
[265] Տե՛ս նույն տեղում, 10 հոկտեմբերի, 1997:
[266] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1173, ց. 2, գ. 6, թ. 86:
[267] Տե՛ս **Լաճիկյան Լ.,** Ժողովրդական առաքելության տասնամյա ճանապարհ,-«Բնօրրան», 1999, թիվ 1-2, էջ 68:

«Սիրանույշ» ճամբարը, որտեղ ամառվա ամիսներին հիմնականում հանգստանում էին զոհված ազատամարտիկների երեխաները[268]: 1995 թվականից ՀՕՖ-ի երիտասարդական կազմակերպությունը «Սիրանույշ» ճամբարում հանգստանալու և ազատամարտիկների երեխաների հետ բարեկամական կապեր հաստատելու հնարավորություն ընձեռեց ԱՄՆ-ի արևելյան շրջանների համալսարանների հայ ուսանողներին: 2000 թ. ճամբարում իրենց երկշաբաթյա հանգիստն անցկացրեցին ամերիկահայ ուսանողների 15 հոգուց բաղկացած խումբը[269]:

Երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը աջակցելու նպատակով ՀՕՖ-ը Գեղարքունիքի թեմին օգնեց Սևանի ափին ամառային ճամբար հիմնել, որը նախատեսված էր էջմիածնի հոգևոր ճեմարանի սաների և կարիքավոր ընտանիքների երեխաների համար:

Համագործակցելով ՀՀ կառավարության մարդասիրական օգնության հանձնաժողովի հետ՝ ՀՕՖ-ը մարդասիրական օգնություն էր հատկացնում Մեծ հայրենականի վետերաններին, հանրապետության պետական կառավարման և տեղական իշխանության մարմինների աշխատակիցներին, գործազուրկներին, նպաստառուներին, Երևանի հանրակրթական, երաժշտական, գիշերօթիկ, մարզական դպրոցներին և պրոֆտեխուսումնարաններին: Այն օգնում էր նաև հանրապետության մինչև մեկ, ինչպես նաև 2-ից 5 տարեկան երեխաներին, իսկ մանկական սնունդը երբեմն հայրենիք էր հասցնում «Ազնավուրը Հայաստանին» ֆոնդի հետ համատեղ:

Բժշկական հարցերով զբաղվող ՀՕՖ-ի հանձնաժողովը, համագործակցելով Հայաստանի առողջապահության նախարարության հետ, հայ բժիշկներ էր ուղարկում ԱՄՆ՝ լավագույն հիվանդանոցներում վերապատրաստվելու, իսկ ամերիկացի վիրաբույժների խմբեր՝ Հայաստան՝ տեղում հայ գործընկերներին օգնելու և նրանց հարուստ փորձը փոխանցելու համար: ՀՕՖ-ի Նյու Յորքում գտնվող առողջապահական հանձնախումբը օգնում էր

[268] Տե՛ս **Մարդոյան Ա.,** Հայ օգնության ֆոնդը 10 տարեկան է,-«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 1999, N 4 (12), հոկտեմբեր, էջ 20:

[269] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 հուլիսի, 2000:

հանրապետության Ազգային բժշկական գրադարանին՝ համալրելով այն ամսագրերով, գրքերով, տեսաֆիլմերով, համակարգիչներով, արդիական սարքավորումներով: Նրա տեխնիկական աջակցությամբ գրադարանը միացվեց ինտերնետ համակարգչային ցանցին և կապվեց աշխարհի հայտնի բժշկական գրադարանների հետ, որպեսզի հայրենի բժիշկները տեղում ծանոթանան առողջապահական ասպարեզի վերջին նորություններին ու տեղեկություններին: ՀՕՖ-ի և հանրապետական գիտաբժշկական գրադարանի համագործակցության շնորհիվ վերջինս վերածվեց գիտամեթոդական ժամանակակից կենտրոնի, որտեղ բժիշկների համար նախատեսված միայն 85 անուն ամսագրեր էին ստանում[270]: Այս գրադարանում ՀՕՖ-ը պարբերաբար կազմակերպում էր անգլերենի դասընթացներ, որոնց նպատակն էր հայ բժիշկներին հնարավորություն ընձեռել օգտվել գրադարանի հարուստ հավաքածուից, իսկ ԱՄՆ վերապատրաստման մեկնողներին փոքր-ինչ ազատ շփվելու իրենց ամերիկյան գործընկերների հետ: Ելնելով իր բժշկական ծրագրերից՝ ՀՕՖ-ը Հայաստանի հիվանդանոցներին ոչ միայն դեղորայք և բժշկական սարքավորումներ էր հատկացնում, այլև աջակցում էր շինարարական և տեխնիկական աշխատանքներով:

1994 թ. հուլիսին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը 80 000 դոլար հատկացրեց ՀՕՖ-ին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության հետ «Փարոս» ծրագիրը իրականացնելու համար, որի նպատակն էր սոցիալական ապահովվածության խմբերի տարբերակման նոր համակարգ ստեղծելով՝ հանրապետությունում իրագործել մարդասիրական օգնության առավել արդար բաշխում[271]: Միայն «Փարոսի» ցուցակներով օգնություն հատկացվեց մայրաքաղաքում սոցիալապես անապահով մոտ 65 000 մարդու[272]: Հետագա տարիներին ևս ՀՕՖ-ի հիմնական ծրագիրը շարունակում էր մնալ «Փարոսը»:

[270] Տե՛ս **Մարդոյան Ա.,** Հայ օգնության ֆոնդը 10 տարեկան է,-«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 1999, N 4 (12), հոկտեմբեր, էջ 20:

[271] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 օգոստոսի, 1994:

[272] **Մարդոյան Ա.,** Հայ օգնության ֆոնդը 10 տարեկան է,-«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 1999, N 4 (12), հոկտեմբեր, էջ 20:

ՀՕՖ-ի ուշադրության կենտրոնում էր նաև Հայաստանի գյուղատնտեսության զարգացումը: Այն Մայր եկեղեցու թեմերի միջոցով զգալի ներդրումներ կատարեց այդ բնագավառում, իրագործեց ոռոգելի ցանցերի նորոգում Արմավիրի մարզում, կառուցեց խմելու ջրի նոր ջրագիծ Վայոց ձորում, վերակառուցեց ջրային համակարգ Վերին Ջրաշեն գյուղում, ներդրեց արդիական տեխնոլոգիաներ, ստեղծեց նոր աշխատատեղեր:

1994 թվականից ՀՕՖ-ը ձեռնամուխ եղավ դպրոցների ու ծերանոցների վերանորոգման աշխատանքներին: 1994 թ. նոյեմբերից մինչև 1995 թ. փետրվարը իրականացրեց դպրոցաշինական ծրագրի առաջին փուլը, իսկ 1995 թ. ապրիլի սկզբից մինչև հունիսը ավարտեց ծրագրի երկրորդ փուլը, որը ներառեց Հայաստանի տարբեր շրջանների՝ Գյումրիի (53 ուսումնական հաստատություն), Վանաձորի (33 ուսումնական հաստատություն), Կապանի (14 դպրոց և 13 մանկապարտեզ), Գորիսի, Կրասնոսելսկի, Եղեգնաձորի մի քանի գյուղեր[273]: Ջրաշենում կատարվեցին ճանապարհի վերանորոգման աշխատանքներ, իրականացվեց ավերիչ երկրաշարժից փլված Ս. Նշան եկեղեցու վերականգնումը, Սպիտակում կենսագործվեց ծառատնկման ծրագիր, Տիգրանաշեն գյուղում (որտեղ ապրում էին Բաքվից բռնագաղթվածներ) կատարվեցին տարբեր տեսակի շինարարական աշխատանքներ:

Հայ օգնության ֆոնդը հանդիսանում էր Հայաստանում մարդասիրական օգնություն իրականացնող բարեգործական միջազգային կազմակերպությունների առաջատարը, որի միայն սննդի ծրագրերից գործնականում օգտվել են բոլոր հայաստանյան ընտանիքները՝ տարբեր տարիքային խմբերի մոտ 2 մլն 200 հազար քաղաքացիներ, երեխաներ (պոլիկլինիկաների և մանկապարտեզների միջոցով), աշակերտներ և ուսանողներ, գիշերօթիկ դպրոցների ու մանկատների սաներ, թոշակառուներ, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառների աշխատողներ[274]:

[273] Տե՛ս «Լրագիր», 21 հուլիսի, 1995:
[274] Տե՛ս «Ազգ», 26 հունիսի, 1997:

Աղետի գոտու հիմնախնդիրներին մոտիկից ծանոթանալու, դրանց լուծմանը արագորեն նպաստելու, ՀՕՖ-ի ծրագրերը համակարգելու նպատակով 1996 թ. բացվեց ՀՕՖ-ի Շիրակի մասնաճյուղը[275]: 1997 թ. ծրագրերի մաս կազմեց նաև Գյումրիի արհեստագործության զարգացման խնդիրը: Հավաստիանալով, որ աշխատանքային զբաղվածության խնդիրը Գյումրիում նույնքան կարևոր է, որքան բնակարանաշինությունը, ՀՕՖ-ը իրագործեց իր տեսակի մեջ նորություն հանդիսացող «Արհեստագործական ուսուցում և ձեռներեցություն» ծրագիրը, որի շրջանակներում անհատական և խմբային պարապմունքներում տարիքային տարբեր խմբերի՝ գլխավորապես երկրաշարժից հաշմանդամ դարձած հարյուրավոր մարդիկ սովորում էին նոր մասնագիտություններ (ժանյակագործություն, կոշկակարություն, վարսավիրություն, ոսկերչություն և այլն): Հատկապես մեծ էր համակարգչային դասընթացներում ընդգրկվել ցանկացողների թիվը: ՀՕՖ-ը նրանց հետագայում օգնեց սեփական աշխատատեղեր ստեղծելու և արտադրություն կազմակերպելու գործում:

ՀՕՖ-ի ուշադրության կենտրոնում շարունակում էր մնալ աղետի գոտին՝ իր բազում խնդիրներով ու հոգսերով: Համագործակցելով միջազգային այլ կազմակերպությունների հետ՝ ՀՕՖ-ը մտադրվեց իրագործել Գյումրիի վերականգնմանն ուղղված այլ ծրագրեր ևս:

ՀՕՖ-ի զարգացման ծրագրերը արդյունավորվեցին շինարարության ասպարեզում ձեռքբերումներով (դպրոցաշինություն, բնակելի շենքերի կառուցում ու վերակառուցում, տարբեր կրթօջախների վերանորոգում): Նրա միջոցներով բարեկարգվեց ու տեսքի բերվեց Գյումրիի «Հաղթանակ» զբոսայգին, շահագործման հանձնվեց Շիրակի մարզի Կապս գյուղի մանկապարտեզը, ժամանակակից կրթահամալիրների վերածվեցին Գյումրիի երկրաշարժից հիմնովին ավերված Վազգեն Ա Կաթողիկոսի անվան թիվ 27 (ՀՕՖ-ի ատենապետ Գ. Հովնանյանի հովանավորությամբ) և թիվ 21 (նյույորքաբնակ բժիշկ, ազգային բարերար Հովհաննես Օյունջյանի նվիրատվությամբ) դպրոցները: ՀՕՖ-ի դպրոցաշինական հասցեները ընդգրկում էին Ստեփանավանը,

[275] Տե՛ս «Լրագիր», 29 նոյեմբերի, 1996:

Արարատի մարզի Այնթափ գյուղը, էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Գևորգյան ճեմարանի նորոգված շենքը վերաբացվեց 1997 թ. սեպտեմբերին՝ 80-ամյա հարկադրյալ ընդմիջումից հետո: Իսկ ամերիկաբնակ Կարամանուկյան ընտանիքի աջակցությամբ 1998 թ. վերանորոգվեց Նոր Այնթափի «Արամ և Հասմիկ Կարամանուկյան» դպրոցը:

Մանկատներում չափահաս դարձած սաներին մասնագիտական կողմնորոշում տալու նպատակով ՀՕՖ-ը նախաձեռնեց և իրականացրեց մասնագիտական ուսուցման ծրագիր: Գավառի մանկատան սաների համար նախատեսված ուսուցողական ծրագրերից առաջինն իրականացվեց 1997 թ., երբ մանկատան ավագ տարիքի սաներին հնարավորություն տրվեց ծանոթանալ համակարգչային տեխնիկային, ձեռք բերել ընդհանուր համակարգչային գրագիտություն: Այս ծրագրի հաջող իրագործումից հետո ՀՕՖ-ը 1998 թ. հանձն առավ երկրորդ ծրագիրը, որը նույն մանկատան բարձր դասարանցիներին (նաև դպրոցն ավարտած սաներին) հաշվապահական հաշվառում էր ուսուցանում[276]: 1999 թ. գործնական քայլեր կատարվեցին նաև մանկատան այն սաների հետագա ուսումնառությունը շարունակելու ուղղությամբ, ովքեր այդ ցանկությունն ունեին: ՀՕՖ-ը հոգում էր նաև նրանց ուսումնառության ծախսերը, ավելին, նշանակեց լրացուցիչ ամսական կրթաթոշակ:

ՀՕՖ-ի ուշադրության կենտրոնում էին գտնվում հատկապես երեխաները: 1998 թ. դրությամբ կազմակերպությունից շարունակաբար սնունդ էին ստանում հանրապետության 261 մանկապարտեզներ, 68 գիշերօթիկ դպրոցներ, բոլոր մանկատները[277]: Ուշադրությունից չվրիպեցին նաև անօթևան թափառաշրջիկ երեխաները, որոնց կրթության ու դաստիարակության գործը լավագույնս կազմակերպելու նպատակով ՀՕՖ-ը ֆինանսավորեց ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության քրեական հետախուզության բաժնի անչափահասների ընդունման և տեղաբաշխման կայանի վերակառուցման աշխատանքները: Թափառաշրջիկ երեխաների ընդունման-հանձնման երևանյան կենտրոնի շինարարությունն ավարտվեց 1999 թ.[278]: Կենտրոնը իր հարմարություններով ու մշակված ծրագրով կոչված էր նոր սկիզբ նշանավորելու թափառաշրջիկ երեխաների կյանքում: Այն սկսեց գործել 2000 թ. փետրվարից, նույն թվականի սեպտեմբերի դրությամբ այստեղ են բերվել ու խնամվել շուրջ 150 փոքրիկներ[279]:

ՀՕՖ-ի գործունեությունը թերի կլիներ առանց արցախահայությանն օգնելու: Այդ նպատակով 1997 թ. դեկտեմբերին Ստեփանակերտում բացվեց ՀՕՖ-ի մասնաճյուղը, որի միջոցով ԼՂՀ-ին տրամադրվեց մեծ քանակությամբ դեղորայք, բուժսարքավորումներ և գրենական պիտույքներ[280]:

Իր բարեգործություններով հայտնի Անուշ Մաթևոսյանը Հայ օգնության ֆոնդ ներդնելով մեկ մլն դոլար՝ այդ գումարի տոկոսներով կրթաթոշակներ սահմանեց բարձր առաջադիմություն ունեցող անապահով ուսանողների համար[281]: ՀՕՖ-ի օժանդակությամբ 1996 թ. ստեղծվեց «Մաթևոսյան կրթավճար» ծրագիրը, որի համաձայն ամեն տարի սոցիալապես անապահով և ուսման առաջադեմ հայաստանաբնակ տասը ուսանողների ուսման վարձը վճարում էր ՀՕՖ-ը[282]: 2000 թ. ՀՕՖ-ը «Մաթևոսյան կրթավճար» ծրագրով արդեն վճարում էր բուհերի 30 ուսանողների ուսման վարձը[283]:

Համագործակցելով ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության հետ՝ ՀՕՖ-ը օգնություն ցույց տվեց Հայաստանի պետական բուհերում սովորող առավել կարիքավոր ուսանողների (մոտ 40 000)[284]: Կրթամշակութային ոլորտում նա հովանավորեց «Տաթև» մանկական և հաշմանդամների «Փարոս» երգչախմբերին, «Հայ օգնության միություն» և «Ազնա-

[276] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 18 ապրիլի, 1998:
[277] Տե՛ս նույն տեղում:

[278] Տե՛ս «Ազգ», 17 դեկտեմբերի, 1999:
[279] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 սեպտեմբերի, 2000:
[280] Տե՛ս **Լաճիկյան Լ.**, Ժողովրդական առաքելության տասնամյա ճանապարհ,-«Բնօրրան», 1999, թիվ 1-2, էջ 68:
[281] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 20 սեպտեմբերի, 1997:
[282] Տե՛ս «Ազգ», 1 հուլիսի, 1999:
[283] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 սեպտեմբերի, 2000:
[284] Տե՛ս **Մարդոյան Ա.**, Հայ օգնության ֆոնդը 10 տարեկան է,-«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 1999, N 4 (12), հոկտեմբեր, էջ 19:

վուրը Հայաստանին» կազմակերպությունների հետ՝ «Այբբենարան» դասագրքի հրատարակությունը, որն անվճար տրամադրվեց ՀՀ դպրոցների 66 000 առաջին դասարանցիների[285]:

ՀՕՖ-ի ծրագրերն ընդգրկեցին կենսագործունեության բոլոր բնագավառները՝ բնության կենսապահովում, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, բժշկություն, էներգետիկա, կրթություն, մշակույթ և այլն: Հատկապես երկրաշարժին հաջորդած «սոցիալական տագնապի» առաջին տարիներին ՀՕՖ-ը մեծ գործ կատարեց Հայաստանի բնակչության կարիքավոր շերտերին սնունդով ապահովելու հարցում: 1988-1999 թթ. ԱՄՆ-ից որպես մարդասիրական օգնություն ստացված սննդի դրամական ընդհանուր արժեքը շուրջ 77 մլն ամերիկյան դոլար էր[286]: Այդ ծանր տարիներին նաև ՀՕՖ-ի շնորհիվ հաջողվեց պահպանել Հայաստանի Հանրապետության ամբողջ նախադպրոցական համակարգը:

ՀՕՖ-ը կարևոր դեր էր կատարում նաև Հայաստան-Սփյուռք, եկեղեցի-պետություն հարաբերությունների սերտացման առումով: Հանդիսանալով հարյուրամյա պատմություն ունեցող եկեղեցական թեմի կառույց՝ ՀՕՖ-ը մեծապես նպաստեց հայաստանյայց նորակազմ թեմերի հոգևոր հիմքերի ամրացմանն ու հզորացմանը: Հանրապետության մարզերի մանկապարտեզներին օգնություն տրամադրելիս՝ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հետ համատեղ բաժանում էր նաև մանկական հոգևոր գրականություն:

Երկրաշարժից հետո Հայաստանում մարդասիրական գործունեություն ծավալած միջազգային բարեգործական կազմակերպություններից թերևս միայն ՀՕՖ-ն էր, որ հետագայում ևս շարունակեց պարենային զգալի օգնություն հատկացնել երկրի բնակչության կարիքավոր շերտերին: Նախորդ տարիների նման ՀՕՖ-ի հոգատարության ներքո են Հայաստանի բոլոր գիշերօթիկ դպրոցները, մանկատներն ու ծերանոցները: ՀՕՖ-ը չմոռացավ նաև զոհված ու հաշմանդամ դարձած ազատամարտիկներին և նրանց ընտանիքներին, որոնց օգնության ծրագիրը

[285] Տե՛ս նույն տեղում, էջ 21:
[286] Տե՛ս **Լաճիկյան Լ.,** Ժողովրդական առաքելության տասնամյա ճանապարհ,-«Բնօրրան», 1999, թիվ 1-2, էջ 67:

սկսվեց 1998 թ. վերջից և շարունակվեց 1999 թ. ընթացքում[287]: Գործողության մեջ էր նաև կարիքավոր ուսանողների օժանդակության ծրագիրը, որն իրականացվում էր բուհերի հետ համատեղ:

Սփյուռքի կազմակերպությունների կողմից 1990-ական թթ. Հայաստանին տրամադրված մարդասիրական օգնության ամենամեծ բաժինը (Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովի մասնակիցներին ներկայացված ամփոփիչ զեկույցի տվյալներով այդ օգնությունը մոտ 600 մլն դրամ էր) կազմել են ՀՕՖ-ի միջոցով իրագործված ծրագրերը՝ 172,5 մլն դոլար, որից 170 մլն-ը՝ ԱՄՆ պետդեպարտամենտի, 2,5 մլն-ը սփյուռքահայ նվիրատուների հատկացումներով[288]: Իր գործունեության 10-11 տարվա ընթացքում սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունների մեջ Հայաստանում ամենամեծ ներդրումը կատարել է ՀՕՖ-ը՝ իրականացնելով մոտ 180 մլն դոլարի ծավալով բարեգործական ծրագրեր[289]:

Հայաստանում իր գործունեության ավելի քան մեկ տասնամյակի ընթացքում առաջին անգամ Երևանում 2000 թ. նոյեմբերին անցկացվեց ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի համաժողովը՝ խորհրդի 13 անդամների ամբողջ կազմի մասնակցությամբ[290]: Համաժողովը նախատեսեց ապագայում ծրագրեր իրականացնել գիտության բնագավառում: Մտահոգված Հայաստանից գիտական ներուժի արտահոսքով՝ ՀՕՖ-ը հաջորդ տարի նախատեսեց իրականացնել երիտասարդ գիտնականներին աջակցելու ևս մի ծրագիր, որի համաձայն 2001 թվականից դրամաշնորհներ էին հատկացվելու տարբեր բնագավառներում հետազոտություններ և ուսումնասիրություններ կատարող երիտասարդ գիտնականներին[291]:

Սատար կանգնելով երկրաշարժից ու պատերազմից տուժած հայրենիքին, աջակցելով հասարակության բոլոր շերտերին, իրագործելով սոցիալական առաջնային ծրագրեր՝ սփյուռքահայ

[287] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 15 սեպտեմբերի, 2000:
[288] Տե՛ս նույն տեղում, 17 դեկտեմբերի, 1999:
[289] Տե՛ս «Առավոտ», 8 նոյեմբերի, 2000:
[290] Տե՛ս նույն տեղում:
[291] Տե՛ս «Ազգ», 8 նոյեմբերի, 2000:

կազմակերպությունները ևս, հիմնադրամների նման, մեծապես նպաստեցին երկրում ստեղծված սոցիալական լարվածության մեղմացմանը, հասարակության կյանքի բարելավմանը: Շահելով իշխանությունների և ժողովրդի վստահությունը՝ նրանք հայաստանյան մասնաճյուղերի միջոցով հետագայում ևս երկարաժամկետ ծրագրերով շարունակեցին իրենց հայրենանվեր գործունեությունը և՛ Հայաստանի Հանրապետությունում և՛ Արցախում:

***

Հայաստան-Սփյուռք համագործակցության դաշտում խիստ առաջնահերթ է տնտեսական ոլորտը: Սփյուռքի հայ գործարարներին Հայաստանի և Արցախի տնտեսական վերականգնման գործընթացին մասնակից դարձնելու, հայ համայնքների միջոցով օտար ներդրողների համար Հայաստանը ներդրումային առումով գրավիչ երկիր ներկայացնելու նպատակով Հայաստանում պարբերաբար կազմակերպվում էին խորհրդակցություններ, քննարկումներ, բիզնես-ֆորումներ, ապրանքային ցուցահանդեսներ:

Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստելու և արտասահմանյան ընկերությունների ու հանրապետության ձեռնարկությունների միջև գործարար կապերի հաստատման նպատակով 1991 թ. մայիսի 25-27-ը տեղի ունեցավ Հայ գործարարների առաջին համաժողովը, որին մասնակցեցին շուրջ 200 գործարարներ աշխարհի 30 երկրներից[292]: Համաժողովի եռօրյա աշխատանքի արդյունքում հիմնվեց Հայ գործարարների միջազգային ընկերակցությունը, որի անդամներ դարձան 91 արտասահմանյան և 16 հայաստանցի գործարարներ[293]: Ընտրվեց 33 հոգուց բաղկացած ժամանակավոր համակարգող խորհուրդ 6 ամիս ժամկետով, որը համալրելու էր ընկերակցության անդամների թիվը և նախապատրաստելու էր վարչության ընտրությունները[294]:

Գործարարների առաջին համաժողովին մասնակցող սփյուռքահայ գործարարները Հայաստան էին եկել գործնական ամենատարբեր ծրագրերով. համատեղ ձեռնարկություններ ստեղծելու,

[292] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 5 հունիսի, 1991:
[293] Տե՛ս նույն տեղում:
[294] Տե՛ս նույն տեղում:

տնտեսական փոխօգնության գործարքներ կնքելու, ինչպես նաև հեռանկարային հնարավորությունները ուսումնասիրելու համար: Համաժողովի օրերին մասնակիցները կնքեցին բազմաթիվ փոխշահավետ պայմանագրեր, ներկա եղան մշակութային մի շարք ձեռնարկումների:

Հայ գործարարների երկրորդ համագումարը տեղի ունեցավ 1992 թ. մայիսի 22-24-ը, որին մասնակցեց 60 գործարար: Մասնակիցները նշեցին, որ առաջին համագումարից հետո որոշ աշխատանքներ հարկ եղածի պես չեն կատարվել: Գլխավոր պատճառներն էին նախագահական ընտրությունները, քաղաքական խոչընդոտները և Արցախյան խնդիրը: Համաժողովում պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հայ գործարարները այսուհետ իրենց երկրների պաշտոնական ու մասնավոր գործարար շրջանակներին համոզելու և շահագրգռելու են, որ նրանք գործարքների և առևտրական հարաբերությունների մեջ մտնեն Հայաստանի հետ: Այդ աշխատանքները համադրելու համար Փարիզում և Հայաստանում հիմնվեցին կենտրոնական զույգ գրասենյակներ:

1994 թ. մայիսի 30-ից հունիսի 1-ը Երևանում տեղի ունեցավ Հայ գործարարների ֆորումի հերթական 3-րդ ընդհանուր համագումարը, որին մասնակցեցին շուրջ 120 սփյուռքահայ և օտարերկրյա գործարարներ՝ աշխարհի շուրջ 15 երկրներից[295]: Նրանք եկան այն եզրակացության, որ հրատապ խնդիր է Հայաստանի տնտեսության վերակառուցումը, որի ամենառեալ ելքը համայն հայության միասնական համագործակցությամբ կապիտալ ներդրումներն են:

Հայ գործարարների ֆորումի նախագահ Վ. Ճազմատարյանը 1994 թ. համագումարը համարեց ֆորումի ստեղծումից ի վեր ամենահաջողված հանդիպումը: Ավելին, այդ համագումարում ստեղծվեց Հայ գործարարների ընկերությունը: Դրանից հետո ֆորումի գրասենյակները Փարիզում և Երևանում շարունակեցին իրենց գործունեությունը որպես տեղեկատու կենտրոններ: Նրանք օգնում էին Հայաստանում ներդրում կատարողներին կապեր հաստատել Հայաստանի կառավարական կազմակերպութ-

[295] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 9 հուլիսի, 1994:

յունների ու ֆինանսական հաստատությունների միջև, ստեղծում էին համատեղ ձեռնարկություններ, գտնում էներգիայի աղբյուրներ, բարելավում օդային հաղորդակցությունը:

Սփյուռքահայ գործարարները իրենց միջոցները ներդրեցին Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման բնագավառում: Զբոսաշրջության զարգացման համար նախ և առաջ անհրաժեշտ էին հյուրանոցային համալիրներ: Այդ գործը հանձն առավ ամերիկահայ գործարար, բարերար Վահագն Հովնանյանը, ով սկսեց «Վահագն» ավանատիպ թաղամասի կառուցումը: Նա ստանձնեց նաև Հայաստանի տասը «տեղավայրերում» հյուրանոցներ կառուցելու պատրաստակամությունը[296]: Գյուղական կենտրոնների ընդհանուր արժեքը 17 մլն դոլար էր, «Վահագնի» թաղամասի արժեքը՝ 120 մլն դոլար[297]: Վ. Հովնանյանը մտադիր էր աշխարհի բոլոր զարգացած երկրներում գովազդել Հայաստանը որպես այցելության արժանի երկիր, ստեղծել հիմնադրամ, ուր կընդգրկվեին գործարարներ ու ամենատարբեր ոլորտների մասնագետներ՝ զբոսաշրջությունը ոտքի կանգնեցնելու համար:

Հայաստանի Հանրապետությունում գործարարության զարգացմանը, ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանն ու արտագաղթի կասեցմանն էին ուղղված սփյուռքահայ մի շարք գործարարների կողմից բարձր տեխնոլոգիաների ներդրումը երկրում: Նոր տեխնոլոգիաների կիրառումը նպաստելու էր երկրի տնտեսության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, նաև համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի դերի բարձրացմանը: 2000 թ. սեպտեմբերի 5-ին Նյու Յորքում ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը «Իփիջի լեբզ» ամերիկյան ընկերության տնօրեն Սեմ (Սամվել) Սիմոնյանի հետ ստորագրեց «Հայաստանում բարձր տեխնոլոգիաների բիզնեսի զարգացման արտասահմանյան ներդրման Իփիջի պարկ» համաձայնագիրը, որի նպատակը Հայաստանում համակարգչային և բարձր տեխնոլոգիաների մասնավոր հատվածի զարգացման խրախուսումն էր: Ծրագիրն իրականացվելու էր 5 տարում (մինչև 2005 թ.) և նա-

[296] Տե՛ս **Չաքարյան Ռ.,** Հայոց աշխարհի խորհուրդը,-«Գարուն», 2000, N 3, էջ 15:
[297] Տե՛ս «Ազգ», 21 ապրիլի, 2000:

խատեսում էր 20 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, 1000 տեղանոց ինտերնետ սրահի ստեղծում, «էլեկտրոնային գործարարության» ուսուցում, ուսանողների համար ինտերնետի հենքով կրթական ծրագրեր, նաև բարձր տեխնոլոգիաների բնագավառում 500 աշխատատեղերի ստեղծում[298]: Համաձայնագիրը կյանքի կոչելու համար արդեն 2000 թ. սեպտեմբերի 20-ին Սամվել Սիմոնյանի նախաձեռնությամբ Աշտարակում բացվեց «Իփիջի Լեբս էյէմ» ընկերության մասնաճյուղը[299]:

Ժամանակի ընթացքում սփյուռքահայ գործարարների մի մասը դրամական ներդրումներից աստիճանաբար անցում կատարեց Հայաստանում և Արցախում նոր տեխնոլոգիաների կիրառմամբ ժամանակակից հաստատությունների ստեղծմանը՝ քաջ գիտակցելով, որ երկրի և հասարակության առաջընթացի առհավատչյան արագ զարգացող արդի աշխարհին ներդաշնակ նոր տեխնոլոգիաներն են ու դրանց կիրառումը:

Սփյուռքահայ գործարարների համար, ցավոք, պետությունը չկարողացավ ստեղծել նպաստավոր պայմաններ, որի հետևանքով բազմաթիվ գործարարներ հանդիպելով բազում դժվարությունների՝ հրաժարվեցին երկրի համար կենսական նշանակություն ունեցող կարևոր ծրագրերից:

[298] Տե՛ս Թէքսասի INET Technologies-ը 20 միլիոն տոլար կը ներդնէ Հայաստանի մէջ,-«Յուշարար-միութիւն», 2000, թիւ 2, սեպտեմբեր, էջ 25:
[299] Տե՛ս նույն տեղում, էջ 25:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչություններն առավել գործուն ու խոստումնալից դարձան Հայաստանի Հանրապետության անկախանալուց հետո: 1990-ական թվականների սկզբներին իր գործունեությունը շարունակում էր տակավին 1964 թ. ստեղծված Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը կոմիտեին հնարավորություն ընձեռեց ձերբազատվել անցյալի գաղափարական կապանքներից: 1991 թ. ընդհանուր ժողովում կոմիտեն ընդունեց իր նոր կանոնադրությունը, որով մերժում էր խտրական մոտեցումը սփյուռքահայ քաղաքական հոսանքների նկատմամբ և կարևորում համագործակցությունը բոլոր քաղաքական ուժերի, հասարակական կազմակերպությունների և կրոնական կառույցների հետ՝ անկախ նրանց գաղափարական համոզմունքներից ու կրոնական դավանանքից: 1990-ական թթ. ընդլայնելով գործունեության շրջանակները՝ այն իր նոր կանոնադրության մեջ արձանագրեց, որ կոմիտեն լինելով ինքնակառավարվող, ապակուսակցական, քաղաքականապես չեզոք հասարակական կազմակերպություն՝ «համագործակցում է Սփյուռքի մշակութային, բարեսիրական, հայրենասիրական միությունների, կրթական, գիտական, կրոնական հաստատությունների, երիտասարդական-պատանեկան, մարզական կազմակերպությունների, գործարար շրջանակների, ինչպես նաև անհատ անձանց հետ»[300]: Կոմիտեն իր հիմնական նպատակն էր համարում սատարել Հայրենիք-Սփյուռք կապերի սերտ միահյուսմանը, հայ ժողովրդի միասնության ապահովմանը: Այդ նպատակով նա Սփյուռք էր առաքում հայերեն գրականություն, թերթեր ու ամսագրեր՝ սփյուռքահայությանը Մայր հայրենիքին ծանոթացնելու համար, կազմակերպում էր հայրենիքի և Սփյուռքի գիտնականների, մշակութային, քաղաքական գործիչների փոխայցելություններ: Իր տպագիր օրգաններ «Հայրենիքի ձայն» թերթի և «Վերածնված Հայաստան» (1990 թ. վերանվանվեց «Հայրենի եզերք») ամսագրի միջոցով կոմիտեն լուրեր էր տպագրում տարբեր լեզուներով և առաքում Սփյուռքի հայկական համայնքներ: 1990 թ. կոմիտեի կողմից Սփյուռքի ավելի քան 650 կազմակերպությունների և 4500 անհատների առաքվել են հանրապետության կյանքն արտացոլող 30 անուն լրագրեր ու ամսագրեր՝ շուրջ 12 հազար օրինակ ընդհանուր տպաքանակով, 48 անուն հայ ժողովրդի պատմությանը, հայոց լեզվին, մշակույթին վերաբերող գրքեր, գեղարվեստական գրականություն, սփյուռքահայ դպրոցներին՝ շուրջ 12 հազար կտոր դասագիրք[301]: Նույն թվականին կոմիտեի հրավերով Հայաստան են այցելել արտերկրի տարբեր կազմակերպությունների շուրջ 740 ներկայացուցիչներ, արտասահմանի հայ համայնքներն են գործուղվել հանրապետության մոտ 200 արվեստագետներ, գրողներ, գիտնականներ, քաղաքական և հասարակական գործիչներ[302]:

Երկու տարվա ընդմիջումից հետո 1990 թ. կրկին հայրենիք հրավիրվեցին սփյուռքահայ ուսուցիչները՝ վերապատրաստման մեկամսյա դասընթացներին մասնակցելու համար: Նույն թվականին ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ Ղրիմի Յալթա քաղաքում կազմակերպվեց մեծ ծովանկարիչ Հ. Այվազովսկուն նվիրված գիտաժողով, որին մասնակցեցին հյուրեր արտասահմանից և ԽՍՀՄ-ից, կազմակերպվեցին նկարիչների աշխատանքների ցուցահանդեսներ:

Եթե նախկինում Սփյուռք ասելով հասկացվում էր միայն արտերկրի հայությունը, ապա Խորհրդային Միության փլուզումից հետո ծագեց նաև ԱՊՀ երկրների տարածքներում բնակություն հաստատած հայության խնդիրը: Հայության այդ հոծ զանգվածը, ի տարբերություն արտերկրի Սփյուռքի, որն արդեն վաղուց ուներ ավանդական ձևավորված կառույցներ, հայտնվեց բավականին ծանր իրավիճակում, քանի որ զուրկ էր կազմակերպչական որևէ միավորից: Եթե խորհրդային ժամանակաշրջանում կոմիտեն Սփյուռքի հետ հարաբերություններում բացառապես առաջնորդ-

[300] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 46, թ. 78: Տե՛ս նաև նույնի՝ գ. 53, թ. 1:

[301] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 48, թ. 8: Տե՛ս նաև նույնի՝ գ. 137, թ. 1, նույնի՝ գ. 151, թ. 23:

[302] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 48, թ. 1-2:

վում էր դասակարգային սկզբունքներով, որի հետևանքով Սփյուռքի մի շարք բնագավառներ չէին առնչվում Մայր հայրենիքին, ապա նոր պայմաններում կոմիտեն հանդես եկավ «որպես հայապահպանության քաղաքական երաշխիքների ստեղծմանը նպաստող հաստատություն, որը կոչված է օժանդակելու հայ ժողովրդի համազգային մտածելակերպի ձևավորմանը և հայության ազգային համախմբմանը»[303]: Կոմիտեն հատկապես մեծ ուշադրություն դարձրեց ԱՊՀ երկրների հայ Սփյուռքի արդի վիճակին, քանի որ վերջինս խորհրդային իշխանության տարիներին հետևողականորեն ենթարկվել էր ձուլման, անտեսվել էին նրա իրավունքները, բազում խոչընդոտներ էին հարուցվել ազգային ինքնության պահպանման ճանապարհին: Արդյունքում՝ աստիճանաբար դադարել էին գործել երբեմնի հայկական դպրոցները, հայ պարբերական հրատարակությունները: Այս ամենի հետևանքով մեր հայրենակիցները կորցնում էին իրենց ազգային նկարագիրը, ազգային էությունն ու մտածելակերպը, մոռանում մայրենի լեզուն և ազգային ավանդույթները: Այսպիսով, հայապահպանության տեսանկյունից նախկին Խորհրդային Միության հայությունը հայտնվեց շատ ավելի աննպաստ պայմաններում, քան արտերկրի հայությունը:

1991 թ. դրությամբ ԱՊՀ երկրների հայ համայնքներում եղած 7 տասնյակից ավելի համայնքային կառույցները՝ ընկերությունները, ակումբները, գտնվում էին զարգացման տարբեր աստիճանների վրա, և Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն նրանց հետ աշխատում էր տարբեր ձևերով: Կոմիտեն մասնակցեց և աջակցեց Չիտայում, Աստրախանում, Գրիգորիոպոլում և մի շարք այլ քաղաքներում հայկական ընկերությունների կազմակերպմանը և գրանցմանը: Այն օգնեց ԱՊՀ երկրների հայ համայնքներում կիրակնօրյա և շաբաթօրյա դպրոցների բացմանը (նրանց թիվը 1991 թ. հասավ շուրջ 50-ի), ապահովեց դասագրքերով, մեթոդական նյութերով, գրականությամբ, հայրենիքից գործուղեց մայրենի լեզվի ուսուցիչներ[304]: Կազմակերպվեցին նաև հայերենի արագացված ուսուցման

[303] Տե՛ս նույն տեղում, գ. 76, թ. 5:
[304] Տե՛ս նույն տեղում, գ. 62, թ. 1:

դասընթացներ մայրենին չիմացող հայրենակիցների համար: 1991 թ. կազմակերպվեցին նաև ԱՊՀ երկրների հայ համայնքների դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացները, որոնք նախատեսվեց դարձնել շարունակական: Տեղի հայ համայնքների հետ համատեղ մշակութային օրեր կազմակերպվեցին Տալլինում և Կիևում: Կոմիտեն աջակցեց 1994 թ. հոկտեմբերին Յալթայում հայ համայնքների ներկայացուցիչների հիմնադիր կոնֆերանսի կազմակերպմանը[305], 1997 թ. սեպտեմբերին Գաբրիել և Հովհաննես Այվազովսկի եղբայրների 185 և 180-ամյա հոբելյանների, տարբեր քաղաքներում հայ մշակույթի օրերի նախապատրաստմանն ու անցկացմանը:

Չնայած ՀՀ կառավարությունը 1991 թ. սեպտեմբերի 4-ի որոշմամբ հավանություն էր տվել Սփյուռքի հետ կոմիտեի համագործակցության ոլորտների ընդլայնման մի շարք գործնական առաջարկներին (Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն վերանվանել Սփյուռքահայության հետ կապերի կոմիտե, կոմիտեի համակարգում լրացուցիչ ստեղծել ներքին Սփյուռքի բաժին, քաղաքագիտական հետազոտությունների և ծրագրավորման կենտրոն, լրատվական գործակալություն՝ Սփյուռքում սեփական թղթակիցների ցանցով), սակայն դեպքերի հետագա զարգացումը հանգեցրեց կոմիտեի գործունեության էական սահմանափակմանը[306]: Կոմիտեն աստիճանաբար կորցրեց Հայրենիք-Սփյուռք հաղորդակցության մենաշնորհն ունեցողի իր դերը, քանի որ անմիջական փոխշահավետ կապեր հաստատելու հնարավորություններ ստեղծվեցին մի կողմից՝ Հայաստանի պետական, հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների և առանձին անհատների, մյուս կողմից՝ Սփյուռքի համապատասխան կառույցների հետ: Այս պայմաններում Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը սկսեցին գլխավորապես զարգանալ Հայաստան վերադարձած հայ ազգային ավանդական կուսակցությունների և նրանց մշա-

[305] Համաժողովում ստեղծվել էր Հայ համայնքների համադաշնություն (ՀՀՀ), որի նպատակն էր հայապահպանությունն ու հայության բարգավաճումը, Հայկական Սփյուռքի համաշխարհային կազմակերպության ստեղծումը:
[306] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 165, գ. 528, թ. 1-4:

կութային մասնաճյուղերի միջոցով, իսկ Սփյուռքի կողմից Հայաստանի Հանրապետությանը ցույց տրվող օգնության գլխավոր կազմակերպչի և համակարգողի դերը ստանձնեց 1992 թ. ստեղծված «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Կոմիտեի փորձերը՝ ստանալ պետական հովանավորության տակ գործող հասարակական կազմակերպության կարգավիճակ, ձախողվեցին: 1992 թ. հուլիսից պետական ֆինանսավորման դադարեցումից հետո նա փաստորեն զրկվեց իր կանոնադրական խնդիրները կատարելու հնարավորությունից՝ կորցնելով իր երբեմնի նշանակությունն ինչպես հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում: Կոմիտեի գործունեությունը, արդեն ոչ նախկին ակտիվությամբ, շարունակվեց մինչև 1998 թ.: Այս ընթացքում նա հիմնականում զբաղված էր ԱՊՀ երկրների հայության հարցերով, կազմակերպում էր տարբեր կարգի օգնություններ նախկին Խորհրդային Միության հանրապետություններում գործող հայկական դպրոցներին և մշակութային օջախներին, իսկ արտերկրի Սփյուռք ժամանակ առ ժամանակ ուսուցիչներ և դասագրքեր էր ուղարկում: Շարունակելով խիստ սահմանափակ մասնակցություն ցուցաբերել սփյուռքահայ համայնքների, գլխավորապես նախկին Խորհրդային Միության տարածքում մշակութային և կրթական խնդիրների լուծմանը՝ կոմիտեն 1998 թ. դադարեց գործելուց:

1998 թ. ՀՀ կառավարությունը նախատեսեց ԱԳՆ կազմում Սփյուռքի հետ աշխատող առանձին կառույց ձևավորել: Սա նշանակում էր, որ ՀՀ իշխանությունները քայլեր էին ձեռնարկում Հայաստան-Սփյուռք հարաբերությունները համակարգելու ուղղությամբ: Հիշյալ կառույցի նախատիպն էր 1993-1994 թթ. նույն նախարարությունում գործող Սփյուռքի վարչությունը, որը կարճ կյանք ունեցավ, քանի որ Սփյուռքի հետ կապված քաղաքականություն մշակելու և իրագործելու որևէ դեր չուներ: Իրականում հարցերը որոշվում էին ավելի բարձր մակարդակներում:

3.1. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

1990-ական թթ. աշխուժացան հատկապես Հայրենիք-Սփյուռք կրթական կապերը:

ԱՄՆ-ում առաջին հայկական բարձրագույն ուսումնական հաստատությունը Լա Վեռնի Ամերիկահայ միջազգային քոլեջն (ԱՄՔ) էր, որը գործել է 1976-1992 թթ.: Հայաստանի Հանրապետության և Լա Վեռնի հայկական համալսարանի միջև կրթական կապերն ամրապնդելու և ավելի ընդլայնելու նպատակով 1991 թ. պաշտոնական այցով Մայր հայրենիք այցելեց այդ ուսումնական հաստատության տնօրեն Կարպիս Տեր-Եղիայանը: Հանրապետության կրթության նախարարության հետ կայացված համաձայնությամբ՝ Լա Վեռնի համալսարանը դառնում էր Հայաստանի Հանրապետության լիազոր-ներկայացուցիչը ԱՄՆ-ի կրթական ու գիտական շրջաններում[307]: Սակայն ԱՄՔ-ն 1993 թ. հուլիսի 1-ից դադարեցրեց իր գործունեությունը որպես կրթական առանձին հաստատություն, և ԱՄՔ-ի փոխարեն Լա Վեռնի համալսարանը միաժամանակ վարելու էր հայագիտական նյութերի, համակարգչային գիտության և տեսողական ճարտարագիտության ծրագրեր[308]: Լա Վեռնի համալսարանի ուսանողների համալսարանական կրթությունը ավարտվելու էր 1996 թ. հունիսի 30-ին, որով և քոլեջը վերջնականապես պատմության գիրկն էր անցնելու: 1992 թ. ԱՄՔ-ի հոգաբարձության հանձնախումբը, ուսումնասիրելով քոլեջի կրթական ծրագիրը, եկավ այն եզրակացության, որ քոլեջը իր նպատակադրված առաքելության մեջ ձախողվել է, այսպես, եթե 1985 թ. ուսանողության թիվը 173 էր, 1992 թ. արդեն իջել էր 65-ի, որոնցից միայն կեսը այլազգի ուսանողներ էին, բացի այդ քոլեջից շատ քիչ ուսանողներ էին հայագիտական «ուսմանց պսակավոր արվեստից» վկայական ստանում[309]: Այս պատճառով էլ քոլեջի հոգաբարձությունը սկզբում անհրաժեշտ համարեց փակել հաստատությունը, սակայն 1993 թ. մայիսի 22-ին

[307] Տե՛ս «Երեկոյան Երևան», 26 ապրիլի, 1991:
[308] Տե՛ս «Ազգ», 16 նոյեմբերի, 1993:
[309] Տե՛ս նույն տեղում:

որոշեց վերածել Ամերիկահայ միջազգային կենտրոնի, որը պետք է նպաստեր հայագիտական ուսումնասիրություններին:

1926 թ. հիմնված Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության վարչական պատասխանատվությունը տասնամյակների ընթացքում ստանձնել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Մելքոնյան կրթական հաստատությունը միակ գիշերօթիկ, երկրորդական, ամենօրյա դպրոցն էր Սփյուռքում, նաև միակ միջազգային դպրոցը, քանի որ այստեղ ուսանում էին 20-ից ավելի երկրներից եկած 300-ից ավելի հայ երեխաներ[310]: 1990-ական թթ. կեսերից առաջին անգամ այստեղ ուսանեցին հայ երեխաներ Հայաստանից ու Արցախից, Ռուսաստանից և նախկին Խորհրդային Միության հանրապետություններից: Այս հանգամանքը առանձնահատուկ էր միայն Մելքոնյան հաստատությանը: Շրջանավարտները իրենց ուսումը շարունակում էին Հայաստանի, նաև Արևմտյան Եվրոպայի ու ԱՄՆ-ի համալսարաններում: Հայաստանը հաստատությանը տրամադրում էր հայոց լեզվի, գրականության և գրաբարի ուսուցիչներ: Հետագայում, սակայն, Մելքոնյան հաստատությունը ՀԲԸ Միության կենտրոնական վարչության որոշման համաձայն փակվեց[311]:

1990-ական թթ. աշխարհաքաղաքական փոփոխություններն անդրադարձան Սփյուռքի վերազարթոնքի, ազգային կյանքի վերածնման վրա: Վերափոխումների հետևանքով Սփյուռքի հայկական համայնքներում վերածնվեցին հայկական դպրոցները: 1990 թ. Բուլղարիայի Պլովդիվ քաղաքի քաղաքային խորհրդի որոշմամբ վերաբացվեց Պլովդիվի հայկական ազգային վարժարանը, որը փակվել էր 1976 թ.[312]: Այստեղ 1991 թ. դրությամբ սովորող 280 աշակերտներից 250-ը հայ էին, մնացածը՝ բուլղարացիներ[313]: Հայկական գործող եկեղեցու հարևանությամբ գտնվող դպրոցը դասագրքեր էր ստանում Հայաստանի Հանրապետությունից:

Հնդկահայ գաղութի անկման պայմաններում 1990-ական թթ. բավականին ծանր կացության մեջ հայտնվեց Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը: 1821 թ. հիմնադրված ճեմարանը հայտնվել էր փակման շեմին և հայրենիքից խնդրում էր հայ երեխաներ ուղարկել այնտեղ ուսանելու: Սակայն ճեմարանը փրկելու համար Հայաստանից երեխաներ տանելու նախնական փորձը ձախողվեց, և ճեմարանի հոգաբարձուների խորհուրդը որոշեց վաճառել այն: Ճեմարանի գոյությանը սպառնացող վտանգը կանխվեց Կալկաթայի Գերագույն դատարանի 1999 թ. փետրվարի 15-ի որոշմամբ, որի համաձայն կրթական այդ հաստատությունն անվերադարձ տրվեց Մայր Աթոռին, և Ամենայն Հայոց Կաթողիկոսին վերապահվեց ճեմարանն իր ցանկացած ձևով տնօրինելու իրավունքը[314]: Այնուհետև որոշվեց ամեն տարի ընդունել 30 հոգուց բաղկացած առաջին դասարան, որի շնորհիվ 10 տարվա ընթացքում հնարավոր կլիներ ունենալ 300 աշակերտից բաղկացած ուսումնական հաստատություն:

Մարդասիրական ճեմարանն անընդմեջ գործել է և այսօր էլ օգտվում է ուսումնական հաստատությունների համար Հնդկաստանում սահմանված բոլոր արտոնություններից: Սակայն երբեմնի հայաշատ գաղութը, որի անդամների թիվը 1999 թ. դրությամբ 100-ից ավելի չէր, ճեմարանում ուներ ընդամենը 5 աշակերտ, որոնց թիվը նույն թվականից Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինությամբ ավելացավ Հայաստանից ևս 30 աշակերտով[315]: Երեխաների որոշ մասն ընտրվում էր մանկատներից, գիշերօթիկ դպրոցներից կամ միակողմանի ծնողազուրկ և սոցիալապես խիստ անապահով ընտանիքներից: Ճեմարանն ավարտելուց հետո ուսանողները վերադառնալու էին Հայաստան, քանի որ Հնդկաստանը չէր արտոնում ուսանողների հետագա կեցությունն ու աշխատանքը երկրում, սակայն այն ուսանողների համար, ովքեր կցանկանային ուսումը շարունակել Հնդկաստանում, Կալկա-

[310] Տե՛ս **Մելքոնյան Էդ.**, Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, էջ 421:

[311] ՀԲԸ Միության կենտրոնական վարչությունը, ծախսատարության և կրթության ժամանակակից պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ, 2004 թ. որոշում կայացրեց Մելքոնյան կրթական հաստատությունը փակելու մասին, հայտարարելով, որ փոխարենը մտադիր է որոշ այլ երկրներում իրականացնել նոր կրթական ծրագրեր (տե՛ս «Առավոտ», 19 մարտի, 2004): Արդյունքում 2005 թ. Մելքոնյանը փակվեց:

[312] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 10 հոկտեմբերի, 1990:

[313] Տե՛ս «Հայաստան», 11 հունվարի, 1991:

[314] Տե՛ս «Ալիք», 12 հունիսի, 1999:

[315] Տե՛ս նույն տեղում:

թայի հայ համայնքը Կաթողիկոս Գարեգին Ա-ի անունով ստեղծել էր հիմնադրամ, որն ապահովելու էր տարեկան 4-5 ուսանողի կրթական ծախսերը: 2001 թ. ծեմարանում ուսանում էր 82 սան:

Սփյուռքահայ ուսուցիչների համար Հայաստանի ուսուցիչների կատարելագործման և վերապատրաստման ինստիտուտը կազմակերպում էր կատարելագործման մեկամսյա դասընթացներ (1962 թվականից), որոնք 1980-ական թթ. վերջերին կասեցվեցին: Երկու տարվա ընդմիջումից հետո՝ 1990 թ., դասընթացները վերսկսվեցին, որոնց մասնակցեցին 37 ուսուցիչներ[316]: Սակայն հետագա տարիներին երկրի տնտեսական ծանր պայմանների հետևանքով այդ դասընթացները դադարեցվեցին:

Սփյուռքում գործող 160-ից ավելի ամենօրյա վարժարաններին ու նույնքան կիրակնօրյա դպրոցներին օժանդակելու նպատակով 1996 թ. Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում հիմնվեց «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը, որը ձեռնամուխ եղավ այդ հաստատությունների համար ուսումնակրթական ծրագրեր մշակելու գործին[317]: «Կենտրոնի ստեղծման նպատակն է աջակցել ՀՀ ԿԳ նախարարությանը՝ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի արդյունավետ իրականացման, Սփյուռքի ազգային, մշակութային կազմակերպությունների և կրթօջախների հետ համագործակցության հաստատման ուղղությամբ»,- նշվում էր կենտրոնի կանոնադրության մեջ[318]:

«Սփյուռք» կենտրոնի հիմնական նպատակը Սփյուռքի և հայրենիքի հայագետ ուսուցիչների գիտաուսումնական գործունեությունն էր, «Հայաստան-Սփյուռք» կապերի ամրապնդումը: Կենտրոնը իր տնօրեն, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի ղեկավարությամբ խնդիր էր դրել հիմնականում զբաղվել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, Սփյուռքի հայկական դպրոցների և այլ ուսումնական հաստատությունների համար հայագիտական առարկաների գծով ուսուցիչների պատրաստման գործով: Կենտրոնի առաջին խնդիրը սփյուռքահայ ուսուցիչների համար հայերենի ուսուցման կազ-

[316] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 29 օգոստոսի, 1990:
[317] Տե՛ս **Միմասյան Է., Վարդանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 59:
[318] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1173, ց. 2, գ. 32, թ. 48:

մակերպումն էր: Հաշվի առնելով, որ ԱՊՀ երկրներում գործող հայկական դպրոցների ուսումնական գործընթացը հիմնականում Հայաստանում գործող ուսումնական ծրագրերի հիման վրա էր կազմակերպվում, կենտրոնը նախատեսեց այդ դպրոցների ուսուցիչների վերապատրաստումն անցկացնել առանձին ծրագրով: Նկատի ունենալով Կրասնոդարի երկրամասում և Ռոստովի մարզում հայկական դպրոցների և հայկական դասարանների զգալի քանակությունը՝ Երևանում վերապատրաստելուն զուգահեռ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նպատակահարմար համարեց նաև վերապատրաստման դասընթացներ կազմակերպել տեղերում՝ տեղական իշխանությունների հետ համաձայնեցված: Այսպիսով, 10-ամյա ընդհատումից հետո, 2000 թ. հուլիսին, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանավորությամբ ՀՀ ԿԳՆ Սփյուռքի բաժնի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի կողմից անցկացվեցին սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա դասընթացներ, որոնց հիմնականում մասնակցեցին նախակրթարանի ուսուցիչները (նաև՝ ԱՊՀ երկրներից)[319]:

Հայրենիք-Սփյուռք առնչությունների առանցքային բաղադրիչներից է Սփյուռքի հետ կրթական կապերի զարգացումը: Այդ նպատակով 1999 թ. հունվարին ԿԳՆ-ում ստեղծվեց Սփյուռքի բաժին, որի խնդիրն էր Հայրենիք-Սփյուռք կրթական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումը: Բաժինը հենց սկզբից քարտեզագրեց Սփյուռքի կրթօջախները, ապա կազմեց ու մշակեց հայրենիքի և Սփյուռքի միջև կրթական ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սփյուռքի 390 լիօրյա գործող կրթօջախներից (որից 210-ը ԱՊՀ երկրներում միջնակարգ դպրոցներ) յուրաքանչյուրը գործում էր քաղաքակրթական տարբեր միջավայրերում և տնտեսական պայմաններում, ենթակա էր տարբեր քաղաքական, մշակութային ազդեցության[320]:

ԿԳՆ-ի Սփյուռքի բաժինը զբաղվում էր նաև Սփյուռքի դպրոցներին անհրաժեշտ դասագրքերի հրատարակմամբ, ՀՀ կր-

[319] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 8 սեպտեմբերի, 2000:
[320] Տե՛ս նույն տեղում, 27 հուլիսի, 2000:

թական համակարգում Սփյուռքի ազգային-հայրենասիրական դաստիարակության մեթոդից և փորձից բխող ծրագրերի ներդրմամբ, «Սփյուռք» կենտրոնի հետ համատեղ Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների դասընթացների իրականացմամբ:

Ելնելով այն հանգամանքից, որ կրթական համակարգը հայապահպանության հիմնասյուներից է, ՀՀ համապատասխան գերատեսչությունները արդյունավետ աշխատանք էին իրականացնում ինչպես սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, այնպես էլ սփյուռքահայ շրջանավարտներին ՀՀ բուհերում ընդգրկելու և Սփյուռքի ազգային դպրոցներն անհրաժեշտ գրականությամբ ապահովելու ուղղությամբ: Տարբեր երկրների հայ համայնքներ էին առաքվում ինչպես անհրաժեշտ դասագրքեր ու մեթոդական նյութեր, այնպես էլ հայագիտական գրականություն: ՀՀ լուսավորության նախարարության արտաքին կապերի վարչության 1995 թ. հաշվետվության համաձայն 1995 թ. հունվարից մինչև օգոստոսը Սփյուռքում գործող տարատեսակ հայկական կրթօջախներին է առաքվել շուրջ 47000 դասագիրք[321]: Չնայած դրան՝ Սփյուռքի հայկական դպրոցների ամենամեծ խնդիրը շարունակում էր մնալ դասագրքերի հարցը: Հայրենիքում կազմված դասագրքերը հիմնականում չէին համապատասխանում այդ դպրոցների պահանջներին, քանի որ հաշվի չէր առնված սփյուռքահայ միջավայրը, գրված էին արևելահայերենով, իսկ արևմտահայերենով գրվածները լեզվական սխալներով էին:

2000 թվականից իրականացվեց ՀՀ կառավարության որոշումը բուհական ընդունելության՝ ինչպես պետպատվերով, այնպես էլ վճարովի համակարգում սփյուռքահայ դիմորդներին ընդգրկելու մասին: 1990 թ. դրությամբ ՀՀ ուսումնական հաստատություններում սովորում էին 933 սփյուռքահայեր՝ ստաժորներ, ասպիրանտներ, ուսանողներ, իսկ 106-ը՝ շրջանավարտներ[322]: 1994 թ. դրությամբ ՀՀ-ում սովորում էին 590 սփյուռքահայեր Իրանից, Իրաքից, Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից, Թուրքիայից, Հունաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Կանադայից, Եգիպտոսից և այլ երկրներից[323]:

[321] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1173, ց. 2, գ. 202, թ. 21:
[322] Տե՛ս նույն տեղում, թ. 9:
[323] Տե՛ս նույն տեղում, թ. 4:

Զարգանում էին նաև Հայրենիք-Սփյուռք գիտական առնչությունները: 1982 թ. Բոստոնի մերձակա Քեմբրիջ քաղաքում իր գործունեությունը սկսեց ԱՄՆ-ի «ժամանակակից հայագիտական ուսումնասիրությունների և վավերագրերի Զորյան ինստիտուտը» ("Zoryan Institute of Modern Armenian Studies and Documents"), որը լինելով անկախ կենտրոն՝ զբաղվում էր գիտահետազոտական կարևոր խնդիրներով, իրականացնում երեք հիմնական գիտական նախագծեր՝ Սփյուռքի ուսումնասիրությունը, Հայոց ցեղասպանության փաստագրումը, Հայաստանի և հայերի վերաբերյալ սեմինարների, դասախոսությունների, գիտաժողովների անցկացումը: Զորյան ինստիտուտը իր երեք հիմնական բնագավառներին 1990-ական թթ. սկզբներին ավելացրեց չորրորդը՝ Հայաստանի երկրաշարժի և հայրենիքի վերաշինության ուսումնասիրումը:

Հաստատությունը գործնական կապեր ուներ ԱՄՆ-ի, Եվրոպայի և Մերձավոր Արևելքի հայագիտական մի շարք կազմակերպությունների և գիտնականների, Հայաստանի ԳԱԱ-ի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, պատմության, արևելագիտության և այլ ինստիտուտների հետ: Մասնաճյուղեր ուներ Լոս Անջելեսում, Տորոնտոյում, Փարիզում:

Զորյան հաստատությունը հիմնականում զբաղվում էր Հայոց ցեղասպանության հարցերով: Հաստատության և Հայաստանի Ազգային հոբելյանական հանձնախմբի կողմից 1995 թ. ապրիլին Հայոց եղեռնի 80-ամյակի առթիվ Երևանում անցկացվեց ցեղասպանության խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողով: Հայաստանի անկախացումից հետո առաջին անգամ աշխարհի չորս կողմերից հավաքվեցին անվանի գիտնականներ և ցեղասպանագետներ, որոնք քննարկեցին և համեմատական վերլուծության ենթարկեցին զանգվածային ցեղասպանության դարաշրջանի երևույթը: Գիտաժողովում հնչած 21 զեկուցումներն ամփոփվեցին Զորյան ինստիտուտի հրատարակած «Ցեղասպանության խնդիրները» հատորում[324]:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրման, պատմական ճշմարտության վերականգնման ուղղությամբ Սփյուռքում վիթ-

[324] Տե՛ս «Ազգ», 24 հունիսի, 1997:

խարի աշխատանք էին տանում նաև «Հայկական տեղեկատվության և փաստագրության կենտրոն» (ՀՏՓԿ) գիտահետազոտական հաստատությունը[325], «Հայ Սփյուռքի հետազոտության կենտրոնը»[326], Գերմանիայի Բոխումի համալսարանի «Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը»[327], «Հայկական հետազոտության կենտրոնը»[328] և այլն: Նրանց գործունեության հիմնական ուղղությունը Հայաստանի, Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությունն էր, փաստաթղթերի հայտնաբերումն ու հրապարակումը: Կենտրոնները կազմակերպում էին հետազոտական ճամփորդություններ, ցուցահանդեսներ, Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված սեմինարներ, գիտաժողովներ, միջազգային համաժողովներ, հրատարակում պարբերականներ:

Հայրենիքի հետ սերտ առնչություններ ունեին՝ ցեղասպանության հարցերի ուսումնասիրման բնագավառում միջազգային չափանիշներով հայտնի գիտնական, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, նշանավոր պատմաբան պրոֆ. Վահագն Տատրյանը, Կալիֆոռնիայի համալսարանին կից Հայ կրթական հիմնարկության արդի հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը, Կալիֆոռնիայի համալսարանի Գ. Նարեկացու անվան հայագիտական ամբիոնի վարիչ, նշանավոր հայագետ և գրականագետ պրոֆ. Ավետիս Սանճյանը, լիբանանահայ գրող, գրաքննադատ, խմբագիր, մանկավարժ, պատմաբան և հասարակական գործիչ Լևոն Վարդանը (Բեդիրյան), «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության Տնօրենների ժողովի անդամներից և ազդեցիկ դեմքերից, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ԵՊՀ-ի պատվավոր դոկտոր Ռոբերտ

[325] Հիմնվել է 1985 թ.՝ Արևմտյան Բեռլինում՝ Բեռլինի Ազատ համալսարանի դասախոսներ դոկտոր Թեսսա Հոֆմանի և բանասեր, աշխարհագրագետ Ժիրայր Քոչարյանի կողմից:

[326] Հիմնվել է 1976 թ. Փարիզում, ժան Կլոդ Քեպապճյանի կողմից:

[327] Կազմավորվել է 1989 թ., դոկտոր Միհրան Տապաղի ղեկավարությամբ: 1998 թ. փետրվարին կենտրոնի հիմնած «Սփյուռքը և ցեղասպանության հետազոտության կենտրոնը» ճանաչվեց որպես համալսարանին կից գիտահետազոտական հաստատություն:

[328] Գործում է 1985 թվականից, ԱՄՆ-ի Միչիգան-Դիրբորն համալսարանին կից՝ դոկտոր Դենիս Փափազյանի գլխավորությամբ:

Կյուլպենկյանը, ավստրիահայ նշանավոր պատմաբան, կինոգործիչ, կինոռեժիսոր, արվեստաբան, Հայ դատի հետևողական պաշտպան, Հայոց ցեղասպանության վերաբերյալ շուրջ 70 տեսաֆիլմերի հեղինակ, Հայաստանի ԳԱԱ պատվավոր դոկտոր Արտեմ Օհանջանյանը և այլք:

3.2. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում էական էր նաև ՀԲԸ Միության դերը: 1988 թ. ՀԲԸՄ-ը հաստատեց «Կարպիս Փափազյան» միջազգային մրցանակը (5000 ԱՄՆ դոլար), որն ամեն տարի շնորհվում էր հայոց մշակույթի կամ Հայ դատի ուսումնասիրման ու ծանոթացման ասպարեզում առանձնակի վաստակ ունեցած ոչ հայ անձնավորության: 1988-1999 թթ. այդ մրցանակին է արժանացել 13 գործիչ[329]: Այդ գործիչներից էին հալածված ազգերի պաշտպանության համար աշխատող դոկտոր Թեսսա Հոֆմանը (1988 թ., Բեռլին), Հայ դատին մատուցած իր ծառայություններով հայտնի անգլիացի երիտասարդ պատմաբան Քրիստոֆեր Ուոլքերը (1990 թ., Լոնդոն), բարոնուհի Քերոլայն Քոքսը (1994 թ., Լոնդոն) և այլք:

Սփյուռքում իրագործվող ծրագրերից կարևոր էր հատկապես ՀԲԸՄ-ի կրթական ծրագիրը: Միության՝ թվով 27 կիրակնօրյա, նախակրթական և երկրորդական դպրոցներում ուսանում էին 6773 աշակերտներ, իսկ Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողների թիվը հասնում էր 800-ի[330]: Հիշյալ կրթական հաստատություններից բացի Բարեգործականի օժանդակությու-

[329] Տե՛ս **Թամրազյանց-Հարությունյան Ռ.,** Սեպտեմբերին կորոշվի «Կարպիս Փափազյան» մրցանակի 2000 թ. թեկնածուն,-«Օրեր», 2000, N 5-6, մայիս-հունիս, էջ 34:

[330] Տե՛ս **Մելքոնյան Է.,** Անհատը և համազգային շահը (Հայ բարեգործական ընդհանուր միության հիմնադիրները),-«Լրաբեր հասարակական գիտությունների», 1996, N 1-3, էջ 26:

նը վայելում էին 50 վարժարաններ[331]: ՀԲԸՄ-ն Սփյուռքի իր ուսումնական հաստատությունների ուսուցչական կադրերի պակասը հիմնականում լրացնում էր հայրենիքից ուղարկված ուսուցիչներով:

Հայկական մշակույթի զարգացմանը սատարելու, ստեղծագործողներին հովանավորելու, նյութապես օգնելու և խրախուսելու նպատակով 1954 թ. Ալեք Մանուկյանը հիմնեց «Ալեք և Մարի Մանուկյան», իսկ 1968 թ. «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամները: Հայրենիքում և Սփյուռքում մեծ ներդրում ուներ հատկապես «Ալեք Մանուկյան» մշակութային հիմնադրամը, որը հիմնադրի մահից հետո դադարեց գործել: «Ալեք և Մարի Մանուկյան» մշակութային հիմնադրամի միջոցներով Ալեք Մանուկյանը երեք տարով ստանձնեց Մատենադարանի հովանավորությունը, և հանրապետության համար նյութական ծանր պայմաններում գիտական կարևոր օջախը անխափան շարունակեց իր հետազոտական աշխատանքները: Մատենադարանը ոչ միայն դուրս եկավ դժվարին կացությունից, այլև կատարվեցին բարեփոխություններ. լուծվեցին լույսի, ջեռուցման կենսական խնդիրները, այլապես անհնար կլիներ ձեռագրերը պահպանել, ստեղծվեց համակարգչային կենտրոն, հրատարակվեց «Բանբեր Մատենադարանի» 16-րդ հատորը (որը լույս տեսավ նախորդ համարից 8 տարի հետո), տպագրվեցին նաև մի շարք գրքեր[332]:

Ալեք Մանուկյանը մի շարք համալսարաններում հաստատել էր հայագիտական ամբիոններ, որոնցից էին Միչիգանի համալսարանի Ա. Մանուկյանի անունը կրող Արդի պատմության ամբիոնը (հիմնվել է 1980 թ.), նույն համալսարանում հայոց լեզվի և գրականության Մարի Մանուկյանի անվան ամբիոնը (հիմնվել է 1987 թ.): Նրա նվիրատվությամբ 1992 թ. դեկտեմբերին Դետրոյտի Ս. Հովհաննես եկեղեցուն կից ստեղծվեց Ալեք և Մարի Մանուկյան հայ արվեստի թանգարանը, որը պարունակում էր հայ արվեստի մեծագույն հավաքածուն Հյուսիսային Ամերիկայում[333]:

[331] Տե՛ս Կրթական հունձքը՝ իր առաքելութեան ճամբուն վրայ,-«Յուշարար-միութիւն», 84-րդ տարի, թիւ 4/85-րդ տարի, թիւ 1, դեկտեմբեր 1996-մարտ 1997, էջ 1:

[332] Տե՛ս «Ազգ», 24 հուլիսի, 1996:

[333] Տե՛ս «Հայրենիքի ձայն», 6 ապրիլի, 1993:

Ամերիկահայությանը ամերիկյան կյանքի մեջ ներգրավելու, միաժամանակ հայությանը պահպանելու նպատակով 1986 թ. ստեղծվեց ՀԲԸՄ-ի Նախագահական ակումբը: Ակումբի համանախագահներ, ամերիկահայ հայտնի հասարակական գործիչներ, ազգային բարերարներ Ռիտա և Վարդգես Պալյանները Միության հովանավորության ներքո 1987 թ. հիմնել էին երիտասարդական ծրագիր, ըստ որի ամեն տարի 30-35 երիտասարդներ իրենց մասնագիտությամբ երկու ամիս անվճար աշխատանքային փորձառություն էին ձեռք բերում Նյու Յորքի առաջնակարգ ֆիրմաներում: Նախագահական ակումբը համալսարանական ուսանողներ էր ուղարկում Լոս Անջելեսի ամերիկյան համալսարաններում սովորելու և ակտիվորեն համագործակցում էր Վաշինգտոնում նման աշխատանք տանող Ամերիկայի հայկական համագումարի հետ: 1989 թ. Նախագահական ակումբը գործակցելով «Ալեք և Մարի Մանուկյան» մշակութային հիմնադրամի հետ՝ հիմնեց և հովանավորեց Միչիգանի համալսարանի հայոց լեզվի Ամառային ինստիտուտը Երևանում[334]: Ծրագրի մասնակիցներն էին Միչիգանի համալսարանի հայագիտական երկու ամբիոնների՝ «Ալեք Մանուկյանի անվան հայոց արդի պատմության» և «Մարի Մանուկյանի անվան հայոց լեզվի ու գրականության» և այլ համալսարանների հայազգի և ոչ հայ ուսանողներն ու մասնագետները, որոնք Երևանում երկու ամսում ուսանում էին արևմտահայերեն և արևելահայերեն, ինչպես նաև հանդիպումներ ունենում իրենց գործընկերների հետ, մոտիկից ծանոթանում հայ մշակույթին և հասարակական կյանքին: Հայաստանում տիրող տնտեսական և քաղաքական ծանր կացության հետևանքով ծրագիրը ընդմիջվեց 1993-1996 թթ., այնուհետև վերսկսվեց 1997 թ.՝ արևմտահայերենին ավելացնելով նաև արևելահայերենը[335]: Այնուհետև Միչիգանի համալսարանի «Հայկական ուսումնասիրությունների ծրագրի» կենտրոնը որոշեց 1999 թ. Հայաստանում անցկացվող ամառային կուրսերում արևելահայերենից ու արևմտահայերենից բացի կազմակերպել նաև դասական գրաբարի ուսուցում:

[334] Տե՛ս **Մելքոնյան Էդ.,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, էջ 522:

[335] Տե՛ս «Ազգ», 17 փետրվարի, 1999:

Հայաստանի կրթությանը զարկ տալուն էր ուղղված Երևանում Հայաստանի ամերիկյան համատեղ համալսարան (ՀԱՀ) հիմնելու ՀԲԸՄ-ի նախաձեռնությունը: ՀԱՀ-ը հիմնվեց 1991 թ. ՀԲԸՄ և ՀՀ բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի նախաձեռնությամբ և Կալիֆոռնիայի համալսարանի ակադեմիական հովանավորությամբ: Համալսարանի ֆինանսավորումը ստանձնեց Բարեգործականը: ՀԱՀ-ի առաքելությունն էր ամերիկյան կրթական համակարգին և մակարդակին համապատասխան կրթություն տալ Հայաստանի և այլ երկրների ուսանողներին: Շրջանավարտներից ոմանք իրենց կրթությունը կարող էին շարունակել ԱՄՆ-ում: ՀԱՀ-ի ութ բաժիններում տարեկան ուսուցանում էր շուրջ 350 ուսանող, իսկ շրջանավարտների թիվը 1000-ից ավելի էր[336]:

1995 թ. Լոս Անջելեսում ՀԲԸՄ-ն հիմնադրեց «Երիտասարդ արհեստավարժներ» կազմակերպությունը, որի ավելի քան 500 անդամներն ԱՄՆ-ի, Կանադայի և Եվրոպայի համալսարանների հայազգի շրջանավարտներ էին և որոնք հայաստանյան ծրագրերի իրագործման համար կազմակերպում էին համերգներ, դասախոսություններ, հավաքներ, գրքի ընթերցումներ, դրամահավաքի ձեռնարկներ[337]: Նրանք դառնալու էին ՀԲԸՄ-ի ապագայի գործիչներ ու ղեկավարներ:

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում սփյուռքահայ մշակութային միություններից աչքի ընկան «Ֆրանսահայ երիտասարդական» (ԺԱՖ, French Armenian Youth Association, ZHAF)[338] և «Ֆրանսահայ մշակութային» (French-Armenian Cultural Association, USFAF)[339] միությունները, որոնց նպատակն էր ֆրանսահայերին և ֆրանսիացիներին ծանոթացնել հայ բազմադարյան պատմությանն ու մշակույթին, ամրապնդել ֆրանս-հայկական բարեկամությունը: Սերտորեն համագործակցելով միմյանց հետ՝ նրանք կազմակերպում էին միջոցառումներ՝

[336] Տե՛ս **Մելքոնյան էդ.,** Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, էջ 528:

[337] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 57:

[338] Հիմնվել է 1945 թ. աշնանը ֆրանսիական դիմադրական շարժմանը մասնակցած հայ երիտասարդների ջանքերով:

[339] Ստեղծվել է 1949 թ., Փարիզում:

նվիրված հայ ժողովրդի պատմության նշանակալի իրադարձություններին, հայ արվեստի և մշակույթի երիտասարդական փառատոներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, հայ մշակույթի օրեր, կինոփառատոներ, Հայաստանի Հանրապետության գեղարվեստական խմբերի ու մենակատարների հյուրախաղեր մի շարք երկրներում և այլ միջոցառումներ: Շոշափելի է այս միությունների ավանդը հայրենիքի հետ կապերի ամրապնդման և ընդլայնման գործում:

1990 թ. փետրվարի 17-18-ին Մարսելում կայացած «Ֆրանսահայ մշակութային միության» 15-րդ համագումարի հիմնական նպատակն էր ընդլայնել միության շարքերը: Չնայած 320 հազարանոց հայ համայնքի համեմատ «Ֆրանսահայ մշակութային միության» թիվը մեծ չէր (Միության շարքերում հաշվվում էր մոտ 800 անդամ), սակայն նրա ազդեցությունը հայ համայնքի վրա զգալի էր[340]: Համագումարում քննարկվեցին կենտրոնի կազմակերպական կառուցվածքի առավել ճկուն համակարգի ստեղծման, աղետից տուժած Հայաստանին օգնության հատկացման հարցեր, հաստատվեցին իրենց արդարացրած նախկին աշխատանքային ձևերը, մասնավորապես տուրիստական խմբայցերը Հայաստան, Հայաստանից առանձին գործիչների և անհատների հրավիրումը, Ֆրանսիայում հանգստի համար հայ երեխաների ընդունումը և այլն:

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում էական դեր էր կատարում հատկապես 1947 թ. Բեյրութում հիմնված «Թեքեյան մշակութային միությունը» (ԹՄՄ, Tekeyan Cultural Association), որի նպատակն էր պահպանել հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը, ստեղծել հայկական դպրոցներ, պատրաստել ազգային գործիչներ և օժանդակել հայագիտությանը նվիրված ուսանողներին: Միությունը օգտվում էր Հյուսիսային Ամերիկայի էջմիածնական առաջնորդարանի հովանավորությունից և հանդիսանում էր ՌԱԿ-ի պատգամախոսը: ԹՄՄ սփյուռքահայ համայնքներում պարբերաբար կազմակերպել է հայրենի արվեստագետների և ստեղծագործական խմբերի բազմաթիվ ցուցահանդեսներ, ելույթներ ու մշակութային փառատո-

[340] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 7, գ. 304, թ. 3:

ներ: Սփյուռքում պահում էր երկու հայկական դպրոց (Բեյրութի Վահան Թեքեյան և Լոս Անջելեսի Արշակ Տիգրանյան), իսկ Հայաստանում գործում էին Վ. Թեքեյանի անունը կրող չորս դպրոց (Երևան, Գյումրի, Ստեփանավան, Արագածոտնի մարզի Կարբի գյուղ):

Միությունը 1965 թվականից հաստատել է Հայկաշեն Ուզունյանի անվան գրական մրցանակը, որը շնորհվում էր սփյուռքահայ գրողներին՝ նրանց նոր հրատարակությունների համար: Հայաստանի գրողների վիճակը հաշվի առնելով՝ Հ. Ուզունյանը որոշեց 1996 թվականից բարոյական ու նյութական օգնություն ցույց տալու նպատակով գրական մրցանակներ հանձնել հիմնականում Հայաստանի գրողներին ու բանաստեղծներին:

1983 թ. ԹՄՄ վարչության անդամներ Ռիտա և Վարդգես Պալյանները հիմնել են «Ռիտա և Վարդգես Պալյան» մամուլի ամենամյա մրցանակ, որը հիմնականում շնորհվում էր սփյուռքահայ այն լրագրողներին, ովքեր իրենց աշխատանքով սատարում էին հայ ժողովրդին, նպաստում նրա պատմության, մշակույթի տարածմանը: Այս մրցանակը առաջին անգամ հայաստանյան լրագրողներին հանձնվեց 1995 թվականից: Իր հերթին՝ Հայաստանի ԹՄՄ-ն էլ հանձնում էր 1998 թ. սահմանված «Ադամանդակուռ ոսկե Արարատ» պատվո նշանը, որը շնորհվել է բարոնուհի Քերոլայն Քոքսին (Անգլիա) և Հաբեթ Թորոսյանին (ԱՄՆ), ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանին, դուդուկահար Ջիվան Գասպարյանին՝ «Հայ մշակույթի տարածման և զարգացման գործում ակնառու ծառայությունների համար»[341]:

ԹՄՄ-ը 1990 թվականից իր մասնաճյուղը հաստատեց նաև Հայաստանում: Այն սկզբնական շրջանում հովանավորում էր ՌԱԿ-ը: ՀԹՄՄ-ի նպատակն էր աջակցել ազգային մշակույթի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը որպես հայ ժողովրդի գոյատևման և առաջադիմության կարևորագույն գործոն: Մասնաճյուղեր է հիմնել Գյումրիում, Գորիսում, Մասիսում և Շուշիում: 1997 թվականից Երևանում Սփյուռքի ռամկավարների

[341] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 664: Տե՛ս նաև Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 614:

նվիրատվությունների շնորհիվ սկսեց գործել Թեքեյան մշակութային կենտրոնը, որը դարձավ մշակութային կարևոր օջախ[342]:

1994 թ. դրությամբ ԹՄՄ-ն ամբողջ աշխարհում, նաև Հայաստանում և Արցախում, ուներ 51 մասնաճյուղ՝ իր 13 մշակութային կենտրոններով, մամուլով ու դպրոցներով[343]: Մինչև 1997 թ. վերջերը ԹՄՄ-ի Սփյուռքի կենտրոնական մարմինը Հայաստանի ԹՄՄ-ին ֆինանսական աջակցություն էր ցույց տալիս, հետո դադարեցրեց հատկացումները: ՀԹՄՄ-ն հրատարակում էր գրքեր, կազմակերպում համերգներ, ցուցահանդեսներ, Սփյուռքի կրթօջախների համար նկարահանում տեսաֆիլմեր, Երևանում հրավիրում արտերկրի երգահանների հեղինակային համերգներ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ արշավախումբ կազմակերպում Արցախի և պատերազմից տուժած այլ շրջանների պատմամշակութային հուշարձանները վերականգնելու համար, հովանավորում էր որբ երեխաներին և ուսանողներին, կազմակերպում նրանց կրթական հանգիստը և այլն:

ԹՄՄ-ն Սփյուռքի ամենահայտնի և հեղինակավոր կազմակերպություններից էր, որն իր գոյության ավելի քան վեց տասնամյակի ընթացքում անգնահատելի դեր է կատարել և շարունակում էր կատարել գրական-մշակութային և կրթական ասպարեզներում, հայապահպանության գործում ընդհանրապես: Մեծ է «Թեքեյան մշակութային միության» ներդրումը Հայաստանի մշակութային կյանքի զարգացման գործում, ինչպես նաև սփյուռքահայության կյանքում, հատկապես Հայրենիք-Սփյուռք փոխճանաչողության և մշակութային առնչությունների բնագավառում: «Թէքէեան մշակութային միութիւնը իր կազմութենէն 50 տարիներ յետոյ Սփիւռքի մէջ կը մնայ նոյնքան վճռական ինչպէս իր կազմութեան օրը ծառայել հայ մշակոյթին, որպէս միակ միջոցը ազգապահպանման մեր մտասեւեռումներուն եւ ներշնչելու նոր սերունդներուն հաւատամք ու իդեալ՝ հայութեամբ առինքնուած»,- նշել է Հայկաշեն Ուզունյանը հայրենիքում ԹՄՄ 50-ամյակին նվիրված հանդիսության ժամանակ[344]:

[342] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 25:

[343] Տե՛ս **Գրիգորեան Ա.**, Գեղարուեստական բացառիկ երեկոյ,-«Արմենիա», 1995, յունուար, բացառիկ թիւ, էջ 54:

[344] «Ազգ», 14 հոկտեմբերի, 1997:

Մեծ եղեռնից վերապրած հայության մնացորդներին ապազգայնացման վտանգներից փրկելու, նոր սերնդին հայեցի կրթություն տալու և Սփյուռքի ապագա հայ մտավորականներ պատրաստելու նպատակով 1928 թ. մայիսի 28-ին Կահիրեում ՀՅ Դաշնակցության որոշումով հիմնվեց «Համազգային հայ կրթական և մշակութային միություն» (ՀՀԿՄՄ, Hamazkayin Armenian Educational and Cultural Society) մշակութային-կրթական կազմակերպությունը՝ «Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերություն» անունով: Համազգայինը «կը դաւանի Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի իտէալին՝ համոզուած, որ սեփական ու ինքնիշխան հայրենիքի մէջ միայն հայ մշակոյթը կրնայ հասնիլ իր ամբողջական ծաղկումին:

Համազգայինի նպատակն է՝ պահպանել, զարգացնել ու տարածել հայ մշակոյթը՝ Հայաստանի ու համայն հայութեան գոյատեւման առաքելութեամբ»[345]:

Համազգայինի կենտրոնը 1947 թ. փոխադրվել է Բեյրութ: ՀՀԿՄՄ կենտրոնական վարչությանը կից գործում էին կրթական, տնտեսական, հրատարակչական, դասագրքերի, շինարարական, ռադիոժամի հանձնախմբեր: Համազգայինը մի շարք երկրներում ուներ շուրջ 50 մասնաճյուղ[346]:

Հայաստան-արտերկիր մշակութային կապերն ամրապնդելու, փոխադարձ այցելություններ ու մշակութային ծրագրեր մշակելու համար Համազգայինը Հայաստանում ստեղծեց վարչություն (նախագահ՝ Ռ. Դավոյան), որի նախաձեռնությամբ համագործակցության պայմանագրեր կնքվեցին ԵՊՀ-ի և Բեյրութի Հայագիտական բարձրագույն հիմնարկի, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի և Բեյրութի Բարսեղ Կանաչյան երաժշտանոցի միջև (1991 թ.): Հայաստանում գործում էր «Համազգայինի թատրոնը» (ղեկ.՝ Սոս Սարգսյան), Ախալցխայում Համազգայինը հիմնել էր երաժշտական դպրոց, Շուշիում հովանավորում էր Արամ Մանուկյան վարժարանը, Երևանում՝ Խրիմյան Հայրիկի անվան դպրոցը:

[345] Տե՛ս Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւն, Համազգային 75, 1928-2003, Պէյրութ, 2003 (առանց էջակալման):
[346] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 665:

1990 թ. օգոստոսին Աթենքում տեղի ունեցավ Համազգայինի համասփյուռքյան «Ա պատգամավորական ժողովը», ուր որդեգրվեց միության ներկա անվանումը՝ «Համազգային հայ կրթական և մշակութային միություն», և առաջացավ առաջին ընտրովի կենտրոնական վարչությունը[347]: Համազգայինի «Բ պատգամավորական ժողովը» գումարվեց 1994 թ. Հայաստանում՝ Ծաղկաձորում:

Հայագիտությունը զարգացնելու, հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության ուսուցիչներ, նաև խմբագիրներ և հանրային այլ գործիչներ պատրաստելու նպատակով 1974 թ. Բեյրութում հիմնվել է Համազգայինի հայագիտական բարձրագույն հիմնարկը: Հայագիտական հիմնարկի հիշարժան օրերից էր 1991 թ. հունիսի 27-ը, երբ հիմնարկի և ԵՊՀ-ի միջև կնքվեց ուսումնագիտական համաձայնագիր, որի շնորհիվ ԵՊՀ-ն Համազգային հայագիտական բարձրագույն հիմնարկը ճանաչեց որպես հայագիտական բարձրագույն ուսումնական հաստատություն և այն վերցրեց իր հովանավորության ներքո[348]: Տասներեք պարբերությունից բաղկացած համաձայնագիրը նախատեսում էր հիմնարկի և ԵՊՀ-ի միջև կրթական ծրագրերի, դասախոսական կազմերի և ուսանողների փոխանակումներ: Ինչ վերաբերում էր ուսումնական ծրագրերին, այսուհետև Համազգայինի հայագիտական բարձրագույն հիմնարկի ուսումնական ծրագիրը սահմանվում էր երեք տարի (նախկին չորս տարվա փոխարեն), որից հետո շրջանավարտ ուսանողները մեկնում էին Երևան, ուր կրթական երկու տարեշրջանների հետևելուց հետո ստանում էին ԵՊՀ-ի վկայականը[349]: Հայագիտական երկու հաստատությունները համաձայնագրով պարտավորվում էին իրենց գրադարանների միջոցով կատարել մենագրությունների, պարբերականների, մատենագիտական և այլ տեղեկատու նյութերի փոխանակում:

[347] Տե՛ս Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւն-2003: Տե՛ս նաև «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 92:
[348] Տե՛ս Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւն-2003:
[349] Տե՛ս Համաձայնագիրը,-«Կայծեր», 1991, թիվ 2 (25), էջ 26: Տե՛ս նաև Կրթական համագործակցութեան համաձայնագիր,-«Գանձասար», 1991, թիվ 14, Ա տարի, 15 հուլիսի, էջ 21:

Զույգ հաստատությունների համագործակցության արդյունքում հիմնարկում 12 հայրենի մասնագետ դասախոսներ դասավանդեցին գրականություն և պատմագիտություն, տեղի ունեցան գրական և հրատարակչական բնույթի փոխանակումներ, պատրաստվեց միջնակարգի «Ա տարվա» հայոց պատմության դասագիրքը, ինչպես նաև ավելի քան երեսուն ուսանողներ իրենց մասնագիտական կրթությունն ամբողջացրին ԵՊՀ-ում[350]:

1990-ական թթ. վերջերին արդեն լիբանանահայ ու սիրիահայ երեխաների կրթությունն իրականացնելու, հայկական համայնքների համար որակյալ մասնագետներ պատրաստելու համար Հայաստանի առաջատար համալսարաններում ստեղծված էին բոլոր պայմանները, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ապահովել էր անգամ անվճար ուսմամբ առանձին տեղեր:

Համազգայինի հայաստանյան գրասենյակը սերտ կապեր ուներ հատկապես Լիբանանի, Սիրիայի, Ավստրալիայի, Ուրուգվայի և Արևմտյան Ամերիկայի շրջանային վարչությունների հետ, համագործակցում էր 1999 թվականից հաստատված «Յակոբ Կարապենց» հիմնադրամի հետ (Բոստոն): Նույն թվականից Համազգայինի անունով կրթաթոշակներ էին հատկացվում Հայաստանի Հանրապետության որոշ ուսանողների:

Համազգայինի կենտրոնական վարչությունը ընդառաջելով տնտեսական ծանր պայմաններում գտնվող հայաստանյան մտավորականությանը օգնելու հայրենիքի կոչին՝ 1993 թ. ապրիլին որոշում կայացրեց հաստատել «Հայրենի մտավորականության ֆոնդ», որը կոչված էր օգնելու Հայաստանի գրողներին, բանաստեղծներին, պատմաբաններին և գիտական բոլոր մարզերի մտավորականներին, նպաստելու նրանց գիտական գործերի հրատարակությանը[351]: Ֆոնդի մրցանակներին արժանացան մի շարք գրողներ, ֆոնդի ֆինանսական հատկացումներով լույս տեսան նրանցից շատերի մենագրությունները, բանաստեղծությունները:

[350] Տե՛ս Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւն-2003:
[351] Տե՛ս «Ազատամարտ», 9-15 սեպտեմբերի, 1994:

1994 թ. Համազգայինի ընդհանուր ժողովը ստեղծեց «Համազգայինի ուսանողական մշակութային հավաքը», որի հիմնական նպատակը հայ համալսարանականներին հայկական մթնոլորտում ի մի հավաքելն էր, նրանց ազգային անցյալն ու ներկան, պատմությունն ու ավանդույթները, հայ երիտասարդության առջև ծառացած սոցիալական և ազգային խնդիրները ներկայացնելը: Համազգայինի ուսանողական մշակութային հավաքները 1994-2001 թթ. տեղի ունեցան Լիբանանում՝ Սփյուռքի հայաշատ կենտրոններից մեկում:

Համազգայինի հայաստանյան գրասենյակը նաև իր օժանդակությունը բերեց «Մեկ ազգ, մեկ հայրենիք» փառատոնի և Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700-ամյակի միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին, ինչպես նաև արտերկրի Համազգայինի թատերախմբերը, պարախմբերը, երգչախմբերը հայրենի հասարակությանը ծանոթացնելու գործին:

3.3. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Առավել սերտացան Հայրենիք-Սփյուռք գրական կապերը:

Հայրենիքի հետ սերտ առնչություններ ունեին սփյուռքահայ նշանավոր բանաստեղծներ Վահրամ Հաճյանը, Ալիսիա Կիրակոսյանը, Ազատ Մաթյանը, Զարեհ Խրախունին, Զահրատը, Իգնա Սարըասլանը, Համբիկ Մարտիրոսյանը, Վարանդը (Սուքիաս Քյուրքչյան) և այլք, արձակագիրներից՝ Սուրեն Ասատրյանը, Լևոն Մինասյանը, Պողոս Սնապյանը, Վահե Օշականը, Թորոս Թորանյանը, Պեպո Սիմոնյանը, Ռուբեն Հովհաննիսյանը (Ռուբեն Բէն), Խորեն Արամունին (Քեշիշյան) և այլք: Նրանցից շատերը հանդես էին գալիս դասախոսություններով Հայաստանի Հանրապետության և Արցախի մի շարք հաստատություններում: Հայաստանի գրողների միության անդամներ էին բանաստեղծուհիներ Անուշ Նագգաշյանը, Դայանա Տեր-Հովհաննիսյանը, Վեհանուշ Թեքեյանը, Շուշիկ Տասնապետյանը, գրող և թարգմանիչ Ռաֆֆի Քեբաբջյանը (նա նաև Հայաստանի գրողների միության լիազոր ներկայացուցիչն էր Գերմանիայում), ռե-

ժիսոր, դերասան, գրող և թարգմանիչ Արմեն Գոդելը, Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի խմբագիր, գրող և հրապարակախոս Ռոպեր Հատտեճյանը և այլք:

Երաժշտության բնագավառում ևս Սփյուռքի և հայրենիքի միջև հաստատվեց ջերմ համագործակցություն: Օտար ափերում ապրող հայրենակիցներին հայկական ազգային երգերով ապրեցնելու, նրանց ոգի և հավատ ներշնչելու գործում շարունակում էին վիթխարի աշխատանք կատարել Լոս Անջելեսի «Սիփան» (ստեղծվել է 1979 թ., ղեկավար՝ անվանի երաժշտագետ, երգահան, խմբավար, գրող և լրագրող Հենրիկ Անասյան), Փարիզի «Սիփան-Կոմիտաս» (երկարամյա ղեկավար՝ ֆրանսահայ կոմպոզիտոր, խմբավար Կարպիս Ափրիկյան), Մարսելի «Սահակ-Մեսրոպ» և Նիսի «Սայաթ-Նովա» (հիմնադիր՝ Խաչիկ Ելմազյան), Բուենոս Այրեսի «Արաքս» (ստեղծվել է 1957 թ., ղեկավար՝ արգենտինահայ անվանի երգահան և խմբավար Ժան Ալմուխյան) երգչախմբերը:

Անցյալի գաղափարական կապանքների փլուզումը հնարավորություն ընձեռեց սփյուռքահայ մեր նշանավոր ստեղծագործ անհատներին վերադառնալ հայրենիք և զարկ տալ նրա մշակութային վերելքին: 17-ամյա ընդմիջումից հետո 1991 թ. նորից Երևանի օպերային թատրոնի գլխավոր նվագավարի իր պաշտոնին անցավ դիրիժոր Օհան Դուրյանը: ՀՀ մշակույթի նախարարի հրավերով Երևան տեղափոխվեց և 1997 թ. ապրիլին Հայաստանի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր նշանակվեց ամերիկահայ երաժիշտ-խմբավար Արամ Ղարաբեգյանը, որի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում նորաստեղծ նվագախումբը հասավ մեծ նվաճումների[352]:

Հայրենի երաժշտության զարգացմանը իրենց նպաստն են բերել ամերիկահայ նշանավոր կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը, Ա. Խաչատրյանի գրեթե բոլոր դաշնամուրային երկերի լավագույն մեկնաբան, պոլսահայ դաշնակահար, կոմպոզիտոր Շահան Արծրունին, Վիեննայի օպերային թատրոնի մեներգչուհի, բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր Սոնա Ղազարյանը, Զուլիարդի կոնսերվատորիայի մագիստրոս դաշնակահարուհի ամերիկահայ Լյուսի Իշխանյանը, պոլսահայ դաշնակահար Սայաթ Զամանը, ֆրանսահայ ճանաչված դիրիժոր Նվարդ Անդրեասյանը, ամերիկահայ կոմպոզիտոր Վազգեն Մուրադյանը, Կանադայի բարձրագույն շքանշանի արժանացած սիմֆոնիկ նվագավար Ռաֆֆի Արմենյանը, ամերիկահայ Մարիան Գետիկյանը, արգենտինահայ հայտնի կոմպոզիտոր Ալիսիա Թերզյանը, ամերիկահայ դաշնակահար, կոմպոզիտոր Վաչե Մանգրյանը, ֆրանսահայ խմբավար Ալեքսանդր Սիրանոսյանը և այլք:

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի գործունեության կարևորագույն սկզբունքներից մեկը արտասահմանյան երաժշտական գործիչների հետ համագործակցելն էր: 1992 թ. Լորիս Ճգնավորյանի կազմակերպած սփյուռքահայ խմբավարների փառատոնին մասնակցեցին կանադահայ սիմֆոնիկ խմբավար Հարութ Ֆազլյանը, ամերիկահայ խմբավար Զորջ Փեհլիվանյանը, կանադահայ դիրիժոր Նորայր (Նուրհան) Արմանը և ուրիշներ:

1993 թ. ՀԲԸՄ հովանավորությամբ Երևանում կայացած Ա. Խաչատրյանի 90-ամյակին նվիրված փառատոնին իրենց մասնակցությունը ցուցաբերեցին Զ. Փեհլիվանյանը, Լևոն Գրիգորյանը, Նորայր Արմանը, որոնք ղեկավարեցին Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը: Հյուրախաղերով հայրենիքում քանիցս հանդես եկան օպերային երգչուհի Էմմա Պապիկյանը, Վիեննայի Շտատս օպերային թատրոնի մեներգչուհի Հասմիկ Պապյանը, իրանահայ երգչուհի, Փարիզի կոնսերվատորիայի պրոֆեսոր Հերմինե Երիցյանը և այլք:

Հայրենիք-Սփյուռք առնչություններում անգնահատելի է հատկապես աշխարհահռչակ երգիչ, դերասան, բազմաթիվ երգերի հեղինակ Շառլ Ազնավուրի կատարած դերը: Շ. Ազնավուրը նաև բանաստեղծ է, բարեգործ և հասարակական գործիչ: Նա եղել է ՀՀ հատուկ հանձնարարություններով Հայաստանի դեսպան ՅՈՒՆԵՍԿՕ-ում: Այս պաշտոնում նա ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդհանուր տնօրենի ուշադրությունն էր հրավիրել Հայաստանի բազում կարիքների վրա, հատկապես կրթության բնագավառում: Հայրենիքում նրա անունով են կոչվում հրապարակներ, փողոցներ, դպրոցներ: Հայրենիքում Շ. Ազնավուրի երկար սպասված բարեգործական համերգը տեղի ունեցավ 1996 թ. սեպտեմբերի 20-ին

[352] Տե՛ս «Ազգ», 24 հունիսի, 1998:

և 21-ին, որը նվիրված էր Հայաստանի անկախության 5-րդ տարեդարձին[353]:

Տաղանդավոր հայ երեխաներին հայտնաբերելու, նրանց երաժշտական հակումները խրախուսելու և ամբողջ աշխարհին ներկայացնելու նպատակով բուլղարահայ ալտահար Հովհաննես Անաստասյանը 1989 թ. Բելգիայում ստեղծեց «Ամադեուս» հայկական մշակութային հաստատությունը: Հիմնադրումից երկուս ու կես տարվա ընթացքում «Ամադեուսի» ջանքերով կազմակերպվեցին 30 համերգ և 9 հեռուստատեսային երաժշտական հաղորդումներ[354], որոնցում հայ երեխաներն աչքի ընկան իրենց տաղանդով: Մրցույթը գնալով ընդգրկեց Հայաստանի մարզերը: 1992-1997 թթ. ընթացքում թվով 10 «Ամադեուս» անցկացվեց Հայաստանի տարբեր քաղաքներում[355]:

Սփյուռքահայ երաժիշտների ու կատարողների՝ հայրենիք այցերից բացի, հայրենիքի ստեղծագործ ուժերը ևս պարբերաբար հանդես էին գալիս արտերկրում: Սփյուռքահայության համար բացառիկ էին հայրենի գեղարվեստական համույթների գրեթե մշտական ներկայությունը, որոնք հայության համար վճռական այդ օրերին հայ բազմադարյան մշակույթը ծաղկեցնում էին գաղութահայ բեմերի վրա:

Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչություններում կարևոր տեղ է զբաղեցնում թատերական կյանքը: Այս առումով նշանակալից էր 1991 թ. մայիսի 15-26-ը Երևանում սփյուռքահայ թատրոնների անդրանիկ փառատոնը, որն իրադարձություն էր ոչ միայն հայրենիքի, այլև Սփյուռքի վերջին տարիների մշակութային կյանքում[356]: Տասներկու օր տևած փառատոնի ընթացքում Երևանի, ապա Գյումրիի և Վանաձորի հազարավոր բնակիչներ դիտեցին մի շարք թատերական ներկայացումներ: Սփյուռքահայ թատրոնների փառատոնին հրավիրված 12 թատերախմբերից

[353] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 սեպտեմբերի, 1996:
[354] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 154, թ. 5:
[355] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 հոկտեմբերի, 1997:
[356] Տե՛ս Սփիւռքահայ թատրոններու անդրանիկ փառատօնը Երեւանի մէջ,-«Յուշարար-միութիւն», 1991, թիւ 8, 15 հոկտեմբերի, Նոր շրջան, 10-րդ տարի (78), էջ 25:

մասնակցեցին միայն 6-ը[357]: Դրանք էին՝ ԱՄՆ-ից Հայաստանի թատերական գործիչների միության պատվավոր անդամներ Նորա Արմանի և Ժիրայր Փափազյան զույգը՝ «Երկու դերասանի թատրոնը», Փարիզի Չոլաքյան մենաթատրոնը, Հալեպի Ադամյան թատերախումբը՝ ՀԲԸՄ-ի ՀԵ Ընկերակցության թատերախումբը, Իրանի «Փորձնական թատրոնը», Մոսկվայի հայկական դրամատիկ թատրոն ստուդիան, սփյուռքահայ ուսանողների Երևանում գործող «Բեմ» թատրոն-արվեստանոցը: Փառատոնի «Վահրամ Փափազյան» գլխավոր մրցանակը շնորհվեց Լոս Անջելեսի «Վարդան Աճեմյան» թատերախմբին: Հասույթը հատկացվեց հայրենիքի վերակառուցման աշխատանքներին:

Սփյուռքահայ փառատոնի նպատակն էր փոխշփում ստեղծել սփյուռքահայ թատրոնների միջև, կապ հաստատել հայ համայնքների և հայրենիքի միջև: Նախատեսվեց փառատոնը դարձնել ավանդական՝ երեք տարին մեկ Հայաստանում հավաքել սփյուռքահայ լավագույն թատերախմբերին, սակայն հաջորդ տարիներին այլևս համանման փառատոն հայրենիքում չկայացավ:

Ողջ Սփյուռքի մասշտաբով զարգանում էր նաև հայկական կինոարվեստը: Հանրությանը հայկական ֆիլմարվեստին ծանոթացնելու, հայկական ֆիլմերի մասնակցությունը միջազգային կինոփառատոներին ապահովելու համար 1991 թ. Լոս Անջելեսում Զ. Արևշատյանի և Ա. Պետրոսյանի նախաձեռնությամբ հիմնվեց Հայկական ֆիլմարվեստի միությունը, որը ստանձնեց Երևանի Հայֆիլմ ընկերության հեղինակային իրավունքների պաշտպանությունը[358]:

Հայկական ֆիլմարվեստի զարգացմանն իրենց նպաստն են բերել ֆրանսիական ակադեմիայի ամենահին անդամ, «Գոնկուր» մրցանակի դափնեկիր, սփյուռքահայ նշանավոր կինոռեժիսոր Անրի Վեռնոյը (Աշոտ Մալաքյան), կանադահայ նշանավոր կինոռեժիսոր, դրամատուրգ և թատրոնի գլխավոր ռեժիսոր Ատոմ Էգոյանը, նշանավոր լուսանկարիչ, գրող, բեմադրիչ Փոլ Գալինյանը, Հայոց ցեղասպանությունը վերապրողներից Մայքլ Հակոբ-

[357] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի, 1991:
[358] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 66:

յանը, ամերիկահայ հանրահայտ դերասանուհի Նորա Արմանին (էքսերջյան, 1991-1993 թթ. կինոյի գծով Հայաստանի մշակույթի նախարարության ներկայացուցիչ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում), կինոռեժիսոր Դոն Ասկարյանը (1982-1993 թթ. ստեղծագործել է Բեռլինում), ավստրիահայ նշանավոր պատմաբան, կինոգործիչ, կինոռեժիսոր Արտեմ Օհանջանյանը, ֆրանսահայ դերասան և ֆիլմարտադրող Սերժ Ավետիքյանը և այլք:

Հայրենիքի հետ սերտ կապ էին պահպանում նաև սփյուռքահայ նկարիչները: Սփյուռքահայ կերպարվեստագետներից հայրենի նկարչության զարգացմանը իրենց նպաստն են բերել ամերիկահայ ճանաչված նկարիչներ Լևոն Ժամկոչյանը և Մարկոս Գրիգորյանը, ֆրանսահայ նշանավոր նկարիչներ Գառզուն (Գառնիկ Զուլումյան), Ռիշար Ժերանյանը, Ժանսեմը (Հովհաննես Սեմերջյան) և այլք: Նրանք իրենց նկարների ցուցահանդեսներից ստացված հասույթները հատկացրեցին աղետից տուժած հայրենիքի վերականգնմանը: Հայրենիքում բացվեցին սփյուռքահայ մի շարք նկարիչների՝ Խաչատուր Գևորգյանի, Զարեհ Մութաֆյանի, Սմբատ Կյուրեղյանի, Կարինե Հակոբյանի, Վերժին Շապճյանի (Վերշա), Վարազ Սամվելյանի, Ժորժ Հակոբյանի, Արշակ Գառնիկյանի, Մայիս Մխիթարյանի, Աշոտ Զորյանի, Սինարի (Մինասյան), Ռազմիկ Հաջիկյանի, Վազգեն Թութունջյանի, Հարություն Պզտիկյանի, Գրիգոր Պետիկյանի և այլոց ցուցահանդեսները:

Հայրենիք-Սփյուռք առնչություններն աշխույժ էին նաև ճարտարապետության բնագավառում: Հայաստանի ճարտարապետների միության անդամ դարձան մի շարք սփյուռքահայեր, որոնցից էին ֆրանսահայ ճարտարապետներ Էդվարդ Սարգսյանը, Անդրանիկ Զաքարյանը, Մանուել Դեյրմենջյանը, Վարուժան Կյուրեղյանը, Ալեն Դարոնյանը: Նրանք 1988 թ. երկրաշարժից հետո իրենց ջանքերը ներդրեցին Հայաստանի վերակառուցման գործում, նաև մեծ աշխատանք կատարեցին Հայաստանում ճարտարապետական արվեստն աշխուժացնելու ուղղությամբ:

1976 թ. Միլանում տեղի հայերի և իտալական ճարտարապետների նախաձեռնությամբ ստեղծված «Հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման (ժամանակագրության) կենտրոնը» (Center for Research and Documentation of Armenian

Culture) Ադրիանո Ալպագո Նովելլոյի նախագահությամբ հրատարակում էր գրքեր, կազմակերպում ցուցահանդեսներ, գիտական արշավախմբեր՝ հուշարձանների ուսումնասիրման ուղղությամբ ինչպես Հայաստանում, այնպես էլ պատմական Հայաստանի տարածքում, անցկացնում գիտաժողովներ[359]: Կենտրոնը հայկական մշակութային արժեքների պահպանման և վերականգնման ծրագիրն իրականացնում էր համագործակցելով ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության հետ: Ծրագրի շրջանակներում կատարվեցին Շիրակի մարզի Մարմարաշեն և Երերոցք վանական համալիրների տարածքների ուսումնասիրում, պեղումներ և վերականգնման աշխատանքներ: 1999 թվականից կենտրոնին սկսեց աջակցություն ցուցաբերել նաև Իտալիայի արտաքին գործերի նախարարությունը[360]:

1988 թ. աղետալի երկրաշարժից հետո սփյուռքահայ երիտասարդական զանազան կազմակերպություններ և անհատներ վերականգնողական աշխատանքներ կազմակերպեցին աղետի գոտում: Դրանցից էր 1977 թ. Փարիզում ստեղծված համահայկական «Երկիր և մշակույթ» (ԵՄԿ, "Land and Culture" organization) կազմակերպությունը, որի նպատակն էր հայկական ճարտարապետական հուշարձանների վերականգնումն ու պահպանումը, հայ մշակութային ժառանգության պահպանումը և ազգային ինքնագիտակցության վերածնումը սփյուռքահայ երիտասարդների մեջ: 1991 թ. կազմակերպությունը ցանկություն հայտնեց վերականգնել 1988 թ. երկրաշարժից ավերված Սպիտակի շրջանի Գոգարան գյուղի եկեղեցին, որի բացումը տեղի ունեցավ 1996 թ.: Եկեղեցու վերաշինությունից հետո կազմակերպությունը մասնակցեց Տաթևի Ս. Մինաս եկեղեցու նորոգմանը, ինչպես նաև հանձն առավ Սաղմոսավանքի ամբողջական նորոգությունը: Աշխատանքներին հետևում էր Հայաստանի հուշարձանների պահպանության վարչությունը: Արցախում ԵՄԿ-ն վերաշինեց Շուշիից ներքև գտնվող Քարինտակ գյուղի մշակութային տունը,

[359] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 94, թ. 2-3:

[360] Տե՛ս Տեսի զերկիրն Իտալիոյ, Հայ-իտալական բարեկամության օրեր (2005 թ. հոկտեմբեր-նոյեմբեր), Ե., 2005, էջ 175:

դպրոցը, եկեղեցին: ԵՄԿ-ն Հայաստանում պաշտոնապես գրանցվեց 1994 թ. ապրիլին[361]:

Մշակույթի բնագավառը Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման գործոններից է: Դրանով էր պայմանավորված «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոների անցկացումը, որոնց նպատակն էր Հայաստանի և Սփյուռքի հոգևոր-մշակութային օջախների միջև կապերի հաստատումն ու համագործակցությունը, գրողների և արվեստագետների կենդանի հաղորդակցությունը, նաև մշակութային ու սպորտային բազմաձև միջոցառումների անցկացմամբ երիտասարդությանը Մայր հայրենիքի առօրյային ու կյանքին մասնակից դարձնելը: Փառատոները համայն հայությանը համախմբելու միտում ունեին, ուստի միջոցառումներն ընդգրկում էին ոչ միայն Հայաստանն ու Արցախը, այլև Սփյուռքի բոլոր համայնքները:

ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ 1999 թ. ապրիլից մեկնարկեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ»•համահայկական բաց փառատոնը ("One Nation, One Culture" Pan-Armenian Cultural Festival), որը համայնքների մշակութային կյանքի զարգացումը առաջին հերթին հարաբերում էր հայրենիքի հետ կենդանի շփումը խթանելով: Փառատոնի շրջանակներում անցկացվեցին Կուբկովիչ ամուսինների (Գերմանիա) «Արարատից Մուսալեռ» խորագրով լուսանկարների ցուցահանդես, միջազգային գիտաժողով «Հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման և պահպանության խնդիրները» թեմայով, Հայաստանի և Արցախի նկարիչների ցուցահանդես, «Աթանյան» գեղագիտական կենտրոնի (հիմնադրվել է Լոս Անջելեսում 1994 թ. սեպտեմբերին) երեխաների ստեղծագործությունների ցուցահանդես, «Չուգասզյան» երգի համույթի (ԱՄՆ) և «Անի» պարախմբի (ԱՄՆ) համերգներ Հայաստանում և Արցախում, կինոռեժիսոր Փոլ Գալինյանի (ԱՄՆ) «Սարոյան մարդը. գրողը» ֆիլմի ցուցադրումը Հայաստանում և Արցախում, Հայաստանի ու Սփյուռքի նկարիչների մասնակցությամբ գիտաժողով Ջերմուկում, «Գերմանիկ Վասպուրական» մշակութային միության (Հալեպ) հայկական տարազների ցուցահանդես Հայաստանում և Արցախում և այլն: Փառատոնի ծրագրով 1999 թ. ապրիլից-նոյեմբեր ընկած ժամանակահատվածում հայրենիք այցելեցին և իրենց արվեստը հայրենակիցներին ցուցադրեցին 500 սփյուռքահայ արվեստագետներ[362]:

[361] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 հունիսի, 2000:

2000 թ. ստեղծվեց ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության Սփյուռքի հետ համագործակցության վարչությունը, որը էական դեր կատարեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնի կազմակերպման և իրականացման գործում: Փառատոնի շրջանակներում նախարարությունը և ԱԳՆ Սփյուռքի հետ կապերի գործակալությունը Երևանում կազմակերպեցին «Գիրք-2000» համահայկական ցուցահանդեսը, Պոլսի Պատրիարքարանի համատեղ ջանքերով 2000 թ. առաջին անգամ անցկացվեցին պոլսահայ մշակութային օրեր, հայրենիքում հանդես եկավ արգենտինահայ համայնքի «Մասիս» պարախումբը:

***

1988 թ. Արցախյան շարժումը, Ռուսաստանում և նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ժողովրդավարացման ընդհանուր գործընթացները առաջ բերեցին հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության վերելք ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նոր պայմաններում Ռուսաստանում և ԱՊՀ-ում բնակվող հայությունը սկսեց ստեղծել մշակութային ընկերություններ, խմբակներ, հայոց լեզվի կիրակնօրյա դպրոցներ և դասարաններ, եկեղեցական համայնքներ, կազմակերպել հանդիպումներ, ցուցահանդեսներ, անցկացնել Հայաստանի երկրաշարժից տուժածների, Արցախի, Ադրբեջանից հայ փախստականների օգտին միջոցների հավաք և այլն: Փախստականների և աղետից տուժածների զանգվածը առավել սերտորեն կապված լինելով Հայաստանին և հայ մշակույթին՝ նոր բնակության վայրերում հանդես էր գալիս ազգային կյանքի աշխուժացման օգտին:

1990-ական թթ. սոցիալական ծանր կացությունը հարկադրեց հազարավոր հայերի լքել հայրենիքը և բնակություն հաստա-

[362] Տե՛ս նույն տեղում, 13 նոյեմբերի, 1999:

տել հիմնականում Ռուսաստանում: 1993 թ. Ռուսաստանում պաշտոնապես գրանցված էր մոտ 50 հայկական համայնք[363]: Դրանցից ամենաակտիվը Մոսկվայի հայ համայնքն էր (մոտ 50 հազար մարդ)[364]: Մոսկվահայ համայնքը մեծ մասամբ համալրվեց Ադրբեջանից փախստական դարձած հայերով, որին շուտով ավելացան Հայաստանից հեռացած հազարավոր մարդիկ: Նախնական շրջանում Մոսկվայում ստեղծվեցին հայ մշակույթի մի քանի ընկերություններ, կիրակնօրյա դպրոցներ, մեծահասակների ու փոքրահասակների համար հայոց լեզվի ուսուցման խմբակներ, Մոսկվայի հանրակրթական որոշ դպրոցներում հայ երեխաների համար մտցվեց հայոց լեզվի դասընթաց: Մոսկվայի հայ համայնքը զգալի աշխատանք էր կատարում համայնքի հայությանը համախմբելու գործում: Պարբերաբար նշվում էին Հայոց եղեռնի, Հայաստանի առաջին Հանրապետության անկախության օրերը: Համայնքը սերտ կապերի մեջ էր Մոսկվայի հայկական դպրոցներից մեկին կից Հայկական մշակութային կենտրոնի, թիվ 1 պետական հայկական դպրոցի և ՀՀ դեսպանությանը կից կիրակնօրյա հայկական դպրոցի հետ:

Հայության ստվարացումը նոր խնդիրներ դրեց թե՛ քաղաքային իշխանությունների և թե՛ հայ համայնքի ղեկավարության առջև, որոնց լուծմանն էր ուղղված 1990 թվականից ռուսատառ «Արմյանսկի վեստնիկ» և 1994 թվականից «Հյուսիսափայլ» հայատառ թերթերի, նաև ռուսերեն լեզվով «Պրո Արմենիա» ամսագրի լույս ընծայումը:

Ռուսաստանում մշակութալուսավորչական գործունեություն ծավալելու նպատակով 2000 թ. նոյեմբերի 3-ին «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության շուրջ 200 անձից կազմված պատվիրակությունը ժամանեց Հայաստան[365]: Երկրի նախագահին հանդիպելուց հետո, նույն օրն իսկ, ՀՀ ԿԳ նախարարության հետ ստորագրվեց երկու կառույցների համագործակցության արձանագրություն, որը նախատեսում էր ուղղակի կապ հաստատել Հայաստանի և Ռուսաստանի դպրոցների միջև, իրա-

[363] Տե՛ս «Ազգ», 23 հոկտեմբերի, 1993:
[364] Տե՛ս Ананян Ж.А., Хачатурян В.А., Армянские общины России, Е., 1993, с. 114.
[365] Տե՛ս «Ազգ», 4 նոյեմբերի, 2000:

գործել համատեղ կրթական ծրագրեր, փոխանակել դասագրքեր, կազմակերպել ռուսահայ աշակերտների այցեր իրենց պատմական հայրենիք և այլն:

Զարթոնք ապրեց նաև ՌԴ և ԱՊՀ երկրների հայկական համայնքների եկեղեցական կյանքը: 1991 թ. դրությամբ Մոսկվայում գործում էր միակ հայկական եկեղեցին: Որոշ ձգձգումներից հետո 1997 թ. Մոսկվայի քաղաքապետարանը, ընդառաջելով հայերի խնդրանքին, 1,6 հա հող տրամադրեց հայ համայնքին եկեղեցի կառուցելու համար, որի շինարարությունը նախատեսվեց սկսել 1999 թ. գարնանը[366]:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը գրանցվել է 1988 թ. ապրիլին: Նույն թվականին գործել սկսեց համայնքին վերադարձված Սբ. Հարություն հայկական եկեղեցին (նորից օծվել է 1992 թ.), որին կից 1993 թվականից գործող կիրակնօրյա դպրոցը երեք տարի անց վերածվեց ուսումնական կենտրոնի[367]:

Քաղաքային իշխանությունների որոշմամբ 1992 թ. օգոստոսին հայկական համայնքին վերադարձվեց Սանկտ Պետերբուրգի Նևսկի պողոտայի վրա գտնվող հայոց Ս. Կատարինե մայր եկեղեցին: 2000 թ. հուլիսի 12-ին եկեղեցու վերաբացման կապակցությամբ Սանկտ Պետերբուրգ ժամանեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն, որն առընթերականներ ունենալով Ռուսաստանի թեմի առաջնորդ Տիրան արք. Կյուրեղյանին և ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Վաչե արք. Հովսեփյանին, օծեց եկեղեցին[368]: Այսպիսով, Սանկտ Պետերբուրգի հայերի աջակցությամբ 10 տարվա ընթացքում վերականգնվեցին գրեթե ավերակ դարձած հայկական երկու եկեղեցիները, կյանքի կոչվեց հովվատունը, ստեղծվեցին բարեգործական բազմաբնույթ ծառայություններ, հրատարակվեց պարբերաթերթ, բացվեց պատկերասրահ, հայեցի դաստիարակության կենտրոն, տեղի հայերին միավորող հայ երիտասարդաց միություն, գործեց ռադիոժամ և այլն: 1999 թ. սեպտեմբերին Սանկտ Պետերբուրգի համալսարանի

[366] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 28 հունվարի, 1999:
[367] Տե՛ս Հայադարան համահայկական նախագիծ, նշվ. աշխ., էջ 536:
[368] Տե՛ս «Ազգ», 13 հուլիսի, 2000:

արևելագիտության ֆակուլտետում բացվեց հայագիտության բաժին, որի հովանավորն էր տեղի հայ եկեղեցին[369]:

Սանկտ Պետերբուրգում ազգապահպանման ուղղությամբ բավականին ծավալուն աշխատանք էին կատարում «Հայ մշակույթի բարեկամների»[370], «Հայկական տուն»[371], Ս. Պետերբուրգի հայկական ընկերությունները[372], «Օրբելի եղբայրների հուշահամալիր» հասարակական կազմակերպությունը[373] և Ս. Պետերբուրգի հայ նկարիչների «Գորանի» ստեղծագործական միությունը:

Հետագա տարիներին Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Մոսկվայի թեմին են վերադարձվում Սանկտ Պետերբուրգի, Մոսկվայի հայկական եկեղեցիները, սկսում են գործել 30-ից ավելի եկեղեցիներ, մատուռներ, կառուցվել նորերը[374]: Մի շարք համայնքներում վերաբացվում են հայկական դպրոցները, ստեղծվում են հայերենի ուսուցման խմբակներ, որոնք անհրաժեշտ դասագրքերն ու դպրոցական պիտույքները ստանում էին Հայաստանից:

Ազգային վերազարթոնքի ուղղությամբ մեծ աշխատանք էր կատարվում հատկապես Կրասնոդարի երկրամասում, որտեղ ստեղծվեց երկրամասի հայկական համայնքների միացյալ կոմիտե: Հայկական բազմաթիվ ընկերություններ կազմակերպվեցին և հայոց լեզվի ուսուցման դասարաններ բացվեցին Անապայի Սև-ծովյան ափում, Նովոռոսիյսկում, Տուապսեում, Սոչիում, Ադլերում: Ժամանակի ընթացքում երկրամասում գործող հայկական դպրոցները փակվել էին, երեխաները հաճախում էին ռուսական դպրոցներ: Սակայն 80-ականների վերջերին հայրենիքում

[369] Տե՛ս նույն տեղում, 24 սեպտեմբերի, 1999:

[370] Ընկերությունը վարում էր ակտիվ քարոզչական և դասախոսական աշխատանք, կազմակերպում էր հայոց լեզվի ուսուցման խմբակներ և դասարաններ, հովանավորում էր կիրակնօրյա դպրոցը:

[371] Ընկերությունը հոգևոր, մշակութային և գործարար կապեր էր ստեղծում Սանկտ Պետերբուրգի զանազան կազմակերպությունների և անհատ գործիչների միջև:

[372] Զբաղվում էր տեղի հայության իրավաքաղաքացիական հիմնահարցերով:

[373] Կազմակերպության նպատակն էր մշակութային և գիտական կապերի խթանումը:

[374] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 460:

սկսված ազգային վերազարթոնքն անդրադարձավ նաև Կրասնոդարի հայության վրա: Հայերի շրջանում մեծ ուրախությամբ ընդունվեց 1989 թ. 8-9-րդ դասարանների դպրոցական ծրագրում հայ ժողովրդի պատմության ընդգրկման մասին որոշումը՝ չնայած այն ֆակուլտատիվ էր և ընդամենը շաբաթը մեկ անգամ: Հայոց լեզվի կիրակնօրյա դպրոցներ և խմբակներ ստեղծվեցին Ռոստովում, Աստրախանում, Ստավրոպոլում և մյուս քաղաքներում: Սակայն հայոց լեզվի և հայոց պատմության դասավանդման մակարդակը ոչ միշտ էր բարձր, քանի որ չկային համապատասխան ուսուցիչներ, դասագրքեր: Երկար տարիներ երկրամասի դպրոցների շրջանավարտները զրկված էին Հայաստանի բուհերն ընդունվելու հնարավորությունից և միայն 1988 թ. Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը երկրամասին հատկացրեց երկու ոչ մրցութային տեղ[375]:

Ազգային մշակույթի վերածնման գործում զգալի դեր խաղացին հայ համայնքներում ստեղծված մշակութային միությունները, որոնցից էին Կրասնոդարում «Մ. Մաշտոցի անվան հայկական մշակույթի և բարեգործության ընկերությունը», Ռոստովում՝ «Նոր Նախիջևան», Ստավրոպոլում՝ «Էրեբունի», Արմավիրում՝ «Արմավիր», Անապայում՝ «Ցանք», Սոչիում՝ «Սևան» (հովանավորությունը իր վրա էր վերցրել Հայաստանի Սևան քաղաքը), Նովոռոսիյսկում՝ «Լույս», Կիսլովոդսկում՝ «Կռունկ», Գելենջիկում՝ «Անի» և այլ քաղաքներում հիմնված հայկական մշակութային լուսավորական ընկերությունները: Գրեթե բոլորի նպատակն էր համախմբել տեղի հայերին, նրանց մեջ արթնացնել մայրենի լեզվի, հայ մշակույթի նկատմամբ հետաքրքրություն, կապեր հաստատել հայրենիքի հետ: 1990 թ. Անապայում ստեղծված Հայ ազգային մշակույթի կենտրոնը տեղի հայկական համայնքի գլխավոր հավաքատեղին էր. ուներ գրադարան, կապ էր պահպանում Կրասնոդարի երկրամասի հայկական մյուս համայնքների, Հայաստանի հետ:

Կրասնոդարի երկրամասում գտնվող բոլոր հայկական մշակութային միությունները համախմբում էր Կոորդինացիոն խորհուրդը, որի գործունեությունն ուղղված էր հայկական էթնոսի,

[375] Տե՛ս Тер-Саркисянц А.Е., Худавердян В.Ц., նշվ. աշխ., էջ 8:

նրա ինքնաբավության, մշակույթի, լեզվի, համայնքի անդամների սոցիալ-քաղաքական իրավունքների պահպանմանը:

Մշակութային միությունների կողմից մեծ ուշադրություն էր դարձվում հատկապես ազգային դպրոցների, հայոց լեզվի ուսուցման դասարանների, կուրսերի բացմանը: 1992 թ. դրությամբ Կրասնոդարի երկրամասում գործում էր 3 հայկական դպրոց և մոտ 20 դպրոցներում հայերենը դասավանդվում էր որպես ուսուցման առարկա[376]: Ընդ որում տեղի հայերի համար ուսուցումը հայկական դպրոցներում դյուրին չէր, քանի որ դասավանդումը տարվում էր գրական արևելահայերենով, այնինչ տեղի հայերը խոսում էին համշենի բարբառով, ուստի հաճախ հենց ծնողներն իրենք չէին ցանկանում իրենց երեխաներին տանել հայկական դպրոց: Երկրամասում գործում էին նաև կիրակնօրյա հայկական դպրոցներ, լեզվի ուսուցման ֆակուլտատիվ խմբեր, կուրսեր, իսկ Սոչիի մանկավարժական ուսումնարանում 1992 թ. 33 հայ աղջիկներ սկսեցին ուսանել հայոց լեզուն հատուկ խմբում[377]:

Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հայահոծ քաղաքներում 1990-ական թթ. սկզբներին հիմնված բազմաթիվ հայկական ընկերությունների ու մշակութային միությունների առաջնահերթ խնդիրներից էին տեղի հայ բնակչության ազգային, հոգևոր ու մշակութային պահանջմունքների բավարարումը, օտարներին հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին և հոգևոր ժառանգությանը ծանոթացնելը, Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին իրազեկ դարձնելը, այլազգիների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելը, հայությանը համախմբելը, նրա ազգային ինքնությունը և նկարագիրը պահպանելը, հայ համայնքի և Մայր հայրենիքի միջև սերտ կապեր հաստատելը, մայրենի լեզուն ուսուցանելը:

1989 թ. Ղրիմում ապրում էր մոտ 2,8 հազար հայ[378]: Այստեղ հայկական ուսումնական հաստատությունների փակման հետևանքով հայերի մեջ աստիճանաբար մոռացվում էր հայերենը և տիրապետող էր դառնում ռուսերենը: 1990 թ. Հայաստանի ԳԽ-ի քարտուղար Գուրգեն Հակոբյանը հանրապետության տարբեր հիմնարկների օժանդակությամբ Ղրիմի հայկական ընկերությանը տրամադրեց 90 հազար ռուբլու օգնություն, օգնեց Հայաստանից ստանալ գրականություն կիրակնօրյա դպրոցի և գրադարանի բացման համար, կարգի բերել Սիմֆերոպոլի հին հայկական գերեզմանոցը, սկսել Սբ. Խաչ եկեղեցու վերանորոգումը, հիմնել ազգային հայկական գյուղ[379]:

1989 թվականից գործող ղրիմահայոց «Լույս» հասարակական-մշակութային կազմակերպության խնդիրն էր օժանդակել տեղահանված հայերի վերադարձին[380], աջակցել հայոց լեզվի և մշակույթի պահպանմանը, հայկական դպրոցների բացմանը և թերթերի հրատարակմանը, Հայաստանի հետ կապերի ամրապնդմանը: «Լույս» ընկերությունը 1996 թ. վերակազմավորվեց «Ղրիմահայ ազգային խորհրդի»՝ դառնալով ղրիմահայության ներկայացուցչական, միասնական ղեկավար մարմին, որի մեջ մտնում էին Ղրիմի 18 բնակավայրերում գործող հայկական միությունները և ընկերությունները[381]: Իր գոյության առաջին տարիներին Ղրիմի հայկական ընկերությունը կազմակերպչական և ֆինանսական զգալի օգնություն էր ստանում Հայաստանից:

Ղրիմում 1990-ական թթ. ծավալուն աշխատանքներ կատարվեցին հայապահպանության համակարգի ստեղծման և պատմամշակութային արժեքների վերականգնման ու պահպանման ուղղությամբ: Հայաշատ վայրերում կազմակերպվեցին կիրակնօրյա դպրոցներ, 1994 թ. հիմնվեց «Բարև» հեռուստածրագիրը և ռադիոժամը, Սիմֆերոպոլի հայ համայնքում կազմակերպվեց գրադարան, բացվեցին մշակույթի ինքնագործ և ուսուցողական խմբեր: Ղրիմահայերը Ղրիմի հեռուստատեսությամբ շաբաթական երկու անգամ հեռուստաժամի հնարավորություն ունեին, իսկ շաբաթական հինգ անգամ՝ ռադիոժամի[382]: Ղրիմա-

[376] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 875, ց. 16, գ. 217, թ. 36:
[377] Տե՛ս նույն տեղում:
[378] Տե՛ս Григорьянц В., Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Симферополь, 2004, с. 4.

[379] Տե՛ս նույն տեղում, էջ 9:
[380] Դեռևս 1944 թ. Խորհրդային Միության իշխանություններն իրականացրել էին Ղրիմում ապրող որոշ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի զանգվածային արտաքսումը Ղազախստան և Ալթայի մարզ:
[381] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 հունիսի, 1999:
[382] Տե՛ս «Ազգ», 28 հունիսի, 1996:

հայ համայնքը հրատարակում էր երկու թերթ՝ «Մասյաց աղավնի» (1994 թվականից) և «Հայկական միջազգային համաժողով» (առաջինը համայնքի թերթն էր, երկրորդը՝ համադաշնության): Ղրիմի հայկական ընկերությունը 1996 թ. լույս ընծայեց ռուսալեզու «Սուրբ խաչ» մշակութային ամսագիրը: Յալթա, Թեոդոսիա, Եվպատորիա քաղաքներում գործում էին հայկական եկեղեցիներ, Ղրիմի հինգ քաղաքներում կիրակնօրյա դպրոցներ: 1998 թ. Սիմֆերոպոլում բացվեց առաջին հայկական քոլեջը: Ղրիմից բռնի տեղահանված ժողովուրդներին վերադարձնելու մասին օրենքի շրջանակներում Ղրիմի խորհրդարանի ազգային քաղաքականության, միջազգային ու միջհանրապետական հարաբերությունների և մշակույթի մշտական հանձնաժողովը հասավ այն բանին, որ Սիմֆերոպոլի պետական համալսարանում բացվեց հայագիտական ամբիոն, որը պատրաստելու էր հայոց լեզվի և գրականության մասնագետներ համայնքի դպրոցների համար: Մինչ տեղական կադրերի պատրաստումը ամբիոնը զգում էր բարձրորակ մասնագետների խիստ կարիք և ակնկալում էր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության օգնությունը:

Ղրիմահայ համայնքը ընդգրկված էր Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի մեջ: Համայնքում 1994 թվականից լուրջ աշխատանքներ էին տարվում հանրապետության տարածքում գտնվող հայկական պատմա-ճարտարապետական հուշարձանները վերականգնելու ուղղությամբ: Դեռ 1991 թվականից սկսվեցին Ղրիմի Սբ. Խաչ (14-րդ դար) վանական համալիրի ուսումնասիրությունները այն վերականգնելու նպատակով: Սկզբնական շրջանում համալիրի ուսումնասիրությանն ու նախապատրաստական աշխատանքներին մասնակցում էր Հայաստանի ԳԱԱ Հնագիտության ինստիտուտը, իսկ 1992 թվականից այդ աշխատանքներին միացավ նաև ՀՀ հուշարձանների պահպանության վարչությունը: Վերջինս աշխատանքները մասնակիորեն ֆինանսավորեց, հիմնական ֆինանսավորումը կատարեցին հուշարձանների պահպանության տեղական մարմինները և տեղի հայկական համայնքը: Տևական պեղումների արդյունքում նախապատրաստվեց համալիրի վերականգնման նախագիծը:

Ս. Խաչ վանական համալիրի վերանորոգման աշխատանքները ձեռնարկվեցին 1994 թ.: Հայաստանից հրավիրված մասնագետները 1999 թ. Ս. Խաչ վանքը հիմնովին վերականգնեցին և այն դարձավ ղրիմահայերի համար ուխտատեղի: Հետագայում Ս. Խաչ եկեղեցական համալիրը Ղրիմի Հանրապետության նախարարների խորհրդի որոշմամբ հանձնվեց հայկական համայնքին:

Վերականգնողական աշխատանքներ սկսվեցին նաև Թեոդոսիայի Հրեշտակապետաց և Ս. Սարգիս եկեղեցիներում: 1997 թ. դեկտեմբերին Սիմֆերոպոլի հին հայկական գերեզմանոցում բացվեց և օծվեց Ս. Հակոբ եկեղեցին, որը կառուցվել էր խորհրդային իշխանության տարիներին քանդված հին հայկական եկեղեցու տեղում[383]:

1990 թ. Ղրիմում Հայաստանի կառավարության ֆինանսավորմամբ անցկացվեցին «Այվազովսկու օրերը», որի կազմակերպմանը գործուն մասնակցություն ունեցան Ղրիմի հայ համայնքը և Հայաստանը: Ղրիմում Հայկական մշակութային միության կողմից կազմակերպված ծովանկարիչների՝ Հ. Այվազովսկու անվան առաջին միջազգային գիտաժողովի մասնակիցները՝ 25 հայտնի նկարիչներ ԽՍՀՄ նախկին հանրապետություններից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Անգլիայից, Հունաստանից, Իրանից և այլ երկրներից, Ղրիմի հայերին որպես նվեր հանձնեցին Ղրիմում իրենց ստեղծած ավելի քան 30 հազար նկար[384]:

Ղրիմահայության հոգևոր-մշակութային կյանքի լիարժեք արտացոլումն էր նաև Ղրիմի ԳԽ և կառավարության որոշմամբ 1997 թ. սեպտեմբերին Գաբրիել և Հովհաննես Այվազովսկի եղբայրների 185 և 180-ամյակները մեծ շուքով նշելը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո[385]: Առաջին անգամ նրանց հոբելյանները նշվում էին պետականորեն և առաջին անգամ միասին: Ղրիմահայերի կյանքում խոշոր իրադարձություն էր 1999 թ. գարնանը Սիմֆերոպոլի կենտրոնում Այվազովսկի եղբայրների հուշարձանի բացումը, որը քանդակել էին Հայաստանի ժողովրդական քանդակագործ Լ. Թոքմաջյանն ու նրա որդին[386]:

---

[383] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 24 դեկտեմբերի, 1997:
[384] Տե՛ս **Григорьянц В.**, նշվ. աշխ., էջ 8:
[385] Տե՛ս «Ազգ», 24 հունիսի, 1998:
[386] Տե՛ս **Григорьянц В.**, նշվ. աշխ., էջ 27:

1990-ական թթ. սկզբին շատ ծանր էր Ջավախքի հայության կրթամշակութային և հոգևոր կյանքը: Բավական անմխիթար վիճակում էին դպրոցները, դասագրքերը Հայաստանից դժվար էին տեղ հասնում, կար մանկավարժների պակաս (ուսուցիչների մեծ մասը թողել էին դպրոցը և մեկնել արտագնա աշխատանքի), ժամանակ առ ժամանակ դադարեցվում էին պարապմունքները, դասագրքերում հայ-վրացական առնչությունների պատմության վերաբերյալ տարածայնությունների հետևանքով հայ ժողովրդի պատմությունը ուսուցանվում էր միայն ֆակուլտատիվ պարապմունքների ձևով, բարձր դասարաններում մտցվել էր ուսման վճար, որի հետևանքով որոշ աշակերտներ դպրոցից դուրս էին մնում: 1994 թ. դրությամբ Ախալքալաքի շրջանն ուներ 64 գյուղ, 78 դպրոց, 40 ակումբ, 87 գրադարան, մշակույթի 8 տուն, 26 կինոթատրոն, գավառագիտական թանգարան[387]: 1999 թ. դրությամբ արդեն Ախալքալաքի շրջանում գործում էր 70 դպրոց (59-ը հայկական, 10-ը վրացական և 1-ը ռուսական), իսկ Ախալցխայի շրջանում՝ 49 դպրոց (հայկական էին 22-ը)[388]:

Ախալքալաքի դպրոցները 1999 թ. սեպտեմբերին Հայաստանից նվեր ստացան 22 հազար կտոր (17 անուն) դասագիրք և 450 կգ կավիճ[389]: Շրջանի դպրոցները տարիներ շարունակ չէին համալրվել ուսումնամեթոդական պարագաներով, լաբորատոր սարքավորումներով: Աշակերտների թիվը խիստ կրճատվել էր. 1995-2000 թթ. ընթացքում նրանց քանակը նվազել էր 7 հազարով[390]: Դպրոցները 2000 թ. դրությամբ ունեին մասնագետների կարիք: Շրջանում 2000 թ. գործում էր 65 հանրակրթական դպրոց, որոնք պահանջում էին լուծել հայոց պատմություն անցնելու խնդիրը[391]: Ծանր վիճակում էր նաև շրջանի մտավորականությունը: Երբ 2000 թ. նախագահական ընտրարշավի ընթացքում է. Շևարդնաձեն եղավ Ախալքալաքում, պարզվեց, որ շրջանի 2000 ուսուցիչները չէին ստացել 7-8 ամսվա աշխատավարձ[392]:

1991 թ. Վրաստանում գործում էր 250 հայկական դպրոց, հայոց լեզվի ֆակուլտետ՝ մանկավարժական ինստիտուտի կազմում, հեռարձակվում էին հայերեն ռադիոհաղորդումներ, գործում էին հայկական եկեղեցիները[393]: 1999 թ. դրությամբ արդեն կար 158 հայկական դպրոց, որոնց մանկավարժական կադրերի մեծ մասը պատրաստվում էին Հայաստանում և Թբիլիսիի պետական մանկավարժական ինստիտուտում[394]: Հայոց լեզվի ու գրականության մասնագետներ էր պատրաստում նաև 1990 թվականից գործող Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի Մեսխեթի մասնաճյուղը, որն ուներ հայագիտական ամբիոն[395]:

Վրաստանում էին գործում Պետրոս Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը (հյուրախաղերով հանդես է եկել Երևանում, Վանաձորում և Գյումրիում), վիրահայ գրողների «Վերնատուն» միությունը[396], Վրաստանի Հայ մշակութային բարեգործական ընկերությունը, «Սայաթ-Նովա» մշակութային լուսավորական կենտրոնը[397], «Գթության տաճար», «Կանչ» հայկական հայրենասիրական կազմակերպությունները: Գործում էին նաև հայ կանանց ու հայ նկարիչների միությունները:

Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիների որոշ մասը 1990-ական թթ. վերականգնվեցին: 1999 թ. Թբիլիսիում գործում էին վիրահայոց թեմի առաջնորդարանը, Ս. Գևորգ և Ս. Էջմիածնոց եկեղեցիները:

Այսպիսով, Սփյուռքը ևս զերծ չէր կենսական խնդիրներից, որոնցից էին ազգային դիմագծի, հայկականության պահպանումը, ծուլման վտանգը և օտար ազդեցություններին դիմակայելը:

---

387 Տե՛ս «Հայերն աշխարհում» հանրագիտական համառոտ բառարան, էջ 99:
388 Տե՛ս "Республика Армения", 16 сентября, 1999 г.:
389 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 3 հունիսի, 2000:
390 Տե՛ս նույն տեղում:
391 Տե՛ս նույն տեղում:

392 Տե՛ս «Հայոց աշխարհ», 6 ապրիլի, 2000:
393 Տե՛ս «Հայրենիքի ձայն», 6 նոյեմբերի, 1991:
394 Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 19 հունվարի, 1999:
395 Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 549:
396 Միությունը ստեղծվել է 1997 թ., միավորում էր 30 վիրահայ գրողներ և ուներ տաղանդավոր պատանիներին սատարող «Գրական ծիլեր» խմբակը:
397 Կենտրոնը գրանցվել է 1998 թ. դեկտեմբերին, ուներ շուրջ 2000 անդամ, երկու նորաստեղծ համույթներ:

Ուստի անկախ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանալով համայն հայության Մայր հայրենիքը՝ հնարավորության սահմաններում ամեն կերպ ձգտում էր աջակցել Սփյուռքի հայության հոգևոր կյանքի աշխուժացմանը (եկեղեցիների բացում), հայեցի կրթության (դպրոցների բացում, դասագրքերի առաքում), սփյուռքահայ մշակույթի զարգացմանը («Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոներ) և հզոր ազդակ էր արտերկրի հայության գոյապահպանության, հայապահպանության և հայեցիության զորացման առումով:

***

Հայրենիք-Սփյուռք առնչություններում կարևոր դեր էին կատարում հատկապես ռադիոն և հեռուստատեսությունը: 1991 թ. դրությամբ Հայաստանի ռադիոյի տարբեր լեզուներով ծայնասփռումների շնորհիվ Հայաստանի ձայնը հասնում էր ավելի քան 50 երկրներում ապրող հայ և այլազգի ունկնդիրներին[398]: Սփյուռքի համար այդ հաղորդումները միակ կենդանի և ամենօրյա կապն էին Մայր հայրենիքի հետ:

Մարզական ասպարեզում ևս հայրենիքն ու Սփյուռքը սերտ հարաբերություններ հաստատեցին, որը հիմնականում արտահայտվում էր համահայկական խաղերի կազմակերպումով ու անցկացումով: Հայաստանի կառավարության ու Միջազգային օլիմպիական կոմիտեի հովանավորությամբ 1999 թ. օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 5-ը Երևանում կայացան Համահայկական առաջին խաղերը: Խաղերի մրցումների օրերին մրցասպարեզ ելան 1141 մարզիկներ, որոնք ներկայացնում էին աշխարհի 62 քաղաքներ[399]:

Կայանալով Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովի նախօրեին՝ Համահայկական խաղերն առաջին որոշակի իրական քայլերն էին Հայաստանի և Սփյուռքի մերձեցման ճանապարհին: Խաղերը նշանավոր էին նաև նրանով, որ Հայաստանում առաջին անգամ էր անցկացվում մարզական նման միջոցառում, որի շրջանակներում սփյուռքահայ երիտասարդների այցը Մայր հայրենիք հող էր ստեղծում աշխարհասփյուռ հայության միավորման, եղբայրական կապերի ամրապնդման ու սերտացման համար: Լինելով առաջինը թե՛ հայ համայնքների աշխարհագրության և թե՛ մասնակիցների թվով՝ խաղերի ամենակարևոր նվաճումը, սակայն, Սփյուռքի և Մայր հայրենիքի երիտասարդ սերնդի մարզիկների միավորումն էր նորաստեղծ հայրենիքի շուրջ: Կարևոր էր նաև խաղերի ավանդականության հաստատումը, այսուհետև երկու տարին մեկ աշխարհասփյուռ հայ մարզիկները հավաքվելու էին հայոց մայրաքաղաքում:

1988-2001 թթ. Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը զարգացան ու ծավալվեցին բոլոր ուղղություններով: Հայաստանյան և սփյուռքահայ գրողների, նկարիչների, երաժիշտների, դերասանների, ճարտարապետների և այլոց փոխադարձ այցելությունները, բազմաթիվ գիտաժողովների, փառատոների, մարզական խաղերի անցկացումը խոսում էին այդ հարաբերություններում նոր փուլի և ժամանակաշրջանի սկզբնավորման ու ծավալման մասին: Ժամանակի ընթացքում այդ կապերը դարձան առավել կազմակերպված ու բովանդակալից: Այդ փոխշփումների շնորհիվ Սփյուռքում նոր հիմքեր էին դրվում հայապահպանության, սփյուռքահայ երիտասարդությանը ազգային արմատներին վերադարձնելու, աշխարհին Հայաստանը նորովի ներկայացնելու ուղղությամբ: Եկեղեցին ևս անմասն չմնաց այս նոր և ազգապահպան գործընթացներից՝ իր ակտիվ մասնակցությունը բերելով մշակութային լայնածավալ ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը թե՛ Սփյուռքում և թե՛ Հայաստանում: Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը նպաստեցին հայրենիքի և Սփյուռքի հոգևոր մերձեցմանը, հնարավորություն ստեղծեցին հայ մշակույթն աշխարհում, նաև համաշխարհային և սփյուռքահայ մշակույթը հայրենիքում առավել հասանելի ու ճանաչելի դարձնելու, սերտ փոխշփման միջոցով առավել զարգացնելու համար:

---

[398] Տե՛ս **Երիցյան Ս.**, Հայրենիք-Սփյուռք՝ անկեղծության ալիքով,- «Արվեստ», 1991, N 5-6, էջ 54:

[399] Տե՛ս Համահայկական առաջին խաղեր, Ե., 2001, էջ 4:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

4.1. ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի անկախացումը հող ստեղծեց եկեղեցական կյանքի վերելքի համար: Խորհրդային 70-ամյա կաղապարված պայմաններից ձերբազատվելով՝ Հայաստանյայց եկեղեցին հնարավորություն ստացավ հանդես գալ հայրենասիրական ու հայապահպան առաքելությամբ երկրի բոլոր կենսական ոլորտներում:

Տարբեր երկրներում գործող հայոց թեմերի հիմնական մասը ավանդաբար ենթարկվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Հայ եկեղեցու և ողջ սփյուռքահայության վրա բացասաբար անդրադարձավ հատկապես այն հանգամանքը, որ «Սառը պատերազմի» տարիներին Հայ Առաքելական եկեղեցու՝ քաղաքական-գաղափարաբանական առճակատման մեջ ներքաշվելու հետևանքով Սփյուռքի որոշ թեմեր 1957 թվականից դադարեցին ընդունել Ս. Էջմիածնի վարչական գերակայությունը և անցան Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության (Անթիլիաս, Լիբանան) ենթակայության տակ: Այդ ժամանակվանից էլ հրատապ դարձավ Հայ Առաքելական եկեղեցու վերամիավորումը: Սփյուռքահայ համայնքների մեծ մասում գործում են նաև հայ կաթոլիկ և ավետարանական եկեղեցիներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսության հոգևոր ենթակայության ներքո էին գտնվում Հայ եկեղեցու երեք մասնավոր նվիրապետական աթոռները՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը (կենտրոնը՝ Անթիլիաս, Լիբանան), Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը (Պաղեստին, Իսրայել) և Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությունը (Ստամբուլ, Թուրքիա): Հայաստանում և Սփյուռքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անմիջական հոգևոր-վարչական իրավասությանն էին ենթակա 40 առաջնորդություն (թեմեր, հայրապետական

պատվիրակություններ, փոխանորդություններ, հովվություններ, շրջաններ), հինգ վանահայրություն[400]:

Նորովի հարաբերություններ հաստատվեցին Սբ. Էջմիածնի և Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունների միջև, պառակտումից ի վեր երկուստեք սկզբունքային հարցերում համագործակցելով՝ առավել գիտակցական մոտեցում ցուցաբերեցին ազգանպաստ հարցերում: Արցախյան պայքարին իր զորակցությունը հայտնեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը՝ հանձինս Կաթողիկոս Գարեգին Բ-ի, որն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին ուղղած իր 1989 թ. հոկտեմբերի 9-ի գրության մեջ նշում էր. «Մոտեն կիետևինք այս օրերուն Ղարաբաղի և Հայաստանի մեր ժողովրդի կրած ահավոր զրկանքներուն, վտանգալից նեղություններուն, ճնշումներուն և անարդարություններուն: Գիտենք, որ Ձեր հայրական սիրտն ալ կարյունի ի տես մեր ժողովրդի այս նոր տառապանքին: Ձեզի հետ ենք աղոթքով, մտածումով և կամքով: Պատրաստ ենք մեր գերագույն կարելին ի գործ դնելու զորավիգ կանգնելու Ձեզի և մեր անընկճելի ժողովուրդին»[401]:

Նոր պայմաններում սկսեցին բարելավվել նաև հարաբերությունները Հայ Առաքելական եկեղեցու և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջև: Ահա թե ինչ է ասում այդ կապակցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ-ն Հալեպում 1992 թ. նոյեմբերի 16-20-ը հրավիրված Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ընդհանուր ժողովում. «...Հայաստանի դէպի անկախութիւն երթը եւ ի վերջոյ 1991 Սեպտեմբեր 21-ին Հայաստանի Անկախ Հանրապետութեան հռչակումը նոր իրադրութիւն ստեղծեց ողջ հայութեան կեանքէն ներս:

...Այս բոլոր փոփոխութեանց մէջ, Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը զօրավիգ կանգնեցաւ Ղարաբաղեան շարժումին, բերաւ իր լայն նպաստը Լենինականի աղէտին դարմանումին եւ աղէտեալ ժողովուրդի վերականգնումին, ընծայեց իր անսակարկ զօրակցութիւնը Հայաստանի անկախացման ընթացքին եւ Անկախ Հանրապետութեան, եւ արտայայտեց իր գործակցութեան լրիւ բաժինը Հայոց Կաթողիկոսութեան, մղուած ըլլալով մէկ հիմ-

[400] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 695:
[401] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 99, թ. 31:

նական, արմատական սկզբունքէն, որով ան հայութիւնը կը ճանչնայ որպէս մէկ ազգ, մէկ եկեղեցի, մէկ հայրենիք, մէկ պետութիւն եւ մէկ ապագայ:

Այդ սկզբունքը կը մնայ անփոփոխ եւ՝ անփոխարինելի...»[402]:

Ինը տարվա (1983-1992) հարկադիր ընդմիջումից հետո գումարված Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ընդհանուր ժողովը իր զորակցությունը հայտնեց ՀՀ պետությանը և ժողովրդին, «Հայաստան» համահայկական հիմնադրամին և բոլոր հնարավոր միջոցներով ստանձնեց Հայաստանի տնտեսական կյանքի բարվոքմանն ու ֆիզիկական գոյության պահպանմանը բերել իր նպաստը: Ժողովը նաև զորավիգ կանգնեց Արցախի հայության ազատագրական պայքարին, Հայ դատին:

Հայաստանի Հանրապետությունը նույնպես քայլեր ձեռնարկեց եկեղեցու պառակտվածությունը վերացնելու համար: 1994 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի մահից հետո ծագեց նոր Կաթողիկոսի ընտրության հարցը: Ընտրություններից ուղիղ մեկ ամիս առաջ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ուղղակի հայտարարեց, որ ցանկանում է եկեղեցու ղեկավարի դերում տեսնել Կիլիկիայի գործող Կաթողիկոս Գարեգին Բ-ին[403]: 1995 թ. ապրիլին Գարեգին Բ-ն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս: Սակայն եկեղեցու միավորման ուղղությամբ ձեռնարկված այս ջանքերն արդյունք չտվեցին. Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից և 1999 թ. Գարեգին Բ Կաթողիկոսի մահից հետո շարունակվեց նախկին պառակտված վիճակը:

1990-ական թթ. նոր եռանդով ծավալելով իրենց գործունեությունը հայրենիքում՝ հայկական եկեղեցական գրեթե բոլոր կառույցները իրենց մասնակցությունը բերեցին երկրի կենսական ոլորտներում, մասնավորապես երկրաշարժից հետո և Արցախյան

[402] Տե՛ս Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկոյ, Ողջոյնի խօսք Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի ուղղուած Ազգային ընդհանուր ժողովին (16-20 նոյեմբեր, 1992, Հալէպ, հատուածներ),-«Գանձասար», 1992, թիւ 25 (50), 14 դեկտեմբերի, Բ տարի, էջ 14-15:

[403] Տե՛ս Мелконян Э., Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и диаспоры,-"Религия и политика на Кавказе", материалы международной конференции (общая редакция Александра Искандаряна), Кавказский институт СМИ, Е., 2004, с. 39.

պատերազմի տարիներին՝ անմասն չմնալով հայոց ազատամարտին զորավիգ լինելու սրբազան գործից:

Կարևոր էր նաև եկեղեցու դերը աշխարհով մեկ սփռված հայության ներուժի համախմբման գործում: Որպես կրոնական կառույց, եկեղեցին մեծ դեր խաղաց նշված ժամանակահատվածում հայության համախմբման, հոգևոր և հայեցի դաստիարակության հարցում՝ վերացնելով այն տարածաշրջանային անջրպետներն ու հոգևոր սահմանազատումները, որոնք գոյություն ունեին տարբեր երկրների Սփյուռքի հատվածներում, ինչպես նաև բուն հայրենիքի հետ փոխհարաբերություններում խորհրդային Միության գոյության տարիներից ի վեր: Ըստ էության նաև եկեղեցու գործունեության շնորհիվ էր, որ աշխարհի ցանկացած վայրում բնակվող յուրաքանչյուր հայ կարող էր իրեն զգալ հայրենիքի մի մասնիկը, քանզի եկեղեցու գործունեությունն առաջին հերթին ուղղված էր ազգապահպանության գիտակցության արմատավորմանն ու բարձրացմանը:

4.2. ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Եկեղեցին անմասն չմնաց հայրենիքին նյութապես օգնելու գործընթացից: Երկրաշարժից անմիջապես հետո 1988 թ. դեկտեմբերի 19-ին Ամենայն Հայոց Վազգեն Ա և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսները համատեղ կոչ ուղղեցին համայն հայությանը՝ նշելով, որ դեկտեմբերի 14-20-ը նրանք եղան Ս. Էջմիածնում, համատեղ աղոթեցին երկրաշարժից զոհված մեր տասնյակ հազարավոր զավակների հոգիների խաղաղության համար. «....Այցելեցինք երկրաշարժէն զարնուած շրջանները, սգացինք կորուստը մահացեալներուն, բաժնեցինք ցաւն ու վիշտը վերապրողներուն և ունեցանք լայն խորհրդակցութիւններ աղէտի դարմանումին և մեր ժողովուրդի վերականգնումին, քանդուած շրջաններու վերաշինութեան և առհասարակ այս աղէտին յաղթահարելու մեր պարտաւորութեանց այլազան երեսներուն և ընելիքներուն մասին:

...Այս ահաւոր աղէտին դիմաց, մեր ցաւը մեղմացած կը զգանք ի տես այն միահամուռ, ու անվերապահ սիրոյն և միաս-

նութեան ոգիին, զոր համայն մեր ժողովուրդը Հայաստանի թէ Սփիւռքի մէջ՝ մէկ սիրտ, մէկ հոգի, անմիջապէս լծուեցան դարմանումի և օժանդակութեան գործնական աշխատանքի: Հայրական անհուն սիրով կ'ողջունենք այս հրաշալի և գովելի կեցուածքը և կ'աղօթենք ու կը յորդորենք, որ նոյն ուղիով և նոյն յարաճուն ընթացքով շարունակէ ան իր բարիքը բերել մեր ժողովուրդի վերականգնումի նուիրական առաքելութեան:

...Կոչ կ'ուղղենք մեր հարազատ ժողովուրդին որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, որ բոլորը անխտիր, աղետեալներուն օգնելու և քանդուած քաղաքներն ու գիւղերը վերակառուցելու սրբազան գործը նկատեն ամէն բանէ վեր պարտականութիւն, և աշխատանքի լծուին բարձր գիտակցութեամբ, նպատակասլացութեամբ ու կարգապահութեամբ»[404]:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կանադահայ թեմը 1991 թ. ստանձնեց 1988 թ. երկրաշարժից որբացած երեխաներից շատերի խնամակալությունը: Տորոնտոյում ստեղծված հատուկ խմբի շնորհիվ ցուցակագրվեցին Գյումրիի, Վանաձորի և Սպիտակի որբերը, բացառության կարգով այդ ցուցակի մեջ մտան նաև այն երեխաները, որոնց ծնողները զոհվել էին Արցախյան պատերազմի ժամանակ: Նման հանձնախումբ ստեղծվեց նաև Մոնրեալում: Այսպիսով, կյանքի կոչվեց «Հայաստանի ծնողազուրկ երեխաների ֆոնդը», որի շրջանակներում կանադահայ թեմը կազմակերպեց 1200 ծնողազուրկ երեխաների որդեգրումը, որից շուրջ 200-ը զոհված ազատամարտիկների երեխաներ էին[405]:

Կանադայի հայոց թեմի առաջնորդարանի նախաձեռնությամբ Արթիկում 1994 թ. բացվեց բազմապրոֆիլ բուժարան[406]: Առաջնորդարանը իր հոգածության առարկա դարձրեց կրոնական և հոգևոր զարթոնք ապրող հայրենիքում վերաբացվող եկեղեցիները հոգևոր գրականությամբ ու եկեղեցական հանդերձանքով ապահովելը: Կանադահայ թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը 1992 թ. կյանքի կոչեց «Կանադայի երիտասարդաց առաքելություն դեպի Հայաստան» (CYMA) ծրագիրը, որի շրջանակներում կանադահայ երիտասարդական խմբերը մեկ ամսով այցելեցին հայրենիք և անհրաժեշտ օգնություն ցույց տվեցին: 1993 թ. հուլիսի 20-ից օգոստոսի 20-ը կանադահայ երիտասարդների 24 անձից բաղկացած խումբը Արարատի շրջանում ձեռնամուխ եղավ Ավշար գյուղի մանկապարտեզի կառուցմանը[407]: Տեղավորվելով հայ ընտանիքներում՝ նրանք շփվեցին հասակակիցների հետ, կազմակերպեցին անգլերեն լեզվի դասընթացներ: Հաջորդ տարվա հուլիսին հայրենիք ժամանեց երիտասարդական կազմակերպության արդեն 55 անդամներից բաղկացած խումբը, որը Արթիկի շրջանի Հառիճ գյուղում վերակառուցեց մանկապարտեզի շենքը և Հառիճավանքը[408]: Խմբի անդամները կրկին ապրեցին տեղացիների բնակարաններում, շարունակվեց նաև անգլերեն լեզվի ուսուցման ծրագիրը, ոչ հայախոսների և օտարների համար կազմակերպվեց հայերենի ուսուցում: Կանադայի հայոց թեմը իր մասնակցությունը բերեց նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանքներին:

Կիլիկիո Կաթողիկոսության ԱՄՆ-ի արևելյան շրջանների և Կանադայի ազգային առաջնորդարանի մարդասիրական ծրագրերը Հայաստանում իրականացնում էր 1993 թվականից գործող «Գայանե Մանուկյան-Մելքոնյան» կրթական հիմնադրամը՝ հանձինս նրա հիմնադիր, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Երվանդ Մելքոնյանի[409]: Հիմնադրամը փորձում էր որոշ չափով թեթևացնել կարիքի մեջ հայտնված հայ ընտանիքների (մտավորականություն, աղետի գոտու բնակչություն, փախստականներ և այլն) հոգսերը՝ հիմնականում զբաղվելով երեխաներ ունեցող զոհված ազատամարտիկների ընտանիքների նյութական աջակցությամբ՝ ամենամսյա նպաստներ տրամադրելու ձևով: 1995 թ. դրությամբ Հիմնադրամը հովանավորում էր զոհված ազատամարտիկների 300 ընտանիք[410]: Դրամական օժանդակությունից բացի այն իրագործեց մանկական սննդի, դեղորայքի, կենցաղային պարագաների բաշխում հայաստանյան մանկատներին: Հիմնադրամը

[404] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 4-6:
[405] Տե՛ս «Ապագայ», 20 դեկտեմբերի, 1993:
[406] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 26 հուլիսի, 1994:

[407] Տե՛ս «Ապագայ», 6 սեպտեմբերի, 1993: Տե՛ս նաև «Հորիզոն», 6 սեպտեմբերի, 1993:
[408] Տե՛ս «Ազգ», 26 հուլիսի, 1994:
[409] Տե՛ս նույն տեղում, 23 ապրիլի, 1993:
[410] Տե՛ս նույն տեղում, 14 հոկտեմբերի, 1995:

չշրջանցեց մշակույթի բնագավառը՝ Առաջնորդարանի և Հիմնադրամի հովանավորությամբ տպագրելով մի շարք գրքեր: Բարեգործական ծրագրերում ընդգրկված էր նաև Արցախը:

Բացի այդ ամերիկահայ եկեղեցու երևանյան ներկայացուցչությունը 1993 թ. հունվարից Երևանի միայնակ և սակավ ապահովված հազարից ավելի թոշակառուների տրամադրում էր ամսական նպաստ[411]: Միայնակ ծեր թոշակառուների օգնության ծրագիրը թեև սկզբնական շրջանում նախատեսված էր համեմատաբար կարճ ժամանակահատվածի համար (մեկ տարուց ոչ ավելի), բայց տևեց 2-2,5 տարի ու ավարտվեց միայն ֆինանսական անբարենպաստ կացության պատճառով:

Եկեղեցու իրականացրած մյուս ծրագիրը ծառատունկն էր: Նախատեսվեց տնկել 100 հազար ծառ, կազմակերպել ոռոգման ցանցի վերանորոգում և նորի ստեղծում, նաև վերականգնել բոլոր հասարակական այգիները: 1993 թ. առաջին կեսի դրությամբ տնկվել է 35-40 հազար ծառ[412]:

Դեռևս 1993 թ. մայիսին Հայ Առաքելական եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմը և այդ թեմի Տիկնանց միությունը սկսեցին «Հայաստանի երեխաների հովանավորման» ծրագրի (ՀԵՀԾ) իրագործումը, որի մեջ ընդգրկվեցին Հայաստանի 4 մանկատների՝ Նորքի, Քանաքեռի, Կամոյի, Գյումրիի շուրջ 220 որբ երեխաներ, 200 որբեր Շիրակի թեմից և 160՝ Արարատյան թեմից[413]:

Երկրաշարժի օրերից Երևանում գործող «Ս. Ներսես» բարեսիրական գրասենյակի առաքելությունն էր մարդասիրական օգնություն ցուցաբերել բոլոր կարիքավորներին (ծնողազուրկ երեխաներ, միայնակ թոշակառուներ, սոցիալապես անապահով ընտանիքներ): Այդ ծրագրերն առավել ընդլայնվեցին Արցախի ազատամարտերից հետո, երբ ԱՄՆ-ի Հայ Առաքելական եկեղեցին ստանձնեց զոհված ազատամարտիկների ընտանիքների օգնության գործը: Այդ օգնությունն առավել կանոնավոր ու հիմնավոր դարձնելու նպատակով ստեղծվեց «Մեծն Ներսես» բարեգործական հիմնադրամը, որը 1996 թ. դրությամբ օգնում էր ավելի

[411] Տե՛ս նույն տեղում, 23 ապրիլի, 1993:
[412] Տե՛ս նույն տեղում:
[413] Տե՛ս նույն տեղում, 8 հոկտեմբերի, 1993:

քան 800-850 երեխաների[414]: Սկզբնական շրջանում Հիմնադրամը օժանդակում էր շուրջ 2600 միայնակ ծերերի, սակայն հետագայում կենտրոնացավ զոհված ազատամարտիկների ընտանիքների վրա[415]:

Հյուսիսային Ամերիկայի երեք առաջնորդարաններն աշխատում էին սերտ համագործակցությամբ, իրականացնում էին բազմաթիվ ծրագրեր և առաջին հերթին մեծ ուշադրություն էին դարձնում երկրաշարժից ու պատերազմից ծանր դրության մեջ հայտնված հայրենիքին:

Ակտիվ էր նաև Հայ կաթոլիկ եկեղեցին: Ֆրանսիայի Հայոց Կաթողիկե եկեղեցու նախաձեռնությամբ ու հանգանակած միջոցներով կահավորվեց երկրաշարժից հետո վթարային դարձած Գյումրիի Գեղամ Սարյանի անվան հանրակրթական դպրոցը[416]:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունը (ԱՀԱԸ, Armenian Missionary Association of America), որ ստեղծվել է 1918 թ. հունիսի 7-ին ԱՄՆ-ում՝ որպես Հայ Ավետարանչական բարեսիրական և քրիստոնեական ծառայության կազմակերպություն և դարձել ամբողջ աշխարհի հայ Ավետարանչական եկեղեցիների գործունեության կազմակերպիչը, հովանավորը և գործադիր մարմինը[417], նպաստում է Հայ Ավետարանական և Հայ Առաքելական եկեղեցիների միջև միասնական հոգևոր ծրագրերի մշակմանը, իրականացմանը և ըստ անհրաժեշտության նյութական օժանդակություն է տրամադրում այդ ծրագրերին: 1991 թ. Ավետարանչականը պաշտոնապես իր աշխարհագրության մեջ ընդգրկեց Հայաստանը՝ ստեղծելով երևանյան գրասենյակ[418]: 1992 թ. մասնաճյուղեր հիմնեց Գյումրիում, Վանաձորում, Ստեփանավանում, 1995 թ.՝ Ղարաբաղում, իսկ 1997 թ.՝ Գորիսում[419]:

ՀՀ կրոնի գործերի պետական խորհուրդը 1995 թ. մարտի 13-ին գրանցեց ԱՀԱԸ Հայաստանի ներկայացուցչության կանո-

[414] Տե՛ս **Գեղամյան Ս.**, «Հայաստանն իմ գործունեության առանցքն է»,- «Բնօրրան», 1996, թիվ 3-4 (4-5), էջ 52:
[415] Տե՛ս նույն տեղում:
[416] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 17 հունվարի, 1992:
[417] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 189, թ. 7:
[418] Տե՛ս նույն տեղում:
[419] Տե՛ս **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.Ն.**, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Ե., 1999, էջ 201:

նադրությունը, որի համաձայն նրա նպատակն էր օգնել Հայաստանի չքավոր ու աղետյալ զավակներին, խնամակալել երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաներին, հոգ տանել կարիքավոր միայնակ ծերերին և բազմազավակ ընտանիքներին[420]: Հայ Ավետարանչական ընկերակցությունը իր առջև ծրագրային նպատակ էր դրել՝

«...ա. Սատարել Հայ ժողովուրդին քրիստոնէական հաւատքին, մշակութային արժէքներուն եւ ազգային ինքնութեան պահպանման.

բ. Աշխատիլ ի խնդիր Հայ ազգին հոգեւոր փրկութեան ու զարգացման..

գ. Օժանդակել Հայ մատղաշ սերունդին հայեցի կրթութեանը եւ քրիստոնէական դաստիարակութեան.

դ. Օգնել Հայ ազգի անկար, չքաւոր ու աղիտահար զաւակներուն»[421]:

Հայ Ավետարանական եկեղեցիների ավետարանչական գործունեության կազմակերպիչը և գործադիր մարմինը, Հայ Ավետարանական առաջին և միակ միսիոներական կազմակերպությունը Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունն էր: Ներկայացնելով Հայ Ավետարանական եկեղեցին իր ամբողջության մեջ՝ ԱՀԱԸ-ն հանդիսանում էր Սփյուռքում և Հայաստանում ՀԲԸՄ-ից հետո երկրորդ մեծագույն բարեգործական հաստատությունը: Այն մասնաճյուղեր և գրասենյակներ ուներ աշխարհի մոտ 20 երկրներում:

Հայաստանում և Արցախում իր ծրագրերի մեծ մասը ԱՀԱԸ-ն իրականացնում էր «Հույս Հայաստանի համար» կազմակերպության սերտ համագործակցությամբ: Ծրագրերն ունեին երկու ուղղվածություն՝ բարեսիրական ու սոցիալական և կրթական ու դաստիարակչական: ԱՀԱԸ կարևոր խնդիրներից էին աջակցությունը 1988 թ. երկրաշարժից տուժած շրջանների վերականգնմանը, զոհված ազատամարտիկների և ծնողազուրկ երեխաների խնամակալությունը, աճող սերնդի քրիստոնեական դաստիարակությունը, բժշկական ծառայությունների մատուցումը և այլն:

[420] Տե՛ս նույն տեղում, էջ 202:
[421] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 339ա, թ. 1: Տե՛ս նաև նույնի՝ ց. 16, գ. 58 թ. 2:

1988 թ. երկրաշարժից անմիջապես հետո ԱՀԱԸ-ն համագործակցելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ՝ ձեռնամուխ եղավ աղետից տուժած հայ բնակչությանը օգնելու և հայրենիքը վերականգնելու գործընթացին, հոգաց աղետյալների կենսական կարիքները՝ տրամադրելով սնունդ, հագուստ և բազմապիսի այլ անհրաժեշտ օգնություն: Միայն 1989 թ. հունվար և մարտ ամիսներին երկու բեռնատար օդանավերով Հայաստան ուղարկվեց չորս մլն դոլար արժողությամբ ուտեստեղեն, դեղորայք, հագուստեղեն, վերմակ-ծածկոցներ և բժշկական գործիքներ, բացվեցին երկու շարժական հիվանդանոցներ (Գյումրիում և Սպիտակում), հայրենի բժիշկների հետ համատեղ Գյումրիում և Սպիտակում կազմակերպվեց հոգեբուժական ծառայություն, 1989 թ. նոյեմբերի վերջերից Սպիտակում գործեց աղյուսներ արտադրող գործարան[422]:

Ավետարանականը 1992 թ. դրությամբ հացի երկու արտադրամաս էր տեղակայել Գյումրիի շրջանում, երկու շարժական կլինիկաներից մեկը հատկացրել էր երեխաներին, իսկ մյուսը գտնվում էր պատերազմի ճակատում՝ վիրավորներին խնամելու համար, գործում էր արդիական բուժսարքավորումներով ատամնաբուժարան Երևանի Էրեբունի հիվանդանոցում, որ Ավետարանչականի երևանյան գրասենյակը իրականացրել էր «Հույս Հայաստանի համար» կազմակերպության միջոցով, հաշմանդամ երեխաների համար ամեն շաբաթ օգնություն էր հատկացնում, նաև որբանոցի պիտույքներն էին հայթայթվում:

ԱՀԱԸ-ն Հայաստանի մանկական ֆոնդի հետ մշակեց որբախնամ հատուկ ծրագիր, որով տարեկան երեք անգամ երկրաշարժի աղետից վերապրող ավելի քան երեք հազար որբերի առաջին անհրաժեշտության հատուկ ծանրոցներ (հագուստեղեն, կոշիկ, ուտեստեղեն, գրենական և գործածական այլ առարկաներ) էին բաշխվում[423]: Երկրաշարժից հետո Ավետարանչականը իր ամենամսյա խնամակալության տակ վերցրեց Երևանի, Գյումրիի, Վանաձորի, Ստեփանավանի և Արտաշատի 1512 միակողմանի և երկկողմանի որբ և խիստ կարիքավոր երեխաների,

[422] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 15, գ. 339ա, թ. 3-4:
[423] Տե՛ս նույն տեղում:

որոնք ստանում էին սննդամթերք և այլ օգնություն[424]: Ամեն տարի ընկերակցության կազմակերպած ամառային ճամբարներում հանգստանում և սնունդ էին ստանում երկրաշարժից տուժածների, զոհված ազատամարտիկների, փախստականների, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ և որբեր (մոտ 2000)[425]: Ամանորի և Ս. Ծննդի առթիվ ԱՀԱԸ-ն ամեն տարի կազմակերպում էր տոնական հանդեսներ հայաստանյան տարբեր մանկատների մոտ 10.000 երեխաների համար, բաժանում էր սնունդ և ամանորյա նվերներ[426]: ԱՀԱԸ-ն վառելանյութ էր տրամադրում կարիքավոր ընտանիքներին և փախստականներին, կաթի փոշի հատկացնում Երևանի, Գյումրիի, Գորիսի, Ստեփանակերտի վեց մանկական հիվանդանոցներին[427]:

Նպաստաբաշխումի և քրիստոնեական ծառայության ծրագրեր մշակելու գործում համագործակցելով Շիրակի և Գուգարքի Հայ Առաքելական առաջնորդարանների հետ՝ ԱՀԱԸ-ն 1998 թ. Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի և ԱՀԱԸ միացյալ ծրագրով սոցիալապես անապահով 300 հազար մարդու բաժանեց սնունդ, հագուստ և այլ կարգի ապրանքներ[428]: Ամեն տարի Գյումրիի տարբեր թաղամասերում կազմակերպվում էին բակային ճամբարներ, որտեղ հանգստացել և սնվել են 3500 երեխաներ[429]: ԱՀԱԸ-ն խնամակալել է նաև Սպիտակի թիվ 2 և Գյումրիի «Բալաթոն» միջնակարգ դպրոցները: Գյումրիի մասնաճյուղը տարբեր երկրների բարերարների օգնությամբ հովանավորում էր 50 հոգիանոց որբանոց-մանկապարտեզ[430], աջակցում էր Գյումրիում հին հայկական արհեստների ու արվեստների (հատկապես գորգագործության) վերածննդին՝ նպաստելով կարիքավորների զբաղվածությանը:

Որպես «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, ԱՀԱԸ-ն օժանդակում էր Հիմնադրամի ծրագրերին, համագործակցում Երևանի պետական

[424] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 189, թ. 8:
[425] Տե՛ս **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.Ն.**, նշվ. աշխ., էջ 202:
[426] Տե՛ս նույն տեղում, էջ 204:
[427] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 189, թ. 8:
[428] Տե՛ս նույն տեղում:
[429] Տե՛ս նույն տեղում:
[430] Տե՛ս **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.Ն.**, նշվ. աշխ., էջ 206:

ճարտարագիտական համալսարանի, նաև «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի», «Հայաստանի աստվածաշնչային ընկերության», միջազգային կազմակերպությունների, հայրենի եկեղեցական ու պետական մարմինների հետ:

Քանի որ բժշկական ծառայությունը Հայաստանում իրականացվող ծրագրերի հիմնական ուղղություններից մեկն էր, Ավետարանչականի Երևանի գրասենյակի կարևորագույն գործերից էր ժամանակակից բժշկական սարքավորումներով բժշկական հաստատության բացումը Երևանում:

1997 թվականից Ավետարանչական ընկերակցությունը համագործակցում էր ԱՄՆ-ի «Հայ մանուկներին կաթ» հիմնադրամի հետ, որի միջոցով Հայաստանի և Արցախի մինչև մեկ տարեկան հազարավոր երեխաներ անվճար ստանում էին մայրական կաթին փոխարինող «Իզոմիլ» կերակրատեսակը[431]: Վանաձորի մասնաճյուղը խնամակալել էր 424 ընտանիք, քաղաքի 28 մանկապարտեզների ամեն տարի «Տաք ճմեռ» ծրագրով տրամադրում էր վառելիք, «Հույս Հայաստանի համար» կազմակերպության հովանավորությամբ հիմնել էր մանկական ատամնաբուժարան[432]:

Ավետարանչական ընկերակցության Ստեփանավանի մասնաճյուղը Ստեփանավանում ստանձնել էր 76 ընտանիքի, ինչպես նաև 75 երեխաների խնամակալությունը (որը շարունակվում էր մինչև երեխայի 16 տարին լրանալը)[433]: ԱՀԱԸ Հայաստանի ներկայացուցչության, Ֆրանսիայի «Հույս Հայաստանի համար» և ֆրանսիական SPFA կազմակերպությունների համագործակցության շնորհիվ 1997 թվականից Ստեփանավանում գործում էր ամենօրյա բարեգործական ճաշարան 50 միայնակ ծերերի համար[434]:

ԱՀԱԸ-ն, որպես ԼՂՀ-ում գրանցված առաջին սփյուռքահայ կազմակերպություն, մի շարք ծրագրեր էր իրականացնում՝ հիմնականում սոցիալական, նաև շինարարության և բժշկության բնագավառներում: Նպատակն էր օգնել ԼՂՀ-ի չքավոր և աղետավոր զավակներին, խնամակալել երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաներին, հոգ տանել կարիքավոր, միայնակ ծե-

[431] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 189, թ. 7:
[432] Տե՛ս նույն տեղում:
[433] Տե՛ս նույն տեղում:
[434] Տե՛ս նույն տեղում:

ներին և բազմազավակ ընտանիքներին: Այդ նպատակով նա խնամակալում էր Ստեփանակերտում, Շուշիում, Ասկերանում բնակվող 5 և ավելի երեխաներ ունեցող ու զոհված ազատամարտիկների 239 ընտանիքների, Ստեփանակերտի 150 երեխաների (մինչև 1 տարեկան) տալիս էր «Իզոմիլ» մանկական սնունդ, 150 միայնակ ծերերի և ծերանոցում ապաստանածներին՝ սնունդ, օգնություն՝ 100 զոհված ազատամարտիկների ծնողներին, իսկ ԼՂՀ առողջապահության նախարարությանը տրամադրեց մեկ շարժական բուժարան[435]:

Գերագույն նպատակ ունենալով հայ մանուկներին տալու հոգևոր դաստիարակություն՝ ԼՂՀ-ի մասնաճյուղը անց էր կացնում կիրակնօրյա հոգևոր դասեր, կազմակերպում էր երեխաների ամառային հանգիստը, խնամակալում էր զոհված և բազմազավակ ընտանիքների երեխաներին, աջակցում էր մանկապարտեզներին՝ իրագործելով մանկական սննդի, նաև միանվագ օգնությունների ծրագրեր:

Հայաստանում իր գործունեության ընթացքում Ավետարանչականը գործուն մասնակցություն բերեց հայրենիքի հոգևորին՝ իր խնամակալության տակ վերցնելով երկրաշարժից տուժածների, ազատամարտիկների, անապահով ընտանիքների շուրջ 2000 երեխաներ, որբեր, Ղարաբաղում՝ 5 և ավելի երեխաներ ունեցող 100 ընտանիքներ[436]: ԱՀԱԸ շնորհիվ ամեն տարի գործում էին ամառային ճամբարներ Հայաստանում, Արցախում և Վրաստանում, որտեղ հոգևոր առողջ մթնոլորտում հանգստանում էին շուրջ 3000 երեխաներ[437]: Միայն 1999 թ. ընթացքում ԱՀԱԸ որբերի հոգատար հանձնաժողովի նյութական միջոցներով 7 հազար մանուկներ հանգստացան ամառային ճամբարներում[438]: Ավետարանչականը օգնում էր Հայաստանի մանկապարտեզներին, դպրոցներին ու մանկատներին, հովանավորում էր նոր դասագրքերի տպագրությունը, Հայաստանի տարբեր վայրերում կազմա-

[435] Տե՛ս **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.Ն.**, նշվ. աշխ., էջ 204:

[436] Տե՛ս **Աւագեան Ջ.**, Աւետարանականութիւնը հայոց մէջ,-«Բանբեր», 2000, N 10, հոկտեմբեր, էջ 18:

[437] Տե՛ս «Ազգ», 4 մարտի, 1998:

[438] Տե՛ս 85 հազար ամերիկեան դոլար Հայաստանի և Արցախի կարիքավոր երեխաներին,-«Ջանասէր», 2000, թիվ 7-8, 9-10, ԿԳ տարի, էջ 133:

կերպում էր Ս. Գրոց մանկական կիրակնօրյա և հոգևոր առաջնորդների պատրաստման դասընթացներ և այլն:

Հայ Ավետարանական եկեղեցին շարունակում էր ծառայել հայ ազգին Հայաստանի և 20 այլ երկրների հայ համայնքներում իր ավելի քան 155 թեմերով, 185-ից ավելի ձեռնադրված հոգևոր մշակներով, 25 կրթական օջախներով, Հայաստանից դուրս գործող հայկական միակ բարձրագույն կրթական հաստատությունով՝ Բեյրութի Հայկազյան համալսարանով, հրատարակություններով, երիտասարդական կենտրոններով և «կրթանպաստի» ու մարդասիրական նպատակների համար հատկացված հիմնադրամներով[439]:

Հայ Առաքելական եկեղեցին ողջունում էր Ավետարանական եկեղեցու մուտքը Հայաստան՝ մի կողմ թողնելով մրցակցությունն ու հակամարտությունը և գնալով միայն միասնության ճանապարհով՝ հանուն հայրենիքի բարօրության:

Անգնահատելի է սփյուռքահայ եկեղեցու դերը երկրաշարժից ու պատերազմից ծանր կացության մեջ հայտնված հայրենիքին օգնելու գործում: Եկեղեցին մեկ անգամ ևս հավաստեց երկրի համար ծանրագույն օրերին դարերի խորքից եկող իր միավորիչ և ազգապահպան դերը:

4.3. ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Եթե Հայաստանում և Արցախում ազգային պետության և պետական կառույցների առկայության պայմաններում եկեղեցու հիմնական դերը քրիստոնեական հավատքի ու գիտակցության ամրապնդումն է, ապա Սփյուռքում եկեղեցին շարունակում է հանդես գալ նաև հոգևոր հայրենիք լինելու, համայնքների կրթական և մշակութային կյանքն աշխուժացնելու, աշխարհացրիվ հայերին համախմբելու առաքելությամբ:

Առանձնահատուկ է Հայ Առաքելական եկեղեցու դերը Հայրենիք-Սփյուռք հոգևոր-մշակութային կապերի սերտացման, հա-

[439] Տե՛ս Հայ Աւետարանական համաշխարհային խորուրդի խօսքը՝ Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովին,-«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 1999, N 4 (12), հոկտեմբեր, էջ 7:

յոց պետականության ամրապնդման գործին սփյուռքահայության ներգրավելու ասպարեզում: Հայկական անկախ պետականության վերականգնումից հետո Մայր Աթոռի առջև բացվեցին գործունեության նոր և ավելի լայն հեռանկարներ. աշխուժացավ եկեղեցական, միաբանական, թեմական, հոգևոր-մշակութային կյանքը, կառուցվեցին ու վերաբացվեցին նոր եկեղեցիներ ու վանքեր: Մայր Աթոռում հիմնվեց Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոն (1996 թ.), վերանորոգվեց Գևորգյան ճեմարանի շենքը և հանձնվեց Մայր Աթոռի տնօրինությանը, բացվեցին Սևանի Վազգենյան դպրանոցը, Շիրակի թեմի Հոգևոր ընծայարանը, ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետը (1995 թ.), հիմնվեց Հայաստանի աստվածաշնչային ընկերությունը (1996 թ.)[440]: Համակարգված քարոզչական և տեղեկատվական աշխատանք սկսեցին կատարել Մայր Աթոռում ստեղծված «Մամլո դիվանը», «Խորան լուսոյ» ստուդիան, «Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթը: Մայր Աթոռի գործունեության կարևոր ուղղություններից էր Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունը:

Սփյուռքահայության հոգևոր կյանքի վերազարթոնքի պայմաններում Սփյուռքում վերաբացվեցին նախկինում չգործող հայկական եկեղեցիները, կառուցվեցին նորերը: Լիբանանի, Իրանի և Միջին Արևելյան այլ երկրների քաղաքական անկայուն իրավիճակն ու ապրելակերպի աննպաստ պայմանները և Հայաստանի կառավարության արտագաղթը թույլատրող քաղաքականությունը պատճառ դարձան ամերիկյան ու կանադական հայկական համայնքների աննախընթաց աճին: Նոր հաստատվածների մեծ մասի երեխաները սկսեցին հաճախել հայեցի դաստիարակությունից բոլորովին զուրկ պետական վարժարաններ:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմի նախկին առաջնորդ, հետագայում Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը դեռևս 1947 թ. հիմնել էր Նյու Յորքի Հայ դպրոցների կրթական կենտրոնը, որի նպատակն էր հայկական վարժարանների համար կրթական ծրագրերի մշակումը, դասագրքերի հրատարակումը, պարբերաթերթի հրապարակումը[441]: Հայ դպրոցների կրթական կենտրոնը կազմակերպում էր նաև Ամերիկայի և Կանադայի, երբեմն էլ Եվրոպայի տարբեր շրջաններից ուսուցիչների մասնագիտական (հայերեն լեզվի, հայոց պատմության, կրոնի, ուսուցման մեթոդի և այլն) դասընթացներ: Այս ամենից զատ Հայ դպրոցների կրթական կենտրոնն ամեն տարի կազմակերպում էր պատանեկան տասնօրյա ամառային ճամբար, նաև գիտաժողովներ, համագումարներ և փառատոներ:

ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդարանի գործունեության մեջ կարևոր դեր էր կատարում 1986 թ. հիմնված «Գրիգոր և Կլարա Զոհրապ» տեղեկատվության կենտրոնը, որի հիմնական նպատակն էր հայ ժողովրդի պատմության, հայ եկեղեցու մասին տեղեկությունները ծանոթացնել հայերին և օտարներին, սատարել հայագիտության ոլորտի գիտնականներին: Կենտրոնն ուներ արխիվային նյութեր, մամուլի հավաքածուներ, գրքեր, քարտեզներ և այլն, կազմակերպում էր դասախոսություններ և գիտաժողովներ՝ նվիրված հայոց պատմության և մշակույթի խնդիրներին: 1992 թ. մայիսին հայրենի գիտնականների մասնակցությամբ կենտրոնը կազմակերպեց միջազգային գիտաժողով՝ նվիրված Մ. Խորենացու 1500-ամյակին, իսկ 1993 թ. աշնանը Սփյուռքում առաջին անգամ նախաձեռնեց հայ լրագրության սկզբնավորման 200-ամյակի նշումը[442]: Առաջնորդարանի նվիրատվությամբ 1993 թ. վերսկսվեցին ԳԱԱ զույգ հանդեսների՝ «Պատմաբանասիրական հանդեսի» և «Լրաբերի» հրատարակությունները:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հովանավորությամբ և ղեկավարությամբ 1929 թ. Հալեպում հիմնված Հայաստանյայց եկեղեցվո կիրակնօրյա դպրոցների (ՀԵԿԴ) նպատակն էր կրոնական դաստիարակություն տալ մանուկներին ու պատանիներին՝ որպես ազգային ընդհանուր կրթության և դաստիարակության բաղկացուցիչ մասը: 1991 թ. Միջին Արևելքում, մասնավորապես

[440] Տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 694:

[441] Տե՛ս **Քեօշկերեան Գ.**, Նիւ Եորքի Առաջնորդարանի Հայ դպրոցներու կրթական կեդրոնը,-«Երիտասարդ Հայաստան», 1990, թիվ 6, 88-րդ տարի, հոկտեմբեր, էջ 10:

[442] Տե՛ս «Ազգ», 11 նոյեմբերի, 1993:

Սիրիայում, Լիբանանում, Կիպրոսում, Հունաստանում, Քուվեյթում և արաբական ծոցի երկրներում գործում էին ՀԵԿԴ-ի ավելի քան 35 դպրոցներ՝ շուրջ 300 ուսուցիչներով[443]: Հայաստանում ՀԵԿԴ-ն համագործակցելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հաստատված քրիստոնեական քարոզչության կենտրոնի հետ՝ տեղի թեմական առաջնորդների հետ աշխատանքներ էր տանում ամենուր կիրակնօրյա դպրոցներ բացելու ուղղությամբ:

Համայն հայության կյանքում վիթխարի նշանակություն ուներ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունը, որի նախապատրաստական աշխատանքների մեջ ընդգրկվեց նաև Սփյուռքը: Տոնակատարությունների համար կազմված կենտրոնական հանձնաժողովը նախագահում էին Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսները, ատենապետներն էին Երուսաղեմի և Կ. Պոլսի Պատրիարքները:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը բարյացակամ հարաբերություններ հաստատեց նաև Հայ կաթոլիկ եկեղեցու հետ: Հայ Կաթողիկե եկեղեցին, որպես եկեղեցական առանձին նվիրապետություն, կազմավորվել է 1740 թ. նոյեմբերին և հանդիսանում էր Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետևորդ հայերի հավաքականություն, որը միացած էր Հռոմի Աթոռին եկեղեցական ու դավանական հաղորդությամբ, ճանաչում և ընդունում էր Հռոմի պապի գերագահությունը[444]:

1991 թ. Հռոմի պապի վճռով կազմավորվեց Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմը (առաջնորդարանը՝ Գյումրիում), որը հանդիսանում էր Հայ Կաթողիկե եկեղեցու նվիրապետությունը և ընդգրկում էր նաև Ռուսաստանի ու Ուկրաինայի Հայ Կաթողիկե համայնքները[445]: Աշոցքում գործում էր թեմի «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցը: 1994 թ. Գյումրիում բացվեց Ներսիսյան դպրեվանք-ընծայարանը, որը հոգևորականներ էր պատրաստում Հայաստանի հայ կաթոլիկ համայնքի համար: 1998 թ. սեպտեմբերին բացվեց «Տիրամայր Հայաստանի» Պո-

[443] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 ապրիլի, 1991:
[444] Տե՛ս Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 36:
[445] Տե՛ս «Հայկական Սփյուռք» տարեգիրք, էջ 87:

ղոսյան կրթահամալիրը, որտեղ սովորում էին 36 ծնողազուրկ և խիստ կարիքավոր երեխաներ[446]:

Ներկայումս գործում է հայ կաթոլիկական երեք միաբանություն. Մխիթարյան միաբանությունը[447], Զմմառի Արծիվյան Պատրիարքական միաբանությունը և Անարատ հղության հայ քույրերի միաբանությունը:

1701 թ. հիմնված Վենետիկի Մխիթարյան միաբանությունը 1717 թ. հաստատվելով Վենետիկի Ս. Ղազար կղզում՝ վիթխարի դեր խաղաց Եվրոպայի միջավայրում հայ գրի ու գրականության տարածման, հայոց ձեռագրերի հավաքման, մշակման ու տպագրության, հատկապես հայապահպանության գործում: Լինելով հոգևոր միաբանություն՝ Մխիթարյանները նախ և առաջ հետապնդել են կրոնական նպատակներ, սակայն կատարել են նաև ազգային, հայագիտական-բանասիրական և հրատարակչական-կրթական[448] հսկայական աշխատանք, հռչակվելով անգամ որ-

[446] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 189, թ. 19:
[447] Մխիթար Սեբաստացու կողմից 1701 թ. հիմնված Մխիթարյան միաբանության մեկ ճյուղը հանդիսացող Վիեննայի Մխիթարյան միաբանությունը 1773 թ. որոշ տարաձայնությունների պատճառով անջատվել էր Վենետիկի կազմակերպությունից և անցնելով Տրեստ (Ավստրիա)՝ այնտեղ հիմնել ինքնուրույն կազմակերպություն, որը 1775 թ. հաստատվել էր ավստրիական կառավարության կողմից (տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 123, թ. 1): Հետագայում 1811 թ. այդ կազմակերպությունը տեղափոխվեց Վիեննա, ուր և գտնվում է մինչև այժմ: Վիեննայի Մխիթարյանների պաշտոնաթերթն էր 1887 թվականից հրատարակվող «Հանդես ամսօրյա» հայագիտական բանասիրական ամսագիրը: Վիեննայի Մխիթարյան Մատենադարանում պահվում էին շուրջ 2600 հայերեն ձեռագրեր, ավելի քան 120 հազար գիրք՝ հայերեն և օտար լեզուներով, հայ պարբերական մամուլի ամենահարուստ հավաքածուն (տե՛ս «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 95): Միաբանությունն ուներ նաև թանգարան, տպարան (գործել է մինչև 1999 թ., գրքեր է տպագրել հիսուն լեզուներով), որը ծավալել է գրահրատարակչական լայն գործունեություն:
[448] Վենետիկի Մխիթարյանների գիշերօթիկ վարժարաններից էր Ֆրանսիայում 1846 թ. հիմնված Սևրի «Սամուել Մուրատեան» վարժարանը, որը պաշտոնապես համարվել է ֆրանսիական դպրոց: Այստեղ սովորելու էին գալիս Իտալիայից, Հունաստանից, Անգլիայից, Լիբանանից, Թուրքիայից և այլ երկրներից, սակայն նյութական դժվարությունների պատճառով վարժարանը 1991 թ. դադարեց գործելուց (տե՛ս **Դալլաքյան Կ.**, Հայ Սփյուռքի պատմություն, էջ 235): Նյութական սղության և աշակերտության թվի նվազման պատճառով 1997-1998 թթ. ուսումնական տարում փակվեց

պես ակադեմիական հաստատություն: Մեծ է Մխիթարյանների ներդրումը հայ հոգևոր, մշակութային և գիտական զարթոնքի ու վերելքի գործում[449]:

Հայաստանի անկախացումից հետո Մխիթարյանները լայն հնարավորություն ստացան իրենց հոգևոր, մշակութային, գիտական ու կրթական կարողությունները ծառայեցնել Հայաստանի վերածննդին: Միաբանությունը հայրենիքում հիմնեց Մխիթարյան մշակութային միություն, որի գործունեության ոլորտների մեջ էր մտնում հանրությանը միաբանության մշակութային հարստություններին ծանոթացնելը, հրատարակչական աշխատանքներ ծավալելը, միջնակարգ և բարձրագույն կրթական համակարգի բարելավման գործընթացներին աջակցելը, արտերկրին հայ մշակույթը, գրականությունը, կերպարվեստը, թատերական և շարժանկարային արվեստները ծանոթացնելը:

Վիեննայի Մխիթարյան կենտրոնը ևս վիթխարի դեր է կատարել հայապահպանության գործում: Ցավոք, ժամանակի ընթացքում նյութական միջոցների սղության ու կարող ուժերի բացակայության հետևանքով միաբանությունը կորցնելով մշակութային կյանքում և հայագիտության մեջ առաջատար դեր ունենալու կարողությունը՝ ժամանակի ընթացքում վերածվեց մատենադարանային սպասարկումի և թանգարանային ցուցադրումների օջախի: Իրատեսորեն մտահոգվելով միաբանությանը սպառնացող լուծարքի վտանգից՝ Վիեննայի Մխիթարյանները իրենց հույսը կապում էին Մայր հայրենիքից սպասվող օգնության հետ:

նաև միաբանության հովանու ներքո գտնվող 1836 թ. հիմնված Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը:

[449] Վիթխարի է Վենետիկի Մխիթարյան միաբանության կատարած դերը Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում: Միաբանությանն է պատկանում հայկական մշակույթի ու պատմության վերաբերյալ աշխարհում ամենամեծ արխիվը: Նրա ձեռագրատանը կուտակված են 5000 ձեռագիր, մատենադարանն ունի 60 հազար հայերեն հին ու նոր գրքեր, 45 հազար՝ օտար հրատարակություններ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 119, թ. 2): Վենետիկի Մխիթարյանները 1843 թվականից ցայսօր հրատարակում են հայերեն ամենահին պարբերականը՝ «Բազմավեպ» հայագիտական-բանասիրական հանդեսը:

Միաբանությունը Վիեննայում հայկական դեսպանատան համար հատուկ շենք տրամադրելու դիմաց Երևանի Ավան թաղամասում ստացավ ժողտնտեսության ինստիտուտի նախկին մասնաշենքը, որտեղ բացելու էր գիշերօթիկ դպրոց:

Վիեննայի Մխիթարյան միաբանության պահպանումն ու վերածնումը դարձավ Հայաստանի Հանրապետության պետական հոգածության առարկա: Ֆինանսական և այլ դժվարությունների հետևանքով միաբանության առջև ծառացած անհետացման ու հայության համար նրա հարստությունների կորստյան վտանգը կանխելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը Ավստրիայում իր դեսպանության միջոցով փորձեր էր անում հնարավորության սահմաններում Մխիթարյանների մշակութային արժեքները Հայաստան տեղափոխելու ուղղությամբ, ինչպես նաև աշխատում էր օգնել միաբանությանը գոյատևել և պահպանել երեք դարերի ընթացքում ձեռք բերածը, այն սերունդներին փոխանցելու նպատակով:

Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների ավելի քան երկու դար տևած բաժանումն ավարտվեց 2000 թ. նրանց վերամիավորմամբ: Երկու հաստատությունների բոլոր միաբանների մասնակցությամբ 2000 թ. հուլիսի 10-21-ը Վենետիկի Ս. Ղազար մայրավանքում կայացած միացյալ ընդհանուր արտակարգ ժողովը իր ընդունած պատմական որոշմամբ վերջ դրեց միաբանության միավորման շուրջ երկարամյա բանակցություններին ու քննարկումներին: Միասնական որոշման համաձայն Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի զույգ ճյուղավորումները միավորվում էին, և ստեղծվում էր մեկ կենտրոնական վարչություն ունեցող Մխիթարյան միացյալ միաբանություն, որի գլխավոր կենտրոնատեղին էր դառնում Վենետիկի Ս. Ղազար մայրավանքը, իսկ Վիեննայի վանքը՝ առաջին գլխավոր մենաստանը[450]: Զույգ միաբանությունների բոլոր առաքելավայրերն ու կենտրոնները կառավարելու էր նորընտիր ընդհանրական աբբահայրը իր միացյալ վարչական խորհրդի հետ միասին: Պատմական այդ քայլը զուգադիպեց միաբանության 300-ամյակին, քրիս-

[450] Տե՛ս «Ազգ», 25 հուլիսի, 2000:

տոնեության 2000-ամյա հոբելյանին, ինչպես նաև Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

1990-ական թթ. վերջերից Մխիթարյան միաբանությունն ակտիվ փորձեր ձեռնարկեց իր մշակութային գործունեությունը Հայաստանում ծավալելու ուղղությամբ: Միաբանությունը Հայաստանում հովվական գործունեություն չծավալեց, նախ հիմնեց գրատուն՝ Երևան ուղարկված Հռոմի միաբանության փակված տան գրքերով: Ժամանակի ընթացքում միաբանությունը մտադրվեց Երևանում բացել Մխիթարյան վարժարան, որի շրջանավարտները ուսումը շարունակելու էին Վենետիկում: Մխիթարյան միաբանությունը նախատեսել էր նաև Երևանում բացել Մխիթար Սեբաստացու անունով հրապարակ, որտեղ կանգնեցվելու էր աբբահոր արձանը: Այս առումով անգամ ստորագրվել էր համաձայնագիր, սակայն երևանյան կողմը այդ ուղղությամբ համապատասխան քայլեր չձեռնարկեց:

Հայաստանյայց Ավետարանական եկեղեցին (կոչվում է նաև՝ Հայ Ավետարանական եկեղեցի) քրիստոնեության երեք հիմնական ուղղություններից մեկի՝ բողոքականության հայ հետևորդների եկեղեցին է, որ կազմավորվել է 1846 թ. հուլիսի 1-ին Կ. Պոլսում: Այն Հայաստանում օրինականորեն գործելու արտոնություն ստացավ 1991 թ.՝ հանձինս Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Երևանի գրասենյակի[451]: Կազմակերպչական որոշակի աշխատանքներից հետո, 1994 թ. հուլիսի 1-ից Հայ Ավետարանական եկեղեցին ՀՀ-ում պաշտոնապես գործելու իրավունք ստացավ [452]: Հայ Ավետարանական եկեղեցին Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն համարել և համարում է մայր եկեղեցի և աջակցում է երկու եկեղեցիների համագործակցությանը:

2000 թ. աշխարհում գործում էին Հայ Ավետարանական ավելի քան 100 եկեղեցիներ և շուրջ 20 Եղբայրություններ՝ ընդհանուր առմամբ ավելի քան 15.000 անդամներով և 40.000 հետևորդներով. 25 կրթօջախներ, Հայկազյան հայագիտական

[451] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 189, թ. 6: Տե՛ս նաև Հայ Ավետարանչական ընկերակցության Վանաձորի մասնաճյուղը,-«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 1998, N 4, հոկտեմբեր, էջ 20:

[452] Տե՛ս **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.Ն.,** նշվ. աշխ., էջ 221:

համալսարան (1955 թ. Բեյրութ), ընկերային ծառայության կենտրոններ, բարեսիրական հաստատություններ, հրատարակչություններ[453]:

ԱՀԱԸ բարեսիրական գործերը զուգորդվում էին քրիստոնեական ծառայության հետ: Բացի բարեգործությունից Ավետարանչականը Հայաստանի տարբեր շրջաններում գործող Հայ Ավետարանական եկեղեցիներին օժանդակում էր հոգևոր առաջնորդների, քարոզիչների, ուսուցիչների պատրաստման, կիրակնօրյա դպրոցների, սերտողության խմբերի ստեղծման, հոգևոր գրականության առաքման ասպարեզում:

ԱՀԱԸ Հայաստանի ներկայացուցիչ վերապատվելի, դոկտ. Ռընե Լևոնյանի մտահղացմամբ 1997 թ. սկզբին ստեղծվեց Ավետարանչականի 9-14 տարեկան երեխաներից բաղկացած «Փոքրիկ վիրտուոզներ» երաժշտախումբը, որը Հայաստանից բացի համերգային հարուստ ծրագրով հանդես էր գալիս նաև Եվրոպայում՝ անվերապահորեն արժանանալով մասնագետների բարձր գնահատականին[454]:

Հայ Ավետարանչական եկեղեցիների կյանքում 1997 թ. առաջին ամիսները նշանավորվեցին հրատարակչական և հոգևոր-կրթական երկու շատ կարևոր իրադարձություններով: 1997 թ. հունվարին լույս տեսավ ԱՀԱԸ «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի» եռամսյա գունավոր պատկերազարդ հանդեսը (գլխավոր խմբագիր վեր. Ռընե Լևոնյան), որի նպատակն էր ծանոթացնել Ավետարանչականի հայաստանյան գործունեությանը, նաև Հայ Ավետարանական եկեղեցիների կյանքին՝ Հայաստանում և Սփյուռքում[455]:

Կազմակերպչական մեկամյա աշխատանքներից հետո՝ 1997 թ. ապրիլից իր գործունեությունը սկսեց Հայաստանի Ավետարանական Աստվածաբանական ճեմարանը (ՀԱԱճ), որը ավետարանական միակ բարձրագույն հաստատությունն էր Հայաս-

[453] Տե՛ս **Աւագեան Ք.,** Աւետարանականութիւնը հայոց մէջ,-«Բանբեր», 2000, N 9, սեպտեմբեր, էջ 22:

[454] Տե՛ս «Ավանգարդ», 28 սեպտեմբերի-4 հոկտեմբերի, 1999:

[455] Տե՛ս **Ղազարյան Ա., Լևոնյան Ռ.Ն.,** նշվ. աշխ., էջ 214:

տանում և պատրաստում էր եկեղեցական առաջնորդներ[456]: ՀԱԱԵ-ի հետ համագործակցելու պատրաստակամություն հայտնեցին ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Սփյուռքի աստվածաբանական ճեմարանները:

[456] Տե՛ս **Աւագեան Ք.,** Աւետարանականութիւնը հայոց մէջ,-«Բանբեր», 2000, N 10, հոկտեմբեր, էջ 18-19:

ՎԵՐՋԱԲԱՆ

Սպիտակի երկրաշարժը, Արցախյան գոյապայքարը և Հայաստանի Հանրապետության անկախացումը խթանեցին Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները:

Հայրենիքի և Սփյուռքի միջև 1988-2001 թթ. հաստատված լայնածավալ հարաբերությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Հայրենիք-Սփյուռք առնչություններ քաղաքական ոլորտում

Հայ ավանդական ազգային քաղաքական կուսակցությունների (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ) վերադարձը հայրենիք և մասնակցությունը երկրի քաղաքական գործընթացներին:

Հայկական լոբբիի (Հայ դատի հանձնախումբ, Ամերիկայի հայկական համագումար, «Ապրիլ 24» կոմիտե և այլն) առավել աշխուժացումը արտերկրում Հայկական հարցի լուծման ուղղությամբ:

1990-ական թթ. Սփյուռքի և հայրենիքի համագործակցությամբ քայլեր ձեռնարկվեցին համահայկական կառույցի ստեղծման ուղղությամբ: Այդ առումով հիշարժան իրադարձություն էր 1999 թ. սեպտեմբերին Երևանում կայացած Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովը, որը աշխարհասփյուռ հայության առաջին փորձն էր ստեղծելու համահայկական կառույց:

Խորհրդային Միության փլուզման հետևանքով Միության տարբեր հանրապետություններում ապրող հայությունը, ազգային մյուս փոքրամասնությունների հետ միասին, հնարավորություն ստացավ ծավալել կազմակերպված համայնքային գործունեություն: Ձևավորվեցին հայկական համայնքներ, հիմնվեցին մի շարք ազգային կազմակերպություններ, որոնք մեծ դեր կատարեցին հայրենիքի և Սփյուռքի հետ հարաբերությունների հաստատման, նաև հայության ազգային դիմագծի պահպանման ուղղությամբ:

2. Հայրենիք-Սփյուռք առնչություններ տնտեսական ոլորտում

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ. զարգացում ապրեցին հատկապես տնտեսական ոլորտում: Դա կապված էր երկրաշարժի, Արցախյան պատերազմի, Ադրբեջանի շրջափակման հետևանքով երկրում ստեղծված ծանր իրավիճակի, ինչ-

պես նաև Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից և Աբխազիայից ավելի քան 300 հազար փախստականների ներհոսքի հետ:

Երկրաշաժից անմիջապես հետո համայն հայությունը վիթխարի օգնություն առաքեց հայրենիք: Հայաստան ժամանեցին և աղետյալներին օգնություն ցուցաբերեցին հարյուրավոր սփյուռքահայ բժիշկներ, գործարարներ, հասարակական գործիչներ: Այդ օգնությունը համակարգելու նպատակով 1992 թ. մարտին ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը, որը սփյուռքահայերի նվիրատվությունների շնորհիվ լայնածավալ ծրագրեր իրագործեց Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում:

Հայրենիքում մեծածավալ ծրագրեր էր իրագործում Լիսաբոնի «Գալուստ Կյուլպենկյան» բարեսիրական և գիտամշակութային հիմնարկությունը՝ ամեն տարի հատկացնելով 500 հազար դոլար:

ԱՄՆ-ում 1989 թ. հիմնված Միացյալ հայկական ֆոնդ բարեգործական կազմակերպությունը Հայաստանին մեծապես աջակցեց հատկապես երկրաշարժից հետո՝ երկիր առաքելով սննդամթերք, դեղորայք, բժշկական սարքավորումներ:

Բարեգործական հիմնադրամներից Հայաստանում աչքի ընկավ նաև ազգային բարերար Ք. Քըրքորյանի կողմից հիմնված Լինսի հիմնադրամը, որը մեծագումար նվիրատվություններ էր կատարում Հայաստանում կրթական, առողջապահական ծրագրերի իրականացման համար:

«Հովարդ Կարագյոզյան» բարեգործական հասարակական կազմակերպությունը Հայաստանում իր գործունեությունը սկսելով 1988 թ. երկրաշարժից անմիջապես հետո՝ հիմնեց մի շարք մանկական ատամնաբուժարաններ և ակնաբուժական կլինիկաներ:

1992 թվականից գործող «Հայաստանի մանկատների հիմնադրամ» կազմակերպությունը օգնում էր զոհված և վիրավոր ազատամարտիկների երեխաներին, դրամաբաշխումներ էր կատարում մանկատներին ու ծերանոցներին, աղետի գոտու կարիքավոր ընտանիքներին:

«Ջինիշյան հիշատակի ծրագիր» բարեգործական կազմակերպությունը 1993 թվականից գործելով Հայաստանում՝ ծրագրեր էր իրականացնում համայնքների, գործարարության զարգացման, բնակարանաշինության, առողջապահության և հոգևոր ոլորտում:

Հայաստանում բարեսիրական և մշակութային մեծ գործունեություն ծավալեց «Գաֆէսճեան ընտանիք» հիմնադրամը, որը ֆինանսական միջոցներ էր տրամադրում հայկական բարեգործական կազմակերպություններին:

Սփյուռքահայ կազմակերպություններից ակնառու էր 1988 թ. Փարիզում ստեղծված «SOS Արմենի» բարեգործական կազմակերպության գործունեությունը, որը երկրին օգնում էր՝ առաքելով դեղորայք, սննդամթերք, հագուստ, իրագործելով շինարարություն:

1988 թ. դեկտեմբերին Շառլ Ազնավուրի կողմից հիմնված «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական կազմակերպությունը Հայաստանին մարդասիրական օգնություն ցույց տալուց բացի՝ իրականացնում էր նաև երկրի տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանն ուղղված մի շարք ծրագրեր:

1989 թ. Ֆրանսիայում հիմնված «Հույս Հայաստանի համար» կազմակերպությունը Հայաստանում բացում էր ատամնաբուժարաններ, կազմակերպում էր ֆրանսերենի ուսուցում, քրիստոնեական դասագրքերի հրատարակություն, օգնում էր ծմռանը ջեռուցել բնակարանները և այլն:

Ամերիկայի հայկական համագումարը միջազգային, մասնավորապես ամերիկյան կազմակերպություններին աջակցում էր մարդասիրական օգնություն հասցնել Հայաստան: Համագումարի ջանքերով Գյումրիում կառուցվեց տնաշինական գործարան, «Տաք ծմեռ» ծրագրով մեծաքանակ նավթ ներկրվեց, կատարվեցին ծառատնկման աշխատանքներ և այլն:

Վիթխարի է հայկական ամենահին և ամենամեծ բարեգործական կազմակերպության՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության դերը: Միությունը նախապատվությունը տալիս էր երկրի բուն զարգացմանը նպաստող ծրագրերին:

1910 թ. ԱՄՆ-ում հիմնված Հայ օգնության միություն կանանց բարեգործական կազմակերպությունը Հայաստանում հաստատված իր մասնաճյուղերի միջոցով օգնություն էր հատկացնում նորանկախ հայրենիքին, կառուցում էր ավաններ և գյուղեր, իրականացնում էր որբախնամ գործունեություն, աջակցում էր

հայոց բանակին, բացում էր ակնագիտական կենտրոններ, բուժսարքավորումներ ու դեղամիջոցներ էր տրամադրում Հայաստանի բուժհիմնարկներին և այլն:

Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի սոցիալական կառույցը՝ Հայ օգնության ֆոնդը, ստեղծվելով երկրաշարժից անմիջապես հետո, իրականացրեց մի շարք ծրագրեր, որոնք ընդգրկեցին հասարակության բոլոր շերտերը:

Հայրենիքը օգնություն ստացավ նաև հայոց եկեղեցուց: Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կանադահայ թեմի կողմից կյանքի կոչված «Հայաստանի ծնողազուրկ երեխաների ֆոնդը» կազմակերպում էր ծնողազուրկ երեխաների, հատկապես զոհված ազատամարտիկների երեխաների որդեգրումը:

Կիլիկիայի կաթողիկոսության ԱՄՆ-ի արևելյան շրջանների և Կանադայի ազգային առաջնորդարանի մարդասիրական ծրագրերը Հայաստանում իրականացնում էր 1993 թվականից գործող «Գայանե Մանուկյան-Մելքոնյան» կրթական հիմնադրամը, որը հիմնականում զբաղվում էր զոհված ազատամարտիկների ընտանիքների նյութական աջակցությամբ:

Երկրաշարժից հետո ստեղծված «Ս. Ներսես» բարեգործական կազմակերպությունը ևս մարդասիրական գործունեություն էր ծավալում: Ծրագիրն առավել ընդլայնվեց Արցախյան ազատամարտերից հետո, երբ ԱՄՆ-ի Հայ Առաքելական եկեղեցին ստանձնեց զոհված ազատամարտիկների ընտանիքների օգնության գործը՝ ստեղծելով «Մեծն Ներսես» բարեգործական հիմնադրամը:

1991 թ. Հայաստանում իր գործունեությունը սկսեց նաև Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունը, որն աջակցում էր 1988 թ. երկրաշարժից տուժած շրջանների վերականգնմանը, զոհված ազատամարտիկների և ծնողազուրկ երեխաների խնամակալությանը, աճող սերնդի քրիստոնեական դաստիարակությանը և՛ Հայաստանում և՛ Արցախում:

3. Հայրենիք-Սփյուռք առնչություններ մշակութային ոլորտում

Հայաստանի անկախացման շնորհիվ զարգացում ապրեցին նաև Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերությունները, որոնք իրագործվում էին հետևյալ ուղղություններով.

1990-ական թթ. սկզբին շարունակում էր իր գործունեությունը Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն,

որը զգալի դեր էր խաղում Սփյուռքի մշակութային, կրթական, հայրենակցական, բարեգործական և այլ կազմակերպությունների հետ կապերի հաստատման գործում, նպաստում Սփյուռքում հայապահպանությանը:

Առավել ակտիվացան Հայրենիք-Սփյուռք կապերը կրթության ոլորտում: ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող Կիպրոսի Մելքոնյան գիշերօթիկ կրթական հաստատությունում 1990-ական թթ. կեսերից առաջին անգամ ուսանել սկսեցին նաև հայ երեխաներ Հայաստանից ու Արցախից, Ռուսաստանից և նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններից:

1988-2001 թթ. Սփյուռքի մի շարք հայկական համայնքներում վերաբացվեցին հայկական դպրոցները, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու շնորհիվ ծանր կացությունից դուրս եկավ Կալկաթայի Մարդասիրաց ճեմարանը:

1996 թ. Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում հիմնված «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի շնորհիվ Սփյուռքի դպրոցների համար սկսեցին մշակվել ուսումնակրթական ծրագրեր, ինչպես նաև 10-ամյա ընդմիջումից հետո 2000 թ. վերսկսվեցին սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման մեկամսյա դասընթացները:

Սփյուռքի հետ կրթական կապերի զարգացմանը նպաստեց նաև 1999 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարությունում ստեղծված Սփյուռքի բաժինը, որը կազմում և մշակում էր հայրենիքի և Սփյուռքի միջև կրթական ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը, հրատարակում էր դասագրքեր սփյուռքահայ դպրոցների համար և այլն:

Զարգացան նաև Հայրենիք-Սփյուռք գիտական կապերը: Այդ ոլորտում ակնհայտ էր 1982 թ. ԱՄՆ-ում հիմնված «Ժամանակակից հայագիտական ուսումնասիրությունների և վավերագրերի Զորյան ինստիտուտի» դերը, որը զբաղվում էր Սփյուռքի ուսումնասիրությամբ, Հայոց ցեղասպանության փաստագրմամբ և դասախոսությունների, սեմինարների, գիտաժողովների կազմակերպմամբ, ինչպես նաև երկրաշարժից տուժած հայրենիքի վերաշինմամբ:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության, փաստաթղթերի հայտնաբերման և հրապարակման ուղղությամբ հսկայա-

կան աշխատանք էին կատարում Բեռլինի «Հայկական տեղեկատվության և փաստագրության կենտրոնը», «Հայ Սփյուռքի հետազոտության կենտրոնը», Բոխումի համալսարանի «Հայկական ուսումնասիրությունների կենտրոնը», «Հայկական հետազոտության կենտրոնը» և այլն:

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում կարևոր դեր էր կատարում նաև ՀԲԸՄ-ն, որն ամենամյա մրցանակների միջոցով խրախուսում էր հայ մշակույթի, նաև Հայ դատի ուսումնասիրման ասպարեզում նվիրվածություն և վաստակ ցուցաբերած ոչ հայ անձանց: Միությունը «Ալեք և Մարի» ու «Ալեք Մանուկյան» մշակութային հիմադրամների միջոցով հովանավորում էր Մատենադարանին, իրագործում էր մշակութային ծրագրեր: Ալեք Մանուկյանի կողմից հիմնված Միչիգանի համալսարանի «Ալեք Մանուկյանի արդի պատմության» և «Մարի Մանուկյան հայոց լեզվի և գրականության» ամբիոնները վիթխարի հայագիտական աշխատանք էին կատարում: ՀԲԸՄ-ի Նախագահական ակումբն էլ իր հերթին իրագործում էր երիտասարդական ծրագրեր: Հայաստանում ՀԲԸՄ-ի իրագործած մշակութային խոշոր ձեռնարկներից էր 1991 թ. Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնումը:

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում մեծ դեր էին կատարում «Ֆրանսահայ երիտասարդական միությունը»՝ ԺԱՖ-ը, «Ֆրանսահայ մշակութային միությունը», որոնք աջակցում էին նաև աղետից տուժած հայրենիքին:

Հայաստանում գործող իր մասնաճյուղերի միջոցով հայ մշակույթի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանն աջակցում էր Բեյրութում 1947 թ. հիմնված «Թեքեյան մշակութային միությունը»:

Սփյուռքում ահռելի դեր էր կատարում 1928 թ. հիմնված «Համազգային հայ կրթական և մշակութային միություն» մշակութային-կրթական կազմակերպությունը, որի նպատակը նույնպես հայ մշակույթի պահպանումն էր, զարգացումն ու տարածումը: 1993 թվականից հիմնելով «Հայրենի մտավորականության ֆոնդը»՝ Համազգայինը աջակցել սկսեց Հայաստանի մտավորականներին:

Առավել սերտացան Հայրենիք-Սփյուռք գրական կապերը: Սփյուռքի մի շարք նշանավոր գրողներ ու բանաստեղծներ վառ էին պահում հայ գրականության ջահը Սփյուռքում:

Վերելք ապրեց նաև երաժշտության բնագավառը: Ազգային երգի զարգացման ոլորտում հսկայական աշխատանք էին կատարում Լոս Անջելեսի «Սիփան», Փարիզի «Սիփան-Կոմիտաս», Մարսելի «Սահակ-Մեսրոպ», Նիսի «Սայաթ-Նովա», Բուենոս Այրեսի «Արաքս» և մի շարք այլ երգչախմբեր: Սփյուռքահայ մի շարք նշանավոր կոմպոզիտորներ ու երաժիշտներ (Ա. Հովհաննես, Շ. Արծրունի, Վ. Մուրադյան, Ռ. Արմենյան, Ա. Թերզյան, Վ. Մանգրյան, Ա. Սիրանոսյան, Շ. Ազնավուր և այլք) իրենց նպաստն էին բերում հայ երաժշտության զարգացմանը:

Հայրենիք-Սփյուռք մշակութային առնչություններում աչքի ընկավ թատերական կյանքը, որի վկայություններից էր 1991 թ. մայիսին Երևանում անցկացված սփյուռքահայ թատրոնների անդրանիկ փառատոնը:

Հայկական ֆիլմարվեստի զարգացմանը իրենց նպաստն էին բերում սփյուռքահայ մի շարք նշանավոր կինոռեժիսորներ և դերասաններ (Ա. Վեռնոյ, Ա. Էգոյան, Փ. Գալինյան, Ն. Արմանի, Դ. Ասկարյան, Ս. Ավետիքյան և այլք), որոնց շնորհիվ և՛ Հայաստանում, և՛ Սփյուռքում հայկական ֆիլմարվեստը շարունակում էր զարգացում ապրել:

Սփյուռքահայ ականավոր նկարիչների շնորհիվ (Լ. Ժամկոչյան, Մ. Գրիգորյան, Գառզու, Ռ. Ժերանյան, Ժանսեմ և այլք) աշխարհը ոչ միայն ծանոթանում էր հայկական նկարչական արվեստին, այլև այդ նկարիչները իրենց ցուցահանդեսներից ստացված հասույթը հատկացնում էին հայրենիքի վերականգնմանը:

Հայկական ճարտարապետական հուշարձանների պահպանման, ուսումնասիրության ուղղությամբ հսկայական աշխատանք էին կատարում «Հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրման կենտրոնը», «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը, մի շարք հայտնի սփյուռքահայ ճարտարապետներ (Էդ. Սարգսյան, Ա. Ջաքարյան, Մ. Դեյրմենջյան, Վ. Կյուրեղյան, Ա. Դարոնյան և այլք):

1999 թ. ապրիլից մեկնարկեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական բաց փառատոնը: Փառատոնի շնորհիվ Հայաստա-

նի և Սփյուռքի հոգևոր-մշակութային հաստատությունները սկսեցին համագործակցել, համայն հայությունը համախմբվեց թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում և թե՛ Սփյուռքում:

Ռուսաստանի և ԱՊՀ երկրների հայկական համայնքներում ստեղծվեցին բազմաթիվ մշակութային ընկերություններ, հայոց լեզվի ուսուցման դասարաններ, վերաբացվեցին հայկական դպրոցներն ու եկեղեցիները: Այս ամենի շնորհիվ առավել սերտացան կապերը հայ համայնքների և Մայր հայրենիքի միջև:

Սփյուռքի հայկական եկեղեցին ևս շարունակում էր հանդես գալ համայնքների կրթական և մշակութային կյանքն աշխուժացնելու, աշխարհասփյուռ հայությանը համախմբելու առաքելությամբ:

1990-ական թթ. ծանր կացության մեջ էր հայտնվել հատկապես Վիեննայի Մխիթարյան միաբանությունը: Հայաստանի Հանրապետությունը առաջին անգամ փորձեր կատարեց միաբանության իրավիճակը շտկելու ուղղությամբ: 2000 թ. Վենետիկի և Վիեննայի միաբանությունները պատմական քայլ կատարեցին, միավորվեցին՝ ստեղծելով մեկ կենտրոնական վարչություն ունեցող Մխիթարյան միացյալ միաբանություն: Միավորման շնորհիվ միաբանությունը Հայաստանում իր մշակութային գործունեությունն առավել աշխուժացրեց:

Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերից անմասն չէր նաև Հայ Ավետարանական եկեղեցին, որը, բացի բարեգործությունից, Հայաստանի տարբեր շրջաններում գործող Հայ Ավետարանական եկեղեցիների համար պատրաստում էր հոգևոր առաջնորդներ, քարոզիչներ, ուսուցիչներ, բացում էր կիրակնօրյա դպրոցներ, առաքում հոգևոր գրականություն:

Աշխուժացավ նաև Հայաստան-Սփյուռք մարզական կյանքը: Դրա վառ վկայություններից էին 1999 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Հայաստանում կայացած համահայկական առաջին խաղերը, որոնք հայրենիքում համախմբեցին աշխարհասփյուռ հայ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին և այնուհետև դարձան ավանդական:

***

Արտերկրի հայության համար բոլոր ժամանակներում առավել բարդ և կարևոր խնդիրը ազգային ինքնության պահպանումն

էր, որի լուծման նախապայմաններից էին սփյուռքահայերի հավաքական ու միասնական ազգային-մշակութային գործունեությունը, նրանց համախմբումը համայնքներում, ազգային կառույցներում:

Հայ Սփյուռքի գոյատևման հիմնական երաշխավորը Հայաստանի Հանրապետությունն է: Դեռևս 1999 թ. Հայաստան-Սփյուռք համահայկական առաջին խորհրդաժողովում որոշվել էր ստեղծել Սփյուռքի հետ հարաբերությունները համակարգող և պետության հովանավորությունը վայելող պետական մի կառույց, ինչը չիրականացավ 1999 թ. հոկտեմբերի 27-ի դեպքերի պատճառով:

2008 թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո միայն Հայրենիք-Սփյուռք համագործակցության բացը լրացնելու և համակարգված աշխատելու նպատակով նախատեսվեց Հայաստանի կառավարության կազմում ստեղծել Սփյուռքի նախարարություն, որը իր գործունեությունը սկսեց 2008 թ. հոկտեմբերի 1-ից: Սփյուռքի նախարարության գործունեության նպատակը Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման և արդյունքների գնահատման միջոցով Հայաստանի Հանրապետության և Հայկական Սփյուռքի գործակցության ապահովումն է, հայ ժողովրդի հոգևոր միասնությանը, հայ կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, երիտասարդական, մարզական կյանքի զարգացմանը, հայկական աշխարհի բարգավաճմանը նպաստող պայմանների ստեղծումն է:

ВЗАИМОСВЯЗИ РОДИНА - ДИАСПОРА В 1988 - 2001 ГГ.

Резюме

Спитакское землетрясение, Арцахская война и обретение независимости Республикой Армения явились стимулом для развития отношений между Родиной и Диаспорой.

Изучение сущности и масштаба отношений между Родиной и Диаспорой в 1988-2001 гг. позволяет охарактеризовать эти взаимоотношения в политической, экономической и культурной сферах.

1. Взаимосвязи Родина-Диаспора в политической сфере были отмечены "возвращением" на Родину армянских традиционных национальных политических партий (Армянская Революционная Федерация Дашнакцутюн, Либерально-демократическая партия, Социал-демократическая партия Гнчак) и их участием в политических процессах страны, а также активизацией армянского лобби в зарубежных странах (Комитет по Армянскому вопросу, Армянская Ассамблея Америки, Комитет 24 апреля и т.д.) в плане решения Армянского вопроса.

В 1990-х годах в свете отношений Диаспоры с Родиной были предприняты шаги по созданию панармянской структуры. В этой связи знаменательным событием явилась первая конференция Армения-Диаспора, состоявшаяся в сентябре 1999 года в Ереване.

В результате распада Советского Союза армяне, проживающие в различных республиках Союза, вместе с другими национальными меньшинствами получили возможность развернуть организованную общинную деятельность, что нашло отражение в формировании армянских общин, в создании ряда национальных организаций, сыгравших значительную роль в установлении отношений Родины с Диаспорой, а также в сохранении национального облика.

2. Взаимосвязи Родина-Диаспора в экономической сфере были обусловлены сложной ситуацией в республике, возникшей в результате землетрясения, Арцахской войны, организованной Азербайджаном блокады, а также притока огромного потока беженцев (300 тыс.) из Азербайджана, Нагорного Карабаха и Абхазии.

На трагические события в Армении, в частности на землетрясение, откликнулись армяне всего мира. В Армению с целью оказания помощи прибыли сотни врачей, бизнесменов, общественных деятелей Диаспоры. Для координации этой помощи в марте 1992 года был создан панармянский фонд "Айастан", который благодаря пожертвованиям Диаспоры осуществил широкомасштабные программы как в Республике Армения, так и в Нагорно-Карабахской Республике.

В Республике Армения реализацией глобальных проектов занималась благотворительная и научно-культурная организация-фонд "Галуст Кюльпенкян" (Лиссабон), который ежегодно предоставлял 500 тысяч американских долларов.

Основанная в США в 1989 г. благотворительная организация "Объединенный армянский фонд" оказала огромную помощь Армении особенно после землетрясения, доставляя в страну продовольствие, медикаменты и медицинское оборудование.

Среди благотворительных фондов особенно выделялся "Фонд Линса", созданный известным меценатом К. Киркоряном. Фондом были сделаны огромные пожертвования на осуществление программ в сфере образования и здравоохранения.

Начав свою деятельность в Армении сразу после землетрясения 1988 года, благотворительная организация "Говард Карагезян" основала ряд детских стоматологических и офтальмологических клиник.

Организация "Фонд армянских детских домов", основанная в 1992 году, оказывала финансовую помощь детям погибших и раненых воинов, детским домам и домам для престарелых, нуждающимся семьям в зоне бедствия.

Благотворительная организация "Мемориальная программа Джинишян", действуя в Армении с 1993 года, осуществляла проекты в сфере развития общин, бизнеса, строительства жилья и здравоохранения.

Масштабную благотворительную и культурную деятельность в Республике Армения осуществлял фонд "Семья Гафесчян", предоставлявший финансовые средства армянским благотворительным организациям.

Особо следует отметить деятельность благотворительной организации "Сос Армени", которая была основана в 1988 году в Париже.

Организация оказывала стране посильную помощъ, доставляя медикаменты, продовольствие, одежду, осуществляя также строительство.

Основанная в декабре 1988 года Ш. Азнавурем благотворительная организация "Азнавур для Армении", кроме оказания гуманитарной помощи Армении, занималась реализацией ряда проектов по укреплению экономической независимости страны.

В 1989 году во Франции была создана организация "Надежда Армении", которая в Армении открывала стоматологические клиники, организовывала курсы обучения французскому языку, занималась изданием христианской литературы, а также вопросами отопления домов и так далее.

Армянская Ассамблея Америки оказывала поддержку международным, в частности, американским организациям, доставлявшим в Армению гуманитарную помощь. Усилиями Ассамблеи в городе Гюмри был построен завод стройматериалов, а также осуществлялась доставка нефти по программе "Теплая зима" и так далее.

Неоценима роль самой крупной армянской благотворительной организации – Армянского Всеобщего Благотворительного Союза (АВБС), для которого приоритетными были программы, направленные на развитие страны.

Основанная в 1910 году благотворительная организация "Армянский союз помощи" через свои филиалы всячески поддерживала независимую Республику Армения, строя поселки и деревни, помогая сиротам, армянской армии, открывая офтальмологические центры, предоставляя медицинское оборудование и медикаменты медицинским учреждениям Армении и т.д.

"Фонд помощи Армении" как социальная структура Армянской Апостольской церкви Восточной епархии США был создан в 1989г., после землетрясения. Фонд занимался реализацией программ, охватывающих все социальные слои общества.

Большую поддержку оказала Родине Армянская церковь. Созданный Канадской епархией Армянской Апостольской церкви "Фонд сирот Армении" занимался вопросами опеки детей-сирот, в особенности детей погибших воинов-азатамартиков.

Гуманитарные проекты восточных районов США – Киликийского Католикосата и Национальной епархии Канады в Республике Армения осуществлял образовательный фонд "Гаяне Манукян-Мелконян", который действовал с 1993 года и в основном занимался материальной поддержкой семей погибших воинов.

Созданная после землетрясения благотворительная организация "С. Нерсес" также оказывала гуманитарную помощъ. Рамки ее деятельности расширились после Арцахской войны в связи с материальной поддержкой Армянской Апостольской церкви семей погибших воинов. С этой целью был создан благотворительный фонд "Мецн Нерсес".

В 1991г. развернула деятельность также Армянская Евангелистская Ассоциация Америки, содействовавшая делу восстановления пострадавших от землетрясения районов, христианскому воспитанию подрастающего поколения. Ассоциация оказывала также посильную помощъ семьям погибших воинов-азатамартиков и детям-сиротам.

3. После провозглашения независимости углубился также культурный контакт Родины с Диаспорой, и этому содействовала деятельность Комитета по культурным связям с зарубежными армянами, игравшего существенную роль в установлении связей с культурными, образовательными, благотворительными, патриотическими и другими организациями Диаспоры, что способствовало сохранению армянской идентичности в Спюрке.

Особенно активизировались связи Родина-Диаспора в сфере образования. В научно-образовательном центре Кипра "Мелконян", который действовал под опекой Армянского Всеобщего Благотворительного Союза, в середине 1990-х годов впервые стали учиться также армянские дети из Армении и Карабаха, России и других бывших советских республик.

В 1988-2001гг. во многих общинах Армянской Диаспоры вновь открылись армянские школы, благодаря усилиям Армянской Апостольской церкви из трудной ситуации вышел колледж Мардасирац г. Калькутты.

В рамках научного центра "Спюрк", основанного в 1996 году в педагогическом университете имени Х. Абовяна, для школ Диаспоры стали разрабатываться образовательные программы, а с 2000г. после 10-летнего перерыва возобновились месячные учебные курсы для учителей Диаспоры.

Развитию образовательных связей с Диаспорой способствовал также созданный в 1999 году в Министерстве образования и науки отдел Диаспоры, занимавшийся разработкой программ сотрудничества между Родиной и Диаспорой и изданием учебников для школ Диаспоры и т.д.

Развивались и крепли также связи в сфере науки. Неоценимую роль в этой области играл созданный в 1982г. "Научно-исследовательский институт современных армянских исследований Зорян", занимавшийся историей армянского народа, геноцида армян и организацией лекций, семинаров, конференций.

Изучением истории геноцида армян занимались Берлинский "Армянский информационный и фактографический центр", "Исследовательский центр Армянской Диаспоры", "Армянский исследовательский центр" университета Бохум, "Центр армянского исследования" и другие.

В культурных взаимосвязях Родины с Диаспорой важную роль играл также Армянский Всеобщий Благотворительный Союз, который давал ежегодные поощрительные премии представителям иных наций, занимающихся изучением армянской культуры, а также Армянского вопроса. АВБС через посредство культурных фондов "Алек и Мари" и "Алек Манукян" спонсировал Матенадаран, а также занимался реализацией иных культурных проектов.

Основанные Алеком Манукяном кафедра "Новейшей истории имени Алека Манукяна" Мичиганского университета и кафедра "Армянского языка и литературы имени Мари Манукян" вели огромную арменоведческую работу.

Деятельность Президентского клуба Армянского Всеобщего Благотворительного Союза была направлена на реализацию молодежных программ. Одним из крупных культурных начинаний АВБС было создание в 1991 году Американского университета Армении.

В культурных отношениях Армения-Диаспора весомую роль играли "Молодежный союз Французских армян" (ЖАФ), "Культурный союз французских армян", содействовавшие развитию и восстановлению республики после трагического землетрясения.

Развитию армянской культуры во многом способствовал основанный в 1947г. в Бейруте "Культурный союз Текеян", филиалы которого действовали в Армении.

Огромную роль в жизни Диаспоры играла основанная в 1928г. культурно-образовательная организация "Общенациональный армянский культурно-образовательный союз" (ОАКОС), целью которой было сохранение, развитие и распространение армянской культуры. Созданный ОАКОС-ом в 1993г. "Фонд отечественной интеллигенции" оказывал поддержку армянской интеллигенции.

Расширились и углубились также литературные связи между Родиной и Диаспорой. Зарубежные армянские писатели и поэты занимались пропагандой армянской культуры в Диаспоре.

Шире стали контакты и в сфере музыки. Музыкальные группы Лос-Анджелеса ("Сипан"), Парижа ("Сипан-Комитас"), Марселя ("Саак-Месроп"), Ниццы ("Саят-Нова"), Буэнос-Айреса ("Аракс") во многом содействовали развитию армянской национальной музыки. Этому способствовало и творчество известных композиторов и музыкантов Диаспоры (А. Ованнес, Ш. Арцруни, В. Мурадян, Р. Арменян, А. Терзян, В. Мангрян, А. Сираносян, Ш. Азнавур и др.).

В развитии культурных связей неоспоримой была роль театра и свидетельством тому стал первый театральный фестиваль зарубежных армянских театров, состоявшийся в Ереване в 1991г.

В развитие армянского кино свою весомую лепту внесли видные зарубежные армянские режиссеры и актеры (А. Верной, А. Эгоян, П. Галинян, Н. Армани, Д. Аскарян, С. Аветикян и др.).

Творчество выдающихся художников Диаспоры (Л. Жамкочян, М. Григорян, Гарзу, Р. Жеранян, Жансем и др.) способствовало пропаганде армянской живописи. Помимо того, средства, вырученные от экспозиций их картин, предоставлялись Армении в качестве финансовой помощи пострадавшему от землетрясения региону.

Сохранением и изучением памятников армянской архитектуры занимались "Центр исследования и документации армянской культуры" и организация "Земля и культура". В этом направлении работали также известные архитекторы Спюрка (Эд. Саркисян, А. Закарян, М. Дейрменджян, В. Кюрегян, А. Даронян и др.).

В апреле 1999 года стартовал панармянский открытый фестиваль "Единая нация, единая культура". Фестиваль способствовал сотрудничеству духовно-культурных организаций Армении и Диаспоры, консолидации армян всего мира.

В армянских общинах России и стран СНГ были созданы многочисленные культурные общества, основаны курсы по изучению армянского языка, открыты армянские школы и церкви, что способствовало более тесному общению Диаспоры с Родиной.

Деятельность Армянской церкви в Диаспоре была направлена на активизацию культурной жизни зарубежных армян, их духовного потенциала. Важна была роль Армянской церкви как консолидирующего начала в связях Диаспоры с Родиной.

В 1990-х годах тяжелые времена настали для конгрегации мхитаристов в Вене. Республика Армения попыталась скорректировать сложившуюся ситуацию. Поистине историческим шагом было объединение Венской и Венецианской конгрегаций мхитаристов в 2000г., что помогло оживлению деятельности конгрегации в сфере культурной жизни Республики.

В культурных связях Армения-Диаспора немаловажную роль играла Армянская Евангелистская церковь, которая наряду с благотворительностью занималась подготовкой духовных лидеров, проповедников, учителей, открывая воскресные школы и обеспечивая поставку религиозно-духовной литературы.

Контакты Родины с Диаспорой активизировались и в сфере спорта. В августе-сентябре 1999 года в Армении состоялись первые панармянские игры, ставшие впоследствии традиционными.

Для армянского зарубежья актуальной и важнейшей задачей является сохранение национальной идентичности, и предпосылкой решения проблемы служит коллективная и объединенная деятельность зарубежных армян, их объединение в общины и в национальные организации.

Основным гарантом существования Армянской Диаспоры является Республика Армения. Еще в 1999 году в первом панармянском форуме Армения-Диаспора было решено создать государственную организацию, которая должна была координировать отношения с Диаспорой, однако это осталось нереализованным из-за событий 27-ого октября 1999г.

Лишь после президентских выборов 19-ого февраля 2008 года с целью координации сотрудничества Диаспоры с Родиной было принято решение о создании при правительстве Республики Армения Министерства Диаспоры, действующего с 1-ого октября 2008 года.

Деятельность Министерства Диаспоры нацелена на развернутое сотрудничество между Республикой Армения и Армянской Диаспорой и создание благоприятных условий для развития и сохранения единства армянского народа во всех сферах жизни – науки, культуры, экономики и спорта.

ARMENIA - DIASPORA RELATIONS IN 1988-2001

Summary

Spitak earthquake, the survival struggle of Artsakh and Armenia's gaining independence stimulated the development of Homeland - Diaspora relations.

The study of large-scale relations between the Homeland and the Diaspora from 1988-2001 allows us to arrive at the following conclusions:

1. Homeland-Diaspora connections in the field of policy

Returning of Armenian traditional national political parties (Armenian Revolutionary Federation, Liberal (Ramkavar) Party, Social-Democratic (Hunchakian) Party) to the country and their participation in country's political processes.

The enlivening of the Armenian lobby (Armenian National Committee, Armenian Assembly of America, "April 24" Committee, etc.) as to the issue of solving the Armenian question abroad.

1990s. in collaboration between Diaspora and Homeland some steps were taken towards the creation of Pan-Armenian structure. In this sense Armenia-Diaspora first Conference was a memorable event having taken place in 1999 September in Yerevan that was the first attempt for the Armenians scattered all over the world to create a Pan-Armenian structure.

The collapse of the Soviet Union enabled the Armenians living in different republics of the former Soviet Union, along with other minorities, to launch an organized community activity. Some Armenian communities were set up and a number of national organizations were founded that played a big part in establishment of relations between Homeland and Diaspora, as well as in the protection of the Armenians' national profile.

2. Armenia-Diaspora relations in the economic sphere

In 1988-2001 Armenia-Diaspora relations developed especially in the field of economy. It was related to the earthquake, the war in Artsakh, grave situation created in the country because of the blockade by Azerbaijan, as well as because of the influx of

over 300 thousand of refugees from Azerbaijan, Nagorno-Karabakh and Abkhazia.

Immediately after the earthquake Armenians from all over the world sent tremendous aid to Homeland. Hundreds of Diaspora Armenian doctors, businessmen and public figures arrived in Armenia and helped the victims of the disaster. To coordinate that aid Hayastan All Armenian Fund was established in March 1992, which, with the help of Diaspora donations realized large-scale projects within the Republic of Armenia and in Nagorno-Karabakh.

Lisbon "Calouste Gulbenkian Foundation" was implementing large-scale projects by annually allocating 500 thousand dollars.

"United Armenian Fund" charitable organization founded in the USA in 1989, largely supported Armenia, especially after the earthquake delivering food, medicine and medical equipment to the country.

Among the Charitable foundations in Armenia the Lincy Foundation established by national philanthropist K. Kerkorian excelled making donations in large money amounts to the implementation of Armenian education, health care projects.

"Howard Karagyozyan" charity organization having started its activity in Armenia founded a number of children's dental clinics and eye care clinics in 1988.

The "Foundation of Orphanages of Armenia" organization acting since 1992 and helping the children of wounded and killed soldiers, carried out money donations to orphanages and old age pensioners' homes, to the needy families in the disaster zone.

"Jinishian Memorial Foundation" charitable organization acting in Armenia since 1993 was carrying out some projects aimed at community activity development, housing, health and spiritual fields.

A great charity and cultural activity was carried on in Armenia by "Cafesjian Family" Foundation, which provided financial resources to Armenian charitable organizations.

An outstanding one among Diaspora organizations was "SOS Armenie" charitable organization created in 1988 in Paris, which

helped the country by delivering medicine, food, clothing, realizing the construction.

"Aznavour for Armenia" Charitable NGO founded by Charles Aznavour in December 1988 besides rendering humanitarian assistance to Armenia, was also realizing a number of projects aimed at strengthening economic independence.

In 1989 France-based "Hope for Armenia" organization was establishing dental clinics in Armenia, was organizing French language courses, publication of Christian textbooks, helped to heat homes in winter, etc.

Armenian Assembly of America supported the international and particularly American organizations in taking the humanitarian aid to Armenia. By the efforts of the Assembly an apartment construction Plant was built in Gyumri, a large amount of oil was imported to Armenia in the framework of "Hot Winter" program, tree planting activities were carried out and so on.

The role of the Armenian General Benevolent Union (AGBU) - the Armenian oldest and largest charitable organization is especially notable. The union gives priority to the most crucial projects contributing to the country's development.

1910. U.S. based Armenian Relief Society women's charitable organization through its branches established in Armenia allocated aid to the newly independent Homeland constructing towns and villages, realizing activity of looking after orphans, supporting the Armenian army, opening oculist centers, providing medical equipment and medicines to the Armenian Medical Institutions, etc.

The social structure of the U.S. Eastern Diocese the Armenian Apostolic Church - the Fund for Armenian Relief, having been created immediately after the earthquake, carried out a number of projects that covered all strata of the society.

Homeland received assistance also from the Armenian Church. The "Armenia Orphans Fund" founded by Canadian Diocese of Armenian Apostolic Church organized adoption of the orphans, especially children of deceased soldiers.

The humanitarian projects in Armenia by U.S. eastern regions and Canada diocesan under Cilicia Patriarchdom were being carried out through "Gayane Manukyan-Melkonian" Educational Foundation acting since 1993, which was mainly engaged in providing material support to the deceased soldiers' families.

"St. Nerses" charitable organization that was created after the earthquake, also carried out humanitarian activity. The project was more expanded after the Artsakh liberation struggle, when the Armenian Apostolic Church of the United States undertook the project for supporting the deceased soldiers' families by creating "Nerses the Great" Charitable Foundation.

In 1991 Armenian Missionary Association of America also started its activity in Armenia, which supported the rehabilitation of 1988 earthquake-affected areas, the care of deceased soldiers' orphans, and the Christian education of the rising generation in Armenia and Artsakh.

3. Armenia-Diaspora connections cultural sector

Due to Armenia's becoming independent the Armenia-Diaspora Cultural relations also developed, and were carried out in the following directions:

The Diaspora Cultural Relations Committee in early 1990s continued its activity, which played a significant role in establishing relations with cultural, educational, patriotic, charitable and other organizations of the Diaspora and promoted the protection of the Diaspora Armenians.

Homeland-Diaspora relations became more activated in the field of education. Since 1990s the Armenian children from Armenia and Karabakh, Russia and other former Soviet Republics began to study in Cyprus Melkonian Boarding Educational Institution operating under the auspices of AGBU.

In 1988-2001 in a number of Armenian Diaspora communities Armenian schools were reopened, Kolkata Mardasirats College got out of the difficult situation by the support of Armenian Apostolic Church.

Thanks to the "Diaspora" scientific-educational center founded in the Yerevan Kh. Abovyan Pedagogical University in

1996 some educational programs started to be developed for the Diaspora schools, after 10-year pause - in 2000 the one month teacher training courses for Diaspora teachers restarted as well.

The Department of the Diaspora created in 1999 under the Ministry of Education and Science also contributed to the development of educational ties between Homeland and Diaspora. It was developing all the educational programs, publishing textbooks for schools in the Diaspora, and so on.

The scientific ties between the Homeland and the Diaspora were also developed. The role of the "Zoryan Institute of Modern Armenian Studies and Documents" was evident that was set up in the United States in 1982 and was engaged in studying the Diaspora, in documentation of the genocide and organizing lectures, seminars, conferences as well as the reconstruction of the earthquake-affected country.

A huge job was performed by Berlin "Armenian Information and Documentation Center", "The Armenian Diaspora Research Center", Bokhum University "Center for Armenian Studies", "Armenian Research Center" and others aimed at Armenian genocide studies, revealing and publication of documents.

